ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 115 ԵՎ 120-ԱՄՅԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ

Հ ԽՄԲ ՀՈՇՈՂՈՏՈ «ՏՈՒՆ ԵՈՒԷ»

«ՀԱՅ ԴԱՏ» ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԹԻՎ 3

www.armeniancause.am



ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 115 ԵՎ 120-ԱՄՅԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ

«ՀԱՅ ԴԱՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆ • 2011

ՀՏԳ 941(479.25):329:06
ԳՄԴ 63.3(2Հ)+66.6
Հ242

Խմբագիրներ՝ **Հ. Ալվրցյան, Ռ. Սահակյան**

Հ242 **ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 115 ԵՎ 120-ԱՄՅԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ**/ Խմբ.՝ Հ. Ալվրցյան, Ռ. Սահակյան.– Եր.: «Հայ Դատ» հիմնադրամ, 2011.– 176 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադրման 115 և 120–ամյակներին նվիրված գիտաժողովների նյութերը: Հանգամանքների բերումով 115–ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը ժամանակին չհրատարակվեցին, ուստի ընդգրկվեցին այս ժողովածուի մեջ:

ՀՏԳ 941(479.25):329:06
ԳՄԴ 63.3(2Հ)+66.6

ISBN 978–9939–9033–3–0

© «Հայ Դատ» հիմնադրամ, 2011

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 115-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ – **Գևորգ Խուդինյան** 7

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՎԱԽՔՈՒՄ: ԶԱՎԱԽՔՑԻՆԵՐԸ
ՀԱՅ ԱԶԱՏԱՄԱՐՏՈՒՄ (19–րդ դարի վերջ և 20–րդ դարի սկիզբ) – **Աշոտ Մելքոնյան** 15

ՌՈՍՏՈՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԻՆՈՒՄ
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԻՆ (1910–1914 ԹԹ.) – **Մարիամ Եղյան** 28

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914–1916 ԹԹ.) – **Ռուբեն Սահակյան** 39

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ – **Վահան Մելիքյան** 43

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1918–1920 ԹԹ.) – **Արարատ Հակոբյան** 47

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ 1917–1920 ԹԹ. – **Համլետ Հարությունյան** 56

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ – **Վլադիմիր Ղազախեցյան** 67

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ–ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՂՀ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ – **Վահրամ Բալայան** 76

Գևորգ Խուդինյան
Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադիրների աշխարհայեցողության հիմքը եվրոպական լուսավորականությունն էր՝ 19–րդ դարի հայ լուսավորիչների կողմից «հայացված» և ռուս հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսության մեջ բեկվելու հետևանքով ավելի արմատական բնույթ ձեռք բերած իր հիմնարար արժեքների համակարգով: Ուստի՝ որպեսզի պարզենք ՀՅԴ հիմնադիրների կողմից հայկական ու ռուսական մտքի վերջին նվաճումների ընկալման եղանակներն ու մեթոդները, նախ և առաջ պարտավոր ենք բացահայտել նրանց աշխարհայեցողության ձևավորման գործընթացը:

Ի վերջո, ի՞նչ է առաջադիմության անկասելի թափանիվի մեջ հայտնված մարդ–անհատը՝ միջո՞ց, թե՞ նպատակ. ահա մի հարց, որը հուզում էր արևմտաեվրոպական ու ռուսական միտքը: Հենց այս ելակետային գաղափարն էր միմյանցից տարանջատում ժամանակի սոցիալական փիլիսոփայության տարբեր ուղղությունները: Եվ այդ յուրահատուկ ջրբաժանի առջև ընտրություն կատարելու հարցում վճռորոշ դեր խաղաց այն հանգամանքը, որ ՀՅԴ ապագա հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանը խորապես ընկալեց գերմանացի մեծ փիլիսոփա Էմմանուել Կանտի ուսմունքը մարդու մասին: Ընթերցելով գերմանական հանճարի «Զուտ բանականության քննադատությունը»՝ Քր. Միքայելյանը իր համար յուրահատուկ ելակետ դարձրեց այն գաղափարը, որ «Ոչ մի դէպքում և ոչ ոքի համար մարդ–անհատը չպէտք է դիտվի միջոց, **միմիայն** որպես միջոց: Նա ամեն դէպքում և ամեն մէկի համար պետք է լինի միաժամանակ որպես նպատակ»[1]: Նման փիլիսոփայական ելակետը բխում էր Է.Կանտի այն համոզմունքից, որ բարոյական արժեքների աշխարհը իրենից ներկայացնում է մի ուրույն համակարգ, ուստի հրամայական անհրաժեշտություն է «...հարմոնիան ճշգրիտ մտածողության և բարի կամքի, ինտելեկտուալ պատասխանատվության և բարոյական պատասխանատվության միջև»[2]: Գերմանացի մեծ փիլիսոփան առաջադրել էր «Այնպիսի մտածող էակի գաղափարը, որի մեջ բարձրագույն երանության հետ կապված բարոյապես կատարյալ կամքը կազմում է աշխարհում գոյություն ունեցող ամեն տեսակի երանության պատճառը, քանի

1 **Ֆրանգեան Ե.,** Հասարակագիտական էտիւդներ, Հ. Յ. Դաշնակցութեան սոցիալ–փիլիս. աշխարհայեցողութեան հիմնաւորման շուրջ, Բագու, տպարան «Արամազդ», 1917, էջ 18:

2 **Абрамян Л. А.,** Главный труд Канта. К 200—летию выхода в свет «Критики чистого разума». Ер., «Айастан», 1981, с. 55.

որ այն գտնվում է բարոյականության (որպես երջանկության արժանիքի) հետ ճշգրիտ հարաբերակցության մեջ, ես անվանում եմ գերագույն բարորության իդեալ»[1]: Հենց նման առանցքային գաղափարի ընկալումը Քր. Միքայելյանի կողմից պայմանավորեց ՀՅԴ հիմնադիրների աշխարհընկալման մարդակենտրոն բնույթը, որի հիմնական սուբյեկտը բարոյական ու կամային անհատն էր:

Սա կանխորոշում էր նաև ՀՅԴ հիմնադիրների մոտեցումը ժամանակի արևմտաեվրոպական փիլիսոփայության լուրջ նվաճումը համարվող վաղ պոզիտիվիզմի ներկայացուցիչներ Օգյուստ Կոնտի ու Հերբերտ Սպենսերի հարցադրումների և ռուսական նարոդնիկության տեսաբանների հանդեպ: Առաջիններից՝ մանավանդ Օ. Կոնտից, ՀՅԴ հիմնադիրները վերցրին կոնկրետ երևույթների ու գործընթացների գնահատման մեթոդը՝ մերժելով պոզիտիվիզմի՝ որպես դրամատիրական հասարակության փիլիսոփայության բովանդակությունը: Իսկ նման դիմաշրջման համար ամուր հիմք դարձան ռուս հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսներ Պ. Լավրովի, Մ. Բակունինի և, մանավանդ, Ն. Միխայլովսկու հարցադրումները:

Օգյուստ Կոնտի մեթոդաբանության անմիջական ազդեցությամբ ՀՅԴ հիմնադիր սերնդի ներկայացուցիչներն արդեն 1890–ականների սկզբներին «Դրոշակի» էջերում առաջ քաշեցին «...երկրի կուլտուրայով և նրա ազգային ու պատմական առանձնայատկութիւններով...»[2] ղեկավարվելու առաջադրանքը՝ որպես իրենց շրջապատող միջավայրի գնահատման առանցքային չափորոշիչ: «Սա որոշ օրէնք է, որը, սկսած Կոնտից, մի շարք փայլուն ուսումնականների շնորհիվ ընդհանրացաւ բոլոր գիտութիւնների վերաբերմամբ եւ որը յայտնի է էվօլիւցիական օրէնքի անվան տակ»[3],– պարզաբանում էր «Դրոշակը» իր 1892–ի փետրվարյան համարում: Նման մեթոդաբանական ելակետից էին բխում նաև ՀՅԴ հիմնադիրների կողմից դարաշրջանի կոնկրետ արժեչափերի ընկալումը և վերապահ վերաբերմունքը «հեռավոր անցյալի» և «իդեալական ապագայի» հանդեպ, որը թելադրում էր «իբրև հիմք վերցնել ժամանակին և տեղին յատուկ այն պայմանները, որոնք համապատասխանելով հասարակական բարօրութեան պահանջներին՝ նաեւ ընդհանուր կերպով որոշում են մոտիկ ապագան»[4]:

Սակայն Չարլզ Դարվինի՝ գոյության կռվի ու բնական ընտրության գաղափարների, Կարլ ֆոն Բերի՝ էմբրիոլոգիայի և ժամանակի բնագիտության այլ նվաճումների հիմքի վրա կառուցված անգլիացի փիլիսոփա Հերբերտ Սպենսերի սոցիոլոգիան՝ օրգանական զարգացման տեսությունը, հիմնվում էր կենսաբանական էակների զարգացման օրինաչափությունները իբրև մարդկային հասարակությանը բնորոշ չափորոշիչներ դիտարկելու սկզբունքի վրա, որն արդեն 1860–1870–ական թվականներին հիմնովին մերժվել էր ռուսական սուբյեկտիվ–սոցիոլոգիական դպրոցի խոշորագույն

1 **Кант Иммануил,** Критика чистого разума, в кн: Сочинения в шести томах, том 3, под. общ. ред. В. Ф. Асмуса, А. В. Гулыги, Т. И. Ойзермана, М., «Мысль», 1964, с. 665.

2 «Դրօշակ», «Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան օրգան», 1891, N 1, էջ 1:

3 Նույն տեղում, 1892, N 3, էջ 1:

4 Նույն տեղում:

ներկայացուցիչ Ն. Միխայլովսկու կողմից: Վերջինս ապացուցել էր, որ ի հակադրություն օրգանական աշխարհի՝ հասարակության զարգացումը նույնպես պարզ տրոհման միջոցով ընթանալու դեպքում հանգեցնում է մարդ–անհատին բնորոշ հարուստ ներաշխարհի աստիճանական կորստյանը՝ ռեգրեսին, ուրեմն «Պրոգրեսը աստիճանական մոտեցումն է անբաժանելիների միասնությանը...»[1]: Հենց այստեղից էր բխում ՀՅԴ հիմնադիրների կողմից սպենսերյան օրգանական զարգացման ուսմունքի մերժման ելակետը՝ բարոյական գնահատականի, այսինքն՝ սուբյեկտիվ մեթոդի կիրառման անհրաժեշտությունը: Դժվար չէ նկատել, որ դեռևս Է. Կանտի «Զուտ բանականության քննադատության» մեջ առկա բարոյապես կատարյալ կամքի առաջնության մասին եզրահանգումը է՛լ ավելի էր կոնկրետանում ռուսական սուբյեկտիվ–սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների հարցադրումներում՝ դառնալով յուրահատուկ ուղենիշ ՀՅԴ հիմնադիրների համար:

Կոնտ–սպենսերյան պոզիտիվիզմին հակադրվող՝ մարդկային գործոնի առաջնության գաղափարը դարձավ մարդու՝ որպես գիտակից, կամային և գործուն անհատականության դաշնակցական ընկալման հիմքը: Արևմտյան Եվրոպայի ու Ռուսաստանի զարգացման առանձնահատկությունները պայմանավորող քաղաքակրթական տարբեր ուղենիշերի հետ միասին՝ այստեղ դժվար չէ նկատել ՀՅԴ հիմնադիրների կողմից հոգևոր նախասկզբի առաջնության խորը գիտակցման վրա հիմնված ռուսական սոցիալական փիլիսոփայությանը տրվող ակնհայտ նախապատվությունը: Դա ապացուցվում է նաև Նիկոլայ Միխայլովսկու ձևակերպած՝ **«Պրավդա»** հասկացության մեջ ամփոփվող ուղղափառ–ռուսական դարավոր ավանդույթի՝ ՀՅԴ հիմնադիրների վրա թողած լուրջ ազդեցության փաստով. «Կարծես միայն ռուսերենում են ճշմարտությունը և արդարությունը կոչվում միևնույն բառով, և թվում է, թե միաձուլվում են մի մեծ ամբողջության մեջ: **Պրավդան՝** բառի այդ մեծ իմաստով, միշտ կազմել է իմ որոնումների նպատակը»[2],– գրում էր Ն. Միխայլովսկին: **«Պրավդա»** գաղափար–սկզբունքը՝ որպես ճշմարտության ու արդարության անխզելի միասնություն, յուրահատուկ «կարմիր թելի» նման անցնում է ՀՅԴ ողջ գաղափարախոսության միջով՝ նրա հիմնադրման պահից սկսած: Արդարության գաղափարի վրա հաստատված՝ սեփական գործի ճշմարտության մասին համոզմունքը հենց սկզբից դարձավ ՀՅ Դաշնակցության յուրահատուկ հավատո հանգանակը: Նման հավատը ոմանց կողմից հետագայում ընկալվել է որպես ռոմանտիզմ, մյուսների կողմից՝ իռացիոնալ մտածողություն և այլն, սակայն փորձ չի արվել պարզելու այն հարցը, թե ճշմարտության և արդարության միասնության վրա հիմնված այս ելակետի յուրացումը իրականում ինչ էր տալիս ՀՅԴ հիմնադիրներին:

Կարծում ենք, որ ՀՅԴ գաղափարախոսության հիմքում ընկած այս ելակետային գաղափարը ռուսական նարոդնիկության սկզբունքների պարզ պատճենումը չէր, այլ նախ և առաջ հայկական միջավայրին նրա համապա-

1 **Михайловский Николай К.,** Что такое прогресс, в кн: “Сочинения Н. К. Михайловского”, том первый, СПб, изд. редакции журнала “Русское Богатство”, типография Б. М. Вольфа, 1896, с. 150.

2 **Михайловский Н. К.,** Предисловие, “Сочинения Н. К. Михайловского”, т. 1, СПБ, 1896, с. 5.

տասխանության փաստի արձանագրումը: Պ. Լավրովի ու Ն. Միխայլովսկու սոցիոլոգիան հիմնվում էր այն միջավայրի կոնկրետ արժեչափերի ընկալման վրա, որտեղ քաղաքական բռնությունը դոմինանտ էր տնտեսական գործոնի առաջնայնության արևմտյան չափորոշիչների համեմատ: Դա էր պատճառը, որ Ռուսաստանում աստիճանական–էվոլյուցիոն զարգացման սկզբունքի վրա հիմնված Օգյուստ Կոնտի մեթոդը ձեռք էր բերում հեղափոխական բովանդակություն, պրուդոնյան անարխիզմի չափավորությունը՝ բակունինյան «բունտի» տեսք, իսկ բանական ու կամային անհատին կենդանու հետ նույնացնող սպենսերյան օրգանական տեսությունը՝ հետադիմական ֆունկցիա: Այս միջավայրի բարեփոխման համար բանականությունը դեռևս բավարար պայման չէր. հարկավոր էին նաև բռնության դեմ ծառացող այն հերոսները, որոնց առաքելության իմաստը Պ. Լավրովի «Պատմական նամակներով» հիմնավորված՝ նահատակության (մարտիրոսության) գաղափարն էր: Չմոռանանք, որ և՛ ռուսական, և՛ հայկական միջավայրերի համար, ի հակադրություն արևմտաեվրոպական իրողությունների, տվյալ դարաշրջանում ընդհանուր էր հենց քաղաքական բռնության գերակայությունը: Ուրեմն, երբ Պ. Լավրովը եզրակացնում էր, որ «Հարկավոր են եռանդուն, ֆանատիկոս մարդիկ, որոնք ռիսկի են դիմում ամեն ինչով և պատրաստ են զոհաբերել ամեն ինչ: Հարկավոր են նահատակներ, որոնց մասին առասպելին մեծապես կգերազանցեն նրանց իրական արժանիքները, նրանց իրական ծառայությունները»[1],– կարծես թե խոսում էր ոչ միայն ցարական լծի տակ ճնշված ռուս մարդու, այլև արևելյան բռնապետության տակ տառապող հայերի լեզվով: Ավելին՝ հայկական միջավայրը, ուր քաղաքական բռնության գերակայությունը հանդես էր գալիս ավելի դաժան՝ սուլթանական բռնապետության կերպարանքով, նման գաղափարների ընկալման և իմաստավորման համար է՛լ ավելի պարարտ հող էր ստեղծում: Ուրեմն՝ հայկական միջավայրում ձևավորված ՀՅԴ հիմնադիրները, վերապահ վերաբերմունք ցուցաբերելով կոնտ–սպենսերյան պոզիտիվիզմի հանդեպ և որդեգրելով ռուսական նարոդնիկության հեղափոխական գաղափարներն ու գործելակերպը, իրականում ելնում էին հայկական իրականության պահանջմունքներից, այսինքն՝ նրանք ոչ այնքան ընդօրինակում էին օտար փորձը, որքան փնտրում էին սեփական միջավայրի բարեփոխման հարմարագույն միջոցը:

Նույն պահանջմունքների արտացոլումն էր նաև քննադատաբար մտածող անհատներից բաղկացած մտավորականության՝ սեփական ժողովրդի հանդեպ ունեցած պարտքի մասին լավրովյան հայտնի ուսմունքը, որն ուղղակի արտացոլված է «Դրոշակի» երկրորդ համարի առաջնորդող հոդվածի մեջ: Ինտելիգենցիան (մտավորականությունը) «...պէտք է շտապէր ժողովրդի կոչին, նա պէտք է գնար իւր գիտութեան պաշարով աջակցելու ժողովրդին այդ դժուար րոպէում եւ կազմակերպելու այն կռիւը, որ սկսում էր ժողովուրդը դարաւոր ճնշման ու անարդարութեան դէմ: Եւ ինտելլիգէն-

1 **Лавров П. Л.,** Исторические письма 1868—1869, в кн.: П. Л. Лавров, Философия и социология: избранные произведения в двух томах, т. 2, М. 1965, с. 121

ցիան յետ չմնաց ժողովրդից, հետեւեց նրան»[1],– գրում էր «Դրոշակը» դեռևս 1891 թվականին:

Այսպիսով՝ ՀՅԴ հիմնադիրների աշխարհայեցողության ձևավորման գործընթացում ռուսական նարոդնիկության փիլիսոփայության ու գործելակերպի ձեռք բերած գերակայությունը հայկական միջավայրի հետ ռուսական իրականության համեմատական նմանության հետևանքն էր: Նույն պատճառներով էր պայմանավորված նաև պատմության մեջ անհատի դերին ՀՅԴ հիմնադիրների կողմից տրվող գնահատականը: Դրա ակունքները նույնպես մի կողմից բխում էին նարոդնիկական սուբյեկտիվ սոցիոլոգիայի մարդակենտրոն և դրական առումով՝ անհատապաշտ ոգուց, «պայքար անհատականության համար» հայտնի սկզբունքից և մյուս կողմից՝ պատմության մեջ անհատի դերի այն ընկալումից, որն առկա էր ժամանակի երիտասարդության «մտքի տիրակալներից» մեկի՝ անգլիացի պատմաբան Թոմաս Կարլեյլի աշխատություններում[2]: Սակայն ՀՅԴ հիմնադիրների մոտեցումը ամենևին էլ անհատի դերի գերագնահատում չէր ո՛չ Թոմաս Կարլեյլի ծայրահեղ ելակետից, որը պատմությունը վերածում էր մեծ մարդկանց կենսագրությունների շարքի, և ոչ էլ նույնիսկ Ն. Միխայլովսկու՝ «հերոսները և ամբոխը» բանաձևի տեսանկյունից, այլ այդ երկու գործոնների համադրության միջոցով առաջինին՝ անհատին տրվող չափավոր նախապատվություն: «Ես Բոկլի, նոյնիսկ սոցիալիստների հետ համամիտ չեմ, որ ամբոխն է ազդում անհատի վրայ: Ընդհակառակը, անհատները, հերոսներն են տանում ամբոխին. հոգեբանական տեսակետից Կարլէյլը, Միխայլովսկին, Նիկոլայ–ոն[3] (տե՛ս «Տնտեսական մատերիալիզմ և գործօն յառաջադիմութիւն» գիրքը), կարծես, աւելի արդարացի են…»[4],– գրում էր Սիմոն Զավարյանը:

Անհատի և հասարակության փոխհարաբերությունների նման մեկնաբանությունը **նախ և առաջ** թույլ էր տալիս ՀՅԴ հիմնադիրներին պատմության մեջ անհատի դերի ընկալումը դուրս բերել գոյության կռվի մասին խիստ պարզունակ սոցիալ–դարվինիստական պատկերացումների շրջագծից, ուր «Ընտրութիւնը կատարեալների, բարձր տիպերի կողմը չէ, այլ միայն աւելի յարմարուողների կողմը»[5]: **Երկրորդ՝** բարձրացնել բազմակողմանի, հարմոնիկ կերպով զարգացած անհատի ձևավորման հիմնահարցը, որը հետագայում վերածվեց ՀՅԴ–ի համար ծրագրային առաջադրանքի, **երրորդ՝** իբրև բազմակողմանի կերպով զարգացած անհատի գործողությունների գնահատման չափանիշ ընտրել բարոյական նկարագրի հարցը՝ որպես հեղափոխական գործունեության մեջ նրա ներգրավման վճռորոշ պայման և,

1 «Դրօշակ», 1891, N 2, սեպտեմբեր, էջ 1:

2 **Կարլեյլ,Կարլայլ (Carlile) Թոմաս** (1795–1881), անգլիացի պատմաբան ու փիլիսոփա: Գլխավոր աշխատությունը՝ «Հերոսները, հերոսների պաշտամունքը և հերոսականը պատմության մեջ»:

3 **Նիկոլայ–ոն**, նույն ինքը՝ **Դանիելսոն Նիկոլայ Ֆրանցեվիչ** (1844–1918), ռուսական նարոդնիկ, տնտեսագետ և հրապարակախոս:

4 **Ս. Զավարեանի** նամակը «Դրօշակի» խմբագրութեանը (1895 թ. հոկտեմբեր), «Դիվան Հ.Յ. Դաշնակցութեան», հատ 1, Պոսթըն, 1934, էջ 202:

5 **Ֆրանգեան Ե.,** Ն. Կ. Միխայլովսկին որպէս փիլիսոփա–սօցիօլօգ, Երեւան, տպարան «Լոյս» Արշակ Յակովբեանցի և որդիք, 1911, էջ 173:

վերջապես, **չորրորդ՝** բարոյական ու գործուն անհատականությանը տրվող նման չափավոր առաջնությունը դարձնել հիմնական միջոց՝ ժողովրդին արթնացնելու և նրան հեղափոխական պայքարի մղելու գործում, քանզի, ինչպես հետագայում պնդում էր Քր. Միքայելյանը, «Ոչ մի հասարակական շարժում չէ կարող յարատևել և մանաւանդ յաղթական վախճան ունենալ, եթէ նա ժողովրդականացած չէ ազգի մէջ, նրա ընդարձակ խաւերում»[1]:

ՀՅԴ հիմնադիր սերնդի համար կարևոր էր նաև նարոդնիկների սոցիալ–քաղաքական աշխարհայեցողության հիմնաքարը կազմող՝ աշխատավորությանը որպես մեկ ամբողջություն դիտարկելու սկզբունքի ընկալումը: ՀՅԴ ծրագրում որպես «աշխատավոր ընդհանրության» շահեր բանաձևվված այս սկզբունքը «շրջափակում էր» աշխատավորության ներսում նեղ–դասակարգային խտրականություն մտցնող մարքսիզմի թափանցման ճանապարհը կուսակցության գաղափարախոսության մեջ:

Այսպիսով՝ **առաջին՝** ՀՅԴ հիմնադիր սերնդի կողմից 1870–1880–ականներին սկսած մտավոր համառ աշխատանքի շնորհիվ կուսակցության ղեկավար կորիզը ձևավորած մտավորականները խորությամբ յուրացրին ժամանակի արևմտաեվրոպական ու ռուսական փիլիսոփայության ու սոցիոլոգիայի ակնառու նվաճումները՝ էմմանուել Կանտի, Օգյուստ Կոնտի, Հերբերտ Սպենսերի, Պյոտր Լավրովի, Նիկոլայ Միխայլովսկու և այլոց աշխատությունները, ու հանգեցին միանգամայն ինքնուրույն եզրակացությունների: **Երկրորդ՝** խորությամբ ընկալելով եվրոպական հեղափոխությունների, բալկանյան ժողովուրդների ազգային–ազատագրական շարժումների և ռուսական նարոդնիկության հեղափոխական պայքարի փորձը, ինչպես նաև յուրաքանչյուր կոնկրետ երկրի պատմափիլիսոփայական մտքի առանձնահատկությունները՝ ՀՅԴ ապագա հիմնադիրները նման փորձի և արժեքների հանդեպ որդեգրել էին ոչ թե պարզունակորեն պատճենելու, այլ դրանցում առկա հայկական միջավայրին ու պայմաններին համապատասխանող շերտը յուրացնելու սկզբունքը: **Երրորդ՝** նման գործելակերպը հանգեցրեց նրան, որ արդեն 1880–ականների վերջերին–1890–ականների սկզբներին ՀՅԴ հիմնադիր սերնդի մոտ նկատվեց արտաքուստ՝ փիլիսոփայական, իսկ խորքում քաղաքակրթական բնույթ ունեցող երկընտրանք՝ լիբերալ–ռեֆորմիստական քաղաքականության փիլիսոփայական հիմքը հանդիսացող կոնտ–սպենսերյան պոզիտիվիզմի և Ռուսաստանում հեղափոխական–արմատական քաղաքականությունը հիմնավորող՝ նարոդնիկության տեսաբանների սոցիալական փիլիսոփայության միջև: **Չորրորդ՝** Հ.Յ. Դաշնակցության հիմնադիր սերնդի, իսկ հետագայում նաև նորաստեղծ կուսակցության մեջ գերիշխող դիրքեր գրավեցին ռուսական նարոդնիկության գաղափարախոսության հետևորդները, որովհետև հայկական միջավայրից ու պայմաններից բխող առաջադրանքները ոչ միայն ավելի մոտ էին ռուսական միջավայրի պահանջմունքներին, այլև հայ իրականության մեջ գոյություն ուներ դրանից է՛լ ավելի արմատական գործելակերպ որդեգրե-

1 **Միքայէլեան Քր.,** Ամբոխային տրամաբանութիւն, «Յեղափոխականի մտքերը», Ժընեվ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, 1906, էջ 48:

լու խնդիր, քանի որ սուլթանական բռնապետությունը ցարիզմից է՛լ ավելի ասիական ու բարբարոսական բնույթ ուներ: **Հինգերորդ՝** արևմտաեվրոպական և ռուսական սոցիալական փիլիսոփայության տարբեր եզրահանգումների միջև կատարված նման ընտրությունը ինքնին վկայում էր այն մասին, որ ՀՅԴ ապագա հիմնադիրներն առաջնորդվում էին ոչ թե նմանակումների ու պարզ պատճենման, այլ առաջադիմության հայկական բանաձևը փնտրելու մեթոդաբանությամբ՝ հիմք ընդունելով հարազատ երկրի պայմաններն ու միջավայրը: **Վեցերորդ՝** ՀՅԴ հիմնադիրների կողմից ռուսական նարոդնիկության «գաղափարական հայրերի» տեսական հարցադրումներին տրված նախապատվությունը իրականում միայն իր արտաքին ձևով էր ընդօրինակում զարգացման սպեցիֆիկ–ռուսական ուղու մասին գաղափարները: Պատճառն ակնհայտ է. նարոդնիկությունը սոցիալիզմի գաղափարի մեջ պարփակված ազատության արևմտյան իդեալը արդեն փոխակերպել էր ռուսական առանձնահատուկ ուղու ելակետային գաղափարի վրա հիմնված սլավոնաֆիլական ավանդույթի արմատական շարունակության, այսինքն՝ «ռուսականացրել» էր այն, դարձրել տվյալ դարաշրջանի ռուսական ազգային մտածողության հիմնական դրսևորումը: Մինչդեռ ազատության իդեալը իր հիմքում ամենևին էլ ռուսական չէր, այլ՝ համամարդկային, իսկ իր բուն ակունքներով՝ արևմտյան: Ուրեմն՝ ռուսական միջավայրը տվյալ պարագայում հանդես էր գալիս սոսկ որպես գաղափարական արժեքների փոխանցման յուրահատուկ «խողովակ»՝ Եվրոպայի և Հայաստանի միջև: **Յոթերորդ՝** ՀՅԴ հիմնադիրների կողմից նարոդնիկության գաղափարախոսությանը տրված նախապատվության հիմքում ընկած էր ոչ միայն ռուսական ու հայկական միջավայրերի համար ընդհանուր չարիքի՝ քաղաքական բռնության գերակայության հաշվառումը, այլև երկու ժողովուրդների հոգեկերտվածքի, պատմության, մշակույթի ու կրոնի միջոցով դրսևորվող քաղաքակրթական հոգեհարազատությունը: Այն նպաստում էր նարոդնիկության գաղափարախոսության միջոցով երկու ժողովուրդների համար ընդհանուր և արևելաքրիստոնեական միջավայրի համար միանգամայն հոգեհարազատ արժեհամակարգի՝ ճշմարտության ու արդարության անխզելի կապի, արդարության հաղթանակի հանդեպ հավատի, հոգևորի՝ նյութական աշխարհի հանդեպ ունեցած առաջնության, բարոյական ինքնասահմանափակման, «դրական հերոսի»՝ մարտիրոսի, նահատակի անանց առաքելության մասին պատկերացումների վերականգնմանը: Այսինքն՝ մինչ այդ էլ հայկական միջավայրում խորը արմատներ ունեցող քաղաքակրթական ավանդույթները «վերաթարմացվում» էին և ընկալվում իրենց նորացված տեսքով: **Ութերորդ՝** ինչպես Արևմտյան Եվրոպայի, այնպես էլ մանավանդ Ռուսաստանի հետ քաղաքակրթական նման ընդհանրությունների առկայության փաստը ինքնին հերքում է օտար արժեքների պարզ նմանակման կամ ընդօրինակման մասին ՀՅԴ–ի հասցեին ժամանակին հնչեցված տեսակետները: Ակնհայտ է դառնում, որ ի դեմս ՀՅԴ հիմնադիր սերնդի արժեքային–գաղափարախոսական ընտրության՝ մենք գործ ունենք ոչ թե ինչ–որ օտար գաղափարների ու գործելակերպի պատճենման, այլ Արևմտյան Եվ-

րոպայի և Ռուսաստանի պատմության ու մշակույթի խորքային շերտերում պահպանված, ուստի և 19–րդ դարում սեփական ինքնության գիտակցմանը հասած հայությանը նորից իրենց գոյության մասին հիշեցնող համամարդկային արժեքների հետ, որոնց «վերաթարմացումը» վերածվում էր նոր մարտահրավերների ու սպառնալիքների գնահատման և գիտակցման բնական ու բանական գործընթացի:

Եզրակացություն. ՀՅԴ գաղափարախոսությունը իր ձևավորման դարաշրջանում ամենևին էլ սպեցիֆիկ–հայկական երևույթ չէր: Այն նաև ավանդական–ազգային արժեհամակարգ չէր՝ 19–րդ դարի առաջին կեսին մեր իրականության մեջ դեռևս գերիշխող՝ այդ բառի հոգևոր–կրոնական ընկալմամբ՝ «ազգ=եկեղեցի» բանաձևով: Ընդհակառակը՝ ՀՅԴ գաղափարախոսությունն իր հիմքում «նոր» կամ «եվրոպականացած» հայ մարդու կողմից պատմական անցյալի և իր ժամանակի ընկալման շարունակական փորձերի՝ Խ. Աբովյանով սկսված ու Ռաֆֆիով ավարտված շղթայի եզրափակիչ ու, փաստորեն, միակ ամբողջական օղակն էր: Ուրեմն՝ ՀՅԴ գաղափարախոսությունը հանդիսանում էր հայկական քաղաքակրթության դարավոր ավանդույթներին բնորոշ համադրական գործառույթի կրկնություն՝ նոր պայմաններում:

Հայկականության լայն՝ քաղաքակրթական ընկալման դիտանկյունից ակնհայտ է դառնում, որ նման համադրական գործառույթները մեզանում դրսևորվել են որոշակի ցիկլերով. անտիկ աշխարհում՝ հելլենիզմ, միջնադարում՝ քրիստոնեական մշակույթ, նոր ժամանակներում՝ եվրոպական լուսավորականություն: Դրանցից յուրաքանչյուրը հանդիսացել է Հայաստանի ու հայության հոգեմտավոր, իսկ հետագայում՝ նաև տնտեսաքաղաքական վերելքի նախերգանքը: Ուրեմն՝ ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսությունը հայկական էր՝ որպես հայկական քաղաքակրթությանը բնորոշ **գործառույթների** կրկնություն, և միաժամանակ խորապես համամարդկային՝ իբրև **բովանդակության** ամբողջական ու հստակ բանաձևում՝ 19–րդ դարի հայ իրականության մեջ:

Աշոտ Մելքոնյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից–անդամ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՎԱԽՔՈՒՄ: ՋԱՎԱԽՔՑԻՆԵՐԸ ՀԱՅ ԱԶԱՏԱՄԱՐՏՈՒՄ
(19–րդ դարի վերջ և 20–րդ դարի սկիզբ)

1878 թ.՝ հայկական հարցի միջազգայնացումից հետո, հայ հասարակական–քաղաքական կյանքի աշխուժացումն իր կնիքն է թողնում գավառահայ կյանքի վրա: Ամենուր նկատվում է համազգային խնդիրների, մասնավորապես՝ հայկական հարցի լուծմանն ուղղված քայլերի ակտիվացում: Այդ տեսանկյունից բացառություն չի կազմում նաև պատմական Ջավախքը, որը 19–րդ դարի վերջին քառորդին հիմնականում ընդգրկված էր Թիֆլիսի նահանգի ամենահայահոծ վարչամիավորներից մեկի՝ Ախալքալաքի գավառի մեջ[1]: Արևմտահայության նկատմամբ Ջավախքի հայության սրտացավ վերաբերմունքը դրսևորվում է 1879 թ., երբ սկսվում է Վանի սովյալներին օգնություն ցուցաբերելու համահայկական շարժումը[2]: 1890–ական թվականներին Ջալալ Տեր–Գրիգորյանի և Պողոս Աբելյանի ջանքերով ստեղծվում է ազատագրական խմբակ[3]: Այստեղ այդ ժամանակ իրենց գործունեությունն է ծավալում Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը, իսկ 20–րդ դարասկզբին՝ սոցիալիստ–հեղափոխականները՝ էսէռները: Դաշնակցության համար Ջավախքում համակիրներ գտնելու հենքը ազգային խնդիրներն էին, իսկ էսէռների համար՝ գյուղացիությանը հուզող հողային հիմնահարցերը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից երևում է, որ Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարները ջերմ արձագանք են գտել ախալքալաքցիների շրջանում, որոնց զգալի մասը, լինելով ծագումով արևմտահայ, շարունակում էր պահպանել հոգևոր կապը իրենց նախկին հայրենիքի՝ Էրզրումի նահանգի հետ: Ըստ Ախալքալաքի գավառապետի կազմած մի զե-

---

1 Ախալքալաքի գավառի տարածքը 2723 քառ. կմ էր: Հայությունը բացարձակ մեծամասնություն էր կազմում՝ ամբողջ բնակչության 72–ից 82 տոկոսը: Գավառում հայերի թիվը 1886–ին հասնում էր 46386–ի, իսկ Առաջին աշխարհամարտի նախօրյակին՝ 81 հազարի (Մելքոնյան Ա., Ջավախքը 19–րդ դարում և 20–րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 230–231):

2 Մշակ, 1880, թիվ 10, 26, 31, 35, 59 և այլն:

3 Ախալքալաքի գավառագիտական թանգարան, գործ 3674, թ. 1–10: Ախալքալաքում հասարակական–քաղաքական կյանքի աշխուժացմանը մեծապես նպաստել է ժամանակի մամուլը, հատկապես «Մշակը», «Տարազը» և այլն (տե՛ս Մշակ, 1875, թիվ 5, 1880, թիվ 25, Տարազ, Թիֆլիս,1901, թիվ 19):

կուցագրի՝ արդեն 1891 թ. հունվարին Ջավախքում շրջում էին երկու հեղափոխական քարոզիչներ, որոնք կոչեր էին անում զորավիգ լինելու թուրքահպատակ հայրենակիցների ազատագրական պայքարին՝ կամ մասնակցելու նրանց օգտին կատարվող դրամահավաքին կամ զենքը ձեռքին միանալու արևմտահայերի ապստամբական գործողություններին: Այդ գործիչներին հաջողվել է հավաքագրել կամավորներ՝ Արևմտյան Հայաստան անցնելու և այնտեղ ազատագրական պայքար կազմակերպելու նպատակով: Գավառապետի կարծիքով՝ նրանց այդօրինակ հաջողության պատճառն այն էր, որ գավառում բնակվող հայության, հատկապես քաղաքաբնակների շրջանում մեծ թիվ են կազմել Հայկական թագավորության վերականգնման մասին երազող անձինք[1]:

Քարոզիչներին հայտնաբերելու ուղղությամբ Բոգդանովկայի պրիստավ Մ. Ճավճավաձեի փորձերն անցել են ապարդյուն: Բնակչության աջակցությամբ, հատկապես Փոքր Գոնդուրայի բնակիչ Արտաշես Վարդանյանցի ուղեկցությամբ, նրանց հաջողվել է անցնել հարևան Ալեքսանդրապոլի գավառ: Ձերբակալվել են «խռովարարներին» աջակցած մի խումբ գործիչներ՝ քահանա տեր Ստեփան Արվանյանը, նրա փեսա Շահբազյանը, բժիշկ Արշակը, Դադեշ գյուղի բնակիչներ բժիշկ Դալի քեշիշ Կարսլյանը և քահանա տեր Կարապետը: Հատկապես մեծ ակտիվություն են հանդես բերել տեր Ստեփանի որդին՝ նոտարիուս Արվանյանը, Վաչիանի դպրոցի ուսուցիչ Հմայակ Աղեկյանը և Ախալքալաք քաղաքի բնակիչ, գավառում հայտնի հասարակական – քաղաքական գործիչ, լրագրող, Դիլիսկայի համայնքի նախկին գրագիր Բագրատ Պիճիկյանը: Իշխանությունների համոզմամբ՝ վերոհիշյալ մարդիկ հայկական գաղտնի կոմիտեի անդամներ են և գավառում ստեղծել են այդ կազմակերպության մասնաճյուղ: Ուստի, ըստ ոստիկանության, անհրաժեշտ է նրանց նկատմամբ գործադրել պատժամիջոցներ՝ գավառից արտաքսել Հ. Աղեկյանին և Բ. Պիճիկյանին, հեղափոխականների հետ շփվող, նրանց գործունեության մասին իշխանություններին տեղեկություններ հաղորդելուց հրաժարվող մարդկանց նկատմամբ սահմանել մեծ չափերի տուգանքներ, ինչպես նաև պետական քարոզչություն ծավալել՝ ախալքալաքցիների «չափից դուրս հայրենասիրությունը» զսպելու համար: Գավառապետի համար հատկապես աններելի էր թվում նոտարիուս Արվանովի արարքը, որը, «կրելով ռուսական չինովնիկի գլխարկ, ռուսական կառավարության տեսակետներին դեմ քայլեր է արել…»[2]:

Ախալքալաքի գավառում ցարական իշխանությունները չկարողացան արմատախիլ անել նորաստեղծ դաշնակցական կազմակերպությունը: Պատահական չէ, որ շուտով Ջավախքը տվեց այդ կուսակցության բազմաթիվ հայտնի դեմքեր: Սովորական երևույթ դարձավ ընտանիքի անդամներով այդ կուսակցությանը զինվորագրվելը: Այդպիսի ընտանիքներ դարձան Հովհաննջանյանները (Օհանջանյաններ), Տեր–Մինասյանները, Իգիթյանները (Իգիթխանյաններ, Քաջազնունիներ): Օհանջանյանների բազմանդամ

1 **Խուդինեան Գ.,** Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ծնունդը, Ե., 2000, էջ 116:
2 Նույն տեղում, էջ 116–117:

ընտանիքի անդամներից Համազասպը՝ Համոն (ծնվել է Ախալքալաք քաղաքում 1873 թ.), շուտով ձեռք բերեց մեծ ճանաչում, դարձավ կուսակցության ղեկավար գործիչներից մեկը: Նրա եղբայրներից Արմենը, որը մեծ համբավ էր վաստակել ռուս հեղափոխական գործիչների շրջանում, զոհվեց իր ժողովրդի ազատագրության համար մղվող պայքարում: Քույրերից Սաթենիկը վաստակեց սիրված կին–հեղափոխական գործչի անուն: Նա հանդես եկավ Ախալքալաքում իշխանությունների կողմից հետապնդվող դաշնակցական գործիչ Ջալալ Տեր–Գրիգորյանի և նրա ընկերների պաշտպանությամբ[1]:

Դաշնակցությունը Ախալցխայում և Ախալքալաքում ուժեղացավ հատկապես 20–րդ դարասկզբին: Կատարված հանգանակությունների հաշվին, որոնց մեծ մասը նպատակաուղղված էր արևմտահայ զինական խմբերի կազմակերպմանն ու գործունեության ֆինանսավորմանը, տեղական գործիչների ձեռքում հայտնվեցին դրամական զգալի միջոցներ: Այսպես՝ 1904 թ. Ախալցխա–Ախալքալաքի համատեղ կազմակերպության տրամադրության տակ կար 32 հազ. ֆրանկ գումար, այն դեպքում, երբ Կիլիկիո պատասխանատու մարմինն ուներ 16 հազ., Ամերիկան՝ 15 հազ., Բաքուն՝ 12,5 հազ., Թիֆլիսը, Գանձակը և Շուշին միասին՝ 38,5 հազ. ֆրանկ: Բացի այդ, նույն թվականին հիմնականում «Փոթորիկ» գործողության համար Ախալցխայից և Ախալքալաքից սպասվում էր ևս 10 հազ. ֆրանկ գումար[2]:

Ախալքալաքցիների և սահմանից այն կողմ ապրող նրանց արևմտահայ եղբայրների հետ կապերն օրեցօր ամրապնդվեցին: Ախալցխայի և Ախալքալաքի հայության հոգևոր կապը արևմտահայության հետ արտահայտվում էր նաև գործնական քայլերով: Արդեն 90–ական թվականների սկզբից բազմաթիվ ախալքալաքցիներ ու ախալցխացիներ, անմասն չմնալով այդ ժամանակ հատկապես երիտասարդությանը համակած ոգևորությունից, միանում էին ամենուր կազմակերպվող զինական խմբերին և անցնում Արևմտյան Հայաստան, մասնակցում թուրքական բռնատիրության դեմ մղվող ազատագրական կռիվներին: Պատմագիտական գրականության մեջ կա հսկայական քանակությամբ փաստագրական նյութ, որում ներկայացված է կովկասահայության գործուն մասնակցությունը արևմտահայ ազատամարտին: Սակայն քանի որ այդ հայդուկ–ազատամարտիկների կենսագրականներում միշտ չէ, որ կարելի է գտնել վկայություններ նրանց իսկական անուն–ազգանունների, ծննդյան վայրերի մասին, շատ գործիչների ով և որտեղացի լինելը մնացել է անհայտ: Այդուհանդերձ, կցկտուր տեղեկությունների հիման վրա հնարավոր է դառնում վեր հանել ախալցխացի և ախալքալաքցի մի խումբ ֆիդայիների գործունեությունը, որոնք, որպես կանոն, գրեթե առանց բացառության, դաշնակցականներ էին:

---

1 Ախալքալաքի գավառագիտական թանգարան, գործ 3674, թ. 9–10: Հետագայում Սաթենիկը Պոլսում և Կիլիկիայում զբաղվեց բարեգործական աշխատանքներով, առաջին աշխարհամարտի օրերին այցելեց Արևմտյան Հայաստան՝ գաղթականներին օգնելու նպատակով և, վերջիններից վարակվելով համաճարակով, մահացավ: Սաթենիկի գործունեության մասին տե՛ս Ջէյթլեան Ս., Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լոս Անճելես, 1992, էջ 145–149:

2 **Վարանդեան Մ.,** Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, էջ 364:

Ինչպես հայտնի է, Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքար ծավալելուն ուղղված կովկասահայերի առաջին գործնական քայլը 1890 թ. Սարգիս Կուկունյանի արշավանքն էր: «Կային խումբի մէջ, – գրում է Մ. Վարանդյանը,– և ռուսաց բանակի հայ զինուորներ և մէկ հարիւրապետ, ախալցխացի Ստեփանը, որ կը սորվեցնէր պէտք եղածը կամաւորներուն»[1]:

1892 թ., երբ հայտնի ֆիդայապետ Արաբոն գալիս է Թիֆլիս՝ մասնակցելու ՀՅԴ–ի առաջին ընդհանուր ժողովին, կովկասահայ շատ երիտասարդներ խնդրում են նրան՝ իրենց վերցնել ջոկատի մեջ և անցնել Արևմտահայաստան: Արաբոն շատերին մերժում է և իր հետ 1893 թ. էրգիր է տանում միայն արևմտահայ կամավորականների՝ խնուսցի Մելքոնին, մշեցի Ավոյին, Մարտոյին և ուրիշների: Այն ժամանակ արևմտահայ գործիչների շրջանում տիրում էր այն կարծիքը, որ թուրքական բռնատիրության դեմ ֆիդայական պայքարը գլխավորապես արևմտահայերի խնդիրն է: Բացառություն է արվում միայն ախալցխացիներ Վարդանի և Լևոնի հարցում, որոնք, թերևս, ընդգրկվում են խմբի մեջ իրենց արևմտահայ (էրզրումցի) լինելու պատճառով: Արաբոյի 16–հոգանոց ջոկատը Տարոնի սահմանագլխին՝ Գյալիսորի (Առաշի) ձորում, մարտի է բռնվում քրդերի ու թուրքերի դեմ: Բոլոր ֆիդայիները զոհվում են: Արաբոյի կողքին քաջի մահով ընկնում է ախալցխացի Վարդանը[2]:

Ախալցխացի առաջին հայդուկապետերից է դառնում Տիգրան Օքոնյանը՝ Շամիլ մականունով (1868–1893), որի ջոկատը վրեժխնդիր է լինում Օլթիի մահմեդական հարստահարիչներից: Շուտով Շամիլը Կարինում հիմնում է ՀՅԴ «Համարձակներ» խումբը[3]:

1890–ականների առաջին կեսին պատմական հայրենիքը թուրքական լծից ազատագրելու գաղափարները լայն տարածում են գտնում Ջավախքում: Մեսրոպյան վարժարանում, քաղաքային գրադարանում, թատերական ներկայացումների ժամանակ, ամենուր խոսում էին հայ ազատամարտին նվիրվելու հրամայականի մասին: Թիֆլիսից ստացվող առաջադիմական մամուլի էջերում առաջ քաշված գաղափարները լայնորեն քննարկվում էին մտավորականության և երիտասարդության շրջանում: Այդ տեսակետից առանձնակի ակտիվություն է նկատվում Ախալքալաքի Մեսրոպյան ծխական դպրոցում:

Երկրի մասին խոսակցություններն ավելի հաճախակի են դառնում, երբ 1894 թ. թուրքական յաթաղանից մազապուրծ առաջին արևմտահայ գաղթականները՝ թվով 350 հոգի, հասնում են Ախալքալաք: Բնակչությունը ջերմորեն է ընդունում նրանց, տեղավորում քաղաքում և Գումբուրդո, Արագովա, Օրջա և այլ գյուղերում: Կովկասի հայոց բարեգործական ընկերության տեղի մասնաճյուղի ջանքերով կազմակերպվում է հանգանակություն[4]: Տղամարդկանց մի մասը գոյությունը մի կերպ պահպանելու համար չնչին վճարումով, իբրև քարհատներ, մասնակցում է զինվորական զորամասի

1 Նույն տեղում, էջ 69:
2 Նույն տեղում, էջ 120:
3 Յուշամատեան Հ. Յ. Դաշնակցութեան, ալբոմ–ատլաս, հ. Ա, Լոս Անճելըս, 1992, էջ 20:
4 **Դավթյան Ա. Խ.,** Ջավախք, Երևան, 1994, էջ 42:

շենքերի կառուցմանը: Ծխական դպրոցի մի խումբ դասընկերներ՝ 12–ամյա Մինասը (հետագայում՝ ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Ռուբեն Տեր–Մինասյանը), Պարույրը, Բաղդիկը և ուրիշներ, այցելում են նրանց, ունկնդրում համիդիեական զարհուրելի կոտորածների մասին նրանց պատմածները: Ռուբենի վրա հատկապես ծանր տպավորություն է թողնում շփումը քարհանքում աշխատող գաղթականներից մեկի հետ, որը, տեսնելով պատանիներին, հիշում է իր «լաճին»: Ռուբենի հարցին, թե «ի՞նչ է լաճը», տաճկահայը պատասխանում է. «Իմ զաւակը, որ քեզի նման խորոտ էր, եարապ, ի՞նչ եղաւ»[1]:Պատանիները, համաձայնության գալով Եկատերինոդարից հայրենի քաղաք վերադարձած 11–ամյա Արտաշեսի (Չիլինգարյան՝ հետագայի դաշնակցական գործիչ Ռուբեն Դարբինյանը) հետ, որոշում են «թուրքերից վրեժխնդիր լինելու և Հայաստանն ազատագրելու համար» մեկնել Երկիր: Նրանք ձեռք են բերում «զենք»՝ վառոդ, դանակներ, և իրենցից յուրաքանչյուրի համար ընտրելով նոր անուններ՝ Ռաֆֆու վեպերի սիրված հերոսներից, ուղղվում են դեպի ռուս–թուրքական սահման[2]: Այս պատանեկան ազնիվ պոռթկումը, բնականաբար, հաջողություն չի ունենում և կանխվում է: Սակայն այն, լինելով շատ բնութագրական տվյալ ժամանակաշրջանին, խորը հետք է թողնում ինչպես մասնակիցների, այնպես էլ գավառի պատանիների ու երիտասարդների հոգում: «Արշավանքի» մասին հյուսվում է հատուկ երգ, որը մեծ ոգևորությամբ երգում էին փոքրերը, իսկ կեսկատակ՝ նաև մեծերը[3]: Այդ մասին հետագայում Ռ. Դարբինյանը հիշում էր. «Այդ օրերուն ոչ միայն Կովկասի հայ երիտասարդութիւնը, այլ եւ պատանիներն ու 10–12 տարեկան երեխաները կերազէին «Հայաստան» երթալ: Թէեւ կապրեին Կովկասեան Հայաստանի հողին վրայ, բայց բոլորն ալ այն հաւատքն ունէին, որ բուն Հայաստանը ռուսական սահմանի այն կողմն էր, այսինքն՝ Թրքահայաստանը: Եւ ատոր համար դէպի հոն կը ձգտէին՝ թրքական արիւնոտ լուծէն տառապող իրենց եղբայրներուն եւ քույրերուն օգնելու համար»[4]: Նույն Ռ. Դարբինյանի խոսքերով՝ այդ «ձախողված մանկական» միջադեպը կոչված էր լինելու Ռուբեն Տեր–Մինասյանի ապագա հեղափոխական բուռն գործունեության առաջին, բայց խորապես գիտակցված քայլը:

Որքան էլ զավեշտական է, այս երեխայական խաղը մեծ իրարանցում է առաջացրել տեղական իշխանությունների շրջանում: Գործով սկսել է զբաղվել գավառապետը: Սաթենիկ Օհանջանյանի վկայությամբ՝ դժվարությամբ է հաջողվել փրկել դպրոցը փակվելուց: Եղել են խուզարկություն-

1 **Ռուբէն,** Հայ յեղափոխականի մը յիշատակները, Թեհրան, 1992, հ. Զ, էջ 333:

2 Ռուբենի խոստովանությամբ հայդուկների մասին մեծերի պատմածներն այնքան էին կլանել իրեն, որ այդ տարիներին Ծալկայի և Աբուլ լեռան շրջանում գործող Ղաչաղ Նաբիի և Ալեի ավազակախմբերին ինքն ակամայից ընկալում էր իբրև ժողովրդական հերոսների և նույնպես ուզում էր նմանվել նրանց, դառնալ հայդուկ (**Ռուբէն,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 110):

3 Երգը կոչվում էր «Մէկ չետվէռթ բարութ, մէկ չաթլաղուզով, ռըսթոփին գրպանս Հայաստան կերթամ»: «Չաքուրգան առաջէն կերթա,– երգում էին ջավախքցիները,– շալվարին կոճակը կտրած…, ռըսթոփին գրպանն է դրած: Փախէ՛ք առաջէն դուք, անհաւա՛տ թուրքեր, թէ որ դուրս հանէ, դուք կը կործանիք» (Ռուբէն, նշվ. աշխ., հ. Զ, էջ 330):

4 **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 20:

ներ և հարցաքննություններ, այդ թվում իրենց՝ Օհանջանյանների տանը: Չհավատալով, որ միջադեպը պատանիների մտահղացման արդյունք է, այն կազմակերպելու մեջ ոստիկանությունը փորձել է մեղադրել դպրոցի տեսուչ Խաչատուր Դիլանյանին և ուսուցիչներին: 1985 թ. մայիսին իշխանությունները, ընդդեմ «հեղափոխական» ուսուցիչների, բողոքի ցույցերի է դրդում մի խումբ ծնողների[1]:

19–րդ դարի վերջին նորանոր ախալցխացիներ ու ախալքալաքցիներ զինվորագրվեցին արևմտահայ ազատագրական պայքարին: Ախալցխայից էրգիր անցածների թվում էին երիտասարդ դաշնակցականներ Շամիլը (Տիգրան Օքոնյան), Հաճի Լևոնը (Լևոն Խզարճյան), Ուսուլ Խեչոն (Խաչատուր Տեր–Կարապետյան) և ուրիշներ, որոնց սպասվում էր բուռն ու փոթորկալից հեղափոխական գործունեություն:

1897 թ. ամռանը ՀՅԴ նախաձեռնությամբ Նիկոլ Դումանի, Վարդանի (Սարգիս Մեհրաբյան), Իշխան Արղությանի և այլ նշանավոր հայդուկապետերի կազմակերպած Խանասորի արշավանքին մասնակցություն բերեցին մի խումբ ախալցխացիներ ու ախալքալաքցիներ: Նրանց թվում էին ախալցխացիներ 23–ամյա հյուսն Ուսուլ Խեչոն, տասնապետ Ավետիս Շահբազյանը (կեղծանունը՝ Ավո, 27 տարեկան, մասնագիտությամբ՝ կոշկակար, Կարապետյան վարժարանի սան, զինավարժ, ծնողազուրկ, ամուրի), Բաբա Չիմանյանը (26 տարեկան, դերձակ, ամուրի, ռուսական բանակի նախկին զինվոր), Արշակ Մաթևոսյանը (24 տարեկան, կոշկակար, զինավարժ, ամուրի), Հովհաննես Քոսյանը (29 տարեկան, դերձակ, զինավարժ, ծնողազուրկ, ամուրի), Կարապետ Թորգոմյանը (39 տարեկան, զինավարժ, ծնողազուրկ, ամուրի), Ստեփան Գազազյանը (21 տարեկան, զինավարժ, ամուրի), Բաղդասար Թոփչյանը (կեղծանունը՝ Բաղդիկ, 22 տարեկան, հյուսն, զինավարժ, ամուրի), Լևոն Սանթոյանը (Սնտոյան, նաև՝ Հովակիմյան, 22 տարեկան, վաճառական, Կարապետյան վարժարանի 4–րդ դասարանից մեկնած ռուսական բանակ, այնտեղից մոսին հրացանով փախած Արևմտյան Հայաստան, ամուրի, սպանված Ատրպատականում 1902 թ. հայ գյուղացիներին քրդերից պաշտպանելու ժամանակ), Ասլան Ասլանյանը (20 տարեկան, Կարապետյան վարժարանի շրջանավարտ, զինավարժ, ծնողազուրկ), Սարգիս Յաղանյանը (Եղանյան, Եզանյան, կեղծանունը՝ Սերգո, 20 տարեկան, արհեստավոր, զինավարժ, ամուրի), ախալքալաքցիներ Ստեփան Նազարեթյանը (կեղծանունը՝ Իվան, վաճառական, 24 տարեկան, ամուրի, զինավարժ), Սեդրակ Մինասյանը (26 տարեկան, արհեստավոր, ամուրի)[2]: Նրանք, որ ներկայացնում էին սոցիալական տարբեր խավեր, մեծ մասամբ ծնողազուրկ էին, ամուրի և տակավին երիտասարդ հասակում իրենց նետել էին ազատագրական պայքարի մեջ:

Խանասորի արշավանքում, որի արդյունքում հայդուկները վրեժ լուծեցին 1896 թ. Վանի ինքնապաշտպանության մասնակիցների նկատմամբ ար-

1 Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 22, ց.1, գ. 293, թ. 261 և շրջ.: Տե՛ս նաև՝ **Մելքոնյան Ա.,** Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից, Ե., 2005, էջ 79:

2 **Աւօ,** Խանասորի արշաւախումբը, Պէյրութ, 1986, էջ 88, 100, 102–104, 108, 112, 117: Հմմտ.՝ Յուշամատեան…, էջ 58, 61:

յունալի կոտորած իրականացրած քրդական մազրիկ ցեղից, հերոսաբար զոհվեցին Ստ. Նազարեթյանն ու Ս. Յաղանյանը: «19 քաջեր ընկան հայրենի հողին վրա այդ կռիվներու ընթացքին,– գրում է խանասորցի զոհերի մասին Մ. Վարանդյանը,– 19 նահատակներ հայոց աշխարհի բոլոր կողմերէն…: Վանեցի, շատախցի, համադանցի, մշեցի, գողթնեցի, ղազախեցի, ղզլարցի, նոր–բայազէտցի, ալեքսանդրապոլցի, թիֆլիզեցի, ղարաբաղցի, ախալցխացի, ախալքալակցի և այլն»[1]:

20–րդ դարի սկզբին հայ ազատամարտին մասնակցած բազմաթիվ ախալքալաքցիների մեջ իր ծանրակշիռ գործունեությամբ առանձնանում է տակավին երիտասարդ Ռուբեն Տեր–Մինասյանը: Գևորգյան ճեմարանն ավարտելուց հետո նա 1902 թ. Թիֆլիսում ներկայանում է իր հայրենակից, ավագ եղբոր՝ Հարությունի մանկական ընկեր, արդեն ճանաչված դաշնակցական գործիչ Համո Օհանջանյանին և նրա խորհրդով կուսակցական աշխատանքի անցնում Բաթումում: Ավելի քան 50 տոկոս հայ բնակչություն ունեցող այս քաղաքում մեծ թիվ էին կազմում այնտեղ տեղափոխված ախալքալաքցիները: Իր համերկրացիներից մի քանիսի հետ Ռուբենին է վստահվում արևմտահայ զինական խմբերի համար միջոցներ հայթայթելու պատասխանատու գործը: Երկու տարի անց Ռուբենը հեղափոխական գործունեությունը շարունակում է Կարսում, ուր տեղափոխվում է նրանց բազմանդամ ընտանիքը: Հեղափոխական այս «հնոցում» Ռ. Տեր–Մինասյանն ընկերակցում է հայտնի գործիչ Սերգեյին՝ Արամ Մանուկյանին:

Արամի ու Ռուբենի ջանքերի շնորհիվ հաջողվում է ուժեղացնել դաշնակցության՝ Կարսի կենտրոնական կոմիտեն՝ նրա մեջ ընդգրկելով առավելապես արևմտահայ ծագում ունեցող մարդկանց: «Այս պարագան պատճառ էր, որ Կ. Կոմիտէն ընդհանրապես բաղկանար տեղացիներէ կամ ախալքալաքցիներէ եւ ալեքսանդրապոլցիներէ, որոնք ծանօթ էին իրենց եւ միեւնոյն ժողովուրդն էին՝ Բարձր Հայքէն ծնած: Այս հանգամանքը Կ. Կոմիտէի նկարագիրը կը դարձներ յարատեւ եւ աւանդապաշտ»[2]:

Կարսի կոմիտեի անդամ է դառնում նաև Ռուբենի կրտսեր եղբայր Երվանդը, իսկ ավագ եղբայր Հարությունը, որ անկուսակցական էր և գործարար մարդ, կուսակցությանն օգնում է նյութական միջոցներով: 1904 թ. գարնանը Նիկոլ Դումանի հետ Ռուբենին վիճակվում է մեկնել Պարսկաստան, իսկ ամռանն՝ անցնել Արևմտյան Հայաստան[3]:

Շուտով հայ ֆիդայիների մեջ մեծ ճանաչում է ձեռք բերում ախալցխացի Արտաշես Սուջյանը, որը ստանձնում է ինչպես դեպի էրգիր զենքի առաքման գործը, այնպես էլ իր նպաստը բերում Վասպուրականում և Դուրան–Բարձրավանդակում հայդուկային խմբերի կազմավորմանը:

---

1 **Վարանդեան Մ.,** նշվ. աշխ., էջ 156:

2 **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 136:

3 Շուտով Երկրում Ռուբենը դառնում է Վասպուրականի և Մուշ–Սասունի դաշնակցական ազդեցիկ գործիչներից մեկը, տեղերում ամրապնդում կուսակցական մարմինները կամ հիմնում նորերը, բազմաթիվ ճանաչված ֆիդայապետերի հետ մասնակցում հայդուկային մի շարք կռիվների, այդ թվում՝ Սուլուխի կռվին (1907 թ. մայիսի 27), որի ժամանակ զոհվում է Գևորգ Չաուշը:

1903 թ. սուլթանական կառավարության կողմից ազատատենչ Սասունի նկատմամբ հսկողության սաստկացումը ստիպում է կովկասահայ շատ գործիչների զինական ջոկատներ ուղարկել Երկիր: Դրանցից հաջողությամբ Սասուն է հասնում Թորգոմի (Թուման Թումյանի) 23–հոգանոց «Մրրիկ» խումբը: Այդ փառահեղ անցումը մեծ ոգևորություն է առաջացնում սասունցիների շրջանում: Ջոկատում նշանավոր Քեռու և Տուրբախի կողքին էին ախալցխացի Արտաշեսը և ախալքալաքցի Նիկոլը (Ջավախեցի Նիկոլ)[1]: Առաջինը հետագայում զոհվեց Բիթլիսի շրջակայքում, իսկ Նիկոլը կյանքն անցկացրեց ֆիդայական կռիվներում ու բանտերում:

Հայդուկային խմբերից ոչ բոլորին էր հաջողվում անկորուստ հասնել Սասուն: Ավելին՝ եղան դեպքեր, երբ ծանր մարտերի մեջ մտնելով թուրքական ու քրդական զորքերի, երբեմն էլ՝ վերջիններիս աջակցող ռուսական սահմանապահ ջոկատների հետ՝ հայդուկները տվեցին ցավալի կորուստներ: Այդպիսի ջոկատներից մեկը, որում, ըստ տարբեր տվյալների, հաշվվում էր մինչև 150 հեծյալ ու հետիոտն հայդուկ, Խանի ու Նևրուզի հրամանատարությամբ 1903 թ. Կարսի մարզից մտնում է թուրքական սահմանը և Բասենի Դելի–Բաբա, Գոմաձոր և Յուզվերան գյուղերի շրջանում շրջափակվում թուրքական գերակշիռ զորքերի կողմից: Թշնամին Նևրուզի հետևակայինների վրա թնդանոթային և հրացանային կատաղի կրակ է տեղում: «Ջաւախցի Շէկ Համոն, որ ռուս բանակի մէջ երեք թել էր վաստկած եւ այժմս խումբի աչքը անոր վրան էր», ոգևորում է ընկերներին՝ կոչ անելով չվհատվել, դիրքեր փորել և պատսպարվել: Հայդուկների դիրքերի թնդանոթային երկարատև ռմբակոծությունից հետո կարծելով, թե բոլորը զոհվել են, թուրքերը երեք շարասյունով անցնում են գրոհի: Երբ մինչև ֆիդայիները ասկյարներին մնում է 200 քայլ, հնչում է Համոյի հրամանը, և սկսվում է ուժեղ հրաձգություն: Անակնկալի եկած թուրք զինվորները, տալով մեծ կորուստներ, նահանջում են: Ոգևորված կամավորականներից ոմանք առաջարկում են անցնել հակագրոհի: Բայց Համոն արգելում է և փոխարենն առաջարկում միասին երգել «Դե զարկե՛ք, զարկե՛ք…» հանրահայտ ֆիդայական երգը:

Կառավարական զորքերը, նոր համալրում ստանալով, հակառակ ֆիդայիների սպասումներին, հաջորդ օրն անցնում են ընդհանուր գրոհի: Խանի հեծյալները, որ կտրվել էին Նևրուզի հետևակայիններից, թեև կարող էին հեռանալ և փրկվել, չեն լքում մարտադաշտը: Շրջապատման մեջ, արյունալի կռվում շատերի հետ զոհվում են արշավանքի ղեկավարները, այդ թվում՝ ախալքալաքցի Շեկ Համոն: Նիկոլ Դումանին Մխչոնց Մարգարի, ինչպես և հրաշքով փրկված այլ ընկերների պատմածների համաձայն՝ Շեկ Համոն եղել է ամենախիզախ ու երկար կռվողներից մեկը: «Ան եղած էր ոչ միայն քաջ, այլեւ գիտակցող իրենց վիճակին եւ անվեհեր կերպով»[2]: Այս մարտում թշնամին կորցնում է 800 զինվոր:

Ծանր վիրավորված 4–5 կամավորականների թվում գերի են ընկնում Թորգոմի «Մրրիկ» խմբից մեծ համբավ վաստակած Ջավախեցի Նիկոլը և

1 **Ռուբէն,** նշվ. աշխ., Ա, էջ 147:
2 **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 172–173:

ախալցխացի Ուսուլ Խեչոն: Նրանց թուրքական իշխանությունները տանում են էրզրումի բանտը: Բարեբախտաբար երկուսին էլ հաջողվում է ազատվել բանտից և շարունակել հեղափոխական պայքարը: Նրանք կրկին միանում են զինատար և զինական խմբերին, հետագայում՝ Առաջին աշխարհամարտի ժամանակ, մտնում հայ կամավորական ջոկատների մեջ[1]:

Դարասկզբին ախալքալաքցիներն ու ախալցխացիները մեծ դեր ունեին նաև զենքի ձեռքբերման և առաքման գործում: Արևմտյան Հայաստան ուղարկվող զենքի հայթայթման ամենահայտնի կենտրոններից մեկը Ալեքսանդրապոլն էր, ուր տեղակայված էր ռուսական կայազորը: Դաշնակցությունն այդ խնդրի վրա սկսեց ավելի մեծ ուշադրություն հատկացնել դարասկզբին, երբ ուժեղացան ոչ միայն արևմտահայերի, այլև արևելահայերի հալածանքները: Պատահական չէ, որ Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի զորամասերից գաղտնաբար գնված կամ ուղղակիորեն առևանգված զենքի շնորհիվ տեղի դաշնակցական կոմիտեի ձեռքում կուտակվել էր զգալի քանակությամբ զենք: Դրա մի մասն ուղարկվեց Արևմտահայաստան, մյուս մասը ցրվեց գավառի գյուղերում:

Հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին ցարական կառավարության 1903 թ. հունիսի 12–ի օրենքը դժգոհության ալիք առաջացրեց ամենուր, այդ թվում՝ Ախալքալաքում: Այն ուղղակի կնշանակեր նաև տեղի հոգևոր վարժարանների փակում, որոնց մեծ մասը պահվում էր եկեղեցական կալվածքների, մասնավորապես Ս. Փրկիչ եկեղեցուն պատկանող հողերի հաշվին: Բարեբախտաբար Ախալքալաքում տեղի դաշնակցական կոմիտեի հրահանգով բնակչությունը ձեռնպահ մնաց զենքի գործադրումից, որը կարող էր հանգեցնել մեծ արյունահեղության: Օգոստոսի 24–ին՝ կիրակի օրը, տեղի ունեցավ բողոքի բազմամարդ հանրահավաք: «Վաղ առաւօտուն շրջակայ գիւղերէն հազարաւոր շինականներ խումբ–խումբ եկան լեցուցին քաղաքը,– գրում է Մ. Վարանդյանը:– Կուգային և քահանաներ ու երէցփոխներ: Նաև բազմաթիւ կանայք ու երեխաներ: Ամէն գիւղէ կը բերէին բողոքագիր

1 Նիկոլը, ըստ Ռուբենի, որ անցել էր ազատամարտի փառահեղ ուղի, շատ դաժան կյանք ունեցավ և մահացավ անօգնական վիճակում: Ուսուլ Խեչոյին (նաև՝ Ուսուլ Խաչո: «Ուսուլ» Կարոնո բարբառով նշանակում է հանդարտ, հավանաբար նրան այդպես էին անվանում ամենադժվարին պահերին հանդարտություն և սառնասրտություն դրսևորելու համար) վիճակված էր դառնալ իսկական լեգենդ, դեռ երկար ժամանակ մնալ հայդուկային շարժման մեջ, քանիցս թուրքական իշխանությունների կողմից ձերբակալվել ու դատապարտվել ցմահ բանտարկության, կրկին փախուստի դիմել, խուսափել ռուսական ոստիկանության հետապնդումներից, մասնակցել 1912–1913 թթ. Բալկանյան պատերազմներին, Առաջին աշխարհամարտի տարիներին Քեռու և Համազասպի կամավորական ջոկատներում, որպես վաշտի հրամանատար, մասնակցել Վանի և Բիթլիսի նահանգների բնակավայրերի ազատագրման համար մղվող մարտերին: Խեչոն ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Ախալցխայի ու Ախալքալաքի 1918 թ. ինքնապաշտպանությանը և 1921 թ. վրաց մենշևիկներից Լոռու ազատագրմանը: Մահացել է Թավրիզում 1941 կամ 1942 թ. (Սիմոնյան Ե., նշվ. աշխ., էջ 137–139, 141, Սանոսյան Ա., նշվ. աշխ., էջ 22, 49, 79, 144, 160, 163–165, 173): Մ. Կարապետյանի հրատարակած արխիվային վավերագրերից մեկում Ուսուլ Խեչոյի անունը՝ Խաչատուր Կարապետյան, հիշատակվում է Համազասպի ջոկատի 2–րդ վաշտի 2–րդ դասակի մարտիկների ցանկում՝ 104 համարի տակ (Կարապետյան Մ.,Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.), Ե., 1999, էջ 138):

մը՝ ուղղած Հայոց Կաթողիկոսին»[1]: Ս. Խաչ եկեղեցու բակում և հարակից փողոցներում հավաքված ցուցարարների թիվը հասավ 6 հազ. մարդու: Պատարագի ժամանակ դպիրները հրաժարվեցին հիշատակել կայսեր անունը: Բանախոսները կրակոտ ճառերով դատապարտեցին իշխանությունների հակահայ քաղաքականությունը և խոստացան «արեան գնով պաշտպանել մեր դարաւոր իրավունքները»: Ոստիկանությունը չհամարձակվեց արգելել հանրահավաքը՝ արյունալի բախումներ չհրահրելու համար:

1903–1904 թթ. հակացարական ելույթների շրջանում, օգտվելով ողջ կայսրությունում ստեղծված քաոսային վիճակից, Ախալցխայի և Ախալքալաքի դաշնակցական գործիչները նոր քայլեր կատարեցին զինամթերք հայթայթելու ուղղությամբ: Նրանք իրենց ծրագրերը համաձայնեցրին Ալեքսանդրապոլում գործող գաղտնի խմբերից մեկի հետ, որը ղեկավարում էր ճանաչված գործիչ Պաղվալի Վաղոն: Համատեղ ջանքերով 1904 թ. տեղի ռուսական զորամասից առևանգվեց մեծ քանակությամբ զենք: Մեկ ամիս տևած այդ վտանգավոր գործողության գլխավոր կազմակերպիչ Վաղոյին օժանդակեցին Սվազցի Բիձան (Հարություն) և գյումրեցի Հակոբը, վերջինիս փորձված ֆիդայի ընկեր Ուսուլ Խեչոն, Հաջի Լևոնը և Աշիկը, որոնք Արևմտյան Հայաստանից նոր էին վերադարձել Ախալցխա: Նրանց օգնությամբ իրականացվեց ոչ միայն զենքի դուրսբերումը պահեստներից, այլև ռուս մոլոկանների 30 սայլերով առաքումը Կարս և Անդրկովկասի զանազան շրջաններ: Ի դեպ՝ 1905–1906 թթ. հայ–թաթարական կռիվների ժամանակ այդ զենքը ի սպաս դրվեց նաև Անդրկովկասի քաղաքներում հայ բնակչության ինքնապաշտպանության գործին[2], որին ակտիվորեն մասնակցեց նույն Ուսուլ Խեչոն:

Ալեքսանդրապոլի զինական պահեստներից զենքի առգրավման և առաքման հաջող գործողությունից ոգևորված՝ Հաջի Լևոնը[3], Ուսուլ Խեչոն, Աշիկը (Աշըգ), Ասլանը և ուրիշներ որոշում են ստեղծել մի առանձին զորաջոկատ՝ բաղկացած հիմնականում ախալցխացիներից ու ախալքալաքցիներից, և շատերի օրինակով մեկնել Երկիր: Վճռվում է Վասպուրական մտնել Պարսկաստանի վրայով: Բանն այն է, որ Արևմտյան Հայաստանի զինատար ճանապարհներից առավել հուսալին Պարսկաստան–Վասպուրական երթուղին էր: Կարսի մարզի թուրքական սահման տանող Բասենի

1 **Վարանդեան Մ.,** նշվ. աշխ., էջ 283:

2 **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 215–224: 1905–1906 թթ. Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում, ուր կողք կողքի ապրում էին հայերն ու մեսխեթցի թուրքերը, ընդհարումներ չեղան: Պատճառներից գլխավորն այն էր, որ ի հեճուկս Օսմանյան Թուրքիայից ժամանած գործակալների՝ սուննի մահմեդական թուրքերը, զգուշանալով մեծամասնություն կազմող հայերի հետ ընդհարման հավանական ծանր հետևանքներից, չպաշտպանեցին շիա թաթարների հակահայ գործողությունները: Բացի այդ՝ իշխանությունները ևս չկամեցան հայերի դեմ օգտագործել թուրք մեսխեթցիներին՝ վախենալով Թուրքիայի հնարավոր միջամտությունից, որը խիստ անցանկալի էր ռուս–ճապոնական պատերազմի և սկսված հեղափոխության պայմաններում: Ի դեպ՝ այս գավառների բնակչությունը 1905–1907 թթ. ակտիվ մասնակցություն չունեցավ ռուսաստանյան առաջին հեղափոխությանը:

3 Լևոն Խզարճյանն իրականում հաջի չէր: Նրան այդպես էին անվանում ընկերների շրջանում վաստակած հարգանքի համար:

ճանապարհը թուրքական և ռուսական իշխանությունների համագործակցության հետևանքով վտանգավոր էր դարձել:

Ապրիլի առաջին կեսին Հաջի Լևոնի հեծյալ խումբը ժամանում է Սալմաստ, որտեղ համալրվում է Երկրին լավատեղյակ վանեցիներով և ապրիլի 17–ին անցնում պարսկա–թուրքական սահմանը: Արշավանքի երկրորդ օրը նրանց ներկայացած բարեկամ քրդերը հայտնում են, որ իշխանությունները ծուղակ են պատրաստել, ուստի անհրաժեշտ է վերադառնալ: Սակայն ֆիդայիների պատվախնդրությունը թույլ չի տալիս բռնել ետդարձի ուղին: Որոշվում է կռիվներով ճեղքել համիդիեական զորքերի օղակը և առաջ շարժվել: Հայդուկներին հաջողվում է կոտրել քրդերի դիմադրությունը և հասնել Վանից հյուսիս–արևելք ընկած Լիմ գյուղը: Այստեղ խումբն ընկնում է թշնամու ուժեղ կրակի տակ: Ձիերի մի մասը սպանվում է, մյուսներին ֆիդայիներն են գնդակահարում՝ թշնամու ձեռքը չանցնելու և բոլորով աննկատ առաջ շարժվելու համար: Զոհվում են վանեցի Հովհաննեսը, Ջոջ Աղան և ուրիշներ[1]: Այդուհանդերձ, ախալցխացիների նախաձեռնած այս համարձակ ձեռնարկումը պսակվում է հաջողությամբ: Խումբը հասնում է Վարագա վանք՝ տեղ հասցնելով նաև որոշ քանակությամբ զինամթերք:

Դեռևս 19–րդ դարի վերջից Պարսկահայքում՝ Խոյում, Սալմաստում, Մակուում՝ պատմական Ավարայրի դաշտում գործող զինատար խմբերի շրջանում, մեծ ճանաչում են ձեռք բերում Դարալագյազցի (ծնունդով՝ Մալիշկա գյուղից) Սարբազ Խեչոն և ախալքալաքցիներ Գրիշն ու Սուրենը (Սուրեն Սարգսյան): Վերջիններս, որոնց հաճախ անվանում էին «Ջավախեցի», ռուսական բանակի հեծելազորի նախկին ենթասպաներ էին, տարբեր տեսակի զենքերի քաջատեղյակ ու փորձառու մասնագետներ, թողնելով ծառայությունը՝ տեղափոխվել էին Պարսկահայք և Սարբազ Խեչոյի հետ ստանձնել Էրգրի ֆիդայական խմբերին զենք մատակարարելու կենսական գործը: 1904 թ. Երկիր անցնելու նպատակով Պարսկաստան ժամանած Ռուբեն Տեր–Մինասյանի այն հարցին, թե իր հայրենակիցներն ինչու են թողել զինվորական գործը, Սուրենն ու Գրիշը վիրավորված պատասխանում են, թե իրենք չեն կարող, «ազգի համար նահատակութեան գործը թողած», ծառայել ռուսական բանակում: Ռուբենի վկայությամբ՝ «Հեր ու Զարեւանդ եւ Արտազ հին հայկական գաւառներուն մէջ անոնք արդէն ճանաչուած մարդիկ էին: Ոչ միայն կուսակցական մեր գոյքերի փոխադրողներն էին ռուսական սահմաններէն մինչեւ Վասպուրականի սահմանները, այլեւ դարձած էին պատուհասը հաղորդակցութեան ճամբաները բռնող եւ երթեւեկը խանգարող աւազակներու»[2]: Պատահական չէ, որ պարսկա–թուրքական սահմանով զենքի տեղափոխման դժվարին գործը գրեթե միշտ վստահվում էր Սարբազ Խեչոյին, Գրիշին և Սուրենին: Ավելին՝ շատ կարավանապետեր, փոստային ծառայողներ, նույնիսկ պարսկական ու թուրքական պետական մարմիններ իրենց գույքի տեղափոխման համար դիմում էին նրանց: Բանն այն է, որ այս եռյակը մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն երկու երկրների պաշտոն-

1 **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 327:
2 Նույն տեղում, էջ 279–280:

յաների, այլև սահմանային գոտում տեր ու տնօրինություն անող քրդական ավազակախմբերի շրջանում: Եվ որպես կանոն՝ զանազան բեռների հետ այն կարողանում էր ապահով Վասպուրական հասցնել նաև զինամթերք:

1904 թ. գարնանը (հավանաբար՝ մարտի վերջին կամ ապրիլի սկզբին), երբ տարբեր շրջաններից բազմաթիվ զինական խմբեր էին անցնում Արևմտահայաստան՝ հատկապես ապստամբած Սասունին օգնության հասնելու համար, Սարբազ Խեչոյի խումբը ևս միացավ Նիկոլ Դումանին, որը Կոստի Համբարձումյանի, Դաշնակցական Խեչոյի, Ռուբեն Տեր–Մինասյանի, Հակոբ Ջավրիյանի և այլ գործիչների հետ կազմակերպեց զինարշավ՝ Պարսկաստանից Երկիր: Հունիսին 17–հոգանոց այդ խումբն անցավ Կոտուրի լեռները, դեպի Վարագ տանող ճանապարհին՝ Ռազիի մոտ, հայտնվեց ծուղակի մեջ: Սկսվում է կատաղի մարտ (Ռազիի կռիվը): Գրիշն իր երգով ոգևորում է ընկերներին: Դիրքեր բռնած ֆիդայիները ձայնակցում են նրան: Սարբազի և նրա հավատարիմ ընկերների քաջության շնորհիվ ջոկատին հաջողվում է նահանջել դեպի պարսկական սահմանը և մի քանի խմբերով փոքրաթիվ կորուստներով հասնել Սալմաստ: Խումբը կործանումից փրկելու գործում որոշակի դեր է կատարում նաև Ռուբենը[1]:

Մայիսի սկզբին Սալմաստում և Խոյում գործող ֆիդայիները ստանում են Սասունի ապստամբության ճնշման և արյունալի կոտորածների լուրը: Վախենալով, որ Անդրանիկի ու ընկերների անցումը Սասունից Վասպուրական կարող է կոտորածների առիթ տալ նաև իրենց մոտ՝ վանեցիներն օգնության խնդրանքով դիմում են Սալմաստի հայդուկներին: Հակառակ Նիկոլ Դումանի կարծիքին, որն այդ ժամանակ ճանապարհների ուժեղացված հսկողության պատճառով աղետաբեր էր համարում յուրաքանչյուր արշավանք, Սալմաստում հաստատված ֆիդայապետերից Փոխիկը (Վահրամ Հովհաննիսյան, ծագումով՝ շատախցի)՝ վճռում է մի խմբով անցնել Վան: Այդ հանդուգն քայլի համար նա Նիկոլ Դումանին խնդրում է իր տրամադրության տակ դնել ռազմական գործին քաջատեղյակ դասակապետ Ջավախեցի Սուրենին: Նիկոլը համաձայնում է: Առաջին անգամ Սուրենը ստիպված բաժանվում է իր հավատարիմ ընկերներից՝ Սարբազ Խեչոյից և Ջավախեցի Գրիշից, որոնք շարունակում են մնալ Նիկոլի ղեկավարության ներքո:

Փոխիկի 14–հոգանոց խումբը Երկիր է մտնում մայիսին «անհայտ» ճանապարհով՝ հարավից՝ Սարայի մոտով: Սակայն արդեն լեռները բարձրացած քրդերից ջոկատն աննկատ չի մնում և շուտով հայտնվում է ծուղակի մեջ: Բոլոր հայդուկները զոհվում են: Նրանց հետ կռվի բռնված քրդերի պատմածներից պարզվում է, որ կողք կողքի, փողփողացող կամավորական դրոշի ներքո քաջաբար կռվել ու զոհվել են Փոխիկն ու Սուրենը: Քրդերի խոստովանությամբ՝ հայդուկները կռվել են մահվան դատապարտվածի նման, մաուզերներով ու դանակներով, մինչև վերջին մարդը և իրենց պատճառել ավելի մեծ կորուստներ: Ցավով խոսելով Սուրենի զոհվելու մասին՝ Ռուբենն իր հուշերում գրում էր, որ նա իր տաճկահայ ընկերների համար անհայտ

1 **Ներսիսյան Ա.,** Ռուբէն (Մինաս Տէր–Մինասեան), «Դրօշակ», 1999, թիվ 16, հոկտեմբեր, էջ 37:

երկրից եկած, բայց միանգամայն գնահատված, գիտուն զինվորական էր և ռազմական գործի հրաշալի ուսուցիչ: «Ի՞նչ էր բուն անունը, չգիտցանք: Ան ախալքալաքցի էր, կարծեմ Խանչալի գիւղէն: Ես …անոր գեղեցիկ դէմքը բնաւ չեմ կրնար մոռնալ: Ան պէտք չէ, որ մեռնէր այդպիսի մահով…»[1]:

Մեսխեթ–ջավախքցի ֆիդայիներն անմասն չմնացին Սասունի 1904 թ. ապստամբությանը: Նրանցից ախալցխացի Մարտոն, որ մեծ հեղինակություն էր վաստակել ապստամբության ղեկավարների շրջանում, ապրիլի 13–ին Սեմալից Գելիեգուզան տանող ճանապարհին՝ Չայի կռիվներում, հերոսաբար զոհվեց իր հրամանատար Հրայրի հետ[2]: Այս ապստամբության ճնշումից հետո վերջնականապես պարզ դարձավ, որ ֆիդայական կռիվների շնորհիվ անհնար է հասնել արևմտահայության ազատագրությանը, և անհրաժեշտ է հրաժարվել պայքարի այդ ձևից՝ նախապատվությունը տալով համաժողովրդական ապստամբությանը: Այդ դժվարին խնդիրն իրագործելու համար նախևառաջ հարկ կլիներ համոզելու Արևմտյան Հայաստանում գործող հայդուկապետերին զենքը վայր դնել և հրաժարվել ֆիդայական պայքարից: Հատկանշական է, որ 1906 թ. դաշնակցության որոշմամբ Տարոն անցած 24–ամյա Ռ. Տեր–Մինասյանին հաջողվում է Ղզլաղաճի ժողովում համոզել անդրդվելի Գևորգ Չաուշին ու Սպաղանցի Մակարին ընդունել կուսակցության որդեգրած նոր քաղաքականությունը. այն է՝ հայդուկային կռիվներից անցնել համահայկական ապստամբության նախապատրաստությանը:

Սուլուխի կռվից և հատկապես երիտթուրքական հեղաշրջումից հետո, երբ սահմանադրությամբ հռչակվում է ազգերի իրավահավասարություն, ազգային ու կրոնական հալածանքի վերացում, շատ ֆիդայիներ, հավատալով երիտթուրքերի խոստումներին կամ ենթարկվելով իրենց կուսակցությունների ընդունած որոշումներին, դադարեցնում են հայդուկային պայքարը: Շատ կովկասահայերի հետ տունդարձի ուղին են բռնում նաև ջավախեցի ու ախալցխացի հայդուկները, որոնց թվում և նշանավոր Ուսուլ Խեչոն: Ծննդավայր Ախալցխայում նրան ժողովուրդն ընդունում է ցնծությամբ:

1 **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 330–333:
2 **Վարանդյան Մ.,** նշվ. աշխ., էջ 231:

Մարիամ Եղյան
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս

ՌՈՍՏՈՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԻՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԻՆ (1910–1914 ԹԹ.)

1908 թ. հուլիսին տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջումը և դրան հաջորդած Ադանայի 1909 թ. կոտորածը բարդ ընտրության առջև էին կանգնեցրել հայ ժողովրդի արևմտյան հատվածին: Սուլթան Համիդի իշխանության տապալման ուրախությունն ու հրճվանքը փոխարինվել էին խիստ երկիմաստ ու գնալով ավելի ու ավելի վտանգավոր դարձող կացությամբ: Թեև Համիդին փոխարինած երիտթուրքերը աստիճանաբար ցույց էին տալիս իրենց իսկական դեմքը, սակայն դեռևս գտնվելով բարդ ու անորոշ վիճակում՝ առերես շարունակում էին սիրաշահել ՀՅ Դաշնակցության ղեկավարությանը: Իսկ ՀՅԴ ղեկավարությունը կարճատև ոգևորության շրջանից հետո հայտնվել էր նոր իրավիճակի դանդաղ ու ցավագին վերաիմաստավորման գործընթացի մեջ: Նրա առավել փորձառու գործիչները կուսակցության հիմնադիրներից մեկի՝ Ռոստոմի (Ստեփան Զորյան) գլխավորությամբ սկսել էին կասկածի տակ դնել ոչ միայն երիտթուրքերի հետ հետագա գործակցության նպատակահարմարությունը, այլև նրանցից հուսախաբվելուց հետո՝ միջազգային դիվանագիտությանը դիմելու փորձերը:

Այդ ամենի փոխարեն՝ Արևմտյան Հայաստանում հաստատվելու, ամրապնդվելու և իրադարձությունների զարգացման ցանկացած տարբերակում ժողովրդի գոյատևման խնդիրը լուծելու համար երիտթուրքական հեղաշրջման օրերին Իրանում՝ Թավրիզի բարիկադների վրա գտնվող Ռոստոմը 1909 թվականի հունիսին Սալմաստի վրայով մեկնեց Վան, իսկ այնտեղից՝ Կ.Պոլիս: Օսմանյան կայսրության մայրաքաղաքում տիրող մթնոլորտը հենց սկզբից դուր չեկավ Ռոստոմին, որը թեև իր հրապարակային ելույթներում պաշտպանում էր կուսակցությանը խորհրդարանական ընտրապայքարների մեջ ներքաշած Արևմտյան Բյուրոյի Կ.Պոլսի հատվածի[1] քաղաքական ուղեգիծը, սակայն զգում էր, որ այդ ամենը պետք է դիտարկել սոսկ որպես ժամանակավոր մարտավարական խաղ:

Սրանով կարելի է բացատրել այն փաստը, որ արդեն 1909 թ. օգոստոսի 14–ից մինչև սեպտեմբերի 18–ը Վառնայում կայացած ՀՅԴ հինգերորդ ընդհանուր ժողովում թեև Ռոստոմն արտաքուստ չհակադրվեց օսմանյան հեղափոխության հետ լինելու և նրա հետագա ծավալմանը նպաստելու

1 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Արևմտյան Բյուրոյի անդամների մի մասը գրեթե մշտապես գտնվում էր Օսմանյան կայսրության մայրաքաղաքում՝ կազմելով Արևմտյան Բյուրոյի Կ.Պոլսի հատվածը: Տե՛ս **Տասնապետեան Հ.,** Հ.Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, Պէյրութ, 1985, էջ 72 –73:

մասին Սարգիս Բարսեղյանի ու Ռուբենի (Մինաս Տեր–Մինասյան) կողմից առաջադրված քաղաքական ուղեգծին, բայց հենց «…Ռոստոմն էլ պատճառ եղաւ, որ այդպէս մտածողների բանաձեւը ամբողջութեամբ չանցնի»[1], քանի որ նա թույլ չտվեց, որպեսզի «…Հ.Յ.Դաշնակցութիւնը Թուրքիայում միջազգային կուսակցութիւն դառնայ՝ վաղաժամ ու անհնար գտնելով այդ առաջարկի իրականացումը ստեղծուած պայմաններում»[2]: Ռոստոմի միջամտության շնորհիվ Վառնայի ընդհանուր ժողովի ընդունած «Հայտարարագիրը» խոստանում էր «…խիստ կռիւ և պայքար մղել կառավարութեան դէմ այն պարագային, երբ անիկայ դաւաճանելով իր պարտաւորութեան՝ թոյլ տայ շեղումներ սահմանադրական շաւղէն… »[3]:

ՀՅԴ հինգերորդ ընդհանուր ժողովից հետո Ռոստոմը եզրակացրեց, որ անկախ նրանից, թե ինչպես կզարգանան հետագա իրադարձությունները Օսմանյան կայսրության մայրաքաղաքում, և ինչ ընթացք կստանա ՀՅԴ–երիտթուրքեր խախուտ գործակցությունը, հայ ժողովրդի ճակատագիրն ի վերջո կախված է Արևմտյան Հայաստանի տնտեսական, կրթամշակութային և ապա՝ քաղաքական վերածննդի հեռանկարից: Հարկավոր էր օգտագործել ստեղծված նոր կացությունը և կուսակցության լավագույն մտավորական ու մարտական ուժերը կենտրոնացնել Արևմտյան Հայաստանում՝ հետագա զարգացումների ցանկացած տարբերակին դիմակայելու համար: Դա էր թելադրում նաև հինգերորդ ընդհանուր ժողովի ընդունած «Ինքնապաշտպանութիւն» բանաձևը, որը պահանջում էր այդ գործը դնել «…ժողովրդական և անկուսակց. հողի վրայ»[4]:

Այդ պատճառով 1910 թ.ամռանը[5] Կարին ժամանած և քիչ անց տեղի ազգային դպրոցների տեսուչի պարտականությունները ստանձնած Ռոստոմը նույն օրերին գրած իր նամակներով ուղղակի թելադրում էր Արմեն Գարոյին (Փաստրմաճյան), Արշակ Իսահակյանին (Ջամալյան), Սիմոն Վրացյանին, Մարին (Միք. Տեր–Մարտիրոսյան), Գարմենին (Տաճատ վրդ. Մելքոնյան) և ՀՅԴ այլ նշանավոր գործիչներին որքան հնարավոր է շուտ անցնել Արևմտյան Հայաստան և ծառայել նրա վերածնության գործին: Ռոստոմի այս կոչին ՀՅԴ նշանավոր գործիչներից ոչ բոլորն արձագանքեցին: Ռոստոմը փորձում էր հաղթահարել կուսակցության ներսում տիրող ընդարմացումը, որը նկատվում էր նաև էրզրումի կազմակերպության շարքերում: «Մի տեսակ էգոիզմ է պատել բոլորին: Հիմա ապրել են ուզում, յոգնել են

1 **Աստուածատրեան Ա.,** Մի էջ Հ.Յ.Դաշնակցութեան Վառնայի ընդհանոր ժողովի պատմութիւնից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1959, թիւ 9–12, էջ 88:

2 Նույն տեղում:

3 Յայտարարագիր Հ.Յ.Դաշնակցութեան հինգերորդ ընդհանուր ժողովի, «Դրօշակ», 1909, թիւ 9, էջ 113:

4 ՀՅԴ Ե ընդհանուր ժողով: Որոշումներ, «Դրօշակ», 1909, թիւ 10– 11, էջ 133:

5 Իրականությանը չի համապատասխանում Օ. Ճգնավորյանի պնդումն այն մասին, որ Ռոստոմը Կարին է ժամանել միայն 1910 թ. աշնանը՝ Հովնան Դավթյանի, բժիշկ Սէրթլյանի և Գրիգոր Սյունիի ընկերակցությամբ: Տե՛ս **Ճգնավորյան Օ.,** Բարձր Հայք, ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 105, քանի որ արդեն նույն թվականի ամռանից Ռոստոմը Կարինից բազմաթիվ նամակներ է ուղարկել ՀՅԴ նշանավոր գործիչներին՝ պահանջելով անցնել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառները:

տանջուելուց, նահատակուելուց»[1],– կարճ ժամանակ անց խոստովանում էր Ռոստոմը:

Հետագայում գրած իր ընդարձակ հուշերում Սիմոն Վրացյանը վերհիշում էր, թե ինչպես էր հիմնավորում Ռոստոմը Արևմտյան Հայաստանում հավաքվելու և ժողովրդի դժվարությունները կիսելու իր պահանջը. «Այստեղ ենք, որովհետեւ ոջիլը մեզ աւելի հարազատ է, քան Բագուի ոսկին կամ Ամերիկայի դոլարը»[2]:

Ժամանակակիցները վկայում են, որ Ռոստոմը «ոջիլ» հասկացության շուրջ սրամտորեն մի ամբողջ տեսություն էր ստեղծել՝ նրա աստիճանական հաղթահարումը դիտարկելով որպես Արևմտյան Հայաստանի առաջադիմության յուրահատուկ չափանիշ:

Շատ կարճ ժամանակամիջոցում Ռոստոմն իրեն հատուկ եռանդով ու հետևողականությամբ կարգի բերեց էրզրումի և՛ դպրոցական, և՛ կուսակցական գործերը: Արդեն 1910 թ. դեկտեմբերի 12–ին նա Ժնև ուղարկած նամակում հայտնում էր, որ կազմակերպական գործերը կանոնավորվել են, խմբերը՝ վերակազմավորվել, և Կարինում շուտով նույնիսկ հիմնվելու է ՀՅԴ ակումբ[3]: «Ռոստոմը ոչ միայն կուսակցական, այլեւ ազգային կեանքում կենտրոնական համադրող ու ղեկավարող դէմք էր՝ նոյնքան հեղինակաւոր Առաջնորդարանում ու կուսակցութեան առջեւ, որքան եւ հասարակական ու կուսակցական շրջաններում»[4],– արձանագրում էր որոշ ժամանակ անց Կարին հասած Ս. Վրացյանը:

Սանասարյան վարժարանում Ռոստոմը սկսեց դասավանդել բնագիտական առարկաներ: Դրան զուգահեռ՝ Արծնյան վարժարանի սրահում Ռոստոմը չորս–հինգ ամիս շարունակ գիշերային դասախոսություններ էր կարդում դաշնակցականների համար՝ նրանց ծանոթացնելով կուսակցության պատմությանը:

1911 թվականի դպրոցական տարեշրջանի ավարտից հետո Ռոստոմը, որը Արևելյան Բյուրոյի Երկրի հատվածի[5] կողմից ընտրվել էր նույն թվականի օգոստոսին Կ.Պոլսում կայանալիք ՀՅԴ վեցերորդ ընդհանուր ժողովի պատգամավոր, օգտվեց ստեղծված հնարավորությունից և նախքան ընդհանուր ժողովը, մեկնեց Ժնև՝ ընտանիքի հետ տեսակցելու համար: Սակայն այնտեղ ևս նա այնքան խրվեց կուսակցական գործերի մեջ, որ Կ.Պոլիս հասավ միայն ժողովի կեսին:

Վեցերորդ ընդհանուր ժողովի թերևս ամենակարևոր որոշումը հինգերորդ ընդհանուր ժողովի ընդունած «Ինքնապաշտպանութիւն» բանաձևի իրականացման մեխանիզմների ճշտումն էր՝ հատուկ «Ինքնապաշտպանության

1 Տե՛ս **Ռոստոմ,** Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 521:
2 **Վրացեան Ս.,**Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ. բ., Պէյրութ, 1960, էջ 174:
3 Տե՛ս **Ռոստոմ,** Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999,էջ 516:
4 **Վրացեան Ս.,** Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ. բ., Պէյրութ, 1960, էջ 165:
5 Հինգերորդ ընդհանուր ժողովը, պահպանելով երկու Բյուրոների համակարգը և նրանց աշխարհագրական սահմանները, միաժամանակ դրանցից յուրաքանչյուրը տրոհել էր երկու հատվածի՝ Արևելյան Բյուրոյի կազմում առանձնացնելով Երկրի կամ Կարնո հատվածը, որն առաջին լուրջ քայլն էր Հայաստանի Բյուրոյի ստեղծման ճանապարհին:

մարմնի» ստեղծման միջոցով: Գաղտնի քվեարկությամբ այդ մարմնի մեջ ընտրվածներից առաջինը Ռոստոմն էր՝ Անդրանիկի, Վարդանի (Ս. Մեհրաբյան), Հրաչի (Թիրաքյան) և Մարի (Միք. Տեր–Մարտիրոսյան) հետ միասին: Ժողովի ավարտից հետո Կարին անցնելու ճանապարհին՝ Սամսոնում, Ռոստոմն իմացավ իտալա–թուրքական պատերազմի լուրը և հայտնեց Կ.Պոլսի պատասխանատու մարմնին, որ հարկավոր է Իրանում գտնվող Քեռիի խումբը մոտեցնել Սալմաստին՝ Թուրքիայում սպասվող սադրանքների պարագայում անակնկալի չգալու համար[1]:

Կարին վերադառնալուց քիչ անց Ռոստոմը կարգադրեց Ս. Վրացյանին մեկնել ԱՄՆ՝ ստանձնելու համար «Հայրենիքի» խմբագրի պարտականությունները: Ռոստոմը մեծ հույսեր էր կապում Արևմտյան Հայաստանից և կայսրության այլ վայրերից շարունակվող արտագաղթի հետևանքով խիստ ուժեղացած ՀՅԴ ԱՄՆ–ի կազմակերպության հետ՝ նոր ֆինանսական միջոցների ու ռազմական գործի համար անհրաժեշտ տեխնիկայի վերջին նորությունների ձեռքբերման առումով: Կարինից Ս. Վրացյանին իր գրած առաջին իսկ նամակով Ռոստոմն առաջարկում էր ԱՄՆ դաշնակցականներին սովորել աերոպլանով թռչելու եղանակները և տիրապետել նոր միայն գործածության մեջ դրվող «անթել հեռախոսին», այսինքն՝ ռացիային. «Մի քանի աէրօնաւտները ժամանակին մեծ ծառայութիւն կարող են մատուցանել: Ընդհանուր ժողովի ժամանակ ուզում էի այդ հարցը դնել, որ մի քանիսը լաւ ուսումնասիրէին անթել հեռագրի գործը»[2]:

Ռոստոմը մտածում էր նաև Սանասարյան վարժարանում քիմիական լաբորատորիա ստեղծելու մասին: Անհրաժեշտ գործիքների մի մասը նա պատվիրել էր Թիֆլիսից, մյուս մասը ակնկալում էր ստանալ ԱՄՆ–ից՝ Սիմոն Վրացյանի միջոցով: Սակայն 1911–12 թթ. ուսումնական տարին նոր անակնկալներ էր նախապատրաստել Ռոստոմի և ողջ Սանասարյան վարժարանի համար: Պոլսում գտնվող վարժարանի խնամակալությունը խիստ ազդեցիկ և թուրքական իշխանությունների հետ կապված Նորատունկյանների գաղտնի հրահանգով փորձում էր վարժարանը տեղափոխել Սեբաստիա, ինչը Մկրտիչ Սանասարյանի կտակի խախտում էր: Ուժեղանում էր նաև տեղի մեծահարուստ վաճառականների ընդդիմությունը Ռոստոմի կողմից իրականացվող բարեփոխումների նկատմամբ: Նա նկատելիորեն մեծացրել էր ուսուցիչների աշխատավարձը, բարեկարգել ուսումնարանի շենքը: Այդ նպատակով բարձրացվել էին տեղի վաճառականներից գանձվող հարկերը, որոնք եկեղեցապատկան կալվածքների վարձակալներ էին: Վերջիններս մինչ այդ վճարում էին նախատեսվող հարկերի մի մասը միայն և դրա հաշվին մեծ շահույթներ էին ստանում: Նրանք զգում էին, որ Կարնո դպրոցների բարեկարգման ու արդիականացման ուղղությամբ Ռոստոմի կողմից ձեռնարկվող հետևողական քայլերի արդյունքում դրանց բյուջեի անխուսափելի ավելացումը «…պատճառ պիտի դառնար իրենց խանութնե-

1 Տե՛ս **Ռոստոմ,** Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999,էջ 549:
2 **Ռոստոմ,** Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999,էջ 555:

ռուն վարձքերուն յաւելումին, որով ընդդիմութիւն ցոյց կուտային դպրոցներու բարեկարգութեան հարցին վերաբերմամբ»[1]:

Սակայն «Ժամի դրան» վաճառականների կողմից կազմակերպված նման բողոքի պոռթկումի հեղինակները մոռանում էին, որ ի դեմս Կարնո դպրոցների տեսուչի՝ իրենք գործ ունեն ոչ թե մի սովորական, խեղճ վարժապետի, այլ հեղափոխական կուսակցության առաջնորդի հետ: Կ.Պոլսից Կարնո Սանասարյան վարժարանի դեմ նյութվող դավերը հանգեցրին նրան, որ 1912 թվականի ուսումնական տարվա վերջերին խնամակալության կողմից ուղարկված Պալաքյան վարդապետի ծավալած գործունեության արդյունքում երկու ամսով Սանասարյանի դասերը դադարեցին: Աշակերտների մի մասը մեկնեց Կ.Պոլիս՝ ուսումը մայրաքաղաքում շարունակելու ակնկալիքով: Մեծ եղավ Կ.Պոլիս հասած և «Ազատամարտ» թերթի ակումբի մեջ իրենց խնդիրները բարձրացնող էրզրումցի պատանիների զարմանքը, երբ «…օր մըն ալ «Ազատամարտի» մէջ երեւաց Ռոստոմը, որ աւետեց մեզ Նոր Սանասարեանի բացումը»[2]: Արդեն 1913 թ. ամռանը Նոր Սանասարյանը տվեց իր առաջին շրջանավարտները:

Ռոստոմը ոչ միայն հոգատար ուսուցիչ էր, այլ նաև տաղանդավոր դաստիարակ: Նրա համար նոր սերնդի հայրենասիրության դաստիարակության խնդիրը ընդհանուր, վերացական քարոզներով ու ճառերով չէր սահմանափակվում: Արդեն 1912 թվականի հունիսի վերջերին Ռոստոմը Կարնո ուսուցիչների ու աշակերտների մի մեծ խմբով ճանապարհորդություն կազմակերպեց դեպի Մշո Ս. Կարապետ վանքը: Վարդավառի օրը այստեղ աշակերտների ջանքերով կազմակերպվեցին հանդեսներ, որոնք կրկնվեցին նաև հաջորդ տարիներին:

Ս. Կարապետի դպրոցում Ռոստոմը գտավ Սերոբ Աղբյուրի երկու տղաներին և Հրայրի որդուն, խոստացավ ապահովել նրանց հետագա ուսումը և բազմաթիվ տեղեր գրած նամակների միջոցով ի վերջո կարողացավ դրամ հայթայթել, որպեսզի երեխաները կրթությունը շարունակեն Կարինում:

1913 թվականի օգոստոսին Ռոստոմի նախաձեռնությամբ Ս. Կարապետ վանքում աշակերտների, ուսուցիչների ու ՀՅԴ անդամների համատեղ ջանքերով փորձ արվեց վերականգնել Նավասարդյան խաղերը՝ հանդեսներով ու մրցումներով: Ուշացումով ժամանեցին նաև Կովկասի դաշնակցականները, որոնք պետք է մասնակցեին Կարինում նշանակված ՀՅԴ յոթերորդ ընդհանուր ժողովին: Տպավորությունը հսկայական էր և՛ աշակերտների, և՛ Կովկասից ժամանածների համար: Ռոստոմը նրանց առաջնորդում էր Տարոնի վանքերն ու եկեղեցիները, ներկայացնում էր պատմական անցյալի հիշատակները և անգամ առաջարկում Ս. Կարապետ վանքին կից ստեղծել հայ ազգային–ազատագրական պայքարի հերոսների պանթեոն:

Ռոստոմը Կովկասից եկած հյուրերին մեծ ոգևորությամբ ներկայացնում էր նաև Տարոնի տնտեսական կացության բարվոքման մեջ նկատվող առա-

1 ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 106:

2 **Արշակունի Յ.,** Յուշէր Ռոստոմէն, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, 1979, էջ 280:

ջին նախանշանները՝ նոր ցանված խոպան հողերը, տնկված այգիներն ու բացված ուսումնարանները: Եվ այդ բոլոր հանդիպումների ու հանդիսություններ ժամանակ Ռոստոմը տարբեր բառերով կրկնում էր նույն սևեռուն գաղափարը, որը նա արծարծել էր նաև 1914 թ. փետրվարի 1–ին՝ Սիմոն Վրացյանին ուղղված մի նամակում. «…եթէ մեզ մի տասը տարի էլ հանգիստ թողնեն, մեր երկիրը դրախտ կը դառնայ, բայց պիտի թողնե՞ն… »[1]:Այս տանջող հարցը շուրջ չորս տարուց ավելի՝ Կարինում գտնվելու ողջ ընթացքում, Ռոստոմի բերանում էր: Եվ փնտրելով նրա պատասխանը՝ Ռոստոմը իր հսկայական քաղաքական փորձառությամբ զգում էր Երկրին ու ժողովրդին սպառնացող վտանգը և այն հաղթահարելու համար ՀՅԴ որոշ ղեկավար գործիչների կողմից ընտրված քաղաքական պայքարի մեթոդների անհուսալիությունը: «Հիմա էլ «բարենորոգումներ» ենք խաղում,– գրում էր Ռոստոմը նույն նամակում:– Մեր Պոլսեցիք գլուխները կորցրել են. շումիմ, բրատ, շումիմ. վախենամ՝ «բարենորոգումը» «չարանորոգում» դառնայ մեր գլխին, մի նոր առիթ հալածանքների ու կոտորածների: Եւրոպան մեզ պիտի պաշտպանէ, թէ՞ Ռուսաստանը: Եթէ մերոնք, փոխանակ Պոլսում եւ Եւրոպաներում աղմկելու, գային Երկիր, ոջիլի դէմ կռուէին, գիւղացուն այբուբէն սովորեցնէին, հաց ու սապոն տային, աւելի մեծ բարենորոգումներ կատարած կը լինէին: Մեր ժողովուրդը խաղաղութեան, հացի եւ լոյսի պէտք ունի. ա՛յս է օրուայ պահանջը եւ գլխաւոր բարենորոգումը»[2]:

1913–1914 թթ. Ռոստոմին համակած լուրջ անհանգստությունը ամենևին էլ չէր մնում ստեպ–ստեպ արտահայտվող դժգոհության ու կուսակցության քաղաքական ուղեգծի լուրջ վերանայման պահանջների շրջագծում: Ռոստոմը գործի մարդ էր և որպես այդպիսին՝ այնքան էլ էական նշանակություն չէր տալիս Արևմտյան Բյուրոյի Կ.Պոլսի հատվածի գլուխ կանգնած Խ. Մալումյանի (Ակնունի) և մյուս գործիչների՝ Թուրքիայի սահմանադրական կարգերի հանդեպ ունեցած հավատին: Նրա համար կարևորը Երկրի ու նրանում բնակվող հայության անվտանգության ապահովման խնդիրն էր: Այդ պատճառով 1912 թ. մայիսի 5–ին[3] տեղի ունեցած ՀՅԴ–Իթթիհաթ հարաբերությունների պաշտոնական խզումից հետո Ռոստոմի մտահոգության հիմնական առարկան արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպման գործի աշխուժացումն էր: Հենց այդ նպատակի իրականացման համար առաջին հերթին Ռոստոմի ջանքերով 1913 թ. օգոստոսին Կարինում տեղի ունեցած ՀՅԴ յոթերորդ ընդհանուր ժողովը կայացրեց որոշում՝ Հայաստանի Բյուրոյի ստեղծման մասին, որի ենթակայության տակ էին դրվելու հայաբնակ վեց վիլայեթները և Տրապիզոնի նահանգը՝ Ճանիկի հետ միասին: Հայաստանի Բյուրոյի նստավայրը պետք է լիներ Կարինը: Միաժամանակ երեք Բյուրոներին էլ տրվում էին պատասխանատու մարմինների համար կանոնագրով

1 **Ռոստոմ,** Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 611, 612:
2 Նույն տեղում, էջ 612:
3 Տե՛ս **Տասնապետեան Հ.,** ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ Ընդհանուր ժողով (1890–1924), Աթէնք, 1988, էջ 104:

սահմանված լիազորությունները[1]: Իսկ սա նշանակում էր, որ արտակարգ իրավիճակներում Հայաստանի Բյուրոն կարող էր Արևմտյան Հայաստանի վերաբերյալ ընդունել ցանկացած որոշում: Ռոստոմի հետ միասին Հայաստանի Բյուրոյի կազմի մեջ մտան տեղացի գործիչներ (Արմեն Գարո, դոկտ. Բոնապարտյան, Փիլոս–Մարալ), որոնք առավել համապատասխանում էին արևմտահայության ինքնապաշտպանության գործի կազմակերպման առաջադրանքին: Ժողովը նաև որոշեց երկար ժամանակ կուսակցական ծանր պարտականություններ կատարող Ռոստոմին տրամադրել հանգստի հնարավորություն Կ. Պոլսում կամ Ժնևում: Սակայն Ռոստոմը փաստորեն չենթարկվեց այդ որոշմանը: «Միայն ուժերի չափազանց անբաւարարութեան խնդիրն էր, որ ստիպեց ինձ մի տարի եւս մնալ»[2],– 1913 թ. հոկտեմբերի 20–ին հայտնում էր նա դեռևս ԱՄՆ–ում գտնվող Ս. Վրացյանին և գուժելով Սիմոն Զավարյանի մահվան լուրը՝ նախազգուշացնում, որ «…ընկերների մի մասը պնդում է, որ տարուայ կէսից թողնեմ Կարինը եւ տեղափոխուեմ Պոլիս»[3]: Ռոստոմը օգնականների ու փոխարինողների կարիք էր զգում և Ս. Վրացյանին նույնպես առաջարկում էր վերադառնալ: 1913 թ. նոյեմբերի 13–ին նա նույնիսկ հրաժարական տվեց Կարնո դպրոցների տեսչի պաշտոնից, սակայն նորից մնաց տեղում:

Ռոստոմի անհանգստությունը Արևմտյան Հայաստանում ու նրա շուրջ ստեղծվող կացությունից ավելի ու ավելի էր մեծանում: Մեծ տերությունների ուշադրության առարկան դարձած հայկական բարենորոգումների խնդրի քննարկումներն ու անգամ հուսատու թվացող որոշումները նրան չէին էլ հետաքրքրում: Ուստի արդեն 1914 թ. ապրիլի 2–ին Սիմոն Վրացյանին գրած նամակում Ռոստոմը տալիս էր ստեղծված կացության ճշգրիտ և իրատեսական գնահատականը: «Պոլսեցիք տարուած են բարեկարգումների յոյսով եւ պարլամենտարիզմով: Երանի հաւատացելոց: Այդ բոլորը լաւ, բայց մեր յոյսը պէտք է մեր վրայ դնենք»[4]: Նա կիսում էր ԱՄՆ–ի դաշնակցականներին համակած խորը մտահոգությունը՝ արևմտահայության ինքնապաշտպանության հարցում, բայց միաժամանակ հասկացնում, որ դրա համար նրանք պարտավոր են ոչ միայն խոսել, այլև դրամական միջոցներ չխնայել, քանի որ տեղի հայ հարուստները ամուր կերպով փակել են իրենց գրպանները՝ չմտածելով, որ «…վաղը թշնամին հոգին էլ կ'առնէ, փողն էլ»[5]:

Արևմտյան Հայաստանում ստեղծված քաղաքական իրավիճակին տրվող նման ճշգրիտ գնահատականների հետ միասին Ռոստոմը, չնայելով միջոցների սղությանը, 1912–1914 թթ. ծավալել էր նաև զենքի ու զինամթերքի հայթայթմանն ուղղված աննախադեպ մասշտաբների գաղտնի աշխատանքներ: Դրանց մանրամասներն ակնհայտ են դառնում ինչպես բազմաթիվ ժամանակակիցների հուշերի, այնպես էլ Ռոստոմի կողմից անընդհատ

1 Տե՛ս **Տասնապետեան Հ.,** ՀՅ Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, Պէյրութ, 1985, էջ 84:
2 **Ռոստոմ,** Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 606:
3 Նույն տեղում:
4 **Ռոստոմ,** Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 613:
5 Նույն տեղում:

ժնև ուղղվող՝ կուսակցության անձեռնմխելի ֆոնդից շտապ կերպով գումարներ հատկացնելու պահանջների ուսումնասիրությունից:

1912–1913 թթ. ցուրտ ձմռանը նա Կարինում իր շուրջն էր համախմբել Կ.Պոլսում ուսումն ավարտելուց հետո Սիմոն Զավարյանի կողմից իր մոտ ուղարկված մշեցի ու սասունցի աշակերտներին: Երկիր վերադարձող այդ երիտասարդներին Ռոստոմը սովորեցնում էր պայթուցիկ նյութեր ու ռումբեր պատրաստել ու առավել անվտանգ եղանակները: Իսկ վերջում, որպես կուսակցական առաջին պատասխանատու հանձնարարություն, նրանց վերմակների կապոցների մեջ ծրարում էր յոթ մոսին հրացան՝ Մուշ հասցնելու համար[1]: Ռոստոմից ստացած իրենց առաջին պատասխանատու կուսակցական հանձնարարությունը հաջողությամբ կատարած այդ աշակերտներից մեկը՝ Կարո Սասունին, շուտով դառնալու էր Տարոնի հայության մղած հերոսամարտերի առաջնորդներից մեկը:

Բարենորոգումների իրականացման խնդրում արտաքին ուժերին ապավինող, խորհրդարանական գործունեության նշանակությունը գերագնահատող ՀՅԴ գործիչների անխնա քննադատության հետ միասին Ռոստոմը և՛ իր, և՛ կուսակցության համար հստակորեն ուրվագծում էր Արևմտյան Հայաստանում գտնվող ակտիվ, խիզախ ու եռանդուն այն երիտասարդների շրջանակը, որոնց վրա կարելի էր հենվել սպասվող ծանր փորձությունների պահին: Նա ուրախությամբ էր արձանագրում այն փաստը, որ ինչպես Կարինում, այնպես էլ Տարոնում ու Վանում արդեն ձևավորվել են դաշնակցական գործիչների ամուր կորիզներ: Կարինում դա Ռոստոմի ձեռքի տակ աճած ու առնականացած Փիլոս–Մարալն էր՝ ազնիվ, եռանդուն այն երիտասարդը, որը իր անձնական երջանկությունն ու կյանքը զոհաբերեց՝ դառնալով Մեծ եղեռնի առաջին նահատակներից մեկը: Խոսելով Փիլոսի, Ա. Ատրունիի և Վ. Թոգաճյանի մասին՝ Ռոստոմը հպարտությամբ նրանց անվանում էր Կարնո դաշնակցության սյուներ: Նա հիացմունքով էր խոսում վաճառականի անվան տակ Բայազետում հաստատված, բայց իրականում զենքի տեղափոխման գործով զբաղվող Դրոյի (Դրաստամատ Կանայան) և Վանում ինքնապաշտպանության կազմակերպման գործը մեծ եռանդով առաջ տանող իր մյուս հոգեզավակի՝ Արամ Մանուկյանի մասին: Ռոստոմը մեծ հույսեր էր կապում նաև կրկին Տարոն վերադարձած Ռուբենի (Մինաս Տեր–Մինասյան) և Կարո Սասունու նման երիտասարդների հետ:

Դժվար չէ նկատել, որ գործիչների այն շրջանակը, որոնց աջակցում, առաջ էր մղում ու հովանավորում Ռոստոմը 1913–1914 թվականներին, Արևմտյան Հայաստանի ՀՅ Դաշնակցության այն հիմնական կորիզն էր, որը իր ուսերին տարավ անհավասար գոյամարտերի բեռը: Ռոստոմը իրեն հատուկ քաղաքական մեծ հոտառությամբ ու բնազդով զգում էր, որ Երկրի ու ժողովրդի հույսը սեփական ուժերին ապավինող նման գործիչներն են: Այդ շրջանակը ընդլայնելու համար նա կարգադրում էր Սիմոն Վրացյանին Ամերիկայից ինքնապաշտպանության գաղափարը քարոզելու փոխարեն վերա-

1 Տե՛ս **Սասունի Կ.,** Ռոստոմէն տպաւորութիւններ, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, 1979, էջ 300–303:

դառնալ ու լծվել նույն գործին: Ոգևորելով Ս. Վրացյանին այդ հեռանկարով՝ Ռոստոմը գրում էր. «Դրոն՝ Բայազէտում, Արամը՝ Վանում, Փիլոսը և մի քանի ընկերները այդ գործին են լծուած»[1]:

Միջազգային քաղաքական կացության սրվելու փաստը պահանջում էր արագացնել Ռոստոմի գլխավորությամբ սկիզբ առած աշխատանքները: Իսկ դա անհնար էր առանց կազմակերպական բնույթի լուրջ քայլերի: Արդեն 1914 թ. մարտի երկրորդ կեսին Բեռլինում գումարված ՀՅԴ Խորհուրդը որոշեց վերականգնել տեռորի գործադրումը՝ և՛ թշնամիներին պատժելու, և՛ անգամ՝ դրամական միջոցների հանգանակության նպատակով: Այդ գործելակերպին անցնելու նպատակով յոթերորդ ընդհանուր ժողովից ընդամենը մեկ տարի անց՝ 1914 թ. հուլիսին, Կարինում գումարվեց ՀՅԴ ութերորդ ընդհանուր ժողովը, որի աշխատանքները դեռևս չէին ավարտվել, երբ ստացվեց Առաջին աշխարհամարտի լուրը: Ժողովը ներկայացնում էր ՀՅԴ–ի ներսում ստեղծված կացության հարազատ պատկերը: «Գաւառներից, բուն Հայաստանից եկողները մտախոհ էին ու մտահոգ,– վկայում է Ս. Վրացյանը: Առանձնապէս յոռետես էին Սլաքը՝ Բիթլիսից եւ Մճօն՝ Մուշից: Որքան Հայաստանի հեռու վայրերից էին պատգամաւորները, այնքան լաւատես էին ու տրամադրութիւնը բարձր»[2]:

Առաջիններին առանձնապես չէր ոգևորում մեծ տերությունների մշակած բարենորոգումների ծրագիրը: Նրանք պահանջում էին անգամ դադարեցնել թուրքերին գրգռելու գործելակերպը և լրջորեն մտածել ինքնապաշտպանության մասին: Նման պայմաններում ժողովը ստիպված էր իրականացնել արտակարգ դրությանը համապատասխանող քայլեր: Ժողովի որոշմամբ՝ վերացվեց Արևմտյան Բյուրոն, իսկ Կ.Պոլիսը դրվեց Հայաստանի Բյուրոյի իրավասության տակ, որտեղ հաստատվելու էր Հայաստանի Բյուրոյի Կ. Պոլսի հատվածը:

Հավանական պատերազմի հանդեպ հայության դիրքորոշման մասին ժողովի որոշումները հիմնված էին չեզոքության պահպանման սկզբունքի վրա: Ժողովն ընդունեց նաև մի շարք գաղտնի որոշումներ, որոնց շարքում էր բռնի հանգանակության՝ «Փոքորիկի» վերականգնումը, ինչպես նաև այն սկզբունքի ամրագրումը, որ պատերազմի դեպքում ՀՅԴ հետագա քաղաքականությունը որոշելու է «…Տաճկաստանում գոյութիւն ունեցող յատուկ մարմինը՝ ընտրուած Ընդհ. Ժողովի կողմից…»[3]: Սա միանգամայն ճիշտ, բայց փաստորեն արդեն ուշացած որոշում էր: Ոստիկանության պահանջով Կարինից հարկադրաբար հեռացան Խ. Մալումյանն ու Վ. Փափազյանը, ձերբակալվեց Ս. Վրացյանը, որը հրաշքով կարողացավ ազատվել մահից:

ՀՅԴ ութերորդ ընդհանուր ժողովը հատուկ որոշում էր ընդունել Ռոստոմի մասին: Նրան տրվել էր մեկ տարի հանգիստ՝ փոքր–ինչ կազդուրվելու և ՀՅԴ պատմությունը գրելու համար: Ժողովի որոշմամբ՝ Ռոստոմը պարտա-

1 **Ռոստոմ,** Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 613:

2 **Վրացեան Ս.,**Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ.ա, Գահիրէ, 1955, էջ 158:

3 **Տասնապետեան Հ.,**.Յ Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, Պէյրութ,1985, էջ 92:

վոր էր անցնել Եվրոպա՝ Ժնև: Սակայն նորից, ինչպես և 1913 թվականին, Ռոստոմը շարունակում էր համառել[1]: 1914 թ. սեպտեմբերին տեղի դաշնակցականները պահանջեցին, որպեսզի Ռոստոմը նույնպես հեռանա Կարինից, քանի որ երկար ժամանակ հնարավոր չէր նրա նման աչքի ընկնող գործչին թաքցնել ոստիկանությունից: Ռոստոմը ընդդիմացավ, սակայն այլ ելք ուղղակի գոյություն չուներ: Նա կա՛մ պետք է ձերբակալվեր, կա՛մ հեռանար: Ուստի Ռոստոմը որպես Բյուրոյի ներկայացուցիչ Կարինում թողեց Փիլոս–Մարալին, որը գործելու էր կենտրոնական կոմիտեի հետ միասին: Նախատեսվում էր Փիլոս–Մարալին, որի անունը նույնպես հայտնի էր ոստիկանությանը, փոխարինել Կ. Պոլսից եկած մեկ այլ գործիչով: Սակայն Կարինից Ռոստոմի հեռանալու խնդիրը նույնպես դժվար էր լուծել, քանի որ պատերազմին արդեն հաշված օրեր էին մնում: Ռոստոմին անվտանգ կերպով Կարինից ուղարկելու գործը կազմակերպեց տեղի դաշնակցականներից Վահան Դաբաղյանը. «…ծպտելու համար ածիլեցին անոր յատկանշական մորուքը և գլուխը ֆէս մը դրին»[2]: Այնուհետև Վահան Դաբաղյանը Ռոստոմին տարավ Տրապիզոն ուղևորվող կառապանի մոտ և ներկայացրեց որպես իր հիվանդ եղբայրը, որին արգելված է խոսել (հայերեն իմացող տեղի թուրքերը անմիջապես կհասկանային, որ նա արևելահայ է):

Այն փաստը, որ Ռոստոմը Կարինից Տրապիզոն է հասել 1914 թ. սեպտեմբերի վերջերին, այսինքն՝ պատերազմի նախաշեմին, հաստատում է Նոր Սանասարյան վարժարանում նրա աշակերտ Հովակիմ Արշակունին հետագայում գրած իր հուշերում: Նա իր ընկերոջ՝ Նոր Սանասարյանի մեկ այլ շրջանավարտ Ավետիսի հետ Տրապիզոնի շուկայում հանկարծ նկատում է մեկին, որը զարմանալիորեն նման էր Ռոստոմին. «Ռոպէ մը վարանման մէջ ինկանք: Նոյն հագուստներն էին, բայց գլխուն թրքական ֆէս ունէր, եւ պեխերն ու մօրուքը այնպէս էր խուզած, ինչպէս թթու թուրքերը: Կ'աճապարէր, կ'երթար նաւ առնելու»[3]: Մի քանի հարցումներ ուղղելով իր աշակերտներին՝ Ռոստոմը ձեռքերը դրեց նրանց ուսերին, հրաժեշտ տվեց և արագ քայլերով գնաց դեպի նավահանգիստ:

Ուրեմն, չնայած ՀՅԴ ութերորդ ընդհանուր ժողովից հետո Կարինում սկիզբ առած հալածանքներին ու ձերբակալություններին, Ռոստոմը շարունակեց Հայաստանի Բյուրոյի ներկայացուցչի իր պարտականությունների կատարումը ընդհուպ մինչև այն պահը, երբ թուրքական բանակի արևելյան գլխավոր հենակետը հանդիսացող էրզրումում սկսվեց զորահավաքը: Դրա-

1 Սիմոն Վրացյանը «Վեմ» հանդեսում հրապարակած՝ Փիլոս–Մարալի վերջին նամակների համար գրած առաջաբանում պնդում է, որ ժողովից հետո սկիզբ առած հետապնդումների մթնոլորտում՝ 1914 թ. օգոստոսի վերջերին, Ռոստոմը Կարինից մեկնել է Կ.Պոլիս՝ Եվրոպա անցնելու համար: Սակայն թուրքական ոստիկանության կողմից ձերբակալվելով և միայն հրաշքով փրկվելով՝ Կարս անցած Ս. Վրացյանը տեղյակ չի եղել Կարինում տեղի ունեցած հետագա դեպքերին: Բազմաթիվ ժամանակակիցների վկայությունները ապացուցում են, որ Ռոստոմը Կարինից հեռացել է միայն 1914 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին՝ մինչ այդ թաքնվելով թուրքական ոստիկանության հետապնդումներից:

2 ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 116:

3 **Արշակունի Հ.,** Յուշեր Ռոստոմէն, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, 1979, էջ 281:

նից հետո նրա մնալը Կարինում անիմաստ էր ու վտանգավոր՝ նախ և առաջ հենց տեղի դաշնակցականների համար, որոնք, որպես թուրքահպատակներ, նույնպես ենթակա էին զորակոչի:

Այսպիսով՝ 1910 –1914 թվականների ընթացքում Կարինում հաստատված Ռոստոմը ամեն ինչ արեց՝ երիտթուրքական հեղաշրջման հետևանքով լեգալ գործունեության անցած ՀՅԴ կառույցն ամրապնդելու, նրա լավագույն ուժերին Արևմտյան Հայաստան վերադարձնելու և արևմտահայերի ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար:

Ռուբեն Սահակյան
Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914–1916 ԹԹ.)

Կայսրություններն իրենց հպատակ ժողովուրդների գոյության, նրանց հիմնախնդիրների մասին «հիշում» էին միայն պատմական կարևոր և վճռական պահերին: Նման մի առիթ հանդիսացավ 1914 թ. օգոստոսի 1–ին բռնկված Առաջին համաշխարհային պատերազմը: Հակամարտ ռազմաքաղաքական խմբավորումները՝ Անտանտը (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և Ռուսաստան) և Եռյակ, ապա՝ Քառյակ միությունը (Գերմանիա, Ավստրո–Հունգարիա, Բուլղարիա և Թուրքիա) ջանք և միջոց չէին խնայում, որպեսզի իրենց կողմը գրավեն ոչ միայն իրենց, այլև հակառակորդի տիրապետության ներքո գտնվող ազգային փոքրամասնություններին: Նրանց տրվում էին առատ խոստումներ՝ ինքնավարությունից մինչև անկախություն: Հպատակ ժողովուրդների հոգևոր, հասարակական և քաղաքական ղեկավարությունից պահանջվում էր ազդել հայրենակիցների վրա, հորդորելով և պարտադրելով կազմել մարտական և թիկունքային ստորաբաժանումներ, տրամադրել նյութական միջոցներ այդ կազմավորումների համար: Հիմնական շեշտը դրվում էր աշխարհազորային զորամիավորումների կազմակերպման և դրանք համապատասխան միջոցներով ապահովելու վրա:

Ռուսաստանը ևս ձեռնամուխ եղավ աշխարհազորային ստորաբաժանումների ձևավորմանը: Ավստրիական բանակից դասալքած սերբերից և չեխերից կազմավորվեցին նույնիսկ դիվիզիաներ: Իսկ Կովկասում ռուսական իշխանությունների անմիջական հովանավորությամբ ձևավորվեցին հայկական, ասորական, հունական, թաթարական (ադրբեջանական), ապա՝ նաև պարսկական կամավորական ջոկատներ:

Կամավորական զորամիավորումների կազմավորման կոչին անմիջապես աջակցեց հայությունը, որը տոգորված էր Արևմտյան Հայաստանն օսմանյան դժնդակ տիրապետությունից ազատագրելու գաղափարով[1]:

Հայ կամավորական ջոկատների (նրանք հայտնի էին խումբ, գունդ, բանակ և դրուժինա անվանումներով) կազմակերպման ողջ աշխատանքները ծանրացան Թիֆլիսի հայոց ազգային բյուրոյի վրա, որը հիմնականում կազմված էր ՀՅԴ անդամներից: Ցարական կառավարությունը, քաջ գիտենալով, որ Հայոց ազգային բյուրոյի կազմի մեծամասնությունը Դաշնակցության անդամներ են, ստիպված էր համակերպվել, քանի որ անհ-

1 **Арутюнян А. О.,** Кавказский фронт 1914—1917 гг., Е., 1971, с. 296—298. Նազարյան Ա. Ս., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում, Ե., 1999, էջ 39, 40:

ռաժեշտ էր համալրել Կովկասյան բանակը: Իսկ դա ուներ իր հիմնավոր պատճառները:

Ռուսական գլխավոր շտաբը պատերազմի նախօրյակին կազմել էր մարտական գործողությունների վարման ռազմավարական երեք պլան: Ռուսական զինված ուժերի ծավալումը կատարվեց երրորդ տարբերակի համաձայն: Այն նախատեսում էր Կովկասյան ռազմական օկրուգից զգալի ուժեր տեղափոխել Արևմտյան ռազմաճակատ: Օսմանյան Թուրքիայի՝ 1914 թ. օգոստոս–սեպտեմբեր ամիսներին պատերազմի մեջ չմտնելը ռուսական հրամանատարությանը «հուշում» էր, որ թուրքերը Գերմանիային և Ավստրո–Հունգարիային կմիանան միայն 1915 թ. գարնանը: Եվ դա այն դեպքում, երբ ՀՅԴ–ն բազմիցս զգուշացրել էր, որ թուրքերը մարտական գործողությունները կսկսեն արդեն 1914 թ. աշնանը[1]:

Արևմտյան ռազմաճակատ տեղափոխված զորամասերին պետք է փոխարինեին պահեստազորային զորաջոկատները և Թուրքեստանից բերված զորքերը, ինչպես նաև կազակային ստորաբաժանումները և կամավորական ջոկատները:

Փաստորեն Կովկասյան ռազմաճակատը համարվում էր մարտական գործողությունների երկրորդական թատերաբեմ, և այստեղ վերջին հերթին էին ուղարկում համալրում, զենք և զինամթերք: Բացի այդ՝ օսմանյան հնարավոր հարձակման դեպքում Կովկասյան ռազմական օկրուգի զորքերին թույլատրվում էր նահանջել մինչև Ռազմավիրական ճանապարհ և Բաքու՝ հակառակորդին թողնելով ողջ Արևելյան Հայաստանը[2]:

Կամավորական ջոկատներին անդամագրվելու՝ Հայ առաքելական եկեղեցու և հայ հասարակական–քաղաքական կազմակերպությունների կոչերին աջակցեց թե՛ Ռուսաստանում և թե՛ արտասահմանում բնակվող ողջ հայությունը: Հատկապես ակտիվ գործունեություն ծավալեց ՀՅ Դաշնակցությունը:

Հայության ներսում սկիզբ էր առել համազգային մի շարժում, որն իր ծավալով և թափով կարելի էր համեմատել միայն 1720–ական թվականներին Արցախում և Սյունիքում ծեռնարկված հայ ազգային–ազատագրական շարժման հետ: Սկզբնապես կազմավորվեցին չորս կամավորական դրուժինաներ, որոնց մեջ ընդգրկված էր 2482 մարտիկ:

Ստորաբաժանումները չունեին միասնական կառուցվածք և կամավորների հավասար թվաքանակ: Առաջին խումբը (1200 զինվոր, հրամանատար՝ Անդրանիկ Օզանյան) բաժանված էր վաշտերի, յուրաքանչյուրում՝ 238 հոգի, երկրորդը (382 կամավոր, հրամանատար՝ Դրաստամատ Կանայան) և երրորդը (430 մարտիկ, հրամանատար՝ Համազասպ Սրվանձտյանց) կազմված էին հիսնյակներից, իսկ չորրորդը՝ (470 կամավոր, հրամանատար՝ Արշակ Գավաֆյան) հարյուրյակներից: Չորս դրուժինաներում կար ընդամենը 200 ձի, որ խիստ անբավարար էր: Դա էր պատճառը, որ կամավորական շարժումը համակարգող «Հայ կամավոր խմբերի կարգադրիչ մարմինը»

1 Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 45, ցուցակ 1, գործ 1, թ. 40–41:
2 **Шамбаров В. Е.,** За веру, царя и Отечество М., 2003, с. 265.

լրացուցիչ միջոցներ հատկացրեց ձիեր և բեռնակիր անասուններ գնելու համար: Հետագայում կամավորական ջոկատների թվաքանակը հասցվեց ութի, որոնցից մեկը պահեստային էր[1]:

Կամավորական ջոկատները տեղակայվեցին Թուրքիայի հետ սահմանակից շրջաններում: Այստեղ պետք է կատարվեր մարտիկների ընտրությունը, ուստի անցկացվեցին մարտական պատրաստականության դասընթացներ:

Օսմանյան Թուրքիայի անսպասելի պատերազմի մեջ մտնելը ստիպեց ռուսական հրամանատարությանը շտապ կարգով հակառակորդի դեմ ուղղել առկա ուժերը: Նրանք մարտի նետվեցին առանց պատշաճ նախապատրաստության, առանց ձմեռային հանդերձանքի:

Մարտական գործողությունների ընթացքում պարզվեց, որ հայ հեծյալ կամավորները վատ են տիրապետում սրին, ուստի որոշվեց հեծելազորը զինել գերմանական արտադրության «Մաուզեր» ատրճանակներով, որոնք հայտնի էին «տասնոց» անվամբ: Հայոց ազգային բյուրոն հատուկ կոչով դիմեց հայրենակիցներին՝ խնդրելով տրամադրել իրենց «Մաուզեր» ատրճանակներ և փամփուշտներ[2]:

Պատերազմի սկզբնական փուլում կամավորական խմբերում ընդգրկում էին գրեթե բոլոր ցանկացողներին, և Հայոց ազգային բյուրոն ստիպված էր նույնիսկ հատուկ կոչով դիմել հայրենակիցներին, հասարակական և քաղաքական կազմակերպություններին՝ մինչև նոր կարգադրություն այլևս կամավորներ չուղարկել:

1915 թ. փետրվարին Թիֆլիսում հրավիրվում է կամավորական ջոկատների հրամանատարների՝ խմբապետերի խորհրդակցություն: Որոշվում է ռազմաճակատում կամավորների թիվը հասցնել 3 հազարի և միաժամանակ թիկունքում նախապատրաստել նույն քանակությամբ մարտիկներից բաղկացած ստորաբաժանումներ, իսկ պահեստազորը հասցնել հազար հոգու: Խորհրդակցությունում նշվեց, որ 1914 թ. նոյեմբերից մինչև 1915 թ. հունվար խմբերի կորուստները կազմել են 745 սպանված, վիրավոր և հիվանդ[3]:

Ամփոփելով մարտական գործողությունների սկզբնական փուլում կուտակված փորձը՝ «Հայ կամավորական կարգադրիչ մարմինը» իրականացնում է մի շարք կառուցվածքային փոփոխություններ: Կենտրոնական շտաբը բաժանվում է վեց բաժինների՝ զինվորական, համբարակային, ֆինանսական, առողջապահական, հսկողական, արտաքին հարաբերության[4]:

Կամավորական շարժման կարևոր հիմնախնդիրներից էր դրուժինաներում զինվորական կարգապահության հաստատումը: Կարգապահությամբ հատկապես աչքի էր ընկնում Դրոյի հրամանատարության ներքո գտնվող երկրորդ ջոկատը: Առաջին ջոկատի հրամանատարությունը, հանձին Անդրանիկի, դիմում է կտրուկ միջոցների: Նրա հրամանով 1915 թ. փետրվարի

1 ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 16: Տե՛ս նաև՝ **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 9:
2 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 87, թ. 34–35:
3 Նույն տեղում, թ. 30:
4 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 87, թ. 29:

1–ին դրուժինայում հիմնվում է ոստիկանություն: Մի քանի օր անց՝ փետրվարի 4–ին, տեղի է ունենում 9 ոստիկանների երդման արարողությունը: Ոստիկանապետ է նշանակվում Միքայել Մովսիսյանցը: Փաստորեն, հայկական ռազմարվեստի պատմության մեջ առաջին անգամ արձանագրվում է ռազմական ոստիկանության հիմնադրումը: Կարծում ենք, որ ՀՀ ռազմական ոստիկանության հիմնադրման օրը կարելի է ընդունել 1915 թ. փետրվարի 1–ը[1]:

Հայոց ազգային բյուրոյի առջև դրված էր մի կարևոր հիմնահարց ևս. այն է՝ չեզոքացնել կամ մեղմել ցարական բարձրաստիճան պաշտոնյաների, զինվորականների և Պետական դումայի որոշ պատգամավորների ընդգծված հակահայ դիրքորոշումը: Նրանք անվստահությամբ էին վերաբերվում հայ կամավորական ջոկատներին և նրանց գործունեությունը համակարգող ՀՅ Դաշնակցությանը: Հակահայ ուժերի համոզմամբ կամավորական խմբերը հանդիսանում էին ՀՅԴ–ի մարտական ջոկատները, որոնք ցանկացած պահի կարող էին զենքն ուղղել ռուսական կայսրության դեմ: Նույնիսկ Կովկասյան ռազմաճակատում յուրայինների հաղթանակը կայսերապաշտ ուժերի կողմից դիտվում էր որպես «Մեծ Հայաստանի» ստեղծմանն ուղղված փորձ: Աստիճանաբար հող էր նախապատրաստվում հայ կամավորական խմբերը ցրելու համար[2]:

Ցարական բարձրաստիճան պաշտոնյաները չէին կարող ներել հայ կամավորներին, որ նրանք Վանի 1915 թ. հուլիսյան նահանջի մեջ մեղադրում էին ռուսական հրամանատարությանը: Ազգային բյուրոյից մեծ ջանքեր պահանջվեցին, որպեսզի հետ պահի կամավորներին խմբերը լքելուց, որպեսզի ցարական իշխանություններին առիթ չտրվի կազմացրել հայկական խմբերը:

Այնուամենայնիվ, հայ կամավորական ջոկատները շարունակեցին հերոսաբար մարտնչել: Հայ մարտիկները գործուն մասնակցություն ունեցան Կովկասյան ճակատում տեղի ունեցած նշանավոր գործողություններին, որոնց թվում՝ Էրզրումի (1916 թ. փետրվարի 3), Մուշի (1916 թ. փետրվարի 2), Բիթլիսի (1916 թ. փետրվարի 7) ազատագրումն էր:

Սակայն ցարական իշխանությունները 1916 թ. մարտից սկսեցին հայ կամավորական դրուժինաների լուծարումը և նրանց հենքի վրա հրածգային վեց գումարտակների ձևավորումը:

Հայ կամավորական շարժման ընթացքում ՀՅԴ–ն լայնամասշտաբ գործունեություն ծավալեց: Կուսակցությունն իր ողջ ներուժն օգտագործեց շարժմանը կանոնավոր ընթացք տալու համար: Անշուշտ, եղան նաև սխալներ, որոնք նման լայնածավալ գործերում անխուսափելի էին: Կամավորական շարժման փորձը օգտագործվեց 1917–1918 թվականներին՝ հայկական ազգային ռազմական կազմավորումներ ձևավորելու համար:

---

1 **Սահակյան Ռ. Օ.,** Ռազմական ոստիկանության կազմակերպումը Հայկական առաջին կամավորական ջոկատում, «Հայկական բանակ», N 1, 2004, էջ 36–41:

2 Бахчурина Ю. А., Окраины российской империи: государственное управление и национальная политика в годы Первой мировой войны (1914—1917 гг.), М., 2004, с. 216—217:

Վահան Մելիքյան
Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանի առաջին հանրապետության ծնունդը բնորոշվում է նրանով, որ այն առաջացավ պատմական Հայաստանի հյուսիսարևելյան հատվածի վրա, և հայկական պետության ձևավորման գործընթացը ուղղակիորեն կապված էր օտար կայսրության փլուզման հետ: 1917 թ. երկու իրարամերժ՝ Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղաշրջումները Ռուսաստանում այն արմատական իրադարձություններն էին, որոնք հանգեցրին նախ՝ բազմազգ կայսրության փլուզմանը, ապա և՝ ազգային պետությունների առաջացմանը:

Փետրվարյան հեղափոխությանը բնորոշ էր դեմոկրատական ազատություններով պայմանավորված՝ հասարակական–քաղաքական և ազգային կյանքի աննախադեպ վերելքը: Ընդհատակից դուրս եկած հայ իրականության բոլոր քաղաքական կուսակցությունները փորձում էին ապացուցել իրենց ծրագրերի ճշմարտացիությունն ու կենսունակությունը և դրանք կյանքի կոչել: Այդ մրցավազքում անվիճելի առաջնությունը պատկանում էր ՀՅ Դաշնակցությանը, որը հայ հասարակության բոլոր շերտերի մեջ է՛լ ավելի ամրապնդեց իր հեղինակությունը: Հեղափոխությանը հաջորդած ութ ամիսների ընթացքում կուսակցության կուտակած փորձը և ակտիվ գործունեությունը 1918 թ. մայիսին դարձան ՀՅ Դաշնակցության քաղաքական կամքի դրսևորման գլխավոր երաշխիքները: ՀՅ Դաշնակցությունը գլխավորեց ազգային այն կառույցների ձևավորումն ու ամրապնդումը, որոնք 1918 թ. պետության ստեղծման հիմքը հանդիսացան:

Արևմտահայ և Արևելահայ ազգային խորհուրդների հիմքի վրա ձևավորվեցին Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու խորհրդարանը, ռուսական բանակի հայկական ազգային զորամասերից ու արևմտահայ կամավորներից կազմավորվեց Հայկական կորպուսը, և վերջապես, Հայկական հարցի լուծման ճանապարհին Արևմտյան Հայաստանի իրավակարգին քաղաքացիական վարչակարգի բնույթ հաղորդելը ապագա միջազգային վեհաժողովներում դարձավ Միացյալ Հայաստանի պահանջատիրության հիմքը:

Անդրկովկասի հատուկ կոմիտեի՝ Օզակոմի գործունեությամբ սկսվեցին ազգային ուժերի հակասությունների անթաքույց պոռթկումը, անդրկովկասյան ապագա միացյալ իշխանության մարմինների և կառավարությունների ու դրանցում Կովկասի գլխավոր ազգերի փոխհարաբերությունների վճռորոշ փուլը:

Օզակոմում ձևավորվեց վրաց–ադրբեջանական համաձայնություն՝ հայության ու նրա ղեկավար քաղաքական ուժի՝ ՀՅ Դաշնակցության դեմ,

որը հետագայում կործանարար հետևանքներ ունեցավ՝ ի դեմս Կոմիսարիատի և Սեյմի քաղաքականության: Ինչ վերաբերում է այս փուլում ՀՅԴ կողմից Հայաստանի անկախության հիմնահարցը բարձրացնելուն, ապա անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ թեև այդ ռազմավարությունը 1917 թ. ծրագրային ուրվագծում չի ստացել, սակայն Ժամանակավոր կառավարության հռչակած ազգային քաղաքականությունը, ազգային կառույցների ստեղծման նկատմամբ բարյացակամ վերաբերմունքը, ՀՅ Դաշնակցության մի շարք գործիչների հետ անձնական կապերը հիմք էին տալիս չբացառելու այդ հեռանկարի հնարավորությունը: Այլ բան էր քաղաքական պահի և նրանից բխող համապատասխան քայլը ձեռնարկելու նպատակահարմարության խնդիրը:

1917 թ. փետրվարից շուրջ 10 տարի առաջ՝ 1907 թվականին ընդունված իր նոր ծրագրում ՀՅ Դաշնակցությունը առաջադրել էր Անդրկովկասի՝ Ռուսաստանի Դեմոկրատական Դաշնային Հանրապետության իրավահավասար անդամը լինելու գաղափարը: Ալ. Խատիսյանը և Ավ. Շախաթունյանը անդրկովկասյան և համառուսական խորհրդակցություններում բարձրացնում էին նաև Անդրկովկասի սահմաններում հայկական գավառների վարչատարածքային սահմանազատման խնդիրները և ընդգծում, որ գերակշիռ հայ բնակչություն ունեցող Կարսի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի նահանգների մասերը պետք է միանան Երևանի նահանգի գավառներին: Ի դեպ՝ Ստ. Շահումյանի 1917 թ. հունիսին ներկայացրած ազգային հարցի լուծման տարբերակը ևս այս բովանդակությունն ուներ: Արևմտյան Հայաստանի հարցում ՀՅ Դաշնակցությունը որդեգրել էր սպասողական դիրք և խնդրի լուծումը կապում էր պատերազմի հաղթական ավարտի հետ: Սակայն այս հավանական հեռանկարը կասկածի տակ դրվեց բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ՀՅ Դաշնակցությունը կանգնեց բարդ երկընտրանքի առջև. մի կողմից անհրաժեշտ էր շարունակել աջակցությունը Արևմտյան Հայաստանն ազատագրած Ռուսաստանին, մյուս կողմից խորանում էր հայ իրականության ղեկավար ազգային–քաղաքական ուժի և բոլշևիզմի գաղափարական դիմակայությունը:

Կողմնորոշման և քաղաքական այլընտրանքի հիմնահարցը պատմական այս ժամանակահատվածի կենտրոնական և, թերևս, ամենաուշագրավ գիտական հարցերից է: Այն ոչ միայն անաչառ մտորումների տեղիք է տալիս, այլև շարունակում է պառակտել հայ հասարակությունը: Ամբողջ հարցն այն է, որ ժամանակի սկզբնաղբյուրային հենքի վրա անգամ չի հաջողվում ստանալ իրավիճակի լիարժեք պատկերը: Հաճախ մենք՝ պատմաբաններս, հետամուտ լինելով պատմագիտական նյութի մանրամասներին, հեռանում ենք տվյալ դեպքում Անդրկովկասի քաղաքական իրադարձությունների եղանակն ապահովող արտատարածաշրջանային անցուդարձից:

Այդպիսիք են նախ՝ Ռուսաստանի խորհրդայնացման փաստը ու այդ միջոցով վերջինիս հրաժարումը պատերազմի հաղթական արդյունքներից, գերմանական վերնախավի և բոլշևիզմի գաղտնի համաձայնությունը, սիո-

նիզմի գործոնը, բոլշևիկների ու երիտթուրքերի ձևավորվող դաշինքը և այլն: Այս և նման հարակից հարցերն են, որ պայմանավորվում էին հայ–թուրքական, հայ–վրացական և այդ բոլորի ու խորհրդային իշխանության բազմաշերտ փոխհարաբերությունները:

Այդ ամենի համակողմանի գիտական հետազոտման արդյունքում հնարավոր կլինի լուսաբանել մասնավորապես 1917–1918 թթ. քաղաքական զարգացումները, Անդրկովկասի անկախացման գործընթացի և այդ ամենի մեջ ՀՅ Դաշնակցության դերը:

Այլընտրանքի բացակայությունը տանում էր խորհրդային իշխանության կարճատևության և արկածախնդրության մեկնակետին գերապատվություն տալուն: Դրանով էր բացատրվում ՀՅԴ առերևույթ մերձեցումը Անդրկովկասի հիմնականում հակառուսական ուժերի և Թուրքիայի հետ:

Ցավոք, այլընտրանքի կիզակետը հենց Անդրկովկասի հնարավոր խորհրդայնացման խնդրի մեջ է: Բոլշևիկ Ստ. Շահումյանի պայքարը Անդրկովկասի կոմիսարիատի դեմ ոչ թե երկրամասի խորհրդայնացման պարզունակ գաղափարի, այլ այդ ճանապարհով Արևմտյան Հայաստանի խնդիրը լուծելու, Կովկասում հայկական տարրի գերիշխանության հաստատման, ազգային հարցի հայանպաստ լուծման մեջ էր: Շահումյանը և՛ 1917 թ. նոյեմբերին, և՛ 1918 թ. փետրվարին առաջարկում էր ՀՅ Դաշնակցության գործիչներին՝ Բաքվի խորհրդային իշխանությանը և այդ ճանապարհով նաև բոլշևիկներին ենթարկվող և դեռ ռազմաճակատում պահպանվող կովկասյան բանակի վստահելի զորամասերի և ՀՅ Դաշնակցության կողմից վերահսկվող զորամասերի ուժերով գրավել Թիֆլիսը, տապալել Անդրկովկասի կոմիսարիատը, այլ խոսքով՝ Անդրկովկասում վրացական մենշևիզմի հակահայկական հեգեմոնիզմը և խորհրդայնացման ճանապարհով միասին փրկել հայ ժողովրդին մեկուսացումից և բազում այլ վտանգներից: Շահումյանի հանդուգն և բոլշևիկյան կենտրոնին չենթարկվող վարքագիծը գործնականում դատապարտվեց Լենինի, Տրոցկու և Ստալինի կողմից: Չի կարելի անտեսել այն դրվագը, որ Բաքվի կոմիսարների գնդակահարությունից հետո՝ մինչև իր կյանքի վերջը, Լենինը ոչ մի խոսք չի հրապարակել իր «լավագույն զինակից» Շահումյանի մասին:

1918 թ. մարտին՝ թուրքական նոր արշավանքի պայմաններում, ՀՅ Դաշնակցությունը համագործակցեց Շահումյանի և Բաքվի սովետի հետ, սակայն այժմ արդեն օբյեկտիվորեն ավելացել էր բոլշևիկների հակառակորդների թիվը. թուրքերին, ադրբեջանցիներին, վրացիներին հիմա էլ ավելացել էին հակաբոլշևիկյան սոցիալիստական կուսակցությունները (էսէռներ, մենշևիկներ և այլն), սպիտակ շարժումը, անգլիացիները:

Ինչ վերաբերում է Անդրկովկասի ազգերին «անկախություն շնորհելու» և Ռուսաստանից փրկելու՝ Թուրքիայի քաղաքականությանը, ապա այն, ստանալով Գերմանիայի աջակցությունը և խորհրդային իշխանության նկատմամբ ամրապնդելով իր «հակաիմպերիալիստական», հետո էլ՝ «կարմիր» կեցվածքը, լայնորեն ձեռնամուխ եղավ նախ՝ Անդրկովկա-

սը Ռուսաստանից անջատելու, ապա և՝ արևելահայության բնաջնջման ծրագրի իրագործմանը:

Մայիսյան հերոսամարտերը առաջին խոչընդոտը դարձան այդ հրեշավոր պլանի իրականացման ճանապարհին և հնարավոր դարձրին հայոց պետականության վերականգնումը: Սակայն անկախության հռչակումից հետո էլ չդադարեցին վեճերն ու պայքարը քաղաքական կողմնորոշման, այլընտրանքի, իշխանության հարցերի շուրջ: Այդ արատավոր երևույթը՝ իր աղետալի հետևանքներով ու անձերի պայքարով, դրսևորվեց Հայաստանի Հանրապետության կյանքի տարբեր բնագավառներում, ինչպես նաև Հայկական հարցի միջազգային արծարծումների ժամանակ: Արևմտահայությանը ներկայացնող հայ ազգային, հասարակական գործիչների կողմից նորաստեղծ հանրապետությունը կոչվեց սոսկ Արարատյան հանրապետություն:

Սակայն պետականության վերականգնման մեծագույն խորհուրդը գերտերություններին մարտահրավեր նետած հայոց պետականության հարատևության հիմնաքարն էր: Իր հերոսական մաքառումով այն հիմք դարձավ երկրորդ և երրորդ հանրապետությունների համար՝ սերունդներին ավանդելով հույս և վստահություն, հզորանալու նպատակ:

Արարատ Հակոբյան
Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1918–1920 ԹԹ.)

Այսօր, երբ 115–ամյա հեռավորությունից նայում ենք հայ քաղաքական ազդեցիկ կուսակցություններից մեկի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) անցած պատմական ուղուն, դժվար չէ նկատել, որ այն ընթացել է հետևյալ չորս հիմնական շրջափուլերով.

1. 1890–1918 թթ.՝ ընդգրկում է հայ ազատագրական պայքարի կազմակերպման ու Հայկական հարցի լուծման փորձությունների ժամանակաշրջանը,
2. 1918–1920 թթ.՝ պետական շինարարության՝ Հայաստանի առաջին հանրապետության կայացման ժամանակաշրջան,
3. 1921–1991 թթ.՝ սփյուռքյան տարագրության շրջան,
4. Հայաստանի երրորդ հանրապետության ժամանակաշրջան:

Մեր խնդիրն է ամփոփ անդրադառնալ ՀՅԴ պատմության երկրորդ շրջափուլին՝ պետական շինարարությանը, Հայաստանի Հանրապետության կայացման գործում նրա նշանակալի դերակատարությանը: Հիրավի, Առաջին հանրապետության ժամանակաշրջանը համարվում է ՀՅԴ պետական գործունեության ամենաբեղուն **շրջանը:** Եվ այդ իմաստով ամենևին էլ պատահական չպետք է համարել, որ տասնամյակներ շարունակ խորհրդահայ պատմագրության մեջ 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության պատմությունը նույնացվել է ՀՅ Դաշնակցության պատմության հետ՝ այն անվանելով «դաշնակների հանրապետություն», «դաշնակների տիրապետություն» և այլն:

Հայ պատմագրության մեջ չկա միասնական հայացք Առաջին հանրապետության ու մասնավորապես ՀՅԴ գործունեության գնահատականի շուրջ: Մի կողմից՝ խորհրդահայ պատմագրությունը, հենվելով Լեոյի հայտնի աշխատությունների վրա, հասկանալի պատճառներով, ըստ էության, խեղաթյուրել ու անվանարկել է ՀՅԴ գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ Սփյուռքի դաշնակցական առանձին հուշագիր–հեղինակներ երբեմն միակողմանիորեն գովերգել են իրենց կուսակցության գործունեությունը՝ նկատելու չտալով թույլ տված սխալներն ու բացթողումները: Բայց և այնպես անուրանալի է այն փաստը, որ 1918–1920 թթ. ՀՅ Դաշնակցություն կուսակցությունն է եղել հայոց պետական մեքենան առաջ շարժող քաղաքական գլխավոր ուժը:

Լրացուցիչ ապացույցի կարիք չունի այն հայտնի իրողությունը, որ 1918 թ. գարնանը ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրության պայմաններում՝ Հայաստանի անկախության հռչակման շատ համարձակ քայլի նախապատրաստությունից մինչև հանրապետության անկման վերջին օրը՝

1920 թ. դեկտեմբերի 2–ը, այդ կուսակցությունն է եղել կառավարող քաղաքական ուժը, և նա է հիմնականում իր ուսերին կրել իշխանության մարմինների ձևավորման, բանակի կայացման, տեղական ինքնակառավարման հաստատման, արտաքին ու ներքին քաղաքականության վարման հիմնական բեռը: Նա է ստանձնել անկախ պետականության, ժողովրդի ու հայրենիքի անվտանգության ողջ պատասխանատվությունը[1]:

Հարց է ծագում. որո՞նք էին Առաջին հանրապետության շրջանում կառավարող կուսակցության՝ ՀՅԴ–ի պետական գործունեության գլխավոր արդյունքները:

– Ամենից առաջ ՀՅԴ–ն վճռական դերակատարություն ունեցավ Հայաստանի անկախության հռչակման բարդ վճիռը կայացնելու գործում: Չնայած անկախությունը եկավ արագ ու անսպասելի, սակայն այն ուներ իր ներքին տրամաբանությունը: «Մայիսի 28–ի» գլխավոր խորհուրդը կայանում էր նրանում, որ եթե տվյալ պահին Հայոց (կենտրոնական) ազգային խորհուրդը չընդուներ անկախության վերաբերյալ պատմական որոշում, և նա իրեն չհայտարարեր հայկական գավառների գերագույն իշխանություն, ապա հայապատկան տարածքները պարզապես բաժին կդառնային հարևան թուրքերին, ադրբեջանցի թաթարներին և վրացիներին[2]: Այնպես որ՝ Հայաստանի անկախության ակտը պատմական անհրաժեշտություն էր և ստեղծված պայմաններում չուներ այլընտրանք: Ավելին՝ այն մեծագույն իրադարձություն էր, որի իմաստն ու արժեքը նոր–նոր է հասկացվում ու գնահատվում: Եվ այս տեսակետից միանգամայն անհիմն են խորհրդային ու խորհրդամետ պատմագիրների մեղադրանքները Դաշնակցության և «Մայիսի 28–ի» անկախության ակտի հասցեին:

– Անկախության հռչակումից հետո ՀՅԴ գործունեության առանցքը դարձավ առաջին վարչապետ Հ. Քաջազնունու բնութագրմամբ՝ «անձև քաոս և ավերակների կույտ» համարվող երկրամասից Հայոց պետականության շենքի՝ Հայաստանի Հանրապետության կերտումը: Խնդիր էր դրված ստեղծելու պետական մեքենա, պետական իրավակարգ, հաստատելու կարգուկանոն, երկիրը դուրս բերելու քաոսից ու անիշխանությունից, գաղթականությանը սնունդ ու բնակարան տալու, կարգավորելու պարենավորումը, ֆինանսները, հաղորդակցությունը, ստեղծելու բանակ, հնազանդեցնելու ազգամիջյան ներքին խռովությունները, հարթելու սահմանային վեճերը, մի խոսքով՝ ստեղծելու կենսունակ և կազմակերպված պետություն[3]: Եվ նման կուտակված խնդիրների պայմաններում հանրապետության նորաստեղծ իշխանությունները ձեռնամուխ եղան պետականության կայացմանը:

Հարկ է նշել, որ ՀՀ գոյության 2,5 տարում կազմվել է չորս կառավարություն (կաբինետ)՝ բացառապես կամ գերազանցապես ՀՅԴ մասնակցությամբ: Երկու դեպքում, իբրև պետական կառավարման ժողովրդավարական

1 **Ա.Հակոբյան,** Հայաստանի հանրապետություն (1918–1920 թթ.), Ե., 1992, էջ 7:

2 **Ա.Հակոբյան,** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.), Ե., 1998, էջ 9:

3 «Հորիզոն», 15 օգոստոսի, 1918 թ., **Ս. Վրացյան,** Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 182:

համակարգի դրսևորում, կազմվել է խառը (կոալիցիոն) կառավարություն. մի դեպքում (8 ամիս)՝ Հայաստանի ժողովրդական կուսակցության (ՀԺԿ), իսկ մյուս դեպքում՝ (10 օր) էսէռների հետ: Սակայն երբ նոր էր ձևավորվում անդրանիկ կաբինետը, և Հայաստանը հայտնվել էր աննկարագրելի ծանր պայմաններում (10 հազ. կմ^2, 300 հազարից ավելի գաղթականություն, թուրք–թաթարական շրջապատում, ավեր ու քայքայում), նորընտիր վարչապետ Հ. Քաջազնունին կոալիցիոն սկզբունքով անդրանիկ կառավարություն կազմելու նպատակով մեկ ամսից ավելի բանակցեց Հայոց ազգային խորհրդի մաս կազմող կուսակցությունների հետ, բայց անարդյունք: ՀԺԿ–ն միանշանակ պահանջեց, որ Մ. Պապաջանյանին տրվի վարչապետի պաշտոնը: Էսէռները «սկզբունքային նկատառումներով» որոշեցին չմտնել Հ. Քաջազնունու կաբինետի մեջ: Նույն կերպ կաբինետ մտնելուց հրաժարվեցին հայ սոց.–դեմ. մենշևիկները՝ պատճառաբանելով, որ չեն ուզում իշխանությունը կիսել բուրժուական որակվող Հայ ժողովրդական կուսակցության հետ[1]: Արդյունքում՝ Հայաստանի համար իրոք շատ ծանր ժամանակաշրջանում մյուս կուսակցությունները փաստորեն հրաժարվեցին լծվել պետական սայլին, և հայրենիքի ու ժողովրդի ճակատագրի հանդեպ ողջ պատասխանատվությունը ՀՅԴ–ն ստանձնեց միայնակ: Այդպիսով՝ ՀՅԴ–ն դարձավ պետական գործոն և հուշագիրների վկայությամբ գործելու մեծ եռանդ էր ցույց տալիս: «Երեկվան ֆեդայական, հայդուկային կազմակերպությունը, – գրում է ռամկավար գործիչ Ա.Դարբինյանն իր հուշերում, – այսօր դարձել օրինական կառավարություն և ղեկավարում է Հայաստանի պետական կյանքը: Շատ ծանր բեռ է առել նա իր ուսերին: Մեր մյուս կուսակցությունները հեռվից և վերապահությամբ են օժանդակում նրան»[2]:

– ՀՅԴ պետական գործունեության ամենաէական արդյունքներից մեկը իշխանության եռաթև մարմինների ձևավորումն էր՝ գործադիր, օրենսդիր և դատական համակարգերով: Նրանցից առավել ուշադրության է արժանի օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը՝ իր երկու գումարումներով: Կարելի է ասել, որ ՀՀ խորհրդարանը համապատասխանել է այն ժամանակվա պառլամենտիզմի չափանիշներին՝ իր ընտրակարգով, աշխատակարգով, կառուցվածքով, ընդունած օրենքներով և այլն: Հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ առաջին անգամ 1919 թ. ընդունվեց ընտրական օրենսգիրք, և թերություններով հանդերձ՝ անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ: ՀՀ պետականության կառույցի աղյուսներն էին խորհրդարանի ու կառավարության ընդունած 1200–ից ավելի օրենքները և ակտերը, որոնք կարևոր դեր են խաղացել անկախ պետականության ամրապնդման, պետական ու հասարակական կյանքը բնականոն հունի մեջ դնելու գործում[3]:

ՀՅԴ ձևավորած կառավարության և խորհրդարանի գործունեության մեջ հիմնարար տեղ է գրավում օրենսդրական աշխատանքը: Այս տեսակետից,

1 “Кавказское слово”, 11 июня 1918 г., «Աշխատանքի դրոշակ», Թիֆլիս, 30 հունիսի, 1918 թ., «Ասպարեզ», 28/29 մայիսի, 1992 թ.:

2 **Ա.Դարբինյան,** Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 432:

3 «Հայաստանի պառլամենտի օրենքները» (1918–1920 թթ.), Ե., 1998:

արժանին պետք է մատուցել ՀԺԿ–ին, որը, ութ ամիս քաղաքական կոալիցիայի մեջ լինելով ՀՅԴ հետ, էապես նպաստեց օրինաստեղծ և դատական համակարգի բարելավմանը:

Յուրաքանչյուր կենսունակ պետության ժողովրդավարության մակարդակը կարելի է չափել նաև նրա դատական համակարգով ու առաջին հերթին՝ երդվյալ ատենակալների ինստիտուտի առկայությամբ: Ցարիզմի ժամանակներից գոյություն ունեցող քառաստիճան դատական ատյաններին փոխարինելու եկավ եռաստիճանը, որը, ի դեպ, շատ գծերով նման է ներկայիս ՀՀ դատական համակարգին:

Ամբողջությամբ վերցրած՝ Հայաստանի խորհրդարանի և կառավարության օրենսդրական գործունեությունը միտված էր այն բանին, որ ընդունվեն Հայաստանի տնտեսական կացութաձևին և ազգային մտածողությանը հարազատ օրենքներ: Էական քայլեր կատարվեցին պետական հիմնարկները, դատարանը, բանակը և այլն հայացնելու ու ազգային դարձնելու ուղղությամբ:

Անշուշտ, հանրապետությունում պակասում էին շատ օրենքներ, չկար հարգանք նաև եղածների նկատմամբ: Հանրապետության ներքին ու արտաքին անկայուն պայմանները, Հայկական հարցի լուծման շարունակ ձգձգումը անորոշության մեջ էին պահում ժողովրդին ու կառավարությանը և դրանով իսկ քաղաքական պարարտ հող ստեղծում ներքին անկայունության և անիշխանական երևույթների դրսևորման համար: Ցածր էր ժողովրդի ու հասարակության քաղաքական և իրավական կուլտուրան: Հարգանքը պետության նկատմամբ առանձնապես մեծ չէր: Հաճախ գյուղացին չէր ուզում հարկ ու տուրք մուծել և զինվոր տալ պետությանը: Ոմանց մոտ արմատացել էր այն մտայնությունը, որ եթե պետությունը հայկական է, ուրեմն հարկեր, տուրքեր և այլ պարտավորություններ այլևս չպիտի ունենան նրա հանդեպ: «Նրանք զարմանքով ու զայրացած կհարցնեին՝ ինչպե՞ս թե, այժմ երկիրը մերն է, դարձյա՞լ, նորե՞ն պիտի տանք զինվորներ և տուրքեր»[1]: Սա ինքնին վկայում էր ժողովրդի քաղաքական և իրավական ցածր կուլտուրայի մասին, քանզի այն ժամանակ հայ ժողովրդի մեծամասնության մեջ տակավին չէր ձևավորվել հայրենիքի, անկախ պետականության պաշտպանության և ամրապնդման համընդհանուր ըմբռնում: Մյուս կողմից՝ պետք էր հասկանալ եղեռն տեսած ու պատերազմի ահավոր զրկանքներ կրած ժողովրդի հոգեկան խախտված վիճակը և կյանքի նյութական ահավոր պայմանները: Ուստի շատ դժվար էր կարգուկանոն պահանջել գազազած, քաղցած ու ցնցոտիավոր մարդկանցից, որոնք երբեմն «նախընտրում էին սովի փոխարեն գնդակով մեռնել»[2]: Եվ այդ իմաստով իրավացի ու արդարացի չենք լինի, եթե այս ամենի համար մերկապարանոց կերպով մեղադրենք այն ժամանակի կառավարող կուսակցությանը՝ ՀՅԴ–ին:

– ՀՅԴ պետական գործունեության բնագավառներից էր սոցիալ–տնտեսական քաղաքականությունը: Տնտեսության ասպարեզում նրա դավանած

1 **Գ.Չալխուշյան,** Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1928, էջ 15:
2 **Ռուբեն,** Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. է, Լոս Անջելես, 1952, էջ 302:

ու որդեգրած քաղաքականությունը համերաշխվում էր արևմտաեվրոպական երկրների՝ կարելի է ասել եվրոպական սոցիալ–դեմոկրատիայի պատկերացումներին և ընդհանուր ոչինչ չուներ սոցիալիզմի խորհրդային մոդելի հետ: 1920 թ. Հայաստանում ՀՅԴ–ն մտադիր չէր «սոցիալիզմ կառուցել», որովհետև նա ստիպված էր ժողովրդի հետ միասին մաքառել արտաքին թշնամու, սովի, ցրտի, համաճարակի, խավարի դեմ: ՀՅԴ–ն կարծում էր, որ ընկերավարական բարեփոխումները ՀՀ–ում դեռևս անժամանակ են ու չհասունացած[1]: Ուստի գործնական քաղաքականության ասպարեզում դաշնակցական կառավարությունը պաշտպանում էր սեփականության ձևերի բազմազանությունը, օտար ներդրումները, տնտեսավարման ազատությունը և միաժամանակ պետության կարգավորիչ դերի անհրաժեշտությունը՝ տնտեսական ու սոցիալական քաղաքականության ոլորտներում և այլն: Ի դեպ՝ ՀՅԴ գլխավորած բոլոր կառավարությունների սոցիալական քաղաքականությունը ունեցել է ՀՅ Դաշնակցության ընկերվարական ոգուն համապատասխան ընդգծված սոցիալական ուղղվածություն:

Ագրարային հարցում ՀՅԴ–ն, ռուսական էսէռների նմանությամբ, 1907 թ. իր ծրագրով որդեգրել էր գյուղացիությանը շատ հոգեհարազատ հողի (բայց ոչ արտադրության) սոցիալիզացման (համայնացման) ծրագիրը, սակայն բավարար նախադրյալների բացակայության ու հատկապես ժամանակի սղության պատճառով այն չգործադրեց: ՀՅԴ–ն և նրա կառավարությունը իրավացիորեն գտնում էին, որ տնտեսապես ու քաղաքականապես հետամնաց, որբերով ու գաղթականներով լեցուն Հայաստանում վաղաժամ ու ավելորդ է խոսել սոցիալիզմի մասին[2]:

ՀՅԴ պետական գործունեության մյուս կարևոր ոլորտը բնականաբար նրա ձևավորած կառավարության արտաքին քաղաքականությունն էր: Այն ժամանակ ՀՀ արտաքին քաղաքականությունը միտված է եղել երկու հիմնական խնդիրների լուծմանը: Դրանցից մեկը բարիդրացիական հարաբերությունների հաստատումն էր անմիջական հարևանների հետ և երկրի միջազգային ճանաչմանը հասնելու միջոցով դրսից աջակցություն ստանալը: Իսկ մյուսը՝ հասնել Հայկական հարցի լուծմանը, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի նահանգները ՀՀ–ին միավորելով՝ ստեղծել Միացյալ և Անկախ Հայաստան:

ՀՀ արտաքին քաղաքականության միջանկյալ նպատակներն են եղել Լոռու, Զանգեզուրի ու Ղարաբաղի խնդիրների լուծումը: ՀՅԴ արտաքին քաղաքականության ակտիվին կարելի է դասել Վրաստանի հետ 1918 թ. դեկտեմբերյան զինաբախման ժամանակ Հայաստանի կառավարության ցուցաբերած հաստատակամությունը: Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման համատեքստում Ղարաբաղն ու Զանգեզուրը համարվում էին Հայաստանի անբաժան մասը[3]: Ինչպես հայտնի է, Զանգեզուրի հարցը լուծեց տեղի հերոսական ժողովուրդը ու հատկապես կապանահայությու-

1 «Դրոշակ», 1929, թիվ 4–5, էջ 70:

2 **Խուդինյան Գ., Հակոբյան Ա.,** Հ.Յ. Դաշնակցության պատմության խեղաթյուրման վերջին փորձերը, Ե., 2005, էջ 40–41:

3 **Ռուբեն,** Հայ հեղափոխականի մը հիշատակներ, հ. է, Լոս Անջելես, 1952, էջ 205:

նը՝ Գ. Նժդեհի գլխավորությամբ, իսկ Ղարաբաղի հարցը դարձավ հետագայում լուծվելիք խնդիր:

ՀՀ կայացմանը զուգընթաց՝ ջանքեր էին թափվում արտաքին աշխարհի հետ դիվանագիտական կապեր ու հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Եվ դա ինքնանպատակ չէր: ՀՀ միջազգային ճանաչումն ապահովելու և հանրապետության առջև ծառացած քաղաքական, ազգային–պետական անվտանգության, տնտեսական, առևտրային, հումանիտար և այլատեսակ խնդիրները լուծելու համար մեկ–երկու տարում դիվանագիտական կապեր հաստատվեցին, և տարաբնույթ շփումներ իրականացվեցին աշխարհի 40–ից ավելի երկրների ու կառավարությունների հետ[1]:

ՀՅԴ–ն, ընդառաջ գնալով օրվա հրամայականին և համազգային մտայնություն դարձած հայ ժողովրդի գերագույն կամքին, 1919 թ. մայիսի 28–ին Հայաստանի կառավարության անունից պաշտոնապես հրապարակեց Հայաստանի բաժան–բաժան մասերի միացման՝ «Միացյալ և Անկախ Հայաստանի մասին» պատմական հայտարարությունը: ՀՅԴ–ն ամենայն պատասխանատվությամբ ու հետևողականությամբ պաշտպանեց ու հետամուտ եղավ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրականացմանը՝ այն դարձնելով Հայաստանի արտաքին քաղաքականության գերխնդիր: Այդ տեսլականը կուսակցության գործնական քաղաքականության հիմնաքար դարձնելու համար վավերացվեց 1919 թ. աշնանը Երևանում գումարված ՀՅԴ 9–րդ ընդհ. ժողովում: Համաժողովի որոշմամբ՝ կուսակցության ծրագրում կատարվեց համապատասխան փոփոխություն. «Նվիրագործել Անկախ և Միացյալ Հայաստանի հայտարարությունը և նրա ամբողջացման ու զարգացման ձգտել բոլոր զորությամբ, ժողովրդավար (դեմոկրատիկ) հանրապետության հիման վրա»[2]: Պետք է նկատել, որ այն ժամանակ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը միանգամայն իրականանալի գործընթաց էր, որովհետև Առաջին աշխարհամարտի հետևանքով քայքայվել էին աշխարհի չորս կայսրություններ, և վերաձևվում էր աշխարհի քաղաքական քարտեզը:

Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարն իր մարմնավորումը գտավ Սևրի դաշնագրի մեջ, սակայն, ցավոք, այն մնաց թղթի վրա և չկենսագործվեց կյանքում: 1920 թ. աշնանը քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի համատեղ ռազմաքաղաքական միջամտության և Արևմուտքի մեծ տերությունների դրսևորած անհետևողականության ու անտարբերության հետևանքով ոչ միայն չիրագործվեց Սևրի դաշնագրով նախատեսված Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի գաղափարը, այլև աշխարհի շատ պետությունների կողմից արդեն պաշտոնապես ճանաչված Հայաստանի Հանրապետությունը կորցրեց իր տարածքների մի զգալի մասը, անկախությունը և խորհրդայնացվեց:

Այդուհանդերձ, վերջին 80–90 տարում ՀՅԴ նվիրական գերնպատակը եղել ու մնում է, Հայ Դատի ու պահանջատիրության համատեքստում,

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, 1–ին մաս, թ. 18, ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 40, թթ. 55, 56:
2 **Ա.Հակոբյան,** ՀՅԴ 9–րդ ընդհանուր ժողովը, Ե., 1994, էջ 28:

Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրականացումը՝ անկախ դրան հասնելու ներկայիս հնարավորություններից ու ապագայի հեռանկարից:

– Յուրաքանչյուր պետության կայացած լինելու աստիճանը և ժողովրդավարության մակարդակը կարելի է չափել նրա հասարակական–քաղաքական կյանքով, կուսակցական համակարգով, ընդդիմության գոյությամբ ու գործունեությամբ: Պետք է ասել, որ ՀՀ–ում գործում էին շուրջ մեկ տասնյակի հասնող կուսակցություններ, որոնք իրենց քաղաքական դավանանքով ու հետապնդած նպատակներով լրացնում էին հանրապետության քաղաքական դաշտի բոլոր երեք թևերը: Ավելին՝ կարելի է ասել, որ նրանք հիմնականում կայացած էին, մի բան, որ դեռևս չենք կարող ասել այսօրվա Հայաստանի կուսակցությունների վերաբերյալ: Հանրապետությունում գործել են խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցություններ: ՀՅԴ գլխավորած կառավարությունը հիմնականում ապահովել է խոսքի ու մամուլի ազատությունը, թույլատրվել է այլախոհությունը: Ընդ որում՝ ընդդիմադիր մամուլը իր թվաքանակով չէր զիջում կառավարող կուսակցության և իշխանամետ մամուլին[1]:

Անշուշտ, պետականության կայացման գործընթացում հանրապետությունում գործող քաղաքական ընդդիմադիր և ոչ ընդդիմադիր կուսակցությունների միջև գաղափարաքաղաքական պայքար էր ընթանում Հայաստանի անկախության, քաղաքական կողմնորոշման, պետական իշխանության կառուցվածքի, վարվելիք ներքին ու արտաքին քաղաքականության խնդիրների շուրջ: Ավելին՝ ՀՅԴ կուսակցության ներսում ևս դրսևորվել են մարտավարական բնույթի տարբեր մոտեցումներ՝ կառավարման ձևի, սոցիալ–տնտեսական քաղաքականության, Հայաստանի արտաքին կողմնորոշման և այլ խնդիրների շուրջ: ՀՅԴ ղեկավար շրջանակներում բացորոշ կերպով դրսևորվել է երկու մոտեցում: Դրանցից մեկը ***պետական*** մոտեցումն էր, այսինքն՝ երկիրը օրենքներով ու իրավական նորմերով կառավարելու սկզբունքը: Այս մոտեցման ջերմ պաշտպաններն էին Հ. Քաջազնունին, Ա. Վրացյանը, Ալ. Խատիսյանը, իսկ մյուս թևը՝ Ռուբենի, Ա. Ջամալյանի և մյուսների գլխավորությամբ, պաշտպանում էր կառավարությունը կուսակցականացնելու և երկիրը ***հեղափոխական միջոցներով*** (օրենքներով) կառավարելու տեսակետը: «Ես կարծում էի, – գրում էր պետականության գաղափարի հաստատակամ պաշտպան Ս. Վրացյանը իր հուշերում,– որ իշխանությունը պետք է ղեկավարվի պետական օրենքներով և արտակառավարական անհատական կամ կոմիտեական արարքները պետական գործերը վարելու հարցում անթույլատրելի են, մանավանդ, եթե այդ արարքները չէին վայելելու ժողովրդականություն»[2]: Դրան հակառակ՝ Ռուբենը գտնում էր, որ «Հայ ժողովրդի և Դաշնակցության ուժը կոմիթաջության մեջ է»[3]: Սակայն ՀՅԴ շարքերում և ղեկավար շրջանակներում առկա տեսակետների ու մոտեցում-

1 **Ա. Հակոբյան,** Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918–1920 թթ.), Ե., 2005, էջ 4:

2 **Ս. Վրացյան,** Կյանքի ուղիներով, հ. Ե, Բեյրութ, 1966, էջ 153:

3 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, g.1, գ. 57, թ. 12:

ների նման լայն սպեկտրը ամենևին էլ չէր վնասում նրա շարքերի միասնությանը: ՀՅԴ–ն միավորողը Հայաստանի անկախության, հայ ազգային դատի ու համազգային հիմնախնդիրների պաշտպանության միակամությունն էր: Այսօր ևս դրանք նրա լինելիության ու կենսունակության անօտարելի բաղադրիչներն են:

– Պետական կառուցվածքի տեսակետից Հայաստանը խորհրդարանական գերակայության հանրապետություն էր: Գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ընտրվում և հրաժարեցվում էր խորհրդարանի կողմից: Խորհրդարանն իրեն ենթակա կառույցի՝ պետական վերահսկիչ մարմնի միջոցով վերահսկում էր կառավարության ֆինանսատնտեսական գործունեությունը: ՀՅԴ բարձրագույն գործադիր մարմինը՝ Բյուրոն, իր քաղաքականությունն իրականացնում էր խորհրդարանական խմբակցության միջոցով, այսինքն՝ հիմնականում պահպանվում էին պառլամենտիզմի և ժողովրդավարության սկզբունքները:

ՀՅԴ–ն ՀԺԿ–ի հետ միասին նպատակ էր դրել Հայաստանը դարձնել արևմտյան տիպի խորհրդարանական դեմոկրատական (ռամկավար) հանրապետություն: Ընդհանուր առմամբ՝ ՀՀ–ին բնորոշ էր կառավարման հանրապետական ձևը՝ խորհրդարանի գերակայությամբ: Օրագրված էր Հայկական հարցի բարեհաջող լուծումից հետո մշակել և ընդունել Սահմանադրություն, մտցնել նախագահական ինստիտուտ[1]: Սակայն պատմաքաղաքական հետագա դեպքերն ու իրադարձությունները Անդրկովկասում ու Հայաստանում այնպես աննպաստ ընթացան, որ այդ նպատակները ի դերև ելան: Քաղաքական հանգամանքների թելադրանքով ՀՅԴ Բյուրոն ժողովրդավարական կառավարման տեսակետից նահանջ կատարեց և ՀՅԴ խորհրդարանական խմբակցության առջև պահանջ դրեց իշխանությունը հանձնել իրեն[2]: Հաստատվեց ՀՅԴ Բյուրո–կառավարության դիկտատուրա: Թեև ճնշվեց բոլշևիկների մայիսյան ապստամբությունը, հնազանդեցվեցին թուրք–թաթարական խռովությունները, սակայն ներքին ու արտաքին մի շարք գործոններ թուլացրին պետականության հիմքերը: 1920 թ. աշնանը թուրք–հայկական պատերազմում Հայաստանը ծանր և ամոթալի պարտություն կրեց և չունենալով այլընտրանք՝ ընդունեց 11–րդ Կարմիր բանակի մուտքը երկիր և խաղաղ ճանապարհով խորհրդայնացվեց:

Այդուհանդերձ, չնայած ՀՀ կարճատև գոյությանը, անուրանալի է ՀՅԴ ներդրումը պետականության կայացման գործում: Նրա պետական գործունեությունը նպատակաուղղված է եղել Հայաստանի Հանրապետության ազգային, քաղաքական, տնտեսական և մշակութային վերաշինությանը:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետությունն ունեցել է պետական կառույցի՝ իրավաքաղաքական և այլ բնույթի թերություններ ու բացթողումներ: Եվ դա հասկանալի է այն իմաստով, որ հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ էր հայ քաղաքական կուսակցությունը դարձել կառավա-

1 **Հ. Քաջազնունի,** Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 12:
2 **Ա. Հակոբյան,** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.), Ե., 1998, էջ 9:

րող: Բնականաբար պակասում էին փորձը, ձեռնահաս ուժերը, կառավարելու այնքան բարդ արվեստը, ուստի և անխուսափելի էին սխալներն ու բացթողումները: Ինչ էլ որ եղած լինի, 1918–1920 թթ. Հայաստանում առկա է եղել այն ժամանակվա ժողովրդավարական չափանիշներով ***պետություն***, և նրա կառավարող ՀՅԴ կուսակցությունը՝ իբրև իր պետական գործոն, իր կարելիությունների չափով օժանդակել է հայոց պետականության հիմքերի ամրակայմանը և զարգացմանը:

Սակայն որքան էլ ակնառու լինեն հանրապետության ձեռքբերումները և դրանցում ՀՅԴ խաղացած անուրանալի դերակատարությունը, պատմական գործընթացի սուբյեկտիվիստական գնահատական կլինի, եթե դրանք վերագրենք մեկ կուսակցության: Այդ ձեռքբերումները պետք է առաջին հերթին վերագրել ամբողջ հայ ժողովրդին, նրա թափած ջանքերին ու զոհողություններին:

Որքան էլ պարադոքս է, ՀՀ քաղաքական դաշտում գործում էին իրար ծայրահեղ հակոտնյա երկու քաղաքական ուժեր՝ Դաշնակցությունը և բոլշևիկները: Եվ ստացվեց այնպես, որ 1920 թ. աշնանը դրսի ուժերի՝ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի կոպիտ միջամտությամբ ՀՅԴ–ն հարկադրված էր կամավոր կերպով զիջել կառավարող կուսակցության իր դիրքերը և իշխանությունը հանձնել բոլշևիկներին: Դրանով գործնականում փակվեց ՀՅ Դաշնակցություն կուսակցության համար թերևս ամենաբեղուն՝ պետական շինարարության ժամանակաշրջանը, ու սկսվեց նրա պատմության նոր փուլը՝ սփյուռքյան ժամանակաշրջանը:

Այսպիսով՝ Հայաստանի առաջին հանրապետության պետական պատրաստի կառույցի հիմքի վրա առաջացավ Հայաստանի երկրորդ հանրապետությունը՝ Խորհրդային Հայաստանը, իսկ վերջինիս հիմքի վրա էլ՝ երրորդ հանրապետությունը:

Համլետ Հարությունյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ 1917–1920 ԹԹ.

Հայ ազգային կուսակցությունների 1885–1920 թթ. գործունեությունը, ըստ էության, հայ ժողովրդի նոր պատմաշրջանի վերջերի և նորագույն պատմաշրջանի առաջին երկու տասնամյակների զուգորդված պատմությունն է: Այս շրջանը հայոց պատմության թատերաբեմին ներկայանում է հայ ժողովրդի ազգային, քաղաքական և սոցիալական կյանքի վայրիվերումներով, ազգային–ազատագրական շարժման պատմական զարգացման հեռանկարների տեսակետից բեկումնային ու ճակատագրական իրադարձություններով և պատմաշրջանին բնորոշ գաղափարաքաղաքական բարդ ու խորքային գործընթացներով: Ծնվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը, նրա առջև ծառացան տարածքային խնդիրներ, ենթարկվեց Թուրքիայի երկու արշավանքներին, կնքվեցին Հայաստանին առնչվող մի քանի չարաղետ պայմանագրեր, նրա սահմանները ավելի ու ավելի սեղմվեցին:

Այնուամենայնիվ հարց է ծագում. ինչու՞ այսպես ստացվեց, որո՞նք էին մեր ազգային կորուստների, ինչու չէ, նաև շարունակական սխալների ու բացթողումների պատճառները, կարո՞ղ էր հայությունը խուսափել այդ ծանր ու կորստաբեր ճանապարհից:

Այս հարցերի պատասխանները գտնել հնարավոր չէ՝ առանց տվյալ ժամանակաշրջանում հայկական կյանքը տնօրինող քաղաքական ուժերի ռազմավարությունը և մարտավարության ձևերը խորքային ու անկողմնակալ վերլուծության ենթարկելու: Խոսքն առաջին հերթին վերաբերում է ՀՅ Դաշնակցություն կուսակցությանը, քանզի տվյալ ժամանակաշրջանում ՀՅԴ–ն հանդիսանում էր հայության քաղաքական կյանքի ղեկավար և ուղղություն տվող ուժը:

Հետաքրքրությունը այս պատմաշրջանի և ՀՅԴ–ի պատմության հանդեպ միշտ էլ եղել է խիստ արդիական: Այդ շրջանի պատմական իրադարձությունները լուսաբանվել են Հայաստանի և Սփյուռքի պատմաբանների բազմաթիվ աշխատություններում: Հեղինակները, անխուսափելիորեն կրելով տվյալ դարաշրջանի գաղափարաքաղաքական դրոշմը, իրենց ուսումնասիրությունները կառուցել են վերաբերմունքի և գնահատականների երկու տրամագծորեն հակադիր տեսակետների վրա: Մի ուղղությունը հանրահայտ փաստերն ու պատմական իրողությունները և նրանցում ՀՅԴ–ի խաղացած դերակատարության արդյունքները միտումնավոր թե նյութի թերիմացության հետևանքով, որը քիչ հավանական է, կեղծել ու խեղաթյուրել է: Փաստենք, որ ժամանակին բոլշևիկների հակադաշնակցական, ասել է թե՝ հայոց անկախ պետականության դեմ ծավալած անպտուղ քարոզարշավի

փորձը ներկա իրողությունների պայմաններում ունեցավ շարունակություն: Մերօրյա «պատմաշինարարները» ևս կեղծում ու խեղաթյուրում են ՀՅ Դաշնակցության գործունեությունը դարասկզբին (ֆիդայական շարժում, 90–ական թվականների կոտորածներ, երիտթուրքերի հետ գործակցություն, Մեծ եղեռն, կամավորական շարժում և, վերջապես, Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակում):

Բայց և այնպես հարց է ծագում. ի վերջո՝ ինչու՞, ո՞րն է հեղինակների նպատակը, և ի՞նչ քաղաքական դրդապատճառներով են նրանք առաջնորդվում: Պատճառները բազմաթիվ են ու բազմաշերտ, որոնք, անշուշտ, կարոտ են գիտական անաչառ և խորքային ուսումնասիրության:

Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե ՀՅԴ–ի անցած պատմական ուղին, փաստերն ու իրադարձությունները կողմնակալ դիրքերից ներկայացնող ուսումնասիրություններ ու հրապարակումներ չկան, որոնցում հեղինակները վարդագույն գույներով են ներկայացնում կուսակցության վաղ շրջանի գործունեությունը, ցույց չեն տալիս իրականության ճշմարիտ պատկերը՝ Առաջին Հանրապետության իշխանությունների և կառավարող կուսակցության թույլ տված ակնհայտ սխալներն ու բացթողումները, որոնց մասին Հովի. Քաջազնունին ժամանակին գրել է. «Չէինք հասկանում, որ մեր սեփական դաստիարակության համար մեծ կարիք ունեինք, որ մի զորեղ օպոզիցիա կանգնած լիներ մեր կողքին, միշտ զգաստ պահեր մեզ, կարգի հրավիրեր և թույլ չտար, որ դուրս գայինք օրենքի և իրավասության սահմաններից… Չկար և կառավարություն, սա ևս ենթարկված էր բյուրոյին, բյուրոն մի տեսակ գործադիր մարմինն էր պետության մեջ: Բոլշևիկյան սիստեմ էր սա…»[1]:

Ինչպես արդեն նշել ենք, հակադաշնակցական քարոզարշավում շահարկվող թեմաներից մեկը Հայաստանի Առաջին Հանրապետությունն է, մասնավորաբար՝ տարածքային հիմնահարցերում կառավարության քաղաքականությունը: Մեծ հաշվով՝ խոսքը վերաբերում է նաև «վիճելի» տարածքների հիմնահարցին:

1917 թ. փետրվարին ռուսական կայսրությունում պայթեց դեմոկրատական հեղափոխությունը և մաքրեց տարավ Ռոմանովների ավելի քան երեքհարյուրամյա ցարական իշխանությունը: Հեղափոխության փոթորկումների ալիքը ցնցեց նաև էթնոկրոնական ու մշակութային խայտաբղետ ազգային կազմ ունեցող Կովկասը: Կտրուկ ակտիվացավ նաև կովկասահայության քաղաքական կյանքը:

Հեղափոխությունն ազատության միջոցով անկախության հույսեր արթնացրեց Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների կազմում եղած հայկական և հիմնականում հայերով բնակեցված մյուս գավառների հայության մեջ: Անկախության գործընթացի սկիզբը դրեց արցախահայությունը, երբ 1917 թ. մարտի 12–ին բնակչության բոլոր խավերի ներկայացուցիչների մասնակցությամբ ընտրեց 42 հոգուց կազմված տեղական իշխանության մարմինը՝ գործադիր կոմիտեն: Մինչ այդ Շուշիում ստեղծվել էր բանվորա-

1 **Հովի. Քաջազնունի,** Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 37–38:

կան ներկայացուցիչների խորհուրդ, որին շուտով միացան նորաստեղծ զինվորական և գյուղացիական համանուն խորհուրդները, որոնք գտնվում էին սոցիալ–դեմոկրատների ազդեցության տակ:

ՀՅ Դաշնակցությունը, որն իրոք համազգային քաղաքական ուժ էր և ստանձնել էր նաև մեր ժողովրդի արևելահայ հատվածի հասարակական–քաղաքական կյանքի ղեկավարությունը, կանգնած էր այդ գործընթացների ակունքներում:

Արցախի համար բախտորոշ այդ օրերին ՀՅ Դաշնակցության «Ապառաժի» (Ղարաբաղ և Զանգեզուրի մի հատվածը) կենտրոնական կոմիտեն հատուկ կոչով դիմեց գավառի հայ բնակչությանը և նրա քաղաքական ուժերին: Բավական հավասարակշռված, նպատակասլաց ու մարտական էր կենտրոնական կոմիտեի տարածած կոչը, որի առանցքն էին կազմում ժողովրդի և նրա քաղաքական ուժերի միասնության ու կազմակերպվածության ապահովման, լայն ժողովրդավարական ու ազգային ազատությունների ճանապարհով գոյություն ունեցող խնդիրների լուծման նպատակ ունեցող արցախահայության և նրա քաղաքական ուժերի կոնկրետ անելիքները: «Ի՞նչ պետք է լինի մեր անելիքը» հարցին կոչը պատասխանում էր. «Նեցուկ լինել նոր կառավարությանը և պատրաստ լինել ինքնազոհությամբ նվաճված ազատությունը ամրապնդելու համար: Այսպիսի ճակատագրական օրերին, երբ դրսից թշնամին է սպառնում, իսկ ներսից՝ հին կարգերի կողմնակիցները, երբ վճռվում է դասակարգերի և ազգերի բախտը,– շարունակում ենք կարդալ կոչում,– պետք է լռեն կուսակցական և ազգային տարաձայնությունները, անհապաղ խմբվել, խտացնել շարքերը՝ դիմադրելու համար հակահեղափոխական փորձերին և իրականացնելու լայն ժողովրդական ազատություններ»[1]:

Ամբողջ շարադրանքից հետևում է, որ հեղափոխության հաղթանակից և ցարական ինքնակալության տապալումից հետո Լեռնային Ղարաբաղն իրեն դուրս էր դրել Ելիզավետպոլի նահանգի կազմից (նրա կազմում էր 1867 թ.) և դարձել էր հայկական առանձին ինքնավար իշխանություն:

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը նոր ընթացք տվեց զարգացող դեպքերին և փոխեց քաղաքական իրադրությունը: Այս ընդհանուր վայրիվերումների հորձանուտից անմասն չէին Անդրկովկասի երկրները: Նոր Ռուսաստանի խորհրդային ղեկավարության անհեռատես քաղաքականության հետևանքով քայքայվեց ու մերկացավ Կովկասյան ռազմաճակատը: Այն պահին, երբ Անդրկովկասի սահմանը պաշտպանող ռուս զինվորները, չպարպելով վերջին փամփուշտը, ճանապարհ տվեցին թուրքական զորքին, Հայաստանը մնաց մեն–մենակ՝ թուրքական հայակուլ հարձակման դեմ հանդիման: Երկիրը տագնապալի օրեր էր ապրում: 1918 թ. գարնանը Անդրկովկասում ծավալվող իրադարձությունները բազում որոգայթներ էին պատրաստել մի ոտնաչափ հողի վրա իր ազգային ինքնությունը և ֆիզիկական գոյությունը հրաշքով պահպանած հայ ժողովրդի համար: 1918 թ. մայիսի վերջերին (26–28) փլուզվեց Անդրկովկասի Դաշնային Հանրապե-

1 «Արև», 27 մարտի 1917 թ.:

տությունը. Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը հռչակվեցին անկախ պետություններ: Հայ քաղաքական կուսակցությունների մեջ (ավանդական և ոչ ավանդական) ՀՅԴ–ն քաջություն և համարձակություն ունեցավ ռազմաքաղաքական ծանր պայմաններում, երբ արդեն Արարատյան դաշտը ոտնակոխ էին անում թուրք զինվորները, ստանձնել նորանկախ հանրապետության կառավարման ղեկը, մեծ հաշվով՝ ողջ կովկասահայության քաղաքական կյանքի ղեկավարությունը:

Հայաստանի Հանրապետության ողջ գոյության ընթացքում Ադրբեջանի հետ հարաբերությունները լարված բնույթ ունեին: Հիմնական պատճառը տարածքային–սահմանային վեճերն էին: Այդ հանրապետության առաջին քայլերը եղան հայկական տարածքների՝ Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ նվաճողական ոտնձգությունները:

«Հայոց արևելից կողմանց» առանցքը կազմող Արցախ աշխարհի բազմադարյան պատմության ամենածանր ու դրամատիկ իրադարձություններով լի ժամանակաշրջաններից մեկը թերևս 1918–1920 թվականներն են: Հենց այդ տարիներին էր, որ Լեռնային Ղարաբաղը դարձավ «վիճելի» տարածք:

Այս գավառում տիրող կացությունը չէր տարբերվում Մայր Հայաստանին բաժին ընկած ճակատագրից՝ բացառությամբ այն անսահման կորուստների ու զրկանքների, որոնք մինչ այդ նա կրել էր. հայտնվել էր մեկուսացման մեջ, ամենուրեք տիրում էր անիշխանություն ու քաոս, տնտեսական ճգնաժամը աննախադեպ չափերի էր հասել, բնակչությունը ահաբեկված էր թուրք–թաթար–քուրդ եռյակի չդադարող ավազակաբարո վայրագություններից, քաղաքական կրքերն ու ազգամիջյան հակամարտությունները հայերին և մահմեդականներին մղում էին փոխադարձ վրիժառության և անխոհեմ քայլերի: Այս պայմաններում, եթե արցախահայությունը ցանկանում էր ապահով ու անխոցելի մնալ թուրք–թաթարական մահաբեր սպառնալիքից, պետք է դիմեր հավասարակշռված և վճռական քայլերի: Հարկ է փաստել, որ Լեռնային Ղարաբաղի հասարակական–քաղաքական կյանքը ուղղորդող քաղաքական կուսակցությունները դրսևորեցին անհրաժեշտ կամք ու վճռականություն՝ գավառում ստեղծված կացությունը շտկելու, հայության դիմադրողական ոգին բարձրացնելու, նրան իր չընդմիջվող բնօրրան հողի վրա ազատ և անվտանգ ապրելու պայմաններ ստեղծելու համար:

Ակնհայտ է, որ այդ ժամանակ հենց ՀՅԴ–ն էր այդ խնդիրների լուծման համար գավառի հայության ուժերը բռունցքող առանցքային քաղաքական ուժը: Հարություն Թումյանը՝ դեպքերի անմիջական մասնակիցը, նշում է. «...Իրավ է, Լեռնային Ղարաբաղում այդ ժամանակ չկար հասարակական ուժեղ հենարան ունեցող մեկ այլ քաղաքական հակակշիռ ուժ»[1]:

Արցախյան գոյապայքարում ՀՅ Դաշնակցության ղեկավար դերը իր կոնկրետ դրսևորումը ստացավ հետևյալ առաջնահերթ խնդիրների լուծման մեջ.

1 **Հ. Թումյան,** Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, 1917–1920 թթ. (պատմական ակնարկ), էջ 12:

ա) տեղական իշխանության մարմինների ստեղծում,
բ) գոյապայքարի կազմակերպում և ղեկավարում,
գ) բնակչության սոցիալ–տնտեսական խնդիրների լուծում,
դ) Հայաստանի Հանրապետության հետ կապերի հաստատում:

Հանգամանքների բերումով գավառի հայությունը այդ խնդիրները լուծելու էր համընթաց, ուստի գործը սկսելուց առաջ ՀՅ Դաշնակցությունը հարաբերություններ հաստատեց գավառում եղանակ ստեղծող քաղաքական այլ ազդեցիկ ուժերի՝ սոցիալ–դեմոկրատների, սոցիալիստ–հեղափոխականների և Հայ ժողովրդական կուսակցության հետ:

Նշված խնդիրների լուծումը, անշուշտ, մեծապես պիտի նպաստեր լարվածության թուլացմանը, որոշակի հիմքեր ստեղծեր գավառի նորմալ կենսագործունեության և կնճռոտ խնդիրների արդարացի լուծման համար: Այդ գործընթացի սկզբում անհրաժեշտաբար վերականգնվեցին տեղական իշխանության մարմինները, քանզի 1917 թ. նոյեմբեր–դեկտեմբերի դրությամբ գավառում գրեթե իշխանություն չկար: Գոյություն ունեցող միակ տեղական մարմինը՝ 72 հոգուց կազմված գործադիր կոմիտեն, ըստ էության, անգործության էր մատնված:

1917 թ. նոյեմբերին Արցախի քաղաքական կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը իր կազմից ընտրեց «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ»՝ բաղկացած 14 հոգուց (հետագայում կոչեց «Միջկուսակցական բյուրո» կարճ անունով):

Ազգային կոմիտե ստեղծել էր նաև Շուշի քաղաքի մահմեդական բնակչությունը:

1917 թ. դեկտեմբերի 20–ին Միջկուսակցական բյուրոյի և Մուսուլմանների ազգային կոմիտեի համաձայնությամբ կազմվեց նոր մարմին՝ Միջազգային կամ Ազգային կոմիտե անունով՝ բաղկացած 13 հոգուց (վեց հայ, վեց մուսուլման և մեկ չեզոք անձ՝ որպես ղեկավար):

Իրադրությունը բարդանում էր: Ադրբեջանի կառավարությունը և Թուրքիան հստակ ծրագրեր ունեին՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկելու խնդիրը արագորեն լուծելու համար: Ադրբեջանի կառավարությունը գավառի հայությանը ճնշելու համար տնտեսական շրջափակումը դարձրել էր պետական քաղաքականություն: Ուժերի անտեղի մսխումից ու անգործությունից Ղարաբաղի կառավարման համակարգը խաթարվել էր: 1918 թ. հուլիսի 16–ին ինքնալուծարվեց Միջկուսակցական բյուրոն, փոխարենը ստեղծվեց նոր մարմին, որը կոչվեց «Ղարաբաղի հայ ժողովրդական կառավարություն» կամ «Կոմիսարների խորհուրդ»: Կառավարությունը բնակչության մեջ վիթխարի աշխատանք ծավալեց՝ նրան գավառի գյուղացիության առաջին համագումարին նախապատրաստելու համար, որը բացվեց հուլիսի 22–ին և ավարտվեց հուլիսի 26–ին: Համագումարում քննության են առնվում գավառում անիշխանության վերացման և թուրքական սպառնալիքի դեմ պաշտպանական միջոցառումներ իրականացնելու խնդիրները: Համաժողովը Լեռնային Ղարաբաղը հռչակեց անկախ վարչաքաղաքա-

կան միավոր, լուծարեց ժամանակավոր կառավարությունը և կազմեց նորը՝ «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն» անունով:

Կառավարության յոթ անդամներից միայն երկուսն էին դաշնակցական՝ Եղիշե Իշխանյանը (նախագահ, ներքին և արտաքին գործերի կառավարիչ) և Հարություն Թումյանը (զինվորական գործերի կառավարիչ), մնացածը այլ քաղաքական ուժերի ներկայացուցիչներ էին կամ անկուսակցական:

Գավառը բնականոն կյանքին վերադարձնելու կառավարության ջանքերը տհաճություն էին պատճառում թուրքերին: 1918 թ. սեպտեմբերի 15–ին թուրքական զորքերը մտան Բաքու և գազանաբար հոշոտեցին քաղաքի հայ բնակչությանը: Կասկած չկար, որ թուրքական զորքերը շրջվելու էին դեպի Արցախ: Լեռնային Ղարաբաղը խաղաղ ճանապարհով Ադրբեջանին ենթարկելու թուրքական բանակի հրամանատարության անհաջող ջանքերին, որին արցախահայության երկրորդ (սեպտեմբերի 6–13) և երրորդ (սեպտեմբերի 17–22) համագումարները կտրականապես ոչ էին ասել, շուտով գումարվեց ռազմական ուժի գործադրումը: Սեպտեմբերի 22–ին թուրք–թաթարական միացյալ զորքերը ներխուժեցին Լեռնային Ղարաբաղ և լայնածավալ մարտական գործողությունների անցան Դաշբուշից (Քարագլուխ) մինչև Միրուշենլի: Սեպտեմբերի 22–23–ին թշնամու զորքերը գրավեցին ու թալանեցին Միրշալու, Դահիրազ, Վարազաբուն, Փիրջամալ, Խանաբադ, Քարագլուխ, Խրամորթ գյուղերը և սրի քաշեցին բնակչության մի մասին: Սեպտեմբերի 24–ին հակառակորդը մտավ Շուշի: Շուշին ընկել էր, սակայն կանգուն էին Ջիվանշիրը, Ջրաբերդը, Դիզակը և Վարանդան: Տևական և հիմնավոր նախապատրաստությունից հետո թուրք ազերիների զորքերը շարժվեցին դեպի Վարանդա և Դիզակ:

ՀՅԴ–ն՝ որպես Արցախի հայ իրականության ամենաազդեցիկ քաղաքական ուժ, նրա գոյապայքարի խորհրդանիշ, ճակատագրական այս պահին գավառին սպառնացող ռազմակալության վտանգը չեզոքացնելու և կանխելու ուղղությամբ դրսևորեց արտակարգ ճկունություն, զանգվածներին սխրանքների մղելու բացառիկ հմտություն: Բնակչությունը ոտքի կանգնեց: Ամենուր ստեղծվեցին աշխարհազորային ջոկատներ: Հոկտեմբերի 18–ին Մսմնա գյուղի մոտ թշնամին խայտառակ պարտություն կրեց և նահանջեց Շուշի, որ հետո ծպտված հեռանար:

1918 թ. աշնանը արդեն հայտնի դարձավ, որ Թուրքիան ներկայացնող ռազմական խմբավորումը պարտություն է կրում: Հոկտեմբերի 30–ին կնքվեց Մուդրոսի զինադադարը, որով Թուրքիային պարտադրվեց զորքերը հետ քաշել մինչև 1914 թ. սահմանը: Նա իր զորքերը հանեց նաև Լեռնային Ղարաբաղից:

Իհարկե, կարելի էր օգտվել հանգամանքից և զորք մտցնել Ղարաբաղ ու վերջնականապես լուծել այդ հարցը: Ցավոք, Անդրանիկի կողմից ցուցաբերվեց չարդարացված զգուշավորություն և սպասողականություն, ինչի հետևանքով հետագայում թանկ վճարեցին և՛ Հայաստանը, և՛ գլխավորապես՝ Լեռնային Ղարաբաղը:

Թուրքերի հեռանալուց հետո նրանց տեղը զբաղեցրին բրիտանացի գաղութարարները՝ գեներալ Թոմսոնի գլխավորությամբ: «Խաղաղարար» առաքյալների գալով՝ վիճակն ավելի էր բարդացել. անկախության համար մշտարթուն պայքարող արցախցին և նրա կյանքը տնօրինող քաղաքական ուժերը այժմ հայտնվեցին երկընտրանքի մեջ. շարունակե՞լ ապավինել սեփական բազկի ուժին, թե՞ հավատալ բրիտանական ներկայացուցչությանը, որի պնդմամբ՝ «տարածքային խնդիրները պետք է լուծվեն Փարիզի խաղաղարար խորհրդաժողովում», իսկ խորհրդաժողովն ի լուր աշխարհի ազդարարել էր, թե «ուժով ձեռք բերված որևէ բան ամենալուրջ կերպով կվնասի այդ միջոցներին դիմողների սեփական շահերին...»: Բրիտանացիների հրապուրիչ քարոզների ազդեցությամբ տևական և անհավասար պայքարից թուլացած ու հոգնած արցախցիները և նրանց քաղաքական ուժերը մի պահ կորցրեցին զգոնությունը:

Հավատալով այդ խոստումներին՝ Զանգեզուրում գտնվող Անդրանիկը դադարեցրեց իր ռազմարշավը դեպի Ղարաբաղ: Իսկ անգլիացիները շարունակում էին աննկատ ուժեղացնել ճնշումը հայկական կողմի վրա՝ գավառը Ադրբեջանի կառավարությանը հանձնելու համար: 1919 թ. հունվարի 15–ին Ադրբեջանի կառավարությունը, իհարկե, ունենալով Թոմսոնի համաձայնությունը, Ղարաբաղ–Զանգեզուրի գեներալ–նահանգապետ նշանակեց քուրդ Խոսրով բեկ Սուլթանովին: Հայաստանի կառավարությունը բողոք հայտնեց Ադրբեջանի կառավարությանը և Անդրկովկասում տեղակայված անգլիական զորքերի հրամանատարությանը պնդելով, որ ինքն այդ նշանակումը չի կարող համարել Ադրբեջանի թեկուզ ժամանակավոր գերիշխանության հաստատում այն շրջանների վրա, որոնք պետք է ենթարկվեն Սուլթանովի իշխանությանը, և պահանջեց հետ քաշել զորքերը Ղարաբաղից[1]:

Արցախահայությունը տվեց ավելի խրոխտ ու կտրուկ պատասխան. «Ղարաբաղը չի ճանաչել և չի ճանաչելու իր սահմաններում Ադրբեջանի կառավարության իշխանությունը»[2]:

1919 թ. հունվարի 21–ին Հանրապետության կառավարությունը քննարկեց վերոհիշյալ հարցը և ընդունեց այդ գավառներում ժամանակավոր վարչություն հաստատելու որոշում, ըստ որի՝ Ղարաբաղի և Զանգեզուրի հայաբնակ շրջանները, կազմելով Հայաստանի անբաժան մասը, ղեկավարվում են Հանրապետության կենտրոնական կառավարության կողմից հաստատված օրենքներով:

Հայաստանին չհաջողվեց իր իշխանությունը Ղարաբաղում դարձնել կայուն: Գավառի հայությունը հարկադրված էր վարել իր գործերը սեփական իշխանությամբ:

Մի՞թե ակնհայտ չէ, թե ինչ էր նշանակում Հայաստանից կտրված, արտաքին աշխարհից մեկուսի Ղարաբաղի հանդեպ բրիտանացիների բացահայտ ադրբեջանամետ քաղաքականությունը:

---

1 «Ժողովուրդ», 29 ապրիլի 1919, **Ալ.Խատիսյան,** Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 180:

2 «Ժողովուրդ», 29 ապրիլի 1919:

Ճնշումների ոչ պակաս թիրախ էր դարձել և Հայաստանը: Մարտի 28–ին Երևանում վարչապետ Ալ.Խատիսյանի հետ հանդիպման ժամանակ այդպիսի փորձ կատարեց գեներալ Թոմսոնը: Դրան նախորդել էր մարտի 26–ին Բաքվում բրիտանական ուժերի հրամանատար գնդապետ Շատելվորտի և Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանի ու Հայոց ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանի՝ ժամանակին մեծ աղմուկ հանած հանդիպումը: Ադրբեջանի գերիշխանությունը ճանաչել տալու գնդապետի ջանքերը ապարդյուն անցան: Նա զայրացած էր հատկապես Ա. Շահնազարյանի հաստատակամությունից: «Ամենից անհաշտը հայերից,– գրում էր Շատելվորտը,– դաշնակցության հայտնի անդամ Ասլան Շահնազարյանն է: Ես այդ պարոնին բազմիցս զգուշացրի վերադառնալ Շուշի և բնակչությանը համոզել ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Նա հայտարարեց, որ ինքը մտահոգված չէ այդ պայմանով վերադառնալ Շուշի»[1]:

1919 թ. ապրիլի կեսերին թրքասիրությունը Շատելվորտին բերեց Շուշի: Բնավ չկասկածելով իր առաքելության հաջողության վրա՝ գնդապետը հետո պիտի համոզվեր, որ Արցախի անկախության խնդրում ՀՅԴ «Ապառաժի» կենտրոնական կոմիտեն և Հայոց ազգային խորհուրդը անդրդվելի են: Շատելվորտի պահանջը մեկն էր՝ Արցախը պետք է համարվի Ադրբեջանի մաս: Նրա պահանջով գավառի հայությունը Շուշիում հավաքվեց համագումարի: 5–րդ համագումարը (ապրիլի 23–29), Շատելվորտի «Ղարաբաղի ժամանակավոր իշխանության վարչական ծրագիրը» զեկուցումը ենթարկելով համակողմանի քննության, որոշեց. «...Համագումարն անընդունելի է համարում ամեն մի վարչական ծրագիր, որը որևէ կապ կհաստատի Ադրբեջանի հետ...»[2]: Բրիտանացին արժանացավ «տհաճ» ընդունելության նաև Զանգեզուրում, ուր նա մեկնել էր նույն առաքելությամբ:

Սակայն դա չխանգարեց մուսավաթականներին, որպեսզի հունիսի առաջին օրերին հայ բնակչության զանգվածային կոտորածներ կազմակերպեն Շուշի քաղաքում և նրա շրջակա մի քանի գյուղերում: Չճշտված տվյալներով զոհվել էր ավելի քան 700 մարդ[3]:

Արցախում այս օրերին տեղի ունեցած դեպքերի նկարագրությամբ, բողոքներով ու խնդրագրերով հեղեղված էր ժամանակի մամուլը[4]:

Կատարվածը դատապարտեցին նաև Հայաստանի կառավարությունը և Շոշ գյուղում հրավիրված գավառի հայության 6–րդ համագումարը (1919 թ. հունիսի 28–30)[5]:

Նկատի առնելով հայ բնակչության զանգվածային կոտորածների և դրան ուղեկցող թալանի ու ավերածությունների հետևանքով գավառում ստեղծված խառնակ վիճակը՝ սոցիալ–տնտեսական բարդ կացությունը և բնակչության բարոյահոգեբանական ընկճվածությունը, Հայոց ազգային խորհուրդը և «Ապառաժի» կենտրոնական կոմիտեն դիմեցին համատեղ

1 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թթ. 9, 10:
2 «Ժողովուրդ», 14 մայիսի 1919 թ., «Արև», 30 ապրիլի 1919 թ.:
3 ՀԱԱ, ֆ. 199, ց.1, գ. 23, թ. 387, գ. 76, ց. 1, թ. 72:
4 **Բ. Ուլուբաբյան,** Արցախյան գոյապայքար, Ե., 1999, էջ 61:
5 «Արձագանք», 16 հունիսի 1919:

մարտավարությունում կտրուկ փոփոխությունների. ծանրության կենտրոնը տեղափոխեցին հակառակորդի պահանջներին ժամանակավորապես հարմարվելու և նրա հետ լեզու գտնելու դաշտ, որպեսզի բնակչությունը կարողանար լիաթոք շունչ քաշել և ուժերը վերականգնել:

Այս տեսակետը պաշտպանություն գտավ նաև 6–րդ համագումարի որոշումներում:

Փոխզիջումային որոշում կայացնելու ողջ ծանրությունն ու պատասխանատվությունն ընկան օգոստոսի 13–ին Շոշ գյուղում բացված 7–րդ համագումարի վրա: Նրա կողմից ընտրված հանձնաժողովը Սուլթանովի հետ ստորագրեց համաձայնագիր, ըստ որի՝ Լեռնային Ղարաբաղը, մինչև Փարիզի խաղաղարար կոնֆերանսի կողմից հարցի վերջնական լուծումը, ժամանակավորապես ընդունում է Ադրբեջանի իշխանությունը[1]: Եթե այսքանը բավարարում էր Ադրբեջանին՝ լուծված համարելու Արցախի հարցը, ապա Հայաստանն էլ դա գնահատեց որպես հայության ազգատարածքային շահերի դեմ ուղղված գործարք և հունիսի 28–ին պաշտոնական բողոք հղեց Փարիզի վեհաժողովին, որ «Ղարաբաղը եղել է և կմնա որպես Հայաստանի անբաժանելի մաս»[2]:

1919 թ. սեպտեմբերին Ղարաբաղից (նաև ամբողջ Անդրկովկասից՝ բացառությամբ Բաթումի) հեռացան անգլիական զորքերը: Արցախահայությունը մնաց իր ցավի ու ոգորումների հետ մենակ, պատմության համընդհանուր հոգսի մեջ անփոփոխ ճակատագրով:

Մինչդեռ Ադրբեջանը պատրաստվում էր մեկընդմիշտ իրեն ենթարկել Ղարաբաղը: 1920 թ. գարնանը Բաքուն Ղարաբաղի սահմանակից շրջաններում կենտրոնացրել էր ավելի քան 10 հազար զինվոր: Կազմակերպվեց քրդական մի դիվիզիա: Բաքվից Ղարաբաղ և Զանգեզուր ուղարկվեց 90 վագոն՝ բեռնված զենքով ու զինամթերքով: Ազերիները գրավեցին Ասկերանի անցուղին և ապահովեցին Բաքվի կապը Շուշիի հետ: Եվլախ կայանը լցված էր զենքի տարբեր տեսակներով ու ռազմամթերքով[3]: Այդ ամենը խոսում է այն մասին, որ Ադրբեջանի կառավարությունը տրամադրվել էր շատ վճռական և պատրաստ էր նոր արյան խրախճանք սարքելու Արցախի հողում: Սա գիտակցում էին Ղարաբաղի ղեկավարներն ու պատասխանատուները, և նրանց յուրաքանչյուր քայլ հավասարակշռված էր ու զգուշավոր՝ ամեն ջանք գործադրել լիցքաթափելու պայթյունավտանգ վիճակը գավառում: Եվ որքան էլ ցավալի է, այնուհանդերձ, գտնվեցին անխոհեմներ, որոնք իրենց արկածախնդրությամբ նետեցին արցախցիներին հրեշի երախը: Դրանք Հայաստանից այստեղ եկած արցախցի մի քանի գործիչներ էին: Թեև ՀՅԴ–ն չէր այս շարժման հեղինակն ու նախաձեռնողը, բայց նա էլ, ոգևորվելով զանգվածների տրամադրությունից, հետևեց այդ շարժմանը և ստանձնեց նրա ղեկավարությունը:

1 ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.9, թ.67:
2 ՀԱԱ, ֆ. 199, ց.1, գ. 223, առաջին մաս, թթ. 143, 144:
3 **Հ.Հարությունյան,** Լեռնային Ղարաբաղը 1917–1921 թթ., Ե., 1996, էջ 208–209:

Մարտի 22–ին զավթիչն անցավ բացահայտ հարձակման Ադրբեջանի սահմանի ամբողջ երկայնքով. Գանձակից մինչև Մուսուլմանլար–Զանգեզուր ծավալվեցին պատերազմական գործողություններ: Հայ ռազմիկներից և աշխարհազորայիններից կրած խայտառակ պարտության վրեժը Ադրբեջանը «լուծեց»՝ Շուշի քաղաքի ու շրջակա գյուղերի հայ բնակչությանը անխնա կոտորելով: Ապրիլի սկզբներին ադրբեջանական բանակը կոտորածներ կազմակերպեց Շուշիի և Ջևանշիրի ավելի քան երեսուն հայկական գյուղերում: Ապրիլի 4–ին ՀՅ Դաշնակցության Երևանի ներկայացուցչական խորհուրդը, լսելով Ս. Վրացյանի զեկուցումը Ղարաբաղի և Զանգեզուրի վերջին դեպքերի մասին, որոշեց բոլոր միջոցներով օգնել կառավարությանը՝ ապահովելու համար այդ գավառների միացումը Հայաստանի Հանրապետությանը[1]: Ապրիլի 11–ին կառավարությունը Ղարաբաղ զորք մտցնելու որոշում կայացրեց: Ապրիլի 14–ին Զանգեզուրի կողմից Ղարաբաղ մտան Դրոյի զորամասերը և 3–4 օրվա ընթացքում ամբողջ գավառը՝ բացառությամբ Շուշիի և Խանքենդիի, ազատագրեցին թշնամուց: Ղարաբաղ է հասնում նաև Նժդեհը Կապանի իր զորամասով և ամրանում Դիզակի շրջանում:

Դրոյի և «Ապառաժի» կենտրոնական կոմիտեի ջանքերով կազմվեց Ղարաբաղի ժամանակավոր կառավարություն՝ Ասլան Շահնազարյանի նախագահությամբ: Կառավարությունը ընդունեց բանաձև՝ Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանի հետ վերամիավորվելու մասին: Բանաձևը հաստատվեց արցախահայության 9–րդ համագումարի (1920 թ. ապրիլի 25–29) կողմից:

Հայ–ադրբեջանական հարաբերություններին նոր սրություն հաղորդեց 1920 թ. ապրիլի 28–ին Ադրբեջանի խորհրդայնացումը: Բոլշևիկյան Ադրբեջանը, թիկունքում ունենալով Քեմալական Թուրքիային, ցանկանում էր Խորհրդային Ռուսաստանի «ազատարար» զորքերի միջոցով տեր դառնալ Ղարաբաղին և «վիճելի» մյուս տարածքներին:

Տրամաբանությունը հուշում էր, որ Ղարաբաղի խորհրդայնացումը օրերի հարց էր: Ապրիլի 29–30–ին Ղարաբաղի մի շարք վայրերում՝ Շուշիում, Կարյագինոյում, Ասկերանում և այլուր, ստեղծվեցին հեղկոմներ: Ապրիլի 29–ին ստեղծվեց Ղարաբաղի միացյալ հեղկոմը, որի նախագահ հռչակվեց Խոսրով բեկ Սուլթանովը:

Ի՞նչ եղավ այսքանից հետո. եղավ այն, որ Հայաստանից հեռագիր գնաց Բաքու՝ դուրս բերել զորքերը հայկական Ղարաբաղից, հետևեց պատասխան հեռագիրը Բաքվից՝ մաքրել հայկական զորքերից Ղարաբաղն ու Զանգեզուրը: Փոխադարձ մեղադրանքներ պարունակող բողոքի հեռագրերի հոսքը Բաքվի և Երևանի միջև շարունակվեց ևս մի քանի օր՝ իհարկե, ընդգրկելով և Մոսկվան:

Մայիսի 12–ին Շուշի եկավ Կովկասյան ճակատի ռազմական խորհրդի նախագահ Գ. Օրջոնիկիձեն: Մայիսի 18–ին այդ խորհրդի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր–Գաբրիելյանը Վարանդայի շրջանի Ղարաբուլաղ գյու-

1 ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ. 25, թ.12:

ղում հանդիպում ունեցավ Դրոյի հետ և Օրջոնիկիձեի անունից պահանջեց հայկական զորամասերը դուրս բերել Ղարաբաղից:

Քաղաքական հանգամանքները դասավորվեցին այնպես, որ մայիսի 27–ին հայկական փոքրաթիվ զորամասը Դրոյի գլխավորությամբ դուրս եկավ Ղարաբաղից և վերադարձավ Գորիս:

1920 թ. հուլիսի վերջերին Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը գտնվում էին ռուսական զորքերի ձեռքում:

Իրադրության այս պայմաններում 1920 թ. օգոստոսի 10–ին Թիֆլիսում ստորագրված հայ–ռուսական համաձայնագրով նշված գավառները հայտնվեցին չեզոք գոտու կարգավիճակում և ենթակա էին ժամանակավոր օկուպացման ռուսական զորքերի կողմից: Այս տարածքները պետք էին Ռուսաստանին և Ադրբեջանին՝ արևելքում համաշխարհային հեղափոխության «պատվար» քեմալական Թուրքիայի հետ անմիջական կապ ստեղծելու համար: Այդ անհեթեթ ու սնանկ գաղափարին զոհաբերվեցին հայ ժողովրդի ազգային–տարածքային և քաղաքական շահերը նաև այն բանից հետո, երբ Հայաստանը դարձավ խորհրդային:

Այսպիսով՝ 1917–1920 թթ., երբ Լեռնային Ղարաբաղի հայությունը կանգնած էր իր հազարամյակների պատմության ամենաճակատագրական փորձության առաջ, ՀՅԴ–ն իր ուսերին տարավ արցախյան գոյապայքարի ողջ ծանրությունն ու պատասխանատվությունը և պատվով կատարեց առաջատար ուժի իր դերը:

Այլ խոսքով՝ ՀՅ Դաշնակցության շնորհիվ էր նաև, որ այդ տարիներին արցախահայությունը անձնազոհաբար պայքարեց ու պաշտպանեց ափի չափ փոքր հայրենի երկրում ազատ և անկախ ապրելու իր բնական իրավունքը և հետո՝ տասնամյակներ անց՝ 20–րդ դարավերջին, ծնունդ տվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

Վլադիմիր Ղազախեցյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հայաստանի խորհրդայնացումով, երբ ՀՅ Դաշնակցությունը ստեղծված իրադրության պայմաններում ստիպված եղավ իշխանությունը զիջել հայ բոլշևիկներին, կուսակցությունը որդեգրեց դրանից բխող նոր ռազմավարություն ու գործելակերպ: Պառլամենտի դաշնակցական ֆրակցիան և բյուրոն եկան այն եզրակացության ու որոշման, որ հեռանում են երկրից՝ այնտեղ թողնելով բյուրոյի ներկայացուցչին, իսկ կուսակցության անդամներին պատվիրեցին գործել տեղական պայմաններին համապատասխան, «գաղտնի պահպանել կուսակցության գոյությունը»՝ միաժամանակ նրանց չարգելելով մտնել նոր իշխանության մեջ և աշխատել երկրի տնտեսական ու մշակութային զարգացման համար[1]:

Սակայն խորհրդային իշխանության քաղաքականությունը, նրա կողմից 1920 թ. դեկտեմբերի 2–ի համաձայնագրի խախտումը (ձախ կոչված դաշնակցականներին իշխանության մեջ տեղ տալու և սոցիալիստական կուսակցությունների անդամների նկատմամբ որևէ բռնություն թույլ չտալու մասին) ոչ միայն եկան բացառելու կուսակցության գոյատևումը, այլև սպառնում էին նրա անդամների կյանքին ու ազատությանը: Խորհրդային իշխանությունը առանձին հանրապետություններում, ապա՝ ԽՍՀՄ–ում բռնել էր մենատիրության ուղին, որի հաստատման ու ամրապնդման համար դիմում էր կարելի ու անկարելի բոլոր միջոցներին, այդ թվում և բռնաճնշումների ոչ պրոլետարական կուսակցությունների նկատմամբ, իսկ պրոլետարական էին դիտվում միայն բոլշևիկները: Հայաստանի համար ևս պարտադիր և ուղեցույց նշանակություն ուներ ՌԿ(բ)Կ 12–րդ կոնֆերանսի (1922 թ. օգոստոս) որոշումը «Հակախորհրդային կուսակցությունների ու հոսանքների մասին»: Կոնֆերանսն անխուսափելի էր համարում էսեռների, մենշևիկների և այլոց վերացումը՝ վերջ տալու համար նրանց այն հույսերին, թե ՆԷՊ–ին անցնելը կտանի դեպի Կոմունիստական կուսակցության կապիտուլյացիա և «դեմոկրատական» կոալիցիոն իշխանության հաստատում: Գործադրվող միջոցների հետ կոնֆերանսը ընդունելի էր համարում նաև բռնաճնշումները[2]:

Մինչև տվյալ ուղղությամբ Հայաստանի կոմկուսը կձեռնարկեր համապատասխան միջոցառումներ, ՀՅ Դաշնակցության ու ողջ երկրի վրայով անցան շատ փոթորիկներ: Իշխանությունը բոլշևիկներին հանձնելու մասին համաձայնագրի ստորագրման թանաքը դեռ չչորացած՝ սկսվեցին դաշնակ-

1 **Կարո Սասունի,** Փետրվարյան ապստամբությունը: Տե՛ս «Հայրենիք», (Բոստոն), 1925, N 12, էջ 92:

2 ՍՄԿՊ–ն բանաձևերում ու որոշումներում: 1–ին մաս, Երևան, 1954, էջ 856–863:

ցականների ձերբակալությունները՝ սկզբում՝ ղեկավար, ապա՝ նաև շարքային: 1921 թ. փետրվարին Երևանում և այլ վայրերում ձերբակալվածների ընդհանուր թիվը հասնում էր 2500–ի[1]: Սպասվում էին նաև ավելի մեծ թվով ձերբակալություններ: Խորհրդային իշխանությունը ձերբակալությունները պատճառաբանում էր իր գոյության համար ստեղծված վտանգով, դաշնակցականների կողմից նախապատրաստվող հակախորհրդային պայքարով, այն դեպքում, երբ բոլշևիկների «ռազմական կոմունիզմի» քաղաքականության և այլ պատճառներով էր հանրապետությունում հաստատվում քաոսային դրություն, և լցվում ժողովրդի համբերության բաժակը, որը դառնում էր տարերային ապստամբական շարժում, ապա զինված ապստամբություն, և որի ղեկավարության գլուխ էր անցնում ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը՝ նրան կազմակերպված բնույթ տալու համար:

Մերժելի է խորհրդային գրականության մեջ տարածված այն տեսակետը, թե Փետրվարյան ապստամբության նախապատրաստությունը սկսվել է խորհրդային իշխանության հենց առաջին օրերից և ղեկավարվել ՀՅ Դաշնակցության կողմից: Տեղերում առանձին դաշնակցականների նախաձեռնությունը՝ զինված խմբեր կազմակերպելու ուղղությամբ, չի նշանակում, թե շարժումը ղեկավարում էր կուսակցությունը: Հայտնի փաստ է, որ սկզբում Երևանում գտնվող Դրոն և Վրացյանը դեմ են եղել ապստամբությանը: Վերջինս համաձայնվում է ապստամբության առաջարկության հետ միայն ավելի ուշ, երբ ձերբակալությունները կատարվում էին զանգվածորեն: Ապստամբությանը կազմակերպված բնույթ տալու և ղեկավարելու մասին վկայում են միայն փետրվարի 13–ին Կոտայքի Զառ գյուղում տեղի ունեցած խորհրդակցության որոշումները[2]: Ըստ Մարտիրոս Աբրահամյանի հուշերի՝ խորհրդակցությունը տեղի է ունեցել փետրվարի 12–ին Զրվեժ գյուղում[3]: Տվյալ հարցին վերջնական պատասխան է տալիս վերջին ժամանակներս հրապարակված մի փաստաթուղթ, որը պահպանվում է Դաշնակցության՝ Բոստոնի կենտրոնական արխիվում: Խոսքը Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին հասցեագրված «ՀՅԴ բյուրոյի հերթապահ անդամ» Արշակ Զամալյանի և «անդամ–քարտուղար» Գևորգ Ղազարյանի նամակ–գրության մասին է՝ գրված հավանորեն Գևորգ Ղազարյանի ձեռքով:

Վերլուծելով Հայաստանում ստեղծված իրավիճակը՝ նամակի հեղինակները հանգել են այն եզրակացության, որ խորհրդային հեղաշրջման կազմակերպիչները չեն կարողացել և չեն էլ կարողանա կատարել հեղաշրջման սկզբում իրենց տված խոստումները, ուստի երկրի և ժողովրդի համար «կենսական պահանջ» են համարում «խորհրդային իշխանության կազմակերպված տապալումը Հայաստանում»: Փաստաթղթից տեղեկանում ենք նաև այն մասին, թե նրա հեղինակները ինչպիսի «համապատասխան հրահանգներ» էին տալիս Հայաստանի պատվիրակությանը և «բոլոր կուսակ-

1 **Կ. Սասունի,** Փետրվարյան ապստամբությունը, Բեյրութ, 1970, էջ 87:

2 **Սիմոն Վրացյան,** Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 560:

3 Փետրվարյան ապստամբությունը (Բաշգյառնեցի խմբապետ Մարտիրոսի հուշերը): Տե՛ս «Հայրենիք» (Բոստոն), 1956, N 7, էջ 36:

ցական ընկերներին», որպեսզի իրականանան «մեծամասնականների տիրապետության տապալման համար» ծրագրված աշխատանքները:

Ներկա զեկուցման մեջ հարկ չենք համարում անդրադառնալ հիշյալ ծրագրված աշխատանքներին, ավելացնենք միայն, որ ինչպես նշված է նամակում, Սարգիս Արարատյանը լիազորվում էր հիմնավորելու նրա հեղինակների «տեսակետներն ու պահանջները ներկա քաղաքական մոմենտի և դրանից բխող խնդիրների վերաբերյալ արտասահմանում գործող բոլոր կուսակցական օրգանների ու ընկերների առաջ»[1]:

Հայաստանում 1921 թ. ստեղծված իրադրությունը հղի էր ապստամբությամբ: Դրա համար կային և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պայմաններ:

Ապստամբությունը, որի շարունակությունը վերածվեց քաղաքացիական պատերազմի, այնուամենայնիվ պարտվեց, քանզի ռազմական գործողությունների ընթացքում ուժերի հարաբերակցությունը աստիճանաբար շրջվում էր Հայաստանի խորհրդային իշխանության կողմը: Պայքարի ելքի համար լուրջ խոստովանություններ էր անում անձամբ նրա գլուխ կանգնած Սիմոն Վրացյանը: «Ծանր հնարավորությունների առաջ» կանգնելու վտանգի մասին է վկայում Նժդեհին հասցեագրված՝ Ս. Վրացյանի մարտի 18–ի նամակը, որը, սակայն, հասցեատիրոջը չէր հասել և տպագրվել էր բոլշևիկների «Կոմունիստ» թերթում[2]: Նամակի հեղինակը ավելի որոշակիորեն է արտահայտվել մարտին Փարիզ ուղարկած իր զեկույց–նամակում, որն ուղղված էր Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը: «Այս օրհասական կռվի մեջ մենք լարել ենք մեր վերջին ուժերը,– կարդում ենք փաստաթղթում,– երկար ժամանակ չենք կարող մնալ այսպիսի լարված դրության մեջ: Ժողովուրդն ուժասպառ է, արնաքամ: Եթե բոլշևիկները ուժեղանան արտաքին օժանդակությունով, իսկ մենք մնանք մենակ, պարտությունն անկասկած է և անխուսափելի»: Եվ այնուամենայնիվ, շարունակում է Վրացյանը, բոլշևիզմը միայն մեր դիակների վրայով կարող է երկրորդ անգամ ոտք կոխել Հայաստան[3]: Այսպիսով՝ դիակ դառնալը Ս. Վրացյանը գերադասում էր խորհրդային իշխանության վերադարձից:

Փետրվարյան ապստամբությունը ուժեղ քննադատության է ենթարկվել նաև դաշնակցական առանձին հեղինակավոր գործիչների, ինչպես, օրինակ՝ Հ. Քաջազնունու, Մ. Վարանդյանի, Գ. Նժդեհի և այլոց կողմից: Մասնավորապես Գարեգին Նժդեհը նշել է, թե զարմանալի չէր «ծով Ռուսաստանի դեմ» «Արարատյան Հայաստանի մի մասի» պարտությունը այն դեպքում, երբ Վրաստանը դադարել էր հակաբոլշևիկ լինելուց, Մուսավաթը վարում էր հակահայ քաղաքականություն, իսկ Անգորան համբուրվում էր Մոսկվայի հետ: «Երևանի ապստամբությունը նպատակ չուներ երկար ժամանակով վերականգնելու հանրապետական Հայաստանը: Ավելի պարզ էր նրա առարկան՝ փշրել խորհրդային բանտերի դռները, ուր հոգեվարում էր հայ

1 **Վ. Ղազախեցյան, Հ. Գևորգյան,** Դաշնակցության կողմից փետրվարյան ապստամբության ղեկավարման հարցի շուրջ (նորահայտ վավերագիր): Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, N 1, էջ 46–50:

2 «Կոմունիստ», Երևան, 13 մայիսի 1921 թ., N 82:

3 **Սիմոն Վրացյան,** Հայաստանի Հանրապետություն, էջ 656:

մտավորականությունը»: Հաջողելով իր այդ փորձը, շարունակում է իր հիմնավորումը և բացատրությունը Նժդեհը, ապստամբությունը պետք է ուղի բացեր «մղվելու դեպի Սյունիք»[1]: Ընդ որում՝ սկզբնապես նույն տեսակետին է եղել նաև բյուրոյի անդամ Ռուբեն Տեր–Մինասյանը, որը, ըստ խմբապետ Մարտիրոսի (Մարտիրոս Աբրահամյան) հուշերի, վերջինիս Սյունիքից ուղարկել էր Երևան՝ պատվիրելով բոլոր հնարավոր միջոցներով, լիներ այն կաշառք, ծանոթություն, ապստամբություն, հասնել յուրայինների ազատմանը բանտերից[2]:

ՀՅ Դաշնակցության պատմագիրներից Հրաչ Տասնապետյանը հետագայում փորձել է դրական կողմեր տեսնել ապստամբության հետևանքների մեջ: Նա նկատի ուներ բոլշևիկների կողմից հայ ժողովրդի նկատմամբ «շատ ավելի զուսպ ու հավասարակշռված վարմունքի»[3] որդեգրումը, որպիսին, սակայն, պետք է վերագրել Ռուսաստանում ընդունված նոր տնտեսական քաղաքականությանը և ոչ բնավ՝ Հայաստանի ժողովրդի փետրվարյան ընդվզմանը:

Եթե ՀՅ Դաշնակցության ղեկավարած Փետրվարյան ապստամբությունը պարտվեց և միայն մասնակիորեն ունեցավ դրական նշանակություն (այն է՝ փրկեց հարյուրավոր բանտարկյալների կյանքը՝ չնայած տեղի ունեցած կացնահարություններին), ապա նույնը չի կարելի ասել դարձյալ ՀՅ Դաշնակցության՝ անձամբ Գարեգին Նժդեհի գլխավորած Զանգեզուրի ինքնապաշտպանության մասին: Այն իր բնույթով ազգային–ազատագրական պայքար էր՝ խնդիր ունենալով հայրենի երկրամասը պաշտպանելու թուրք–թաթարա–խորհրդառուսական ագրեսիայից: Արդյունքում՝ Զանգեզուրը մնաց Խորհրդային Հայաստանին՝ չնայած պայքարը ծավալվել էր ազատ ու անկախ հայկական պետության հետ միավորվելու համար:

Տվյալ պայքարի գնահատականը ՀՅԴ–ն տվել է 1923 թ. կայացած Վիեննայի խորհրդաժողովում, ապա նաև՝ 10–րդ ընդհանուր ժողովում: «Զանգեզուրի շարժումները,– կարդում ենք որոշման մեջ,– ունեցած են արտակարգ նշանակություն բոլշևիկները զգաստացնելու, նահանջն ապահովելու և Զանգեզուրը Հայաստանին կապված պահելու տեսակետից»[4]: Ավելի լայնիմաստ է Գարեգին Նժդեհի տված գնահատականը: Վերլուծելով իր զանգեզուրյան էպոպեան՝ նրա վերջին՝ երրորդ ժամանակաշրջանի մասին Գ.Նժդեհը հայտնել է, որ այն «պե՛տք էր հոգեբանորեն հրահրել և ռազմագիտորեն կարելի դարձնել Հայաստանի փետրվարյան ապստամբությունը, ապա փրկության կամուրջ հանդիսանալ բոլշևիզմի գազանից մազապուրծ եղած հայ մտավորականության համար»[5]:

---

1 **Գարեգին Նժդեհ,** Երկեր, հ. 2, Երևան, 2002, էջ 141–142:

2 Փետրվարյան ապստամբությունը (Բաշգյառնեցի խմբապետ **Մարտիրոսի** հուշերը): Տե՛ս «Հայրենիք», (Բոստոն), 1956, N 3, էջ 28:

3 **Հրաչ Տասնապետեան,** ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ 7 ընդհ. ժողով (1890–1924), Աթէնք, 1988, էջ 146:

4 **Յ. Քիւրքճեան,** Ուրուագիծ ՀՅԴ պատմութեան 1919–1924 հնգամեակի, Աթէնք, 1988, էջ 74:

5 **Գարեգին Նժդեհ**, Երկեր, հ. 2, էջ 251:

Ճշմարտությունը, սակայն, պահանջում է ասել, որ այստեղ անհրաժեշտ է որոշ՝ մասնակի վերապահություն անել նահանջի կապակցությամբ: Այն կարելի էր և պետք էր կանխել՝ հաշվի առնելով ոչ միայն այն փաստը, որ կարճ ժամանակ անց Պարսկաստան գաղթած հազարավոր հայեր վերադարձան հայրենիք, այլև այդ նահանջի՝ 1921 թ. ապրիլ–հուլիս 3–4 ամիս տևած ընթացքը ավելորդ էր ու անտեղի՝ հաշվի առնելով գաղթածների կրած տառապանքները և Զանգեզուրի պաշտպանների, ինչպես նաև նրանց հակառակորդների տված նորանոր զոհերը: Նկատի ունենք խորհրդային իշխանության վճռական հաղթանակը ապրիլ ամսին, ինչպես նաև Հայաստանին Զանգեզուրի միացման հեռանկարի պարզ լինելը:

Սակայն վերը բերված մասնակի վերապահությունները քննելով 1921 թ. Փետրվարյան ապստամբության և Զանգեզուրի ինքնապաշտպանության պատմական նշանակության ընդհանուր համատեքստում՝ պետք է ընդգծել ՀՅ Դաշնակցություն կուսակցության խաղացած կարևոր դերը՝ հայ ժողովրդի կենսական շահերի պաշտպանության, ազգային խնդիրների լուծման գործում նրա պատրաստակամության առումով:

Ժողովրդի շահերի պաշտպանության գործում ՀՅ Դաշնակցության ցուցադրած մարտական կեցվածքը բնականաբար չէր կարող հանդուրժել իշխանության ղեկին կանգնած բոլշևիկների կուսակցությունը: Մանավանդ որ ընդհատակ անցած այդ կուսակցությունը շարունակում էր մնալ որպես կենդանի օրգանիզմ՝ իր կազմակերպական լայն ցանցով և արտասահմանի հետ պահվող կապերով: Եվ խորհրդային իշխանությունը, անտեսելով իր իսկ ընդունած ներման դեկրետները, անմիջապես դիմեց բռնությունների՝ դաշնակցականների ու նրանց կուսակցության նկատմամբ: 1921 թ. վերջերին Հայաստանի կոմկուսի կենտկոմը ցուցադրական դատավարություն բեմականացրեց ՀՅ Դաշնակցության նկատմամբ և ծրագրված աշխատանք ծավալեց նրա գաղափարական մերկացման և կազմակերպական առումով կազմալուծման ու քայքայման նպատակով:

Հասարակական մեղադրողը, թվարկելով ՀՅ Դաշնակցության հանցանքները, առաջարկեց այդ «ավանտյուրիստական կազմակերպությանը» դատապարտել բարձրագույն պատժի: Իսկ դատապաշտպանը կուսակցությանը արժանացնում էր «մի ուրիշ դատի, ավելի ահեղ, քան ներկա դատը. դա պատմության դատն է»: Դատապաշտպանի այս խոսքերը դահլիճը դիմավորել է երկարատև ծափերով[1]:

Կոմունիստական կուսակցության նշանակալի միջոցառումներից էր ՀՅ Դաշնակցություն կուսակցության այսպես կոչված «ինքնավերացման» համագումարը, որը տեղի ունեցավ Երևանում 1923 թ. նոյեմբերին: Նրա կազմակերպիչը և ղեկավարը կոմունիստական կուսակցությունն էր, գաղտնի գործողի դերում էր Արտակարգ հանձնաժողովը, իսկ գործի նախաձեռնության մեջ ներքաշվել էին «նախկին դաշնակցական» անունով դաշնակցականներ, որոնց օգնությամբ ու միջոցով պետք է բացահայտվեին կուսակցության անդամները, հրավիրեին իրենց գավառային ու շրջանային կոնֆերանսները,

1 «Խորհրդային Հայաստան» (Երևան), 1921 թ. դեկտեմբերի 3, 4, 6, 9, 13–ի համարներ:

ապա համահայաստանյան համագումարը: Հայաստանում ինքնաբացահայտվեց ու գրանցվեց ՀՅ Դաշնակցության 4000–ից ավելի անդամ: Դա այնքան էր, որքան կոմունիստների թիվն էր 1924 թվականին: Ավելացնենք, որ կարող էին լինել նաև իրենց չբացահայտող ոչ քիչ թվով դաշնակցականներ, ովքեր տվյալ միջոցառման մեջ տեսնում էին նաև վտանգ:

ՀԿ(բ)Կ կենտկոմի 1923 թ. հունիսյան պլենումը քննարկեց Արտակարգ հանձնաժողովի նախագահ Շավարշ Ամիրխանյանի զեկուցումը ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը կազմալուծելու մեթոդների մասին: Պլենումի որոշման մեջ ասված է՝ անհրաժեշտ համարել սահմանել ավելի խիստ դրույթներ ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը կազմալուծելու մեթոդների վերաբերյալ, որոնց մշակումը հանձնարարվեց Կենտկոմի նախագահությանը: Դրան համապատասխան՝ կուսկենտկոմը իր գավառային կոմիտեներին իջեցրեց շրջաբերական նամակ, որում ասված է՝ ժողովրդական լայն զանգվածների, Եվրոպայի ու Ամերիկայի հայկական գաղութների հասարակայնության, ինչպես նաև աշխատավորների աչքում Դաշնակցությանը վերջնականապես վարկաբեկելու և կազմալուծելու նպատակով կենտկոմն առաջարկում էր նախապատրաստվել դաշնակցության շարքերից խմբային հեռացմանը: Կոմունիստական կուսակցությունը միջոցառումներ էր իրականացնում Դաշնակցությունը հարևան հանրապետություններում ևս վերացնելու, ինչպես նաև արտասահմանում նրա դեմ քայքայող աշխատանք տանելու ուղղությամբ:

Դաշնակցականների համագումարը հայտարարություն ընդունեց Հայաստանում կուսակցության վերացման մասին և կոչով դիմեց արտասահմանի ընկերներին՝ հեռանալ Դաշնակցությունից և հարել Կոմունիստական ինտերնացիոնալի դիրքերում կանգնած տեղական կազմակերպություններին[1]:

Իրականում համագումարի կոչին չհետևեցին արտասահմանում, իսկ հանրապետության կազմակերպությունները փաստորեն պահպանվեցին, որոնց վերացման համար գործադրվեցին նոր բռնի միջոցներ:

Բնականաբար պետք է վերացվեր նաև Դաշնակցական երիտասարդական միությունը (Դաշերիտմիություն), որի «ինքնավերացման» համագումարը կայացավ 1924 թ.:

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների 3–րդ համագումարում (1924 թ.) Օրջոնիկիձեն զեկուցեց, թե Անդրկովկասում վերջնականապես ու անվերադարձ քայքայել ու ջախջախել են հակախորհրդային կուսակցություններին՝ Վրաստանում՝ մենշևիկներին, Ադրբեջանում՝ մուսավաթականներին, Հայաստանում՝ դաշնակցականներին, թե նրանց թաղել են հավիտյան[2]:

---

1 Նախկին շարքային դաշնակցականների Համահայաստանյան համագումարի արձանագրությունները: Ստենոգրաֆիկան հաշվետվություն, 20–23 նոյեմբերի 1923 թ., Երևան: 1924, Երևան, Տրեստի առաջին տպարան: ՀՅ Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու): Պատասխանատու խմբագիր և կազմող՝ պրոֆեսոր Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, 1999:

2 **Г. К. Орджоникидзе,** Статьи и речи, том 1, Москва, 1956, с. 344–345.

Մինչդեռ իրականում կուսակցությունները գոյատևում էին և նույնիսկ ակտիվ գործունեություն ծավալում: Այդ մասին խոստովանել է նաև Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը 1924–1925 թթ. վերաբերող ամփոփագրում՝ միայն թե սխալ բացատրելով ակտիվության պատճառը[1]:

ՀՅ Դաշնակցության դեմ նոր հարձակման առիթ ծառայեց Ներքին Աղջաղալայի գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանի սպանությունը և դրա դատավարությունը 1926 թ.: Ահաբեկչությունը վերագրվեց ՀՅ Դաշնակցությանը: Տասնմեկ դաշնակցականներ ստացան տարբեր պատիժներ: Կենտկոմի անդամ Սահակ Ստեփանոսյանը դատապարտվեց գնդակահարության, որը փոխարինվեց տասնամյա ազատազրկումով:

Կոմկուսի կենտկոմը պատվիրել էր դատական գործը նախապատրաստել սոցիալական ու քաղաքական կողմի տեսանկյունից, ինչպես նաև հավանություն էր տվել մեղադրական եզրակացությանը՝ դատավարության քաղաքական ղեկավարման համար առանձնացնելով հատուկ հանձնաժողով՝ Կենտկոմի 1–ին քարտուղարի ղեկավարությամբ[2]:

1920–ական թվականների երկրորդ կեսին ձերբակալվեցին բազմաթիվ դաշնակցականներ: Ուժեղացան ՀՅ Դաշնակցության գաղափարական քննադատությունն ու մերկացումը: 1928 թ. տեղի ունեցավ Կոմկուսի կենտկոմի հատուկ պլենում՝ նվիրված գաղափարական ճակատի խնդիրներին: Առաջին գծի վրա էր պայքարը ՀՅ Դաշնակցության ու նրա գաղափարախոսության դեմ: Կոմկուսը ուղիղ կապ էր տեսնում ՀՅ Դաշնակցության և հայ լուսավորչական եկեղեցու միջև՝ դրանից բխող հետևանքներով հանդերձ: Պլենումում զեկուցող Սարգիս Կասյանը գտնում էր, որ դաշնակներն ու դաշնակիզմը պիտի վերանան երկրի երեսից: Իսկ պլենումի բանաձևում դաշնակիզմը բնութագրվեց որպես բուրժուական–ազգայնական–շովինիստական հակահեղափոխական գաղափարախոսություն, որպես հայ իրականության ֆաշիզմ: Եթե մինչ այդ ՀՅ Դաշնակցության սոցիալական հենքը համարվում էր մանր բուրժուազիան, ապա այսուհետ նա սկսեց համարվել հայ բուրժուազիայի իղձերի ու ձգտումների արտահայտիչն ու մարտական կուսակցությունը, համաշխարհային իմպերիալիզմի սպասավորը[3]:

Կարճ ժամանակում տպագրվեցին բազմաթիվ հակադաշնակցական գրքեր, որոնց հեղինակներն են Աշոտ Հովհաննիսյանը, Արտաշես Կարինյանը, Աղասի Խանջյանը, Գրիգոր Չուբարյանը, Գևորգ Աբովը, Սերգո Խանոյանը, Եղիա Չուբարը, Աթանես Ակոպովը և ուրիշներ: Տպագրվեցին 1923 թ. «ինքնավերացման» համագումարի, 1926 թ. դատավարության նյութերը, վերջինում հասարակական մեղադրող Արամայիս Երզնկյանի ճառը և այլն[4]: Իհարկե, հետ չէր մնում նաև մամուլը:

---

1 ՀՅ Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 209:

2 Նույն տեղում, էջ 198–208:

3 Նույն տեղում, էջ 236, 237:

4 **Ա. Հովհաննիսյան,** Դաշնակցությունը և պատերազմը, Եր., 1927: **Գր. Չուբարյան,** Դաշնակցության տաճկական օրիենտացիան և Հայրենիքի փրկության կոմիտեն, Եր., 1929: **Գ. Աբով,** Դաշնակցությունն անցյալում և այժմ, Եր., 1929, 2–րդ վերափոխ. հրատ., Եր., 1930: **Ս. Խանոյան**, Դաշնակցության տրագիկոմեդիան, Եր., 1930: **Ե. Չուբար,** Դաշնակցությունը

Նկարագրված գործընթացների պատկերը լրացնում են հետևյալ թվական տվյալները: Ազգային անվտանգության ծառայության արխիվում պահվող անձնական գործերի հիման վրա կատարած հաշվարկների համաձայն՝ միայն 1920–ական թվականներին քաղաքական դրդապատճառներով ձերբակալվել է 1246 մարդ, որոնց մեծ մասը դաշնակցականներ էին: Նրանցից 44–ը դատապարտվել են գնդակահարության, մյուսները՝ 1–15 տարվա ազատազրկման: Դատապարտվածներից 12–ը հոգևորականներ էին[1]:

Հայաստանում ՀՅ Դաշնակցության դեմ պայքարի նոր փուլ էր 1930–ական թվականների առաջին կեսը՝ կապված գյուղատնտեսության հարկադիր կոլեկտիվացման, այսպես կոչված կուլակությանը որպես դասակարգ վերացնելու քաղաքականության կենսագործման հետ: Գյուղացիության զգալի մասը տարբեր ձևերով, նաև զինված, դիմադրություն ցույց տվեց բռնի կոլեկտիվացմանը:

«Բանդիտական» կոչված շարժումը, ըստ էության, գյուղացիական ապստամբություն էր, որին միացան նաև շատ դաշնակցական բջիջներ, աշխուժացան արտասահմանի հետ կապերը: Խորհրդային իշխանությունը ուժեղ հարձակման անցավ «բանդիտ» կոչվածների և ՀՅ Դաշնակցության դեմ: 1930–ական թվականների սկիզբը դարձավ ՀՅ Դաշնակցության կազմակերպական ջախջախման շրջան: 1930 թ. սեպտեմբերի կուսակցական փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Կազմակերպությունների հետ միասին Պետքաղվարչության օրգանները վերջին շրջանում խոշոր աշխատանք կատարեցին բանդիտիզմի վերացման համար՝ ոչնչացնելով բանդիտական խմբերը, դաշնակցական բջիջները, հրապարակից վերացնելով դաշնակների ակտիվ վերնախավը»:

1999 թ. տպագրված մեր գրքում բերված են բազմաթիվ վավերագրեր այն մասին, թե ինչպիսի գործընթաց են ապրել դաշնակցական բջիջների բացահայտումը և նրանց անդամների մեկուսացումը[2]: Դրանք միաժամանակ վկայում են Հայաստանում դաշնակցական բջիջների խիտ ցանցի առկայության և ակտիվ գործունեության մասին:

Հաշվի առնելով իր կազմակերպությունների ու անդամների հետագա գործունեության ու կյանքի համար ստեղծված տագնապալի իրադրությունը՝ ՀՅ Դաշնակցության ղեկավարությունը 1933 թ. որոշում ընդունեց նրանց ազատ արձակելու մասին: Փաստորեն Հայաստանում կուսակցությունը կազմալուծվեց:

երրորդ շրջանում, Եր., 1930: **Ա. Ակոպով,** Անգլիական իմպերիալիզմի դավերը խորհրդային Անդրկովկասի սահմանների վրա և հայ դաշնակները, Եր., 1931: **Աղասի Խանջյան,** Ավելի զգաստ, ավելի աչալուրջ (Ընդդեմ հակախորհրդային ինտերվենցիայի դաշնակցության սպասարկուների), Եր., 1931: **Ա. Կարինյան**, Դաշնակցությունը և իր զինակիցները, Եր., 1932: Դաշնակցական տեռորիստների գործը (Նյութեր Մ. Խուշոյանի տեռորիստական սպանության դատավարությունից), Զ. Աշրաֆյանի առաջաբանով, Եր., 1927: **Ա. Երզնկյան,** Մանուկ Խուշոյանի դատավարության գործում հասարակական մեղադրող Ա. Երզնկյանի ճառը՝ արտասանված 1926 թ. հոկտեմբերի 17–ին և 18–ին, Եր., 1926:

1 **Արմենակ Մանուկյան,** Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ., Երևան, 2002, էջ 89:

2 ՀՅ Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 239–278:

1930–ական թվականների երկրորդ կեսին բռնաճնշման ենթարկվեցին դեռևս հետապնդումներից զերծ մնացած դաշնակցականները, ինչպես նաև դաշնակցական համարված շատ քաղաքացիներ:

Այսպիսով՝ խորհրդային իշխանությունը և Կոմունիստական կուսակցությունը միայն բանտի, աքսորի ու ահաբեկչության միջոցով կարողացան կազմակերպորեն ջախջախել ՀՅ Դաշնակցությունը Հայաստանում և մյուս հանրապետություններում: Սակայն նրանք անզոր էին լիակատար հաջողության հասնելու մարդկանց վրա ՀՅ Դաշնակցության ազդեցության դեմ գաղափարական պայքարում:

ՀՅ Դաշնակցություն կուսակցության 115–ամյա հոբելյանի առիթով պատշաճ է ներկա զեկուցումն ավարտել՝ մեջբերելով Վահան Նավասարդյանի իմաստուն կանխատեսումը, որը նա արել է Երևանի «ինքնավերացման» համագումարի կապակցությամբ 1924 թ. տպագրված իր գրքում: «Վաղաժամ է Դաշնակցության «լիկվիդացիայի» մասին խոսելը, երբ բոլշևիզմն ապրում է իր անբուժելի սնանկության պրոցեսը: Մեր մոլորակի վրա դեռ շատ բան պիտի փոխվի, պիտի փոխվի նաև քաղաքական քամիների ընթացքը, ու Դաշնակցության հին նավը անպայման պիտի մտնի բանուկ հունի մեջ: Իսկ մինչ այդ, զինված մեր օրերի հզորագույն զենքերով՝ համբերությամբ, տոկունությամբ ու զգուշավորությամբ, պատրաստվենք այդ վարդագույն պայքարի արևոտ օրերին»[1]:

1 **Վ. Նավասարդեան,** ՀՅ Դաշնակցութեան «լիկվիդացիան» (բոլշեւիզմի սնանկութեան առիթով), Գահիրե, 1924, էջ 187:

Վահրամ Բալայան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ–ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՈՒՀ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության էջերը առլեցուն են ազգային–ազատագրական պայքարի հերոսական, բայց նաև օրհասական պահերով: Դարերի ընթացքում այդ անընդհատ նորոգվող պայքարը, որը ուղեկցվում էր մարդկային անդառնալի կորուստներով, ինչու չէ՝ նաև հոգեբանական սուր ցնցումներով, անկախ կորցրածի ցավից կամ հաջողությունների ժամանակավոր բնույթից, անհրաժեշտ նախապայմաններ էր ստեղծում նոր ձեռքբերումների արձանագրման և համազգային վերածննդի ապահովման համար: Այս առումով բացառություն չէր նաև 70 տարվա հարաբերական անդորրում հայտնված արցախահայության պայքարը, որը նոր լիցք ու որակ ստացավ 1988 թվականից:

Արցախը Ադրբեջանին բռնակցվելուց անմիջապես հետո, Ադրբեջանի հայատյաց քաղաքականությանը դիմակայելու նպատակով, արցախահայությունը առաջին իսկ օրից կանգնեց ազատագրական պայքարի ուղու վրա: Արցախի գավառներում անընդհատ արձանագրվել են ընդվզումներ ու ապստամբական պոռթկումներ ադրբեջանական պաշտոնեության դեմ՝ մարզն ադրբեջանական ստրկությունից ազատագրելու համար: Այդ ամենը կազմակերպական հունի մեջ էր պահում ՀՅԴ Արցախի «Ապառաժ»–ի կենտրոնական կոմիտեն, որն այդ օրերին գործում էր ընդհատակում: Այս կապակցությամբ Ռուբեն Տեր–Մինասյանը գրել է. «ՀՅ Դաշնակցությունը, իբրև հայ ժողովրդի հույսի և հավատի խտացումը, չի դավաճանած Գանձակ–Ղարաբաղին, ընդառաջ է գացած անոր բաղձանքին և ամենէն տագնապալի վայրկյանին իսկ չէ մոռացած զայն: Այսօր ալ իր հալածական վիճակի մէջ իր ծրագրի մեջ ունի հին Արցախ գավառներուն ազատագրումը: Այդ ծրագիրն ինքը չէ հղացած, այլ քաղած է Ղարաբաղի ժողովրդին կամքէն»[1]:

1920 թ. աշնանից մինչև 1921 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածը շատ ծանր էր Արցախի համար: Արցախահայության ազատագրական պայքարը գլխավորեց Թևան Ստեփանյանը: Խորհրդային պատմագրության կողմից այս շարժումը որակվել է որպես դաշնակցական–թևանիստական խռովություն:

1920 թ. աշնանը Դրոն Թևան Ստեփանյանին նշանակում է Լեռնային Ղարաբաղում Նժդեհի տեղակալ: 1920 թ. աշնանը Կապանում Թևան Ստեփանյանը հանդիպում է Գարեգին Նժդեհին: Սպարապետը ապստամբների

1 **Ռուբէն,** Գանձակ Ղարաբաղի վէճը, «Դրոշակ », 1926, հմ. 2, էջ 52:

առաջ խնդիր է դնում Լեռնային Ղարաբաղը միավորելու Զանգեզուրի և Հայաստանի հետ: Ապստամբությունը, բռնկվելով Դիզակում, շուտով ընդգրկում է ամբողջ Արցախը: Կարճ ժամանակաշրջանում ապստամբների թիվը հասնում է 1800–ի[1]: Մի քանի ամսվա ընթացքում ազատագրվում է ամբողջ Դիզակը, Վարանդան, Խաչենի զգալի մասը: «Հակառակորդը Լեռնային Ղարաբաղում գրավված գյուղերը միացնում է Արարատյան հանրապետությանը» – տագնապով գրել են բոլշևիկ գործիչները[2]:

1920–ական թվականներին Արցախում հակաադրբեջանական շարժումը ղեկավարելու նպատակով ստեղծվել է «Ղարաբաղը՝ Հայաստանին» միությունը[3]: Այն իր բջիջներն ուներ ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլ նաև Գանձակի հայկական շրջաններում: Միությունը հիմնականում կազմված էր դաշնակցականներից: 1927 թ. նոյեմբերին միությունը հազարավոր թռուցիկներ է ցրել «Ղարաբաղը՝ Հայաստանին» նշանաբանով: Այդ ամենին հետևել են բազմաթիվ ձերբակալություններ, որոնց թիվը անցնում էր 500–ից: «Հարյուրներով լցնում են երկաթուղին, – պատմում է ականատեսը, – և ճանապարհում դեպի Ռուսաստան: Իսկ սարերում և անտառներում էլ անհամար փախստականներ կան: Գիշերը հինգով–տասով անցնում են սահմանը: Մարդիկ են ուղարկված, որ նրանց էլ հավաքեն բերեն: Եթե Արաքսը չլինի, մի մարդ չի մնա, բոլորն էլ կանցնեն Պարսկաստան: Շատ խիստ բռնագրավումներ կան: Դրամի փոխարեն գրավում են տնային բոլոր տեսակի իրեղենները… Բաքվից գալիս է հայտնի Բագիրովը, – շարունակում է ականատեսը, – մի քանի հարյուր ռուսական զինվորներով և ճառախոսում է. – Պրոլետա՛ր ընկերներ, խորհրդային իշխանության անունից եմ խոսում ձեզ հետ: Նրանք, որ ձերբակալված կամ փախած են, մեր թշնամիներն են, դեռ շատերը կան, որ պիտի ձերբակալվեն: … Ամբողջ լեռնաստանի սարերը դարձել են փախստականների բնակավայրեր: Երբ մութը վրա է հասնում, կարծես թե աստղազարդ երկինք լինի սարերը՝ ամեն կողմերում լույսեր են երևում, և ամեն կողմից երբեմն–երբեմն համազարկերի ձայներ են լսվում»[4]:

Դաշնակցական գործիչները Շուշիի շրջանում պահեստ–արհեստանոց էին կազմակերպել: 1930 թ. Արտակարգ հանձնաժողովի կողմից ձերբակալվել են 17 զինագործ վարպետներ, առգրավվել 6 թնդանոթ, 30 գնդացիրներ և այլ տեսակի զենքեր ու զինամթերք: Ապստամբել էին Խծաբերդի բնակիչները: Ջորքերը փորձել են ճնշել այն, բայց սկզբում չի հաջողվել: Լեռնային Ղարաբաղում համաժողովրդական հուզումները ճնշելու համար Բաքվից մեծ քանակությամբ զորքեր են տեղափոխել[5]: 1931 թ. մարզկոմի ղեկավարությունը մեղադրվեց նացիոնալիզմի, նացիոնալ–ուկլոնիզմի, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու փորձերի և դաշնակցական գաղա-

1 «Նորք», 1990, հմ. 6, էջ 88:
2 ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, g. 8, գ.189, թ. 5, 6:
3 «Դրոշակ», 1926, թիվ 5, էջ 52:
4 **Սարուր,** Կացութիւնը Ադրբեջանի մէջ, «Դրոշակ», 1930, թիվ 4, էջ 119, 120:
5 Նույն տեղում, էջ 120:

փարների դեմ չպայքարելու մեջ[1]: Մարզային և շրջանային մի շարք գործիչների անհիմն բռնադատեցին:

Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմը բազմիցս քննարկել է Ղարաբաղյան շարժման հետ կապված հարցեր: Շատ կոմունիստներ են հանվել կուսակցության շարքերից, լուծարվել են առանձին շրջանային կազմակերպություններ: Ընդհանուր առմամբ՝ խորհրդային ժամանակաշրջանում հարյուրավոր մարդիկ՝ «թևանիստներ», «դաշնակներ» որակումներով, Ադրբեջանի իշխանությունների կողմից գնդակահարվել, հալածվել, աքսորվել կամ էլ մարզից արտաքսվել են:

Չնայած այդ ամենին՝ ՀՅ Դաշնակցության գաղափարները կենդանի մնացին արցախահայության մեջ՝ հիմք դնելով նոր խմորումների, որոնք պիտի 1980–ական թվականներին աննախադեպ թափ հաղորդեին ազգային–ազատագրական շարժմանը:

1987 թ. Ստեփանակերտում ստեղծվեց «Արցախական սոցիալիստական կուսակցություն»–ը՝ Հակոբ Խաչատրյանի գլխավորությամբ: Նորաստեղծ կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը լիովին համապատասխանում էին ՀՅԴ ծրագրին և կանոնադրությանը:

1988 թ. ազգային–ազատագրական պայքարը նոր թափ ստացավ: Ղարաբաղյան շարժումը ի սկզբանե հետապնդում էր սահմանադրական եղանակով պատմական արդարության, վտանգված ազգային արժանապատվության վերականգնման նպատակը: Ադրբեջանի ղեկավարությունը Կրեմլի աջակցությամբ հալածանքների, կտտանքների, ահաբեկչական գործողությունների, ահ ու սարսափի տարածման միջոցով փորձում էր հպատակեցնել և վերջնականապես հայաթափել երկրամասը: Դեռևս 1988 թ. փետրվարյան իրադարձությունների բովում ծնված ինքնապաշտպանության վերացական գաղափարը, որն այնժամ իրատեսական հնչեղություն չէր կարող ձեռք բերել, զարգացող իրադարձությունների ճնշմամբ աստիճանաբար դարձավ հրամայականի հասնող անհրաժեշտություն: Շարժման 9–րդ ամսում արդեն Ստեփանակերտում տարերայնորեն՝ թաղային սկզբունքով, ծնունդ առան առաջին ընդհատակյա ինքնապաշտպանական ջոկատները, գյուղական վայրերում՝ ըստ բնակության վայրի կամ աշխարհագրական հիմունքներով: Արցախցին այս անգամ էլ իր կողքին զգաց ՀՅ Դաշնակցության գործուն ներկայությունը և գոտեպնդվեց նրա ազատագրական պայքարի հարուստ փորձով: Փաստորեն՝ ՀՅ Դաշնակցությունը և արցախահայությունը ազատագրական պայքարի միաձուլող քուրայում իրար հանդիպեցին և դարձան մեկ ուժեղ բռունցք, որը ամբողջ թափով պիտի իջներ թշնամու գլխին:

Այս պայմաններում հայրենիքից դուրս գործող ՀՅԴ ղեկավարության համար անհրաժեշտություն դարձավ ճշտելու կուսակցության ռազմավարական հիմնախնդիրները: Այդ նպատակով 1988 թ. օգոստոսին հրավիրվեց ՀՅԴ 24–րդ ընդհանուր ժողովը, որտեղ որոշվեց. «Հայկական Արցախի և հայրենի հայության ազգային պահանջատիրության զարթոնքը, բնականաբար, վերջ կդնի նաև ՀՅԴ՝ վերջին տասնամյակներում բացառապես սփյուռքյան

1 Заря востока, 24 мая, 1931.

գործունեության՝ մեր կուսակցության համար վերարծարծելով «Դեպի Երկիր» երբեմնի կարգախոսը»[1]: Դաշնակցության համար Ղարաբաղյան շարժումը դարձավ Հայ Դատի համար պայքարի անբաժանելի մասնիկը: Փաստորեն՝ այդ գաղափարով ՀՅ Դաշնակցությունը մեկ միասնության մեջ դրեց Սփյուռք–Հայաստան–Արցախ հասկացությունները: «Դեպի Երկիր» կարգախոսը առաջին հերթին պայմանավորված էր հայության ֆիզիկական գոյության ապահովման և հայրենիքի անվտանգության ապահովման կենսական հրամայականով:

Հարկ է նկատել, որ 1988 թ. առաջին ամիսներին ՀՅԴ–ն Ղարաբաղյան շարժմանը իր մասնակցությունը սահմանափակեց Սփյուռքի մեջ ծավալած գործունեությամբ: Գործի դնելով իր քարոզչական ցանցը՝ ՀՅ Դաշնակցությունը խնդիր դրեց սփյուռքահայության ուշադրությունը կենտրոնացնելու հայրենիքում կատարվող գործընթացների վրա և երկրորդ՝ այլ ժողովուրդների ու պետությունների մոտ ղարաբաղյան պահանջատիրության նկատմամբ հայանպաստ մթնոլորտ ստեղծելու:

1988 թ. օգոստոսից սկսած՝ «Դեպի Երկիր» զորաշարժը դարձավ ՀՅԴ օրախնդիր գործելակերպը: «Երկիրը առաջին հերթին Ղարաբաղն էր,– իրավացիորեն գրում է «Ազդակը» և շարունակում,– «Դեպի Երկիր» որոշումը կուգար՝ առավելաբար Արցախի ազգային ազատագրական պայքարի հրամայականներէն մեկնած»[2]:

ՀՅԴ Բյուրոյի որոշմամբ՝ 1989–1990 թթ. Արցախ մեկնեցին առաջին գործիչները՝ Վարանդ Փափազյանը և Հրանտ Մարգարյանը: Դեպի Արցախ զենքի փոխադրման և ինքնապաշտպանության կազմակերպման գործը կանոնավոր հունի մեջ դրվեց: 1990 թ. սկսած՝ մայր Հայաստանից Արցախ ժամանեցին նաև դաշնակցական առաջին զինված ջոկատները: Քաջազուն այդ մահապարտներին ժողովուրդը մկրտել էր ֆիդայի անվամբ: Քաջածանոթ լինելով ֆիդայական շարժման օրհասական բնույթին՝ առաջին կամավորականները գերադասում էին, կրելով հայ ֆիդայու բոլոր հատկությունները, խուսափել այն վախճանից, որ ունեցան հայ մարտիկները Արևմտյան Հայաստանում: Թշնամուն հաղթելը համայն հայության արժանապատվության պահպանման հարցն էր:

Անջատ–անջատ կատարվող գործողությունները համակարգելու նպատակով 1990 թ. ստեղծվեց ինքնապաշտպանության ուժերի մարզային շտաբ: Այդ մարմնի յոթ անդամներից չորսը դաշնակցականներ էին:

Ինքնապաշտպանական ուժերը մարտական առաջին մկրտությունը ստացան Հյուսիսային Արցախում՝ Գետաշենում, Մարտունաշենում և շրջակա հայկական բնակավայրերում: 1991 թ. մայիսի 1–ին ՀՅԴ Բյուրոն և ՀՅԴ Հայաստանի ԿԿ–ն հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ հավաստելով, որ կուսակցությունը պատրաստ է իր բոլոր հնարավորությունները դնելու ՀՀ նախարարների խորհրդի տրամադրության տակ՝ Արցախի, մա-

1 «Երկիր Ավետյաց», «Սասուն» հայրենակցական միության տասնօրյա հանդես, 1988, օգոստոս, էջ 5:

2 «Ազդակ», 20 փետրվարի, 1998, էջ 10:

նավանդ՝ Գետաշենի և Շահումյանի հայության պաշտպանությունը պետականորեն ապահովելու համար[1]:

Ռազմական գործողությունների ծավալմանը և ջոկատների ստվարացմանը զուգընթաց՝ առաջ եկավ դրանց միաձուլման, վաշտերի ստեղծման անհրաժեշտությունը:

Այս գործում վճռորոշ դեր ունեցավ ՀՅԴ–ն: 1991 թ. վերջին և 1992 թ. սկզբներին Լեռնային Ղարաբաղի տարածքում կազմավորվեցին 10–ից ավելի վաշտեր ու դասակներ (չորսը գտնվում էր Ստեփանակերտում), որոնց մեջ ընդգրկվեցին շուրջ հազար մարտիկներ: Առաջին վաշտը կազմված էր դաշնակցականներից, որը գլխավորում էր արդեն առասպել դարձած Աշոտ Ղուլյանը՝ Բեկորը: Պատերազմի ողջ ընթացքում ռազմաճակատի ամենաթեժ տեղերում կռվում էր դաշնակցականներից կազմված Շուշիի առանձնակի գումարտակը, որին տեղացիները սիրով անվանում էին «դաշնակների բատալիոն»: Հետագայում էլ տասնյակ դաշնակցականներ դարձան դասակների, վաշտերի և գնդերի հրամանատարներ: Հարյուրավոր դաշնակցականներ արժանացան կառավարական բարձր պարգևների: Նրանց մի մասը նահատակվեց ազատագրական պայքարի տարիներին: Հայկական բանակի նորաստեղծ ստորաբաժանումները արագորեն ազատագրեցին ադրբեջանցիների համար ռազմական հենակետեր դարձած Տողը, Խոջալուն, Ջանհասանը, Ղայբալիշենը, Կրկժանը, Քյոսալարը, Մալիբեյլուն, Ղուշչիլարը և, վերջապես, Շուշին:

Ինքնապաշտպանության գործը կանոնավոր հունի մեջ դնելուն զուգընթաց՝ ՀՅԴ ղեկավարությունը քայլեր ձեռնարկեց նաև կազմակերպական տեսանկյունից Արցախում հիմնավորվելու համար: 1989 թ. Ստեփանակերտում, Հադրութում, Մարտունիում ձևավորվեցին առաջին խմբերը, որոնց հիմքերի վրա էլ 1989 թ. կազմակերպվեց ՀՅԴ Արցախի «Ապառաժ»–ի մարմինը: Նրա գոյության մասին պաշտոնապես հայտարարվեց 1990 թ. օգոստոսի 8–ին:

ՀՅԴ գործիչները տեղի հայրենասիրական ուժերի հետ միասին առաջին գործնական քայլերը ձեռնարկեցին պետականության վերականգնման ճանապարհին: 1991 թ. սեպտեմբերի 2–ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների՝ Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը, որտեղ ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակման մասին»[2]: Սահմանադրական ճանապարհով ԼՂՀ կայացման գործընթացում կարևոր հանգրվան հանդիսացավ 1991 թ. դեկտեմբերի 10–ին կազմակերպված հանրաքվեն: Հարցման ենթարկվածների 99,89 տոկոսը արտահայտվեց ԼՂՀ հռչակման օգտին[3]:

1 «Երկիր», 2 մայիսի, 1991:
2 «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991:
3 О некоторых политико–правовых аспектах проблемы Нагорного Карабаха, Ереван, 1991, с. 15, 16.

1991 թ. վերջին անցկացվեցին ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին ընտրությունները: Պատգամավորների համեմատական մեծամասնությունը դաշնակցականներ էին:

1992 թ. հունվարի 8–ին դաշնակցության անդամ 33–ամյա Արթուր Մկրտչյանը ընտրվեց ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ:

Այդ օրերին արդեն նշմարվում էր մեծամասշտաբ պատերազմի ուրվականը: Երկրի պաշտպանության կազմակերպման գործը հանրապետության ղեկավարության առաջին հիմնախնդիրը դարձավ: Գերագույն խորհրդի պաշտպանության և անվտանգության հանձնաժողովը գլխավորում էր դաշնակցական գործիչ Վ. Բալայանը:

Հետպատերազմյան շրջանում ՀՅԴ Արցախի կառույցը ծանրակշիռ ավանդ ունեցավ պետական շինարարության մարզում: Միայն երրորդ գումարման ԱԺ–ում ՀՅ Դաշնակցությունը, կազմելով խորհրդարանի պատգամավորների 29 տոկոսը, ներկայացրել է ԱԺ–ի կողմից նախաձեռնված օրենքների 40 տոկոսը:

Անուրանալի է ՀՅ Դաշնակցության դերակատարությունը Արցախի տնտեսության վերականգնման և զարգացման, սոցիալական դժվարությունների հաղթահարման, վերաբնակեցման կազմակերպման, ազգային մշակույթի վերելքի ապահովման ասպարեզներում:

1994 թ. մայիսյան զինադադարից հետո արցախահայությունը ձեռնամուխ եղավ հայրենի նորաստեղծ պետության ամրապնդմանն ու խաղաղ ստեղծագործ աշխատանքին: Ժամանակի թելադրանքից ելնելով՝ ՀՅԴ ղեկավարությունը այս անգամ էլ փորձեց Արցախում լուծել տարաբնույթ հարցեր: 1994 թ. ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխյանը հայտարարեց. «Մեր ազգային պայքարին ղարաբաղյան ոլորտը բոլորիս էլ ղարաբաղցի է դարձուցած»[1]:

Այս անգամ էլ անհրաժեշտ էր Սփյուռքի ներուժը նպատակաուղղել Արցախի տնտեսության վերականգնմանը: 1995 և 1996 թթ. ՀՅԴ նախաձեռնությամբ ԱՄՆ–ում կազմակերպվեցին առաջին հեռուստամարաթոնները: Մինչև օրս կրկնվող հեռուստամարաթոնների և այլազան միջոցառումների միջոցով կուսակցությանը հաջողվել է Արցախի օգտին հանգանակել մի քանի միլիոն դոլար[2]:

ՀՅԴ բոլոր կառույցների ջանադիր գործունեության շնորհիվ Արցախում կառուցվել, վերանորոգվել և գործում են երկու տասնյակից ավելի մանկապարտեզներ, դպրոցներ: Ձեռք են բերվել գույք, հանդերձանք: ՀՅԴ ֆինանսական աջակցությամբ վերաբացվել է Արցախի պատմաերկրագիտական թանգարանը, Արցախի պետական համալսարանում հիմնվել է հայագիտական կենտրոն: Ամեն տարի կազմակերպվում են երգի–պարի համույթների արտասահմանյան ուղևորություններ: Տասնյակ զոհված ազատամարտիկների ընտանիքների կարիքների հոգածությունը գտնվում է ՀՅԴ ուշադրության կենտրոնում: Անհատ դաշնակցականների կատարած ներդրումների

1 «Ազդակ», 20 փետրվարի, 1998, էջ 13:
2 Նույն տեղը, էջ 199:

շնորհիվ Ստեփանակերտում վերագործարկվել են մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, և կառուցվում են նորերը:

ՀՅԴ անմասն չմնաց նաև ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման խաղաղ բանակցային գործընթացից: Կազմակերպել են մի շարք գիտաժողովներ, պետական և ոչ կառավարական կառույցների մասնակցությամբ հավաքներ:

Վերոհիշյալ փաստերն ու մեկնաբանությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ.

1. Խորհրդային բռնատիրության պայմաններում ՀՅԴ–ն կարողացավ արցախահայության մեջ վառ պահել ազատության և ազգային պետականությունը վերակերտելու գաղափարը:

2. Արցախյան ազատագրական պայքարի առաջին տարիներին ՀՅԴ–ն դարձավ ընդհատակյա զինված պայքարը կազմակերպող առաջին կուսակցությունը:

3. ՀՅԴ–ն կանգնեց Արցախի պետականության վերակերտման առաջին շարքում:

4. Հետպատերազմյան շրջանում ՀՅԴ–ն իր արժանի լուման ներդրեց Արցախի տնտեսության վերականգնման և զարգացման, սոցիալական դժվարությունների հաղթահարման, վերաբնակեցման կազմակերպման, ազգային մշակույթի վերելքի ապահովման և ղարաբաղյան հիմնահարցը խաղաղ, բանակցային ճանապարհով լուծելու ասպարեզներում:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 120-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

ՀՅԴ Բյուրոյի անդամ, պատմական գիտությունների թեկնածու **Լևոն Մկրտչյան** 85

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԵՐ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական
գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս–քարտուղար **Վլադիմիր Բարխուդարյան** .. 87

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ
թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Մելքոնյան** 89

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Էդիկ Մինասյան** 92

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱՆՊԱՏԱԿԻ՝
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ – **Գևորգ Խուդինյան** 93

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՑԱՐԻԶՄԻ ՀԱԿԱՀԱՅ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ (1903–1907 թթ.) – **Արամ Նազարյան** 103

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ 1914 թ. (օգոստոս) – 1917 թ. (փետրվար) – **Ռուբեն Սահակյան** 114

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԱՄՓՈՓՈՒՄ – **Բաբկեն Հարությունյան** 144

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ – **Յուրա Հովսեփյան** 145

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ «ԴԵՊԻ ԵՐԿԻՐ» ԿԱՐԳԱԽՈՍԸ – **Էդիկ Մինասյան** 150

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ – **Նորա Արիսեան** 163

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՄՓՈՓՈՒՄ **– Լ. Մկրտչյան** 172

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Լևոն Մկրտչյան
ՀՅԴ Բյուրոյի անդամ,
պատմական գիտությունների թեկնածու

Շնորհակալություն եմ հայտնում գիտաժողովի բոլոր մասնակիցներին ու ներկաներին:

ՀՅԴ 120–ամյակին նվիրված այս գիտաժողովում կներկայացվեն հայ ժողովրդի կյանքում վճռորոշ նշանակություն ունեցած ժամանակահատվածներում կուսակցության գործունեության ու նրա պատմական դերի վերաբերյալ զեկուցումներ:

Փորձենք ներկայացնել մի քանի հարցադրումներ, որոնք պետք է միասնական լինեն մեզ համար առաջիկա մեկ–երկու տարիների ընթացքում: Սա վերաբերում է և՛ Առաջին համաշխարհային պատերազմի, և՛ կամավորական շարժման, և՛ երիտթուրքերի հետ հարաբերությունների հիմնախնդիրներին, և՛ հայոց պետականության ձևավորման ժամանակաշրջանին, և՛ հայ–ռուսական հարաբերություններին և այլն:

Եթե չկարողանանք ամենայն մանրամասնությամբ բացահայտել և վեր հանել նշված հիմնախնդիրները, ապա կստանանք լուրջ քարոզչական հարված մեր հարևանների կողմից:

Պատմական գիտությունների դոկտոր Գ. Խուդինյանը հանդես կգա հետևյալ զեկուցմամբ՝ «ՀՅ Դաշնակցության քաղաքական հիմնանպատակի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրի միջազգային իրավական լեգիտիմությունը»: Նա հիմնավորում է այն տեսակետը, որ հայ ազգային կուսակցությունների հանդես գալը պայմանավորված էր օբյեկտիվ պատճառներով, և երբեք չեն ստեղծվել դրսի օգնությամբ, որն իբր փորձանք դարձավ հայ և թուրք ժողովուրդների հարաբերություններում:

Այս տեսակետը իրենք՝ թուրքերն արդեն հստակեցնում են որոշակի ձևաչափի մեջ՝ միջազգային պատմական մտքի համար ընդունելի տրամագծով ներկայացնելու համար: Ուստի բացահայտումներն այս ուղղությամբ իսկապես կարևոր են. անհրաժեշտ է ներկայացնել մեր տեսակետները:

Ներկայացվելու են նաև այլ կարևոր պատմական շրջանների վերաբերյալ զեկուցումներ.

ա. 1903–1907 թթ. հայության պայքարը ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ: Դա մի կարևոր փուլ էր մեր ազատագրական պայքարում, որով անցավ հայ ժողովուրդը: Նա Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարից շարժվեց դեպի համահայկական ազատագրության և համահայկական պետականության վերականգնման գաղափարը:

բ. 1915–1916 թթ. Արևմտյան Հայաստանի վերաշինությունը, որը շատ կարևոր հիմնախնդիրներից է:

գ. Անկախության վերականգնումը 1918 թթ. և Հայ Յեղափոխական Դաշնակցությունը:

դ. Արցախյան ազատամարտում ՀՅԴ դերակատարությունը:

Ընդգրկումով ու բնույթով բացառիկ է ՀՅԴ գործունեությունը Սփյուռքում, որին նվիրվում է ամփոփ զեկուցում:

Մենք փորձելու ենք առաջիկայում մի կարևորագույն խնդրի վրա կենտրոնանալ և նախապատրաստել քաղաքական կարևոր նշանակություն ունեցող պատմահրավական ուսումնասիրություն՝ «Հայոց ցեղասպանության և պահանջատիրության իրավական–պատմական հենքի շուրջ» խորագրով:

Այնուհետև, որպես Հայ դատը հետապնդող քաղաքական ուժ, կփորձենք օժանդակել այն բոլոր ուսումնասիրություններին, որոնք կկատարեն մեր գիտական հաստատությունները՝ Հայոց ցեղասպանության 100–ամյակին ընդառաջ, որովհետև գիտենք, որ մեր հարևան Թուրքիան հսկայական միջոցներ է տրամադրել և լուրջ քաղաքական ծրագիր է նախապատրաստել՝ դիմագրավելու կամ աշխարհին ներկայացնելու համար թուրքական տեսակետը:

Այս առումով շատ կարևոր է, որպեսզի մեր ազգային–ազատագրական զինված պայքարի, հայոց պետականության համար մղված պայքարի կարևորագույն հարցադրումները մենք ինքներս կարողանանք բաց և անկեղծ քննարկել:

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԵՐ

Վլադիմիր Բարխուդարյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս–քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ասիայի և Եվրոպայի սահմանագլխին՝ Հայկական լեռնաշխարհում ձևավորված հայ ժողովրդին պատմական դժվարին ճակատագիր բաժին ընկավ: Աշխարհագրական դիրքի հետևանքով մշտապես կրեց հարևան աշխարհակալ պետությունների հակամարտությունների, նրանց արշավանքների կամ տիրապետության ծանրությունը: Եվ դա տեղի էր ունենում ոչ միայն անտիկ շրջանում և միջնադարում, այլ նաև պատմության նոր դարաշրջանում: Հայաստանի արևելյան հատվածի՝ Ռուսական պետության կազմի մեջ մտնելով՝ ժողովուրդը գոյատևման և առաջընթացի ավելի տևական պայմաններ ստացավ:

Երկրի մեծ մասը՝ Արևմտյան Հայաստանը, մնաց Թուրքիայի տիրապետության տակ, և շարունակվեցին ու ահագնացան հայ ժողովրդի ազգային և սոցիալական ճնշումները: 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմում Թուրքիայի պարտությունը և հայկական տարածքների ազատագրումը հայերի շրջանում մեծ հույսեր ծնեցին՝ Արևելյան Հայաստանի օրինակով Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու կամ իրավատնտեսական բարվոք վիճակ ունենալու առումով: Բեռլինի կոնգրեսում եվրոպական հզոր պետությունների ճնշման տակ հայության պահանջներն ու հույսերն ի չիք դարձան ընդհանուր հուսախաբության մթնոլորտում: Պարզորոշ դարձավ, որ խնդրագրերով առաջնորդվելը սխալ ուղի է. հաջողության կարելի է հասնել միայն պայքարի միջոցով, միմիայն սեփական ուժերի վրա հենվելով:

Անհրաժեշտ էր ունենալ մի ուժ, որ ժողովրդին համախմբեր, իր իրավունքների պաշտպանության համար պայքարի հաներ: Ահա պատմական անհրաժեշտությունը, ստեղծված իրավիճակը ծնունդ տվեց ազգային երեք կուսակցություններին:

Այդ կուսակցություններից հատկապես Դաշնակցությունն ընտրեց իր ժողովրդին թուրքական ծանր լծից ազատագրելու անհավասար պայքարի ծանր ու դժվարին ուղին: ՀՅԴ–ն ամբողջովին նվիրվեց մի գաղափարի՝ գիտակցելով, որ զոհողություններ, անձնազոհություն է պահանջում, և աներեր կատարեց իր առաքելությունը: Մինչխորհրդային ժամանակների երեք տասնամյակների կուսակցության գործունեությունը սեփական ժողովրդի ցավերն ու հոգսերը դարմանելու, նրա ազգային ոգին բարձր պահելու մաքառումների գործունեություն էր: Դաստիարակչական լավագույն օրինակ կարող է հանդիսանալ գիտելիքների մեծ պաշարով զինված, ազգային գաղափարին անաղարտ նվիրված այն ժամանակվա կուսակցության առաջնորդների գործունեությունը: Եթե եղել են առանձին սխալներ, ապա ոչ թե դավանած գաղափարներից շեղվելու, այլ ուղղակի ազգային ցավերը դարմանելու տարբերակներ ընտրելու որոնումների հետևանքով:

Փաստորեն՝ Դաշնակցությունը դարձավ հինգ հարյուր տարուց ավելի պետականությունից զրկված հայ ժողովրդի նոր պետության հիմնաքարը դնող հիմնական կարող ուժը:

Պատմագիտության մեջ Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարների թերացումների հարցում երբեմն գույները շատ են խտացվում: Դա ուսումնասիրողների կողմից ժամանակին ստեղծված դժվարին իրավիճակն իր ամբողջության մեջ լավ չպատկերացնելու հետևանք է: Ս. Վրացյանի խոսքերով ասած՝ Հայաստանը գտնվում էր թուրքական սալի և բոլշևիկյան մուրճի արանքում:

Պատերազմի հետևանքով կազմալուծված ու քայքայված տնտեսության պայմաններում Հայաստանի Հանրապետությունը կրում էր ցեղասպանության հետևանքով երկիրը լցված, համատարած հիվանդությունների ու սովի ճիրաններում գտնվող փախստականներին ու որբերին պատսպարելու ծանրությունը: Եվ այդ իրավիճակում մեծ ջանքերի գնով որոշ քայլեր էին կատարվում տնտեսությունը բարվոքելու, մշակութային ֆեռնարկումներ կատարելու, պետության կայացման ուղղությամբ: Հարյուր քսան տարվա հեռվից, երբ ուրվագծում ենք կուսակցության անցած ուղին, անհրաժեշտություն է զգացվում դրվատանքի խոսք ասել նաև խորհրդային իշխանության 70 տարիներին Դաշնակցության գնահատելի գործունեության մասին Սփյուռքում: Մյուս քաղաքական, հասարակական կազմակերպությունների շարքում Դաշնակցությունն առաջինն էր, և նրա ներդրումն առավել ծանրակշիռ է Սփյուռքում հայության ինքնությունը, հայ գիրն ու գրականությունը, հայկական ոգին պահպանելու, ի վերջո՝ այնտեղ հոգևոր Հայաստան ստեղծելու դժվարին գործում:

Հայաստանի անկախության՝ Երրորդ հանրապետության ժամանակ Հայ Յեղափոխական Դաշնակցության առաջատար դեմքերը ջանում են իրենց պայծառ նախորդների թողած ավանդները պահպանել: Հաջողություններ եմ մաղթում այդ դժվարին առաքելությունն իրականացնելու գործում:

Աշոտ Մելքոնյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պատմական այս փուլում, պիտի ասեմ, որ քաղաքական մշակույթի առումով մենք հպարտանալու տեղ ունենք:

Որքան էլ այսօրվա հեռավորությունից փորձենք քննական հայացք նետել մեր կուսակցությունների անցած ուղու վրա, որքան էլ փորձենք քննադատական խոսք հասցեագրել մեր ազգային կուսակցությունների գործունեության այս կամ այն դրվագին, փորձենք բացահայտել նրանց, այսպես կոչված, սխալներն ու թերությունները, այդուհանդերձ, խոսքը ազգային արժեքի մասին է, և մենք ուրախ ենք, որ նման հերթական մի միջոցառման շրջանակներում հնարավորություն ունենք խոսք ասելու Հայ Յեղափոխական Դաշնակցության անցած փառապանծ ուղու մասին:

Հետաքրքիրն այն է, որ այսօր էլ շարունակվում են զանազան քաղաքական ուժերի կողմից այս կամ այն ազգային արժեքի հասցեին հանիրավի քննադատությունները: Ես միշտ փորձել եմ բոլորի ուշադրությունը հրավիրել այն կարևոր հանգամանքի վրա, որ երբեք հաշվի չի առնվել իստորիզմը՝ պատմականության սկզբունքը: Այսինքն՝ նրանց կողմից երևույթների գնահատականը տրվել է այսօրվա հեռավորությունից՝ առանց նկատի ունենալու տվյալ ժամանակաշրջանը, առանց հաշվի առնելու, թե ինչպիսի աշխարհաքաղաքական դժվարին իրողության մեջ են հանդես եկել ազգային կուսակցությունները: Կարելի է ասել, որ նրանք հանդես են եկել «դատարկ հողի» վրա: 1870–1880–ական թթ. կուսակցությունների գաղափարական հենքը եղել են Ռաֆֆու և այլոց հայացքները:

Ազգային կուսակցություններն այն աստիճան են կայացած եղել, որ դիմացել են հետագա դաժան փորձություններին և այսօր՝ ավելի քան 100 տարի հետո, նրանք շարունակում են գոյություն ունենալ և հանդիսանում են մեր ազգային արժեքները:

Մեր ազգային արժեքները ոչ միայն կուսակցություններն են, այլև համազգային խոշոր կառույցները, որոնք մեկ հարյուրամյակից ավելի գոյություն ունեն: Նրանք բոլորն էլ մեր ազգային հարստություններն են:

Կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել այսօրվա գիտաժողովի հայտագրի վրա: Այն վերնագրված է «Հայ Յեղափոխական Դաշնակցությունը անկախության համար մղված պայքարում»: Տեսե՛ք, շատերի մոտ կա այն թյուր կարծիքը, թե քանի որ մեր ազգային կուսակցությունների ծրագրերում XIX դարի վերջերին ուղղակիորեն ոչինչ չի ասվել անկախության մասին, և մշուշապատ են եղել անկախության վերաբերյալ (գուցե շատ դեպքերում դա վերագրում են Հնչակյան կուսակցությանը, քանի որ Հնչակյաններն էին, որ իրենց ծրագրում մշուշապատ կերպով խոսել են անկախության մասին) նրանց դրույթները, ուրեմն նրանք անկախության չեն ձգտել: Այստեղ ևս հանիրավի խոսք է ասվում՝

առանց հաշվի առնելու պատմականության սկզբունքը և XIX դարի վերջի հայ դաժան իրականությունը:

Օտար պայմաններում ինչպե՞ս կարող էին ազգային կուսակցություններն անմիջապես համարձակ քայլ անել և խոսել ազգային–պետական անկախության մասին: Բնականաբար դա հնարավոր չէր: Պետք էր անցնել որոշակի ուղի, ճանապարհ:

Ինչպես գիտենք, օրինակ՝ Հնչակյան կուսակցության պառակտման հիմնական պատճառը սոցիալիզմի և ազգային խնդրի փոխհարաբերության հարցն էր: Այս ամենը դրված էր մեր ազգային կուսակցությունների առջև, և պետք է ասեմ, որ, այո՛, XIX դարի 90–ական թվականների ազատագրական պայքարը պայքար չէր միայն օտարի լուծը տվյալ փուլում և հեռանկարում թոթափելու համար:

Ես առիթ եմ ունեցել ասելու, որ նույնիսկ բարեգործական, բարեսիրական և մշակութային ընկերությունները, որոնք հիմնադրվեցին XX դարի սկզբներին, ստեղծվեցին հեռանկարում պետական անկախության հասնելու համար:

Եվ միայն այսօր, երբ ժամանակի հեռավորությունից գնահատում ես դեպքերն ու իրադարձությունները, նոր ես զգում և հասկանում, թե ինչպիսի կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել մեկ դար առաջ:

Ամեն անգամ՝ յուրաքանչյուր կուսակցության, տվյալ դեպքում՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը վերլուծելիս, տեսնում ես, թե որքան ահռելի արխիվային նյութ է դուրս մնացել ուսումնասիրությունից: Օրերս լույս է տեսել «Նիւթեր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութեան համար» հերթական՝ յոթերորդ հատորը, որը հրատարակության է պատրաստել Երվանդ Փամբուկյանը, և շուտով Բեյրութում լինելու է գրքի շնորհանդեսը[1]:

Հետազոտողին և պարզապես ընթերցողին ապշեցնում ու զարմացնում են Ռայոնական կազմակերպությունների՝ կոմիտեների, Արևելյան և Արևմտյան բյուրոների, նրանց միջև կարծես եղած ներքին պայքարը, կուսակցության ապակենտրոն կառույցը, որի շնորհիվ հնարավոր եղավ դիմակայել ժամանակի փորձություններին: Ստենախոսությունները քննարկելիս մենք միշտ քննադատական խոսք ենք ասում, թե այս արխիվը չի օգտագործվել, որ նյութերի մի մասը դուրս է մնացել հետազոտությունից: Մենք ունեցել ենք քաղաքական մշակույթի նման հզոր շրջմարան, որի մասին տեղեկանում ենք ժամանակ առ ժամանակ նման միջոցառումների ժամանակ: Դա հնարավորություն է տալիս «ջրի երես» հանելու անհայտ դեպքերը և ներկայացնելու ինչպես գիտական, այնպես էլ, ընդհանրապես, մեր ողջ հանրությանը:

Մեզ՝ պատմաբաններիս համար սա շատ կարևոր իրադարձություն է: Կարևոր իրադարձություն է այն տեսանկյունից, որ մենք կրկին հնարավորություն ենք ունենում մեր ազգային արժեքները վերաիմաստավորելու: Այստեղ կարևորն այն է, որ հիմնախնդրին պետք է մոտենալ և գնահատել պատմականության սկզբունքից: Իմ դիտողությունը վերաբերում է Օսմանյան կայսրութ-

1 Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, Զ և է հատորներ, Պէյրութ, 2010: Շնորհանդեսը տեղի է ունեցել 2010 թ. դեկտեմբերի 6–ին, Բեյրութում:

յան պարածքում գոյություն ունեցող և գործող ազգային այլ կուսակցություններին: Նրանց ժողովուրդները չենթարկվեցին ցեղասպանության, և այդ կուսակցությունների հասցեին որևէ քննադատական խոսք չուղղվեց, որովհետև դեռ անհայտ էր, թե դրանից հետո ինչ է լինելու: Ուստի այսօրվա՝ XXI դարի հեռավորությունից խոսել 1907–1908 թթ. մասին և գնահատել 1915 թ., մեղմ ասած, ազնիվ չէ:

Այդ իսկ պատճառով շատ ուրախալի է, որ նման միջոցառումները միշտ իրականացվում են գիտնականների մասնակցությամբ, իսկ մենք էլ մեր հերթին փորձում ենք խնդրին մոտենալ պատմական անաչառության տեսանկյունից: Եվ շատ ուրախալի ու ողջունելի է այն հանգամանքը, որ կուսակցականների կողմից ըմբռնումով է ընդունվում այն, որ գիտնականը պետք է անաչառ ներկայացնի իրադարձությունները, թեև շատ դեպքերում դրանք կարող են կուսակցականների որոշ մասին դուր չգալ: Սակայն պատմականության սկզբունքը պահանջում է մշտապես հանդես գալ և առաջնորդվել պատմական անաչառության սկզբունքով:

Ես հաջողություն եմ մաղթում գիտաժողովին և ուրախ կլինեմ, որ հրատարակված տեսնեմ գիտաժողովի նյութերը:

Էդիկ Մինասյան
Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի դեկան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Իր գործունեության ընթացքում Հայ Յեղափոխական Դաշնակցությունն ունեցավ դրական ֆեոքքերումներ, ինչու չէ, նաև թերություններ: Կոնկրետ ասեմ, որ գործունեության պատմականությունը գնահատելու, այն արժևորելու իմաստով կուսակցության գործունեության ուսումնասիրությունը շատ կարևոր է, որպեսզի հնարավորություն ունենանք դասեր քաղել անցյալի պատմությունից:

Յանկանում եմ նշել, որ գիտաժողովի ընտրած թեմատիկան նույնպես նպաստում է այս կարևոր հանգամանքին, որովհետև, ինչպես պ. Լ. Մկրտչյանը նշեց իր ելույթում, տարբեր ժամանակաշրջաններ են ընդգրկված, և պատմականությունը տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների վերլուծությունն է, և նրանում Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը, կարծես ամբողջովին լուսաբանվում է:

Ասեմ, որ ՀՅԴ գործունեության ուսումնասիրությունն ընդհանրապես և նման գիտաժողովների կարևորությունը մասնավորապես անհրաժեշտ են նաև ուսանողության համար: Ես առանձնակի կարևորում եմ այս հանգամանքը: Մեր ֆակուլտետում ունենք կուսակցությունների պատմությանը նվիրված առանձին դասընթաց, և իհարկե, այստեղ քննարկվող նյութերն անպայման կօգտագործվեն (հույս ունենք, որ կհրատարակվեն) ուսանողների կողմից:

Շատ հետաքրքիր է, և դիտարկումների տեսակետից կարևոր նշանակություն ունի տարբեր ժամանակաշրջաններում կուսակցության գործունեության ամբողջական պատկերի վերհանումը, որ ներկայացված է գիտաժողովի թեմատիկայում:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ մաղթում եմ հաջող և արդյունավետ աշխատանք:

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

Գևորգ Խուդինյան
Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱՆՊԱՏԱԿԻ՝ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ

…ժամանակը պիտի բանայ զինուորեալ Զաւակներուդ համար իր փառքի մատեանը լուսաէջ,
Ու իր պատուանդանին վրայ պիտի քանդակէ այդ օրը, որպէս ճիգը անհուանօրէն գերմարդկային,
Դարերը որպէս գահ պիտի մատուցանէ յամառօրէն ճակատող Հայրենանուէրներուդ ստուերներուն
Եւ իր թաւալումը, Հա՛յր, ցեղեր պիտի դաստիարակէ քու Կամքի պատմութեամբ:

Արամ Չարըգ (Վտարանդի)

Հայ ազգային–ազատագրական շարժման ծավալման որոշակի հանգրվանում ձևակերպված ՀՅԴ քաղաքական հիմնանպատակը՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը, հիմնվում է անխոցելի իրավաքաղաքական փաստարկների վրա, որոնց ժխտելու բոլոր փորձերը հակասության մեջ են ոչ միայն պատմական փաստերի, այլև միջազգային իրավունքի նորմերի հետ:

Հայտնի է, որ ընդհուպ մինչև Հայկական հարցի՝ միջազգային դիվանագիտության խնդիրների շարքն անցնելը, այսինքն՝ 1878 թվականը, Օսմանյան կայսրության կազմում Արևմտյան Հայաստանի, տվյալ դարաշրջանում ընդունված բնորոշմամբ՝ **Հայաստանի** գոյությունը չէր հերքվում ոչ միայն եվրոպական հանրային կարծիքի ու մեծ տերությունների, այլև թուրքական իշխանությունների կողմից: Վերջիններիս հրատարակած քարտեզներում, ինչպես նաև՝ գրագրության մեջ բազմիցս օգտագործված **«էրմենիստան»,** այսինքն՝ «Հայաստան» հասկացությամբ բնորոշվում էր 16–րդ դարում օկուպացված երկրի **Հայոց հայրենիքը** լինելու անհերքելի իրողությունը:

Այն փաստը, որ Հայաստանում կամ հայաբնակ վայրերում բարենորոգումների ու ռեֆորմների իրականացման խնդիրը 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրից՝ Օսմանյան կայսրության ու ցարական Ռուսաստանի երկկողմ, իսկ Բեռլինի կոնգրեսից՝ համաեվրոպական պարտավորությունների բազմակողմ համակարգի մեջ ներառվելով՝ բարձրացվել էր միջազգային մակարդակի, վկայում էր, որ 1878 թվականից սկիզբ է առել Հայաստանի՝ որպես պետության և հայության՝ որպես նրանում բնակվող ազգի ճանաչման գործընթացը՝ **Նոր ժամանակների** իրավաքաղաքական հասկացութ-

յունների համատեքստում: Բայց դա ոչ թե նոր կազմավորվող պետության և ազգի ճանաչում էր, այլ դեռևս քրիստոնեության ընդունման արշալույսին Հռոմի կայսր Կոստանդիանոս Մեծի ու Հայոց Տրդատ 3–րդ թագավորի դաշնադրությամբ ամրագրված՝ Արևելքի քրիստոնյաների պատվար–պետության **վերականգնման** սկիզբը:

Ավելին՝ սկսած 1878 թվականից՝ Հայկական հարցի լուծման առաջադրանքը ոչ միայն հայ ժողովրդի, այլև միջազգային հանրության օրինական պահանջն էր, իսկ նման իրողության անտեսումը՝ սուլթանական կառավարության ստանձնած միջազգային պարտավորությունների կոպիտ խախտումը:

Պարտավորությունների նմանատիպ համակարգի միջոցով Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների իրավունքների պաշտպանության սկզբունքը դեռևս 18–րդ դարի վերջերին և 19–րդ դարի առաջին կեսին տեղի ունեցած ռուս–թուրքական պատերազմների արդյունքում, ինչպես նաև Սրբազան դաշինքի՝ 1822 թ. Վերոնայի կոնգրեսում և Փարիզի՝ 1856 թ. պայմանագրում ամրագրվել էր ժամանակի միջազգային իրավունքի բաղկացուցիչը դարձած **Արևելյան հարցի** լեգիտիմության իրավական հիմնավորումների և նրա լուծման համար **հումանիտար ինտերվենցիայի** կիրառման գործնական քաղաքականության տեսքով:

Մասնավորապես՝ նման հիմնավորումներն ու քաղաքականությունը ժամանակին կիրառվել էին ոչ միայն Բալկաններում՝ Ռուսաստանի, այլև Օսմանյան կայսրության ասիական մասում՝ Ֆրանսիայի կողմից: Այսպես՝ 1860 թ. օգոստոսի 3–ի Փարիզի արձանագրության հիման վրա Լիբանանի քրիստոնյաներին օգնելու միջազգային հանրության պարտավորությունը բնորոշվում էր նույն՝ «հումանիտար» հասկացությամբ[1]: Ուստի, նախքան Հայկական հարցի միջազգայնացումը, միջազգային իրավունքը Արևելյան հարցի լուծման համատեքստում մշակել ու ամբողջացրել, իսկ հաճախ էլ սուլթանական կառավարությանն էր պարտադրել այն բոլոր հիմնական իրավաքաղաքական նորմերը, որոնք քիչ անց դրվեցին **Հայկական հարցի** լուծման քաղաքական ուղիների փնտրտուքի հիմքում:

Ավելին՝ այն անհերքելի փաստը, որ Հայկական հարցի՝ միջազգային դիվանագիտության խնդիրների շարքն անցնելուց հետո՝ 1870–ականների վերջերին–1880–ականների սկզբներին, Օսմանյան կայսրությունը հապշտապ կերպով փոխեց իր ռազմակալած (օկուպացրած) Արևմտյան Հայաստանին դարեր շարունակ տրվող «էրմենիստան», այսինքն՝ «Հայաստան» անվանումը և արգելեց անգամ նրա հիշատակումը տպագիր հրատարակություններում ու եկեղեցական արարողությունների մեջ[2], օրինական (լեգիտիմ) էր դարձնում ոչ միայն Հայկական հարցի լուծման խաղաղ–դիվանագիտական, այլև հեղափոխական–ապստամբական քայլերը: Քանզի «էր-

1 Ավելի մանրամասն տե՛ս Дадрян В. Н., История армянского геноцида. Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван, 2007, сс. 28–30.

2 Տե՛ս **Դանիելյան Էդուարդ L.,** Հայաստանն ու հայկական տեղանունները: Հայոց բնապատմական միջավայրի պաշտպանության գիտական առաջադրանքը, «Վէմ» համահայկական հանդես, 2009, թիվ 1:

մենիստանի» գոյության ժխտումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ նրա **տիտղոսակիր ազգի** գոյության բացասմանն ու ցեղասպանության իրականացմանն ուղղված քայլերի սկզբնավորում: Արդյունքում՝ Սան–Ստեֆանոյից ու Բեռլինից հետո Օսմանյան կայսրության ձեռնարկած հանցավոր գործողությունների մեջ առկա՝ **սրանից հետո, ուրեմն՝ սրա պատճառով** (post hoc–ergo propter hoc) իրավաքաղաքական դետերմինիզմը հակասության մեջ էր մտել այդ երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների հետ, որոնք իրավական առումով ավելի բարձր էին, քան նրա տիրակալի ու պաշտոնյաների կամքը:

Այդ պատճառով հայ ազգային–ազատագրական պայքարը, 1878 թվականից հետո արտաքուստ շարունակելով մնալ 19–րդ դարի հեղափոխական շարժումներին բնորոշ՝ «Ես ապստամբվում եմ, ուրեմն՝ ես կամ» հեղափոխական փաստարկի շրջագծում, իրականում վերածվում էր սեփական գոյությունը ժխտելու փաստին ցուցաբերվող **դիմադրական շարժման՝** զուգորդելով և՛ **ազատամարտի**, և՛ **գոյամարտի** բնորոշ գծերը:

Հայտնի է, որ 1878 թ. Բեռլինի կոնգրեսին ողջ արևմտահայության հոգևոր ու քաղաքական առաջնորդ պատրիարք Ներսես Վարժապետյանի ներկայացրած պահանջները, որոնք տպագրվեցին առանձին գրքույկով **(«ՕՐԱԳԻՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ»)**[1], կոնկրետացնում էին միջազգային–իրավական առումով ճանաչված՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ու ռեֆորմների անհրաժեշտության իմաստն ու բովանդակությունը: Հատկանշական է, որ այդ պահանջներն ամփոփող նման համապարփակ փաստաթուղթը կազմվել էր՝ հիմք ընդունելով միջազգային պրակտիկայում առկա նախորդ՝ **լիբանանյան նախադեպը**, կամ Լիբանանի քրիստոնյաներին տրված **Օրգանական ստատուտը**, ինչը նշանակում էր, որ նախքան Հայկական հարցի միջազգայնացումը Արևելյան հարցը դադարել էր լինել միայն բալկանյան քրիստոնյա ժողովուրդների ազատագրության խնդիր: Այդ պատճառով **Հայկական հարցի լուծման համար գործադրվող քաղաքական ջանքերը վերածվում էին տվյալ դարաշրջանի միջազգային իրավունքի պաշտպանության փորձերի, իսկ նրանց անտեսումը աստիճանաբար դառնում էր ոչ միայն պետական, այլև միջազգային հանցագործություն**:

Արձանագրելով Հայկական հարցի՝ Արևելյան հարցի հետ ունեցած օրգանական կապն ապացուցող այս ելակետային պայմանները՝ ինչպես **ժամանակի, այնպես էլ հետագայի** գրեթե բոլոր ուսումնասիրողները անտեսել են այն իրողությունը, որ, ի տարբերություն 1880–ականների կեսերից ձևավորված հայ ազգային մյուս կուսակցությունների, 1890–ին հիմնված **ՀՅ Դաշնակցությունը** իր քաղաքական գործունեության սկիզբն ազդարարեց Բեռլինի կոնգրեսին արևմտահայության հոգևոր ու քաղաքական առաջնորդ պատրիարք Ներսես Վարժապետյանի ներկայացրած և քիչ անց առանձին գրքույկով տպագրված՝ «Օրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի» փաստաթղթի նոր հրապարակումով: Այն փաստը, որ

1 Տե՛ս Օրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի, Կ. Պոլիս, 1878:

1891 թ. մայիսին լույս տեսած ՀՅ Դաշնակցության պաշտոնաթերթ «Դրօշակի» հենց առաջին համարում տեղ է գտել տվյալ փաստաթղթի համառոտ տարբերակը՝ **«Ներսես պատրիարքի նախագիծը Տաճկա–Հայաստանի ինքնավարութեան»**[1] վերտառությամբ, ինքնին վկայում է, որ նորաստեղծ կուսակցությունն ի սկզբանե առաջադրում էր միջազգային առումով ճանաչված, լեգիտիմ նպատակներ: Սա ՀՅԴ քաղաքական պայքարի լեգիտիմության հաստատմանն ուղղված կուսակցության առաջին քայլն էր, որը հետագայում ամրագրվեց իրավական ու քաղաքական այլ փաստարկներով:

Հարց է առաջանում. 1890–ին միջազգային իրավունքի տեսանկյունից որքանո՞վ էր օրինական Կ. Պոլսի հայոց պատրիարքի միջոցով Բեռլինի կոնգրեսի համար ձևակերպված՝ ողջ արևմտահայության պահանջը: Պատասխանն ակնհայտ է. այն օրինական էր այնքանով, որքանով սուլթանական կառավարությունն ինքը 1890–ին նախորդած 12 տարիների ընթացքում հրաժարվել էր կատարել Բեռլինի կոնգրեսում իր իսկ ստանձնած չափավոր պարտավորությունները՝ անգամ 1880–ականների սկզբներին իրեն ներկայացված մեծ տերությունների **Համիմաստ** և այլ նոտաներից, այսինքն՝ նամակ–հիշեցումներից հետո: Այսպիսով՝ չնայած մեծ տերությունների պահանջներին՝ 1878–ին սկիզբ առած քաղաքական գործընթացը **վերադարձել էր** նախքան Բեռլինի կոնգրեսը եղած դրությանը: Այդ պատճառով միջազգային իրավունքը ոտնահարող կողմին իր պարտավորությունների կատարմանը մղելու առաջադրանքը, այսինքն՝ Հայկական հարցի լուծման **դրոշը,** Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից անցնում էր ոչ թե հերթական կուսակցությանը, այլ Հայկական հարցի լուծման համար պայքարող բոլոր ուժերին համախմբելու առաքելությունը ստանձնած ՀՅ Դաշնակցությանը, որը դեռևս մինչ այդ՝ 1890 թ. սեպտեմբերին հրապարակված իր **Մանիֆեստով** ազդարարել էր, որ ինքը «…ձգտելու է միացնել բոլոր ուժերը՝ կապելով իր հետ բոլոր կենտրոնները»[2]:

Հատկանշական է, որ նորաստեղծ կուսակցության կողմից որդեգրված և 1891 թ. մայիսին «Դրօշակի» առաջին համարում հրապարակված «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի» փաստաթղթի համառոտ տարբերակը՝ «Ներսես պատրիարքի նախագիծը Տաճկա–Հայաստանի ինքնավարութեան», հիմնված էր Արևմտյան Հայաստանի բավականին համեստ **աշխարհագրական սահմանների** վրա: Հետագայում միայն 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի և 1914 թ. ռուս–թուրքական համաձայնագրի միջոցով ընդլայնվելով՝ դրանք վերածվեցին 6 վիլայեթների պահանջի: Մինչդեռ 1891 թ. մայիսին հստակեցված՝ ՀՅԴ քաղաքական հիմնանպատակի նախնական աշխարհագրական սահմանները ավելի ուշ՝ 1920 թ. օգոստոսի 10–ին, գրեթե նույն համամասնություններով արձանագրվեցին Սևրի դաշնագրում: Քանզի «Ներսես պատրիարքի նախագիծը Տաճկա–Հայաստանի ինքնավարութեան» փաստաթղթով առանձնացված «մեր երկրի» տարածքները փաստորեն միայն Տրապիզոնի նահանգի մի մասով

1 Տե՛ս «Դրօշակ», Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան օրգան, թիվ 1, մայիս, 1891, էջ 4, 5:
2 Դիւան ՀՅ Դաշնակցութեան, հատ. 1, Պոսթըն, 1934, էջ 88:

էին տարբերվում Սևրի դաշնագրով ամրագրված սահմաններից: Դրանք էին՝ Էրզրումի, Բիթլիսի, Վանի վիլայեթները, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, այսինքն՝ Խարբերդի սանջակի արևելյան մասը, Արգանա (Արղանա) սանջակը և Սղերդի սանջակի հյուսիսային մասը, որոնք կազմում են **«Մեծ Հայաստանի տաճկական մասը»**[1] և նրան գումարած՝ Ռիզե նավահանգիստը՝ Տրապիզոնի ու Բաթումի միջև:

Այսպիսով՝ ՀՅԴ քաղաքական հիմնանպատակը ի սկզբանե հաստատվել էր Արևմտյան Հայաստանի հայության լեգիտիմ իրավունքների պաշտպանությանն ուղղված այն պարտավորությունների ու նորմերի շրջագծում, որոնք ճանաչվել էին հենց իր՝ սուլթանական կառավարության կողմից: 1890–ին փոխվում էր միայն խնդիրը լուծելու մեթոդաբանությունը, քանի որ մինչ այդ ինքը՝ օսմանյան Թուրքիան էր խախտել միջազգային իրավունքը՝ Հայկական հարցի ձևավորման փաստին պատասխանելով Հայաստանի գոյությունը ժխտելու և անգամ՝ «Հայաստան» բառը պարունակող հրատարակություններն արգելելու քայլերով: Դա է պատճառը, որ 1891 թ. սեպտեմբերին լույս տեսած «Դրօշակի» արդեն երկրորդ համարում «Խմբագրութեան կողմից» զետեղվել էր հետևյալ բացատրությունը. **«Դրօշակ»–ի անցեալ համարում մենք գրել էինք, որ մեր այժմեան պահանջները մօտաւորապէս նոյնն են, ինչ որ յայտնուած են Ներսէս Պատրիարքի ծրագրում: Որովհետև այդ բառերը տեղիք են տուել թիւրիմացութեան, մենք կարևոր ենք համարում յայտնել, որ մենք այդ գրելով աչքի առաջ ենք ունեցել այն դէպքը, եթէ Սուլթանը իւր բարի կամքով մտցնի Տաճկա–Հայաստանում Ներսէս պատրիարքի ծրագրում պահանջուած բարենորոգութիւնները, որ շատ անհաւանական է: Սուլթանը իւր վարմունքով օրէցօր աւելի է համոզում ամենքին, որ Տաճկական Հայաստանի համար ապստամբութիւնից դուրս փրկութիւն չկայ»**[2]:

Ուրեմն՝ հեղափոխական գործողությունների դիմելու խնդիրը ՀՅԴ–ի համար ամենևին էլ ինքնանպատակ չէր, այլ հանդիսանում էր հայ ժողովրդի օրինական պահանջների իրականացմանը հասնելու միջոցը: Դա հաստատվում է նաև «Դրօշակի» առաջին համարում մեջբերված՝ Ավստրո–Հունգարիայի արտգործնախարար Կալնոկիի թևավոր դարձած խոսքերով. **«Եւրոպան չկայ, ասաց նորերումս Կալնոկին, և մինչև հայկական հողը չշաղախուի արիւնով՝ թող գիտնան հայերը, որ ոչինչ չեն ստանալ»**[3]: Ակնհայտ է, որ **«Եւրոպան չկայ»** արտահայտությունը տվյալ համատեքստում ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ Հայկական հարցի լուծման ասպարեզում միայն դիվանագիտական մեթոդներով առաջնորդվելու գործելակերպի սնանկության արձանագրում, հենց իր՝ միջազգային դիվանագիտության կողմից, և միաժամանակ՝ հեղափոխական պայքարի դիմելու քարտ–բլանշ:

Սա էր ՀՅԴ հիմնադրման պահին միջազգային դիվանագիտությունից ստացված այն «քաղաքական ազդանշանը», որը հիմք էր տվել ՀՅԴ պաշ-

1 «Դրօշակ», թիվ 1, մայիս, 1891, էջ 4:
2 «Դրօշակ», թիվ 2, սեպտեմբեր, 1891, էջ 3:
3 «Դրօշակ», թիվ 1, մայիս, 1891, էջ 1:

տոնաթերթ «Դրօշակին» իր առաջին համարում չհամաձայնվել նրանց հետ, **«որոնք ուզում են միայն քաղաքագիտութեան (դիպլօմատիայի) միջոցով հասնել իրանց նպատակին, որովհետև բացառապէս դիպլօմատիան ոչինչ չի անիլ՝ դրդուած մարդասիրութիւնից»**[1]:

Այսինքն՝ հիմնվելով արևմտահայության իրավունքների միջազգային–իրավական լեգիտիմության վրա՝ ՀՅԴ հիմնադիրները, հեղափոխական պայքարին անցնելու հետ միասին, չէին հերքում նաև Արևելյան հարցի լուծման համատեքստում լայնորեն կիրառված՝ հումանիտար ինտերվենցիայի սկզբունքի արժեքն ու նշանակությունը: Ուրեմն՝ նրանք առաջնորդվում էին քաղաքական պայքարի իմաստի ու նշանակության ավելի լայն՝ համադրական ընկալմամբ, որի արտահայտությունն էր նաև 1892 թվականին ընդունված և 1894 թվականին հրապարակված ՀՅԴ ծրագիրը: Ծրագիրը հիմնավորում էր Արևմտյան Հայաստանի հանդեպ հայ ժողովրդի իրավունքների անժամանցելիության իրավաքաղաքական սկզբունքը՝ Հայոց պատմության **անընդհատության**, հայ ժողովրդի ու նրա հայրենիքի, այսինքն՝ «մեր երկրի» **անբաժանելիության**, այն ժամանակավորապես նվաճած «տաճիկների» տիրապետության շարունակման **անթույլատրելիության** գաղափարների միջոցով. **«Տաճիկները մեր երկրին տիրապետելուց յետոյ ամեն ջանք գործ են դրել մեր ժողովուրդը դարձնել մի կաստա, որի պարտականութիւնը լինի միմիայն աշխատել, արդիւնաբերել, ուրիշ ոչինչ: Հարկաւոր էր այդ ժողովրդին մշտական հպատակութեան տակ պահել և անարգել կերպով ծծել նրա արիւն–քրտինքով ձեռք բերած աշխատանքը: Հենց դրա համար անհրաժեշտ էր մեռցնել այդ տարրի պատերազմական ոգին՝ թողնելով նրան աշխատել եզան նման և այդ աշխատանքով կերակրել տիրապետող տարրը: Նրանք բնաջինջ արին մեր ազնուականութիւնը և իրենք բռնեցին նրա տեղը, նրանք խլեցին ժողովրդի ձեռքից սուր, հրացան, ամեն տեսակ պաշտպանութեան զէնքեր և թողին միայն մէկը՝ գութանը»**[2]: Նման հարցադրումը արձանագրում էր, որ հայ ժողովուրդը «մեր երկրի», այսինքն՝ Արևմտյան Հայաստանի տիտղոսակիր ազգն է, որը նախքան թուրքական բռնազավթումը ունեցել է պետական կեցությանը բնորոշ բոլոր ատրիբուտները, որոնց վերացումը նվաճողների կողմից խախտել է իրերի բնական դրությունը և կասեցրել հարազատ երկրի առաջընթացը:

Անցյալի ու ներկայի հակադրության միջոցով ՀՅԴ 1892 թ. ծրագիրը եզրակացնում էր, որ նման իրավիճակը ոչ թե Արևմտյան Հայաստանի ու նրա ժողովրդի բնականոն զարգացման, այլ դրանից շեղվելու հետևանք է, որի արդյունքում ժամանակի ընթացքում առաջ են եկել **«մի կողմից՝ առանձնաշնորհեալ մուսուլման տարրը, միւս կողմից՝ բազմաթիւ քաղաքական իրաւունքներից զրկուած քրիստոնեայ ժողովուրդը»**[3]: Ու քանի որ **«Այդ անհաւասարութեան պաշտպանը, ոյժ տուողը ներկայումս**

1 Նույն տեղում:
2 Մեր ծրագիրը, «Դրօշակ», N 10, 1894, օգոստոս, էջ 2:
3 Նույն տեղում:

տաճիկ կառավարութիւնն է: Պէտք է ուրեմն դէն ձգել այդ կառավարութիւնը, պէտք է ձեռք բերել ազգերի և դաւանութիւնների հաւասարութիւնը օրէնքի առաջ»[1]:

Այսպիսով՝ ՀՅԴ ծրագիրը, առաջ քաշելով Արևմտյան Հայաստանի թուրքական նվաճման ծնունդը հանդիսացող բռնատիրական կառավարության տապալման խնդիրը, այն դիտարկում էր իբրև երկրում գոյություն ունեցող քաղաքական ու տնտեսական անհավասարության հաղթահարման **համամարդկային առաջադրանքի** և ոչ թե դարերի ընթացքում ձևավորված տարբեր ազգերի զուգահեռ գոյակցության սկզբունքի հաղթահարման միջոց: Ընդհակառակը՝ ՀՅԴ–ն իր 1892 թ. ծրագրում առաջադրում էր վերջիններիս համատեղ գոյակցության համար անհրաժեշտ՝ ազգերի ու դավանանքների իրավահավասարության **եվրոպական սկզբունքը**:

Ուստի ՀՅԴ ծրագիրը սահմանում էր, որ կուսակցության նպատակն է կռվել նաև **«...այն ընդհանուր պայմանների դէմ, որոնցից նեղուած են միաժամանակ հայ և օտար տարրը՝ ասորիները, եզդիները, քրդերի մի մասը և խաղաղ տաճիկները և այլն»**[2]:

Այսպիսով՝ ՀՅԴ հիմնադիրները առաջադրում ու հիմնավորում էին ոչ թե այլ ազգերի ու ժողովուրդների դեմ պայքարի խնդիրը (ինչը երբեմն սխալմամբ, երբեմն միտումնավոր կերպով վերագրվել է նրանց), այլ հալածանքների, կրոնափոխության ու շահագործման պետական քաղաքականության գործիքի վերածված թուրքական խուժանի ու քրդական աշիրեթների ջարդարարական նկրտումների զսպման անհրաժեշտությունը:

Նման պետաքաղաքական իդեալը հստակորեն միմյանցից սահմանազատում էր Օսմանյան կայսրության տիրակալի և նրանում բնակվող ժողովուրդների իրավունքները, քանզի կայսրության այս կամ այն մասի հանդեպ առաջինի տիրապետության սահմանափակման միջազգային–քաղաքական առաջադրանքը (բարենորոգումներ, ինքնավարություն և այլն) ՀՅԴ–ն դիտարկում էր որպես նրանում բնակվող **բոլոր ժողովուրդների** իրավունքների ապահովման միջոց: Այդպիսով՝ Օսմանյան կայսրության միջազգային պարտավորության կատարման պահանջը զուգորդելով Ֆրանսիական մեծ հեղափոխության կողմից սրբագործված և 20–րդ դարի միջազգային իրավունքի անկյունաքարը դարձած՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների համամարդկային սկզբունքների հետ՝ ՀՅԴ–ն իր քաղաքական հիմնանպատակի **լեգիտիմությունը** փաստարկում էր միանգամից երկու իրավական հիմնավորումներով:

Արդյունքում՝ իր ձևավորման պահից ՀՅ Դաշնակցությունը կարողացավ Հայկական հարցը համադրել այն համամարդկային իդեալների հետ, որոնք դարձան 20–րդ դարի միջազգային իրավունքի անկյունաքարերը: Այս երկուսի հանրագումարն էր **«ազատ Հայաստանի»** դաշնակցական իդեալը: Նրա ազգային ու միաժամանակ համամարդկային էությունը կուսակցության հիմնադիրների կողմից բանաձևվել է ՀՅԴ պաշտոնաթերթ

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում, 1894, սեպտեմբեր, N 11, էջ 3:

«Դրօշակի» հենց առաջին համարում. **«Մեր կռիւը Տաճկաց կառավարութեան դէմ ոչ միայն ազգային կռիւ է, այլև եւրոպական քաղաքակրթութեան և մարդկային իրաւունքների կռիւ՝ յօգուտ ամբողջ մարդկութեան և կուլտուրայի»**[1]: Մեր օրերում ևս իրենց արդիականությունը պահպանող այս մի քանի տողերի մեջ խտացված է Հայոց պատմության՝ հազարամյակների փիլիսոփայությունը:

Ավելին՝ ընդհուպ մինչև Մեծ եղեռնը և Հայաստանի Հանրապետության ձևավորումը, «ազատ Հայաստանի» դաշնակցական իդեալը որպես քաղաքական առաջադրանք ո՛չ 1892 և ո՛չ էլ 1907 թվականների ծրագրերում երբեք չանցավ Արևմտյան Հայաստանի ինքնավարության ձեռքբերման չափավոր պահանջի սահմանագծից անդին: Անգամ Հայկական բարեռորոգումների խնդիրը հիմնավորելու համար Առաջին աշխարհամարտի նախօրեին մեծ տերություններին ՀՅԴ–ի կողմից ներկայացված նախագծում ՀՅԴ պաշտոնական պահանջները ինքնավարությունից այն կողմ չէին անցնում:

Իսկ Հայոց ցեղասպանությունից և Հայաստանի Առաջին Հանրապետության ձևավորումից հետո՝ 1919 թվականին, ՀՅԴ–ի կողմից առաջադրված **Միացյալ և Անկախ**, քիչ անց՝ **Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստան** քաղաքական պահանջի լեգիտիմությունը հաստատվեց անմիջապես 1920 թ. օգոստոսի 10–ի Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածներում, և իր գործադրման առաջին հանգրվանը տեղափոխվեց ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22–ի իրավարար վճռի միջոցով, որոնք իրենց իրավական ուժը պահպանել են ընդհուպ մինչև մեր օրերը:

Այսպիսով՝

ա) Արևմտյան Հայաստանի ազատագրության, հայ ժողովրդի ինքնորոշման ու Հայոց պետականության վերականգնման խնդրի՝ Հայկական հարցի միջազգայնացման գործի նախաձեռնողը 16–րդ դարում Օսմանյան կայսրության կողմից օկուպացված Արևմտյան Հայաստանի հայության օրինական ներկայացուցիչ՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն էր, որն իր կազմած «Ընդհանուր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի» փաստաթղթի հիմնավորումները կառուցել էր Հայկական հարցին անմիջականորեն նախորդած լիբանանյան նախադեպի վրա: Ուստի 120 տարի առաջ՝ 1890 թվականին հրապարակված իր Մանիֆեստում արձանագրելով, որ Հայկական հարցն առաջադրել է **«ինքը՝ ժողովուրդը»**[2], ՀՅ Դաշնակցությունը ստանձնել է այդ միջազգայնորեն ճանաչված, լեգիտիմ հիմնահարցի լուծման առաջադրանքը:

բ) 1878 թվականից սկսած՝ Օսմանյան կայսրության միջազգային պարտավորությունների համակարգի բաղկացուցիչը դարձած Հայկական հարցը տվյալ դարաշրջանի միջազգային իրավունքի անկապտելի մասն էր, որի անտեսումը և «Հայաստան» տեղանվան գործածության արգելումը

1 «Դրօշակ», N 1, 1891, էջ 4:
2 Դիւան ՀՅ Դաշնակցութեան, հ. 1, էջ 88, 89:

սուլթանական կառավարության կողմից ոչ միայն **պետական, այլև միջազգային հանցագործություն էր**:

գ) Հայկական հարցի լուծման համար ՀՅԴ քաղաքական պայքարը հիմնվում էր ինչպես միջազգային դաշնագրերով ամրագրված՝ բարեփոխումների պահանջի, այնպես էլ 20–րդ դարի միջազգային հարաբերությունների անկյունաքարը դարձած՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազգերի ու դավանանքների իրավահավասարության օրինական նպատակների վրա:

դ) Ի տարբերություն սուլթանական կառավարության գործը ժառանգած Թուրքիայի իթթիհաթական ու քեմալական ղեկավարների ցեղապաշտական նկրտումների՝ ՀՅԴ–ն ի սկզբանե ճանաչել է Արևմտյան Հայաստանում բնակվող այլ ժողովուրդների իրավունքները և պայքարել է ոչ թե նրանց ֆիզիկական բնաջնջման, այլ առավելագույնը պետականորեն հրահանգավորվող հալածանքների, կրոնափոխության ու շահագործման գործիքի վերածված թուրքական խուժանի ու քրդական աշիրեթների ջարդարարական նկրտումների զսպման համար:

ե) Ընդհուպ մինչև Մեծ եղեռնը և Հայաստանի Հանրապետության ձևավորումը «ազատ Հայաստանի» դաշնակցական իդեալի կոնկրետ–քաղաքական կերպավորումները ո՛չ 1892 և ո՛չ էլ 1907 թվականների ծրագրերում երբեք չեն հատել Արևմտյան Հայաստանի ինքնավարության ձեռքբերման չափավոր պահանջի սահմանագիծը, ուստի 1915–ին տեսականորեն անգամ չէին կարող դառնալ «փաստարկ» այսպես կոչված «վտանգված մեծամասնության» պաշտպանության կեղծ կարգախոսով հանդես եկող թուրք ցեղասպանների համար:

զ) ՀՅԴ մանիֆեստում, 1892 և 1907 թթ. ծրագրերում, Միացյալ և Անկախ Հայաստանի մասին 1919 թ. պետական ակտում ամրագրված ՀՅ Դաշնակցության քաղաքական հիմնանպատակը, դառնալով Սևրի դաշնագրի ու Վ. Վիլսոնի իրավարար վճռի հիմնաքարը, իր միջազգային–իրավական լեգիտիմությունը պահպանում է նաև մեր օրերում:

Եզրակացություն. թուրքական պատմագրության, արևմտյան որոշ հետազոտողների և խորհրդային բեռը դեռևս չհաղթահարած, իսկ վերջին շրջանում «ցեղային դիտանկյունով» առաջնորդվող առանձին հայ հեղինակների կողմից ՀՅԴ պատմությունը 19–րդ դարի միջազգային իրավունքի նորմերի և ազատության ու ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների **անհաշտ հակասության** (կոլիզիայի) համատեքստում դիտարկելու ձևով՝ հակադիր, բովանդակությամբ՝ նույնական փորձերը անտեսում են այն իրողությունը, որ **իր հիմնադրման պահից սկսած՝ ՀՅԴ–ն առաջադրել է լեգիտիմ քաղաքական նպատակներ**: Ավելին՝ նոր և նորագույն ժամանակներում հայ ժողովրդի ազգային ու համամարդկային նպատակները համադրած միակ կուսակցության՝ ՀՅ Դաշնակցության գաղափարախոսությունը մեթոդաբանական առումով հայ իրականության մեջ այսօր էլ չունի իր այլընտրանքը՝ ազատականության աշխարհաքաղաքացիական հովերին և կեղծ–ազգայնական–ցեղապաշ-

տական փորձարարություններին հանդիման, քանի որ այսօր էլ այն միակ գաղափարախոսությունն է, որ շարունակում է հիմնվել հայկական քաղաքակրթությանը բնորոշ՝ ազգային ձևի և համամարդկային բովանդակության ներդաշնակ համադրության վրա:

Արամ Նազարյան
Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՑԱՐԻԶՄԻ ՀԱԿԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ (1903–1907 թթ.)

Մինչև XX դ. սկիզբը Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեության հիմնանպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր, ուստի Արևելյան Հայաստանում, Ռուսական կայսրության մյուս վայրերում՝ Անդրկովկասի հայաբնակ շրջաններում, Պարսկաստանում և այլուր ձևավորված նրա կառույցներն իրենց ուժերն ու միջոցները կենտրոնացնում էին միայն պայքարի այդ ուղղությամբ: Սակայն ցարիզմի հայահալած, ռուսացման քաղաքականությունը, որ վերջինս վարում էր 1830–ական թվականներից ի վեր, վտանգում էր կովկասահայության գոյությունը հոգևոր–մշակութային ու նաև ֆիզիկական առումներով:

Հայ ազատամարտի մեջ ազգային կուսակցությունների զուգահեռ գործունեությունը աստիճանաբար փոխարինվեց նրանցից մեկի՝ Դաշնակցության առաջատար դերակատարության: Դաշնակցությունը վերածվեց ազգային–ազատագրական շարժումը ղեկավարող և համահայկական նպատակներ հետապնդող քաղաքական ուժի: Այդ գործընթացում շրջադարձային եղան 1903 – 1907 թվականները:

1903 թ. հունիսի 12–ի օրենքը և համաժողովրդական շարժումը

Ռուսական կայսրության կողմից հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող ազգային խտրականության և ճնշման քաղաքականությունը XX դ. սկզբին նոր թափով շարունակվեց: Հայկական եկեղեցական գույքի բռնագրավման ծրագիրը Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինը 1899 թ. ներկայացրել էր Ռուսաստանի կառավարության հաստատմանը, սակայն այն մերժվել էր: Այդուհանդերձ, կառավարչապետին ի վերջո հաջողվեց կյանքի կոչել իր հակահայ ծրագիրը: Նիկոլայ II–ը 1903 թ. հունիսի 12–ին հաստատում է Հայոց եկեղեցուն պատկանող գույքի բռնագրավման մասին օրենքը: Հայ առաքելական եկեղեցուն, ընդհանրապես հոգևոր հաստատություններին պատկանող ամբողջ անշարժ գույքը, ավանդները, ինչպես նաև օրենքի ընդունումից հետո նվիրատվությունների և կտակների ձևով եկեղեցուն տրվող գույքն ու կապիտալը եկեղեցու տնօրինությունից անցնում էին պետական համապատասխան նախարարությունների տնօրինությանը: Բացառություն էին կազմում միայն Մոսկվայի և Պետերբուրգի հայկական եկեղեցիները, որոնց վրա օրենքը չէր տարածվում:

Այսպիսով՝ ցարական օրենքը առաջին հերթին հարված հասցրեց հայ ազգային դպրոցին, քանի որ տարրական դպրոցները պահվում էին եկեղեցու եկամուտների հաշվին:

Հայ ժողովրդի տարբեր խավերը դժգոհությամբ ընդունեցին ցարիզմի որոշումը. սկսվեց համաժողովրդական բողոքի մեծ ալիք: Հայությանը կազմակերպելու և պայքարը ղեկավարելու գործը ստանձնեց Թիֆլիսում ստեղծված Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեն: Այս մարմնի ղեկավարը Ռոստոմն էր: Կոմիտեի նպատակն էր եռանդուն քարոզչություն ծավալելու միջոցով պարզաբանել ռուսական վարչակազմի հակահայ քաղաքականության էությունը և ժողովրդին դիմադրության կոչել ու կազմակերպել:

Սկզբնական շրջանում հոգևորականների մեծ մասն ընկճված և հուսահատ դրության մեջ էր: Ռոստոմը այցելեց Մայր Աթոռ և ոգևորեց միաբանության անդամներին, որոնք շուտով համախմբվեցին Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի շուրջը:

Ժողովրդական վրդովմունքն աստիճանաբար համատարած բնույթ ընդունեց: Ըմբոստության առաջին ազդանշանը տվեց Ալեքսանդրապոլը՝ 1903 թ. հուլիսի 29–ին: Ոգևորված ժողովրդի և Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեի աջակցությունից՝ Խրիմյան Հայրիկը իր կոնդակով հրամայեց էջմիածնի Սինոդին և թեմական առաջնորդներին՝ ոչ մի մասնակցություն չունենալ գույքերի առգրավման գործին[1]:

Ալեքսանդրապոլին հաջորդեց Երևանը: Այդ օրերին լարված կացություն էր ստեղծվել Արարատյան դաշտի համարյա բոլոր գյուղերում: Ընդվզեց նաև ջավախահայությունը: Օգոստոսի 31–ին Գանձակում տեղի ունեցավ առաջին զինված ընդհարումը, որի ընթացքում բնակչությունից եղան մոտ 80 սպանված և վիրավոր: Գանձակի դեպքերն արձագանք գտան երկրամասի բազմաթիվ վայրերում: Թիֆլիսում և Բաքվում նույնպես ընդհարումներ եղան բնակչության և ոստիկանության ու զորքի միջև[2]:

Ռուսական իշխանությունները շուտով դիմեցին բացահայտ բռնի գործողությունների: 1903 թ. սեպտեմբերի 23–ին Երևանի նահանգային իշխանությունը բռնագրավեց էջմիածնի վանքի գանձարանը. հափշտակվեց 14 հազար ռուբլի, կտակված արժեթղթեր, չնչին քանակի ռուսական ոսկի, հին ու հնագույն դրամներ և այլն: Էջմիածնի հսկայական հարստությունների մասին ռուսական ծայրահեղ հետադիմական սևահարյուրյակային մամուլի տարածած լուրերը, սակայն, չհաստատվեցին:

Հայության դիմակայությունը արտահայտվեց նաև ցարական հայատյաց պաշտոնյաների դեմ կազմակերպված ահաբեկչություններով: Արժանի պատիժներ ստացան Շուշիի ոստիկանապետ Սախարովը, էջմիածնի քաղաքապետ Շմերլինգը, Կարսի ոստիկանապետ Խերխեուլաձեն, Գանձակի փոխնահանգապետ Անդրեևը, Սուրմալուի գավառապետ Բոգուսլավսկին

1 Դիւան ՀՅ Դաշնակցութեան, հատ. 1, էջ 88, 89:

2 Տե՛ս **Վարանդյան Մ.,** ՀՅ Դաշնակցության պատմություն, Երևան, 1992, էջ 272 – 277:

և ուրիշներ[1]: Ահաբեկության ենթարկվեց նաև կառավարչապետ Գոլիցինը, սակայն ողջ մնաց:

Արևելահայության ըմբոստացումը եկեղեցական գույքի բռնագրավման կապակցությամբ չէր կարող անտարբեր թողնել արևմտահայությանը: Արևելահայերի պայքարը, միավորվելով արևմտահայերի և գաղթավայրերի հայության բողոքի շարժմանը, աստիճանաբար դարձավ ազգային–ազատագրական միասնական պայքարի արտահայտություն:

Ի վերջո, ցարական իշխանություններին հաջողվեց իրականացնել եկեղեցական գույքի բռնագրավումը, սակայն դա ժամանակավոր հաղթանակ էր: Հայության հակացարական այս պայքարը, ինչպես իրավամբ եզրակացնում է Հ. Տասնապետյանը, մեծապես նպաստեց կովկասահայ քաղքենի հատվածի վերահայացմանը և Դաշնակցության Անդրկովկասի մարմինների գործունեության աշխուժացմանը[2]:

Վերանայումներ. Կովկասյան նախագիծը

Ստեղծված կացությունը ՀՅԴ–ին ստիպում էր վերանայել իր մոտեցումները: 1904 թ. փետրվար–մարտ ամիսներին Սոֆիայում տեղի ունեցած երրորդ ընդհանուր ժողովն արձանագրեց, որ կուսակցությունը, «ընդունելով հանդերձ, թէ իր հիմնարկութեան նպատակը եղած է եւ այսօր ալ է Օսմանեան Հայաստանի պատմական դատը՝ ճանչցուած եւ վաւերացուած միջազգային դաշնագրերով, չի կրնար սակայն անտես ընել հայ ժողովրդի մարդկային իրաւունքներու բռնաբարումի ծանր դէպքերը, որոնք վերջերս տեղի ունեցած եւ սկսած են յաճախակի ըլլալ Թուրքիայէն դուրս եւս, սկզբունքով ընդունեց պաշտպանել այդ կարգի իրաւունքները՝ տակտիկի վերապահելով որոշել ինչ չափերով կատարել ինքնապաշտպանութեան այդ գործը»[3]:

Այսպիսով՝ Դաշնակցությունը հարկադրված էր ընդունելու կովկասահայությանը նետված մարտահրավերները և այնտեղ գործելու գրավոր ու բանավոր քարոզչության, ահաբեկչության, ցույցերի ու զինված դիմադրության կազմակերպման միջոցով, բայց «… մնալով պաշտպանողական հողի վրայ»[4]:

Միաժամանակ ՀՅԴ–ն սերտ կապեր հաստատեց և համագործակցության եզրեր գտավ Ռուսական կայսրության տարածքում գործող այլ ընդդիմադիր ու հեղափոխական կուսակցությունների հետ: Այդ նպատակով ՀՅԴ–ն մասնակցեց 1904 թ. վերջերին Փարիզում և 1905 թ. ապրիլին Ժնևում տեղի ունեցած միջկուսակցական երկու խորհրդաժողովների[5]:

---

1 Նույն տեղում, էջ 279–288:

2 **Տասնապետեան Հ.,** ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ Ընդհանուր ժողովը (1890–1924), Աթէնք, 1988, էջ 68:

3 Նույն տեղում, էջ 65:

4 Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ., էջ 119:

5 Տե՛ս նույն տեղում:

Երրորդ ընդհանուր ժողովի որոշմամբ ձևավորվեց ՀՅԴ խորհուրդը: Այն կազմված էր Արևմտյան ու Արևելյան բյուրոների և պատասխանատու կենտրոնական կոմիտեների ներկայացուցիչներից: Մեկ տարի անց հենց Խորհրդի որոշումների հիման վրա ծավալվեց Դաշնակցության հեղափոխական գործունեությունը նաև Արևելյան Հայաստանում և Կովկասում:

Բացառիկ իրավասություններ ու լիազորություններ ունեցող ՀՅԴ խորհուրդը, 1905 թ. փետրվարին և ապրիլին իր մի քանի նիստերում քննելով, այսպես կոչված «Կովկասյան նախագիծ»–ը, որոշեց. «Կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունէութեան, մշակել ծրագիր… ուղարկել դաշնակցական կովկասեան մարմիններին՝ ժամանակաւորապէս ղեկավարուելու այդ ծրագրով՝ թողնելով նրա վերջնական հաստատումը առաջիկայ ընդհանուր ժողովին»[1]:

Այս նախագծի մշակումը և գործադրումը կապված էին Ռուսական կայսրությունում սկսված հեղափոխության հետ: Կտրուկ փոխվել էր նաև ազգամիջյան հարաբերությունների իրավիճակը մեր տարածաշրջանում: Պատմական այս պայմաններում անհրաժեշտ էր գործել արագ, ուստի հնարավոր չէր սպասել ընդհանուր ժողովին: «Կովկասյան նախագծում» նշվում էր, որ կուսակցությունը «յեղափոխական կռւի միջոցով… ձգտում է դաշնակցական (ֆեդերատիվ) ռամկավարական մի կազմակերպութեան ամբողջ Անդրկովկասի համար՝ ամենալայն տեղական ինքնավարութեամբ»[2]: Միաժամանակ, ուշադրություն դարձնելով այսպես կոչված «տնտեսական անհավասարության» վրա, Դաշնակցությունը սահմանում է, որ ինքը՝ որպես կուսակցություն, պաշտպանում է աշխատավոր հանրության շահերը, դաստիարակում նրան սոցիալիստական իդեալներով և նախապատրաստում քաղաքական ու սոցիալական պայքարին: Ելնելով դրանից՝ նախագծում ձևակերպվեցին կուսակցության քաղաքական պահանջները՝ Անդրկովկասում դաշնային, ժողովրդավարական հանրապետության ձևավորում ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ընտրական իրավունքի և ազգերի ու կրոնական համայնքների իրավահավասարության հիման վրա: Անդրկովկասը մնալու էր ազատ Ռուսաստանի դաշնային միավորը, սակայն երկրամասը գավառների բաժանելիս պետք է հաշվի առնվեր դրանց ազգային կազմը՝ հնարավորին չափ միատարր համախմբումներ ունենալու համար:

Կարևոր տեղ էր տրված նաև տնտեսական պահանջներին՝ հողերի աստիճանական համայնացում, ուղղակի հարկերի վերացում և առաջադիմական տուրքի սահմանում եկամուտից ու ժառանգությունից, 8–ժամյա աշխատանքային օր և այլն:

1905–1907 թթ. ռուսաստանյան առաջին հեղափոխությունը Դաշնակցությանը առաջադրեց ինչպես ազգային–քաղաքական, այնպես էլ սոցիալ–տնտեսական խնդիրների ու պահանջների էական վերաթարմացման

1 Տե՛ս Վարանդյան Մ., նշված աշխատ., էջ 291, 292:
2 Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, էջ 230:

և արևելահայ իրականության մեջ պայքարի եղանակների ճշգրտման հիմնահարցը:

Արմատապես փոփոխված պայմաններում Դաշնակցությունն այլևս չէր կարող սոցիալիզմը համարել հեռավոր իդեալ և սոսկ գաղափարախոսություն, քանի որ Այսրկովկասում այդ ուսմունքը հետևողականորեն կյանքի կոչելու խնդիրը դրվել էր գործնական քաղաքականության հողի վրա: Սակայն արևմտահայերի ազատագրության հիմնահարցը և երկրամասում ազգամիջյան հակասությունների խորացումը հարկադրում էին ՀՅԴ–ին առավել չափավոր մոտեցում որդեգրել սոցիալ–դասակարգային շարժման հանդեպ: Նման մոտեցման պատճառները թաքնված էին 1905 թ. փետրվարից սկիզբ առած հայ–թաթարական կռիվների մեջ, որոնք կլանեցին կուսակցության հիմնական մարտական ներուժն ու նյութական միջոցները:

Հայ–թաթարական կռիվները

1905 թ. հունվարի 9–ին Ռուսական կայսրության մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում բանվորների խաղաղ ցույցի գնդակոծությամբ սկսվեց ռուսաստանյան ժողովրդավարական առաջին հեղափոխությունը: Բանվորների նկատմամբ տեղի ունեցած արյունալի սպանդն ալեկոծեց ամբողջ երկիրը: Ծայր առան զանգվածային շարժումներ, պայքարի մեջ ընդգրկվեց նաև Կովկասը:

Ռուսական միապետությունը չէր ցանկանում իր դիրքերը զիջել: Ծավալվող շարժումների առաջն առնելու համար կառավարական շրջաններում սկսեցին միջոցներ որոնել՝ հեղափոխական ուժերը մասնատելու նպատակով: Իշխանությունները չէին խորշում դիմելու այնպիսի ստոր միջոցի, ինչպիսին տարբեր ժողովուրդների միջև կրոնական և ազգային թշնամանք բորբոքելն էր: Այսրկովկասում այդ քաղաքականությունն ուղղվեց հայերի և տեղի թուրք – թաթարների (այսօրվա տերմինաբանությամբ՝ ադրբեջանցիներ) դեմ:

1905 թ. փետրվարի 6–ին տեղական իշխանությունների և հատկապես Բաքվի նահանգապետ Մ. Նակաշիձեի հրահրմամբ մի քանի օր շարունակ Բաքվում տեղի ունեցան հայ–թաթարական ընդհարումներ: Խաղաղ աշխատանքով զբաղված հայ բնակչությունը առաջին օրերին անակնկալի եկավ և բավականին զոհեր տվեց: Սակայն շուտով նշանավոր հայդուկապետ Նիկոլ Դումանի գլխավորությամբ նրանք կազմակերպվեցին և զգալի կորուստներ պատճառեցին թուրք խաժամուժին:

Բաքվի դեպքերը ազդանշան եղան երկրամասի մյուս վայրերի համար: Թուրք–թաթարների միջավայրում բռնկված հակահայկական մոլուցքի պայմաններում իրենց «առաջնորդների» հեղինակությունն անվերապահորեն ընդունող հետամնաց խավերը հեշտությամբ էին ենթարկվում հարևան հայերի վրա հարձակվելու կոչերին, մանավանդ որ նրանց հրապուրում էր հայերի ունեցվածքը թալանելու հնարավորությունը:

Փետրվարի 18–ին ընդհարումներ սկսվեցին Երևանում, որին անմիջապես արձագանքեց Նախիջևանը: Որոշ ընդհատումից հետո՝ մայիսի վերջերին և ապա՝ սեպտեմբերին, բախումները կրկնվեցին Երևանում[1]: Կատաղի ընդհարումներ եղան Գանձակի գավառում և ընդհանրապես այն վայրերում, ուր հայ և թաթարական բնակչությունը շերտընդմեջ էր բնակվում: Օգոստոսի կեսերին սկսված Շուշիի կոտորածին արձագանքեց Բաքուն, որտեղ ընդհարումներն ուղեկցվում էին հայերին պատկանող նավթահանքերի և նավթագործարանների հրդեհումով: Հոկտեմբերի 20–ին կրկին Բաքվում բարձրացավ և այնտեղից Վրաստան ու Հայաստան տարածվեց ջարդերի ու կոտորածների նոր ալիք: Նոյեմբերի 18–23–ին ընդհարումներ եղան Գանձակում, նոյեմբերի 22–ին՝ Թիֆլիսում, դեկտեմբերին՝ Հայաստանի գավառներում:

Հեղափոխության ծավալման և ուժգնացման պայմաններում Պետերբուրգի կառավարական վերնախավը այլևս նպատակահարմար չգտավ շարունակելու բացահայտ ռուսացման բյուրոկրատական միջոցառումները, որն իրականացնում էր Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինը: Այդ պատճառով նրա փոխարեն Կովկաս ուղարկվեց կոմս Ի. Վորոնցով–Դաշկովը՝ որպես վերականգնված Կովկասի փոխարքայության փոխարքա: Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը Թիֆլիսում հունիսի 26–ին հանդիպեց փոխարքային: Վերջինս խոստացավ արագացնել եկեղեցական գույքը վերադարձնելու և հայկական դպրոցները վերաբացելու հրովարտակի արձակումը: 1905 թ. օգոստոսի 1–ին Նիկոլայ II–ը, տեղի տալով փոխարքայի խորհուրդներին, ստորագրեց այդ հրովարտակը[2]:

Այսպիսով՝ հայության և նրա ղեկավար ուժերի պայքարը ազգային իրավունքների վերականգնման համար պսակվեց հաղթանակով: Սակայն դեռևս շարունակվում էր պայքարը կռվի մյուս տեղամասում:

Հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման գործը ազգամիջյան բախումների այդ ծանր ժամանակաշրջանում իր վրա վերցրեց ու պատվով կատարեց Հայ Յեղափոխական Դաշնակցությունը: Երկրամասի հայության ինքնապաշտպանության կազմակերպման կենտրոնական դեմքը Ռոստոմն էր: Արևելահայ և արևմտահայ ֆիդայիները մեկտեղվել էին այս անգամ Արևելյան Հայաստանում ու Այսրկովկասում, որպեսզի պաշտպանեն համազգային շահերը: Նշանավոր հայդուկներ Նիկոլ Դումանը, Վարդանը, Համազասպը, Քեռին (Արշակ Գաֆֆյան), Սաքոն, Դրոն, Խեչոն, Մուրադը, Սեպուհը, Առաքելը, Ավոն, Առյուծ Ավագը և ուրիշներ ղեկավարում էին ինքնապաշտպանական մարտերը: Բաքվում մղված հերոսական կռիվներից հետո Նիկոլ Դումանը ստանձնեց Երևանի նահանգի, Վարդանը՝ Ղարաբաղի, Արմեն Գարոն և Հարություն Կիրակոսյանը (Տուրբախ)՝ Թիֆլիսի հայության ինքնապաշտպանության ղեկավարումը:

Դաշնակցությունը մահվան դատավճիռ կայացրեց թաթարական ամբոխներին հրահրող պատասխանատուների, ինչպես նաև ռուսական բարձրաս-

1 Նախագիծ կովկասեան գործունեութեան, Ժնեւ, 1906, էջ 5:
2 Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1, Երևան, 2003, էջ 235–237:

տիճան պաշտոնյաների նկատմամբ, ովքեր հրահրում կամ խրախուսում էին մուսուլմանական հետամնաց ուժերին: 1905 թ. մայիսի 11–ին Բաքվում Դրոյի (Դրաստամատ Կանայան) կատարմամբ պատժվեց նահանգապետ Նակաշիձեն[1]: Դրան հետևեցին այլ պատժիչ գործողություններ:

Կարճ ժամանակամիջոցում թաթարները ծանր կորուստներ կրեցին, սակայն ՀՅԴ–ն դրանով չբավարարվեց: 1906 թ. փետրվարին Թիֆլիսում կայացած զինվորական խորհրդակցության ժամանակ որոշում կայացվեց նաև «… նախայարձակ լինել եւ ջնջել այն բոլոր որջերը, լինեն դրանք մեծ կամ փոքր, որոնք աւազակային կենտրոններ էին: Բացի այդ՝ անհրաժեշտ համարուեց վերացնել խոչընդոտ հանդիսացող այն թաթարական գիւղերը, որոնք խանգարում էին Գանձակից Շուշի, Շուշուց Գորիս եւ Նոր Բայազիտից Գորիս հաղորդակցութեան»[2]: Մի շարք նման ավազակային որջերի հիմնահատակ ավերումը թույլ տվեց բացել ճանապարհների այն հանգույցները, որոնց վրա հենվելով՝ հետագայում՝ 1918–1920 թթ., հնարավոր եղավ ձևավորել Հայաստանի առաջին հանրապետության հայկական դիմագիծը:

1906 թ. նույնպես շարունակվեցին արյունալի ընդհարումները՝ մինչև սեպտեմբեր ամիսը: Ցարական իշխանությունը, տեսնելով, որ երկրամասում դրությունն ապակայունացնելու անհրաժեշտություն այլևս չկա, դադարեցրեց ընդհարումները:

Այսպես՝ հայ–թաթարական կռիվներն ավարտվեցին Այսրկովկասի հայության հաղթանակով, խիստ բարձրացավ ՀՅԴ հեղինակությունը ոչ միայն համայն հայության, այլև օտարների աչքում: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեցավ այն մարտական փորձը, որ ձեռք բերեց արևելահայությունը 1905–1906 թթ.:

Ընդհարումներից հետո հայ հասարակական–քաղաքական շրջանակներում սկսվեց այն միտքն արծարծվել, որ անհրաժեշտ է երկրամասի հայկական բնակավայրերը միավորելով՝ տարածքային ինքնավարություն ստեղծել և Ռուսաստանի կազմում ունենալ Արևելյան Հայաստան: Մի նպատակ, որը մինչև 1905–1907 թթ. հայության կողմից անտեսվում էր:

Հայաստանաստեղծ այս մտայնության յուրատեսակ արտահայտություն դարձավ Ռուսաստանի հայության պատգամավորական կենտրոնական ժողովի գումարումը էջմիածնում: Այն բացվեց 1906 թ. օգոստոսի 17–ին՝ ընտրված 60 պատգամավորներից 46–ի մասնակցությամբ: Ժողովի նախագահ ընտրվեց Սիմոն Զավարյանը: Առաջին նիստում արծարծվեց հետևյալ հարցը. արդյո՞ք համահավաքը միայն կենտրոնական ժողով է, թե՞ սահմանադիր իրավունքներով օժտված համագումար, որը կոչված է արևելահայ իրականության հարցերը լուծելու: Այս վերջին տեսակետը պաշտպանում էր ներկաների մեծ մասը: Ռուսական իշխանությունը, որ աչալուրջ հետևում էր ժողովի ընթացքին, սկսեց անհանգստանալ և, հեղափոխական տրամադ-

1 Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան. հասարակական–քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 418, 419:

2 Տե՛ս Վարանդյան Մ., նշված աշխատ., էջ 305, 306:

րություններ նկատելով պատգամավորների ելույթներում, օգոստոսի 30–ին փակեց հայերի համահավաքը:

Պայքարի արդյունքների ընդհանրացումը

1905–1907 թվականները հեղափոխական կուսակցությունների, այդ թվում՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեության յուրատեսակ քննության ժամանակաշրջան դարձան:

Հայ ազգային–հեղափոխական կուսակցությունները նույնպես հանդես եկան Ռուսաստանի հասարակական կարգը արմատապես վերափոխելու պահանջներով: Դաշնակցությունը Ռուսաստանում գործող բոլոր ձախակողմյան կուսակցությունների հետ քաղաքական միաբանության կողմնակից էր, բայց առանձնապես սերտ էին հարաբերությունները սոցիալիստ–հեղափոխականների (էսէռներ) հետ: Էսէռական կուսակցության հայտնի գործիչ, Երևանում ծնված Վ. Լունկևիչը ընկերական ջերմ հարաբերությունների մեջ էր հայ ազգային–հեղափոխական կուսակցությունների գործիչների հետ: Նա Երկրորդ միջազգայնականի (ինտերնացիոնալ) ղեկավարների ուշադրությունը հրավիրեց Դաշնակցության ունեցած ոչ միայն ազատագրական ծրագրի և պայքարի, այլև սոցիալիստական գաղափարախոսության և պայքարի վրա: Պատահական չէ, որ 1907 թ. օգոստոսին տեղի ունեցած Երկրորդ ինտերնացիոնալի Շտուտգարդի վեհաժողովում Դաշնակցությունը, որպես լիիրավ անդամ, ընդունվեց սոցիալիստական միջազգային ընկերակցության շարքերը:

ՀՅԴ–ն, օգտվելով հեղափոխության նվաճումներից, որոշեց ծավալել նաև խորհրդարանական գործունեություն, որպեսզի առավել արդյունավորի իր հեղափոխական պայքարը ցարիզմի դեմ: 1907 թ. հունվարից Այսրկովկասում սկսվեց Ռուսաստանի Երկրորդ պետական դումայի ընտրարշավը: Ի տարբերություն Առաջին պետական դումայի՝ Դաշնակցությունը որոշեց երկրորդին մասնակցել՝ գտնելով, որ այնտեղ հայությանը վերաբերող կենսական հարցեր են արծարծվելու: Երևանի նահանգից Երկրորդ դումայի պատգամավորներ ընտրվեցին դաշնակցականներ Հ. Սաղաթելյանը և Ս. Տիգրանյանը, Գանձակի նահանգից՝ Ս. Տեր–Ավետիքյանը: Երկրորդ դուման բացվեց 1907 թ. փետրվարի 20–ին: Դումայի նիստերում, նրա առանձին հանձնաժողովներում տնտեսական, ազգային–մշակութային, ռազմադաշտային դատարանները վերացնելու, պարտադիր ուսուցում մտցնելու, բյուջեի, ագրարային և այլ հարցերի շուրջ ելույթներ ունեցան նաև դաշնակցական պատգամավորները:

Ռուսաստանյան առաջին հեղափոխության ժամանակ տեղի ունեցած քաղաքական արմատական փոփոխություններն ընդհանրացնելու, հայ ազգին առաջադրված նոր մարտահրավերներին դիմակայելու նպատակով հրավիրվեց չորրորդ Ընդհանուր ժողովը: Այն տեղի ունեցավ Վիեննայում 1907 թ. փետրվարի 22–ից մայիսի 4–ը: Ժողովի օրակարգի բազմաթիվ հարցերի շարքում առանձնահատուկ նշանակություն ունեին «Կովկասյան նա-

խագծի» բովանդակության և ընդունման կարգի քննությունը, սոցիալիզմի դաշնակցական ընկալման հստակեցումը, հետագա գործելակերպի, ծրագրի ու կանոնագրի մշակումը:

1905–1907 թթ. հեղափոխության ընթացքում ՀՅԴ ձեռք բերած ուժն ու հեղինակությունը և դրանով պայմանավորված՝ շարքերի աննախընթաց ընդլայնումը առաջ էին բերել նաև ներքին տարաձայնություններ: Դրանց հիմքում ընկած էր ՀՅԴ առաջին ծրագրով ամրագրված նպատակի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրի և «Կովկասյան նախագծով» որպես հեղափոխական գործունեության նպատակ հռչակված այսպես կոչված «ռուսահայ դատի» միջև արհեստականորեն ստեղծված հակասությունը:

«Կովկասյան նախագիծը», փաստորեն, ծրագրային փոփոխություններ պահանջող փաստաթուղթ էր և այդ պատճառով ենթակա էր հրավիրված ընդհանուր ժողովի վավերացմանը: Բնական է, որ այն բուռն քննարկումների տեղիք տվեց: Ի վերջո, այդ քննարկումների ընթացքում սկսեցին բյուրեղանալ տարբեր, հաճախ իրարամերժ տեսակետներ:

Ծայրահեղ ազգայնական–աջակողմյանները խմբապետ Միհրանի գլխավորությամբ կարծում էին, որ ՀՅԴ–ն եղել է ու պետք է մնա միայն ու միայն արևմտահայերի ազատագրության համար պայքարող կազմակերպություն, սկզբունքորեն մերժում էին սոցիալիստական աշխարհայեցողությունն ու քաղաքականությունը և պահանջում էին Այսրկովկասում դադարեցնել հեղափոխական պայքարն ընդդեմ ցարիզմի: Ժողովը քննեց խմբապետ Միհրանի և նրա գործակիցների հարցը և որոշեց նրանց ճանաչել արտաքսված ՀՅԴ շարքերից, ինչպես նաև «… կազմակերպական կանոններով նախատեսուած պատժին ենթարկել Միհրանին եւ իր գործակիցներին»[1]: Այսպիսով՝ միհրանական հերձվածին արժանի պատասխան տրվեց:

Քաղաքական–գաղափարական նշանավոր գործիչներ Ս. Զավարյանը, Ռոստոմը, Մ. Վարանդյանը, Խ. Մալումյանը, Ե. Թոփչյանը և ուրիշներ համոզված էին, որ մեկ կուսակցության պայքարի շրջանակներում պետք է միավորել և՛ արևմտահայերի, և՛ արևելահայերի ազատագրության գործը[2]: Երիտասարդների մի խումբ՝ Արշակ Զամալյան, Ա. Շահխաթունի և ուրիշներ, փորձում էին Արևելյան Հայաստանում և Կովկասում ձևավորել միայն սոցիալիստական քաղաքականություն վարող կուսակցություն: Նրանց մոտեցմամբ՝ առաջիկայում ՀՅԴ «գործունեութիւնը Կովկասում պէտք է լինի զուտ դասակարգային եւ յեղափոխական–սոցիալիստական…»[3]:

Ժողովի գլխավոր հարցերից էր նաև կուսակցության նոր ծրագրի ընդունումը, որը հեղափոխական և սոցիալիստական բնույթ ուներ:

Ծրագրի «Նվազագույն պահանջների» քաղաքական ենթաբաժինը սահմանում էր կուսակցության նպատակները: Մասնավորապես նշվում էր, որ ՀՅԴ–ն՝ «իբրեւ յեղափոխական եւ սօցիալիստական մի կուսակցութիւն, ձգտում է պաշտպանել հայ աշխատաւոր զանգուածների ընդհանուր շա-

1 Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, էջ 251:
2 Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Գ, Պէյրութ, 1976,, էջ 243:
3 Տե՛ս Տասնապետյան Հ., նշված աշխատ., էջ 87, 88:

հերը՝ թէ՛ տնտեսական–դասակարգային, թէ՛ մարդկային–քաղաքական եւ թէ՛ ազգային–կուլտուրական՝ նպատակ ունենալով ժողովրդի ձեռքը տալ կառավարութեան ղեկը եւ ներկայ միապետական ու կապիտալիստական կարգերը փոխարինել լայն ռամկավարութեամբ ու արդիւնաբերութեան միջոցների համայնացումով»[1]:

Ծրագիրը հիմնվում էր «երկու Հայաստանների» գաղափարի վրա՝ Արևմտյան Հայաստանը՝ Օսմանյան կայսրության սահմաններում և լայն ինքնավարությամբ, իսկ Անդրկովկասի ժողովրդավարական հանրապետությունը՝ Ռուսաստանի Դաշնային Հանրապետության կազմում՝ բաժանվելով առանձին կանտոնների, որոնց սահմանները որոշելիս «պիտի նկատի ունենալ ազգագրական–տեղագրական և կուլտուրական առանձնայատկութիւնները՝ ըստ կարելոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար»[2]: Դրանով իսկ քաղաքական հողի վրա առաջին անգամ հենց ՀՅԴ ծրագիրն էր նախանշում Այսրկովկասում առանձին հայկական տարածքի և դրա հիման վրա հետագայում նաև պետականության ձևավորման խնդիրը:

ՀՅԴ գերագույն մարմինը վճռականորեն մերժեց կուսակցությունը ըստ գործելաոդաշտերի և գործունեության առանձնահատկությունների տրոհելու փորձերը և որդեգրեց մեկ նպատակ՝ մեկ կազմակերպություն կամ, ինչպես հայտարարեց Խ. Մալումյանը, «մի՛ ծրագիր, յեղափոխական մի՛ բանակ…»[3] սկզբունքը:

ՀՅԴ նոր ծրագիրը հայ ժողովրդի ազգային ազատագրության խնդրի համադրումն էր ողջ մարդկության ազատագրության և առաջադիմության համար մղվող պայքարի նպատակներին: Դրա հետևանքով կուսակցությունն իր աշխարհայեցողության սոցիալիստական սկզբունքները տեղափոխում էր գործնական քաղաքականության ոլորտ այնքանով և այն չափով, որքանով որ անհրաժեշտ էր իր գործունեության որոշակի միջավայրի համար:

Այսպիսով՝ 1903–1907 թթ. ազգային, սոցիալ–քաղաքական գործընթացներին եռանդուն մասնակցությունը և պայքարի փորձը մեծապես հարստացրին Հայ Յեղափոխական Դաշնակցության ազգային և հեղափոխական էութունը նոր բովանդակությամբ ու հնարավորություններով: Դաշնակցությունը իր գործունեությամբ ապացուցեց, որ իրապես ազգային, հեղափոխական կուսակցություն է, ազգային և հեղափոխական արժեքների ու գաղափարների պաշտպանության համար մարտնչող կուսակցություն: Նշված ժամանակամիջոցում է, որ ՀՅԴ – ն համահայկական կազմակերպական իր կառույցի հիմքում անվերադարձ ամրագրեց նաև համահայկական բովանդակությունը՝ համազգային նպատակների ու շահերի գերակայությունը և դրանց իրականացման համար պայքարը: Այս շրջանում Դաշնակցությունը առաջին անգամ մասնակցեց նաև խորհրդարանական ընտրությունների, կարճատև խորհրդարանական գործունեություն ծավալեց, բայց այս ուղղությամբ իր հարուստ փորձառության սկիզբը դրեց: Հիշյալ ժամանակա-

1 Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Գ, էջ 180:
2 Ծրագիր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (վաւերացուած 1907 թ. ընդհանուր ժողովի կողմից), Թիֆլիս, 1917, էջ 21:
3 Նույն տեղում, էջ 23:

շրջանից է որդեգրվել նաև սոցիալիստական և ժողովրդավարական առաջադեմ գաղափարների համար պայքարն ու ստացել ծրագրային ամրագրում: Այս առումով միանգամայն օրինաչափ է ՀՅԴ – ի անդամակցությունը Սոցիալիստական միջազգայնական կառույցին, որ սկիզբ է առել տակավին 1907 թվականին:

Գործունեության նպատակների և առաջնահերթությունների առանձնահատուկ ընկալումն ու դրանց ճկուն համադրումը ապահովել և ապահովում են Հայ Յեղափոխական Դաշնակցության ներկայությունը հայության ազգային ու քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում թե՛ անցյալում և թե՛ ներկայում:

Ռուբեն Սահակյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ 1914 թ. (օգոստոս) – 1917 թ. (փետրվար)

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914–1918 թթ.) հայությունը ենթարկվում է ծանր փորձության: Օսմանյան Թուրքիայի երիտթուրքական կառավարությունն իրականացնում է հայության ցեղասպանությունը: Հայությունը պատերազմի տարիներին հարկադրված է լինում զգալի մարդկային և նյութական միջոցներ տրամադրելու ոչ միայն ռազմաճակատի, հայ կամավորական խմբերի զանազան կարիքները բավարարելու, այլև՝ ավերված հայկական բնակավայրերը վերականգնելու, Արևմտյան Հայաստան վերադարձող փախստականների կեցությունը, վերադարձը, պաշտպանությունն ապահովելու, թուրքերի և քրդերի մոտ բռնությամբ պահվող հայ կանանց և երեխաներին փրկելու համար: Նշված աշխատանքներում ներգրավվում են նաև ՀՅԴ անդամները:

1914–1917 թթ. ՀՅԴ–ն գործունեությունը կենտրոնացնում է հետևյալ գլխավոր ուղղություններով.

1. Կամավորական շարժում,
2. Հայկական հարց,
3. Հայ գաղթականության ընդունում և տեղավորում,
3. Արևմտյան Հայաստանի վերաշինություն, որի անքակտելի մասերից էր հայացումը:

Մեր պատմագրությունը հիմնականում լուսաբանել է ՀՅԴ գործունեությունը՝ կապված 1914–1916 թթ. հայ կամավորական շարժման, 1915 թ. ինքնապաշտպանական մարտերի և Հայկական հարցի հետ: Գրվել են զգալի թվով ուսումնասիրություններ, հուշեր, հոդվածներ և փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ: Կարելի է եզրակացնել, որ հետազոտողների ուշադրության կենտրոնում գլխավորապես գտնվել է ՀՅԴ «մարտական» պատմությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանում հայկական բարեգործական և հասարակական կազմակերպությունները, որոնցում իրենց ծավալուն աշխատանքներով աչքի են ընկնում Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (ԿՀԲԸ), Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան բաժանմունքը, Թիֆլիսի հայկական գյուղատնտեսական և տնայնագործական ընկերությունը, էջմիածնի եղբայրական օգնությունը և այլք, զգալի աշխատանքներ են կատարում Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաշինության և գաղթականնե-

ին իրենց հայրենի օջախները վերադարձնելու ուղղությամբ: Նշենք, որ ՀՅԴ անդամները ծառայության էին անցնում տարբեր հասարակական և բարեգործական կազմակերպություններում՝ աշխատելով Արևմտյան Հայաստանի զանազան բնակավայրերում: Իրենց աշխատանքային գործունեության ընթացքում նրանք հարկադրված էին հաղթահարելու բազմաթիվ արգելքներ և վտանգներ

Արևմտյան Հայաստանում տարբեր կազմակերպություններում գործող ՀՅԴ անդամները կազմակերպում են նաև քրդական գերության մեջ կամ պատանդի վիճակում գտնվող հայերի փրկության գործը: Այնտեղ, որտեղ հնարավոր էր, նրանք համաձայնության էին գալիս քուրդ ցեղապետերի հետ, որոնք կամավոր հանձնում էին հայերին, իսկ երբեմն էլ փրկագնում էին նրանց: Երբ բոլոր հնարավոր խաղաղ ուղիները սպառվում էին, նրանք կազմակերպում էին մարտական խմբեր, որոնք զենքի ուժով ազատում էին պատանդներին:

Կուսակցության անդամներն իրենց գործունեությունը սկսում են Ալաշկերտից և Բասենից: 1914 թ. հոկտեմբերի 23–ին, երբ ռուսական զորքը նահանջում է Քյոփրիքյոյից, սկսվում է Ալաշկերտի և Բասենի հայության գաղթը: Երկրորդ գաղթը տեղի է ունենում դեկտեմբերի 21–ին և ծանր հարված է հասցնում բնակչությանը[1]: Բացի ճանապարհին կրած զրկանքներից՝ նրանք ենթարկվում են քրդական հարձակումների: Առևանգվում են կանայք ու երեխաներ[2]: Ռուսական զորամասերի հետ նրանց պաշտպանությունն իրականացնում էր II դրուժինան[3]:

Սկսած 1914 թ. նոյեմբերի 22–ից մինչև 1915 թ. փետրվար ԿՀԲԸ–ին կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն օգնություն է տրամադրում փախստականներին[4]:

Ռուսական զորքերի կողմից Ալաշկերտը գրավելուց հետո այնտեղ են գալիս Սիրական Տիգրանյանի գլխավորությամբ մի խումբ երիտասարդ

---

1 Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Գ, էջ 186:

2 «Համբաւաբեր», Թիֆլիս, N 25, 19 յունիսի 1916, էջ 775: Դեռևս 1914 թ. դեկտեմբերի 14–ի գրությունում գեներալ Պ. Ի. Օգանովսկին տեղեկացնում է առանձին զորամասերի հրամանատարներ գեներալներ Դ. Կ. Աբացիևին, Ա. Մ. Նիկոլաևին, Դրյագինին և գնդապետ Պերեպելովսկուն, որ Գլխավոր հրամանատար գեներալ Ի. Ի. Վորոնցով–Դաշկովի հրամանով Պետական դումայի նախկին անդամ Սիրական Թադևոսի Տիգրանովը (Տիգրանյան) գործուղվել է Ալաշկերտ: Նրան և իր օգնականներին պետք է ցույց տրվի հնարավոր օգնություն, որպեսզի Ս. Տիգրանյանը կարողանա տեղերում լուծել հետևյալ հարցերը՝ 1. նշանակել գյուղերի ավագների (գյուղապետերի), որոնք պատասխանատու են լինելու իրենց գյուղերում կարգուկանոնի պահպանման համար, 2. ռուսական բանակի մերձակա թիկունքում քրդերի և հայերի զինաթափմանը, 3. հաշվառել թիկունքում առկա պարենի, վառելիքի և բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ առարկաների քանակը, 4. պայքարը պանիսլամիզմի և թուրքական գործակալների դեմ, 5. բերդան սիստեմի հրացաններով գյուղերի ավագների և վստահություն ներշնչող բնակիչների զինումը և այլն: Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 1267, ցուցակ 2, գործ 49, թ. 7 և շրջ.: ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 57, թ. 1 և շրջ.:

3 ՀԱԱ, ֆ. 57, ց.17, գ. 301, թ. 3:

4 Նույն տեղում, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 13:

գործիչներ: Ինչպես նշում է Կ. Սասունին, այդ փուլում դեռևս գաղթականներ չկային[1]:

Կ. Սասունու հաղորդման համաձայն՝ Ս. Տիգրանյանի գլխավորած խումբը «ե՛ւ օգնութեան մարմին էր, ե՛ւ կառավարչական դեր կը խաղար (անշուշտ քօղարկուած կերպով), ե՛ւ տեղաւորման ու հողային բաշխման գործերը կը կարգաւորէր»[2]:

1914 թ. նոյեմբերի 20–ին Ազգային Բյուրոն[3] Բասեն է ուղարկում վեց հոգուց բաղկացած նոր խումբ, որը կոչվեց «Բասենի քաղաքացիական մարմին»[4]: Նրա անդամներն էին Կորյուն Ղազազյանը, Մինաս Մակարյանը, Տիգրան Ավետիսյանը, Օատուրը (բժիշկ Բ. Բաղդասարյան), Վահան Խատուտյանը և Կ. Սասունին[5]: Նրանք գործում էին ԿՀԳԲ–ին կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի անունից: Ինչպես պարզվում է Կ. Սասունու հուշերից, դա արվել էր ռուսական իշխանություններից քողարկելու համար այն, որ իրենք գործելու են Ազգային բյուրոյի հրահանգներով:

Սակայն ռուս–թուրքական ռազմաճակատում ծավալված Սարիղամիշի գործողությունը հարկադրում է խմբին ժամանակավորապես դադարեցնելու աշխատանքները: Խումբն իր գործունեությունն Ալաշկերտի հովտում վերսկսում է միայն 1915 թ. մարտի 15–ից[6]:

Ըստ Կ. Սասունու՝ իրական իշխանությունը գտնվում էր վերը հիշատակած երկու խմբերի ձեռքում: Կազմակերպվել էր հավաքական մարմին, որը հայտնի էր մի քանի անուններով՝ Ինքնապաշտպանության մարմին, Գաղթականական լիազոր, Ազգային Բյուրոյի հանձնախումբ: Իսկ Բասենի և Ալաշկերտի բնակչությունը մարմինն անվանում էր շտաբ[7]: Կ. Սասունին նշում է, որ բնակչությունը, «շտաբ» բառն օգտագործելով, նրա անվան տակ ենթագիտակցորեն հասկանում էր հայկական իշխանություն իմաստը[8]: Բացի այդ՝ գործունեության ընթացքում հնարավորություն էր եղել տեղական զինվորական հրամանատարության հետ հաստատել բարեկամական հարաբերություններ[9]:

Ինչպես նշում է Կ. Սասունին, տեղի բնակչության ինքնապաշտպանության խնդիրն առաջնահերթ էր: Եթե 1914 թ. աշնանը հայ կամավորների ներկայությունը զգալիորեն նպաստում էր բնակչության անվտանգության ապահովությանը, ապա նրանց հեռանալուց հետո պետք էր շտապ կազմա-

1 Նույն տեղում, ֆ. 28, g. 1, գ. 132, թ. 39:

2 **Սասունի Կ.,** Պատմութիւն Տարոնի աշխարհի, Պէյրութ, 1957, նույնի՝ Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914–1918), Պէյրութ, 1966, էջ 44, 45:

3 Նույն տեղում, էջ 45:

4 1915 թ. մայիսի 17–ի Կ. Սասունու զեկուցագրից երևում է, որ նրանց խմբին ուղարկել է Հայկական կենտրոնական կոմիտեն: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 379, թ. 20: Գործելով ԿՀԲԸ–ն Հայկական կենտրոնական կոմիտեի անվան ներքո՝ նրանք քողարկում էին նաև իրենց գլխավոր խնդիրներից մեկը՝ հայացնել Ալաշկերտի շրջանը՝ օգտվելով այն հանգամանքից, որ քրդերն ու թուրքերը հեռացել են իրենց բնակավայրերից:

5 ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 379, թ. 20:

6 **Սասունի Կ.,** Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 45, 46:

7 ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 379, թ. 20:

8 **Սասունի Կ.,** Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 45, 46:

9 Նույն տեղում, էջ 46, 47:

կերպել պարեկապահակային խմբեր և բնակիչների ինքնապաշտպանության համար զենք հայթայթել: Դա հնարավոր էր կամ փոխարքայության կամ էլ տեղակայված կորպուսի հրամանատարի թույլտվությամբ: Սակայն Ալաշկերտում տեղակայված զորամասերի որոշ հրամանատարներ, մեղմ ասած, չէին ողջունում նման ցանկությունը:

Այնուամենայնիվ, ռուսական հրամանատարական կազմում կային ողջախոհ զինվորականներ, որոնք հասկանում էին, որ նման թույլտվություն տալով՝ իրենք որոշ չափով ապահովում են թիկունքը և պարտադրված չէին զգալի ուժեր թողնել՝ հաղորդակցության ուղիները և մատակարարումն ապահովելու համար: Նման զորահրամանատարներից էր գեներալ Ն. Ն. Բարաթովը: Նա արտոնեց հայերին կրել 400 բերդան հրացան: Զենքը տրամադրել էր Քեռին[1]:

Աշխարհազորային ջոկատը բաղկացած էր մոտ 300 հոգուց, որոնց հինգ ամիս շարունակ կազմակերպել և վարժեցրել էր Կ. Սասունու խումբը: Խմբերը բաժանված էին տասնյակների և հսկում էին կարևոր ճանապարհները[2]: Ինչպես նշում է Կ. Սասունին, «Այժմ մեր կարծիքը դրական է այդ վայրի զինուորական ընդունակութեան մասին, հակառակ անոր, որ սկզբնական շրջանին մենք յուսահատւում էինք[3]:»

Գեներալ Ն. Ն. Բարաթովին ուղղված դիմումում Բասենի քաղաքացիական մարմինը խնդրում է թույլատրել փախստականներին բնակվել թուրքերի և քրդերի կողմից լքված գյուղերում: Գեներալը տալիս է իր համաձայնությունը, սակայն արտոնում է բնակվել միայն լքված երեք գյուղերում: 1915 թ. մարտի 20–ից սկսվում է բնակեցումը[4]: Կացարանի կարիք ունեցողների թիվը խիստ մեծ էր. հնարավոր է լինում բնակեցնել միայն շատ քչերին՝ մինչև 1/3–ին[5]: Կ. Սասունին իր զեկուցագրում նշում է. «…մենք շարունակեցինք զետեղել հայ գաղթականներին շրջակայ միւս գիւղերում, թէև առանց իրաւունքի»[6]:

Ընդհանուր առմամբ բնակեցվում է տասնմեկ գյուղ[7]:

Կարծում ենք, որ Կ. Սասունին չափազանցնում է՝ նշելով, որ չեն ունեցել գեներալի թույլտվությունը: Իրականում գեներալ Ն. Ն. Բարաթովը պատկանում էր այն ռուս զորահրամանատարների թվին, որոնք գիտակցում էին ամուր և ապահով թիկունք ունենալու անհրաժեշտությունը, ուստի ուշադրություն չէր դարձնում հայերի կողմից «չթույլատրված» գյուղերի բնակեցման փաստերի վրա: Դրանով նա հնարավորություն էր ունենում նաև ապագայում ապահովելու ռուսական զորամասերը ցորենով, գարիով, ալյուրով, փոխադրամիջոցներով և անհրաժեշտ այլ պարագաներով:

1 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 20:
2 **Սասունի Կ.,** Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 62:
3 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 23:
4 Նույն տեղում, թ. 26:
5 Նույն տեղում, թ. 21: Ի. Ի. Վորոնցով–Դաշկովի հրամանի համաձայն՝ քրդերի կողմից լքված գյուղերը, գույքը և հողերը հանդիսանում են բանակի սեփականությունը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 135, թ. 1 շրջ.:
6 Նույն տեղում, թ. 21:
7 Նույն տեղում, թ. 22:

1915 թ. ապրիլի 2–ի հեռագրում Արշակ Թադևոսյանը Գյուղատնտեսական ընկերության նախագահ Ավետիք Սահակյանին հայտնում է, որ չորս գյուղերի բաժանվել է հարյուր գլուխ ընտանի կենդանի: Նման քանակությունը, սակայն, բավարար չէ: Առնվազն անհրաժեշտ է մինչև 600 գլուխ լծկան: Անընդհատ անձրևների պատճառով գյուղատնտեսական աշխատանքները հնարավոր չի լինում սկսել ժամանակին: Փախստականները գտնվում էին անմխիթար վիճակում: Սննդամթերքի սակավության պատճառով զարգանում են տարբեր հիվանդություններ: Անհրաժեշտ է շտապ ուղարկել բուժօգնություն[1]:

1915 թ. մայիսի 17–ի զեկուցագրում Կ. Սասունին հայտնում է, որ 4593 մարդ բնակեցվել է 13 գյուղում[2]:

Ինչպես նշում է Կ. Սասունին, գեներալ Ն. Ն. Բարաթովը նրանց տվել է համապատասխան փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս. «ա) ամէն կերպ օգնելու և վարելու (ընդգծումը փաստաթղթինն է – Ռ. Ս.) գաղթականներին, բ) Զինելու թէ՛ գաղթականներին և թէ՛ Ռուսական Բասէնի հայ ժողովրդին ինքնապաշտպանութեան համար»[3]:

Ռուսական բանակի մի շարք բարձրաստիճան սպաներ, որոնց թվում՝ Կովկասյան 2–րդ կոզակային դիվիզիայի հրամանատար գեներալ Դ. Կ. Աբացիևը, Գրոզնյան 262–րդ գնդի հրամանատար գնդապետ Սուլեյմանովը, բացահայտ հովանավորում էին թուրքերին և քրդերին[4]:

Հակահայ տրամադրություններ ունեցող որոշ սպաներ կեղծ տեղեկություններով փորձել են հայերին ամբաստանել հօգուտ Թուրքիայի կատարած լրտեսության մեջ[5]: Մուշեղ Թումանյանի (հայ նշանավոր գրող Հովհաննես Թումանյանի որդին) վկայությամբ՝ «էտպիսի կասկածների հիմքը հայատեաց օֆիցերները աշխատում են հաստատել ամէն մի պատահական դէպքով: Բարեբախտաբար էստեղ կան մի քանի հայ օֆիցերներ ևս, որոնք իրանց ազգասիրական տրամադրութեամբ մի противоядие (հակաթույն – Ռ. Ս.) են ստեղծում»[6]:

Նշված սպաների թվում Մ. Թումանյանը նկատի ուներ նաև Տիգրան Դևոյանին: Նա, 66–րդ հետևակային դիվիզիայի հրամանատար գեներալ Ն. Ն. Վորոպանովի և նրա շտաբի պետ գնդապետ Վլ. Վլ. Կոչերժևսկու օգնությամբ, կարողանում է հեռացնել Ալաշկերտից մահմեդականներին[7]:

Մայիսի 18–ին քրդերն անակնկալ հարձակվում են Խնուսի վրա: 30 հայեր, մարտի մեջ մտնելով, կարողանում են չեզոքացնել ռուսներին թիկունքից հարվածելու հակառակորդի հնարավորությունը: Հրամանատարությունը նրանց թույլ է տալիս զենք կրել և հաստատվել Մանազկերտում[8]:

---

1 «Գիւղատնտես», Թիֆլիս, N 2, 1 փետրուարի 1916, էջ 26:
2 ՀԱԱ, ֆ. 654, g. 4, գ. 16, թ. 152:
3 ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 379, թ. 22:
4 Նույն տեղում:
5 Դէոյեանց Տիգրան, Հետախոյզի մը յուշերը, «Վէմ», Փարիզ, 1938, թիւ 3, էջ 58:
6 ՀԱԱ, ֆ. 1457, g. 2, գ. 28, թ. 12: Դրա համար բավական էր եղել ռազմագերի թուրք սպայի «վկայությունը»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, g. 1, գ. 534, թ. 70:
7 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 654, g. 4,գ. 16, թ. 16:
8 ՀԱԱ, ֆ. 1457, g. 2, գ. 28, թ. 12, շրջ. 13: Դէոյեանց Տիգրան, Հետախոյզի մը յուշերը, «Վէմ», 1938, թիւ 3, էջ 62:

Ռուսական հրամանատարության աջակցության շնորհիվ Կ. Սասունին և նրա խումբը կարողանում են կազմակերպել ինքնապաշտպանական և պահակային ծառայություն կատարող խմբեր: Ձենքը բաժանվում է գյուղերի երիտասարդներին: Յուրաքանչյուր գյուղ ուներ տասը հոգուց բաղկացած զինված խումբ: Այդ կերպ Բասենում կազմակերպվում է 400 հոգուց կազմված աշխարհազորային (միլիցիոն) ստորաբաժանում[1]:

Ալաշկերտում գործող հայկական խմբերը ձեռնամուխ են լինում բնակավայրերում տեղական կառավարման մարմինների կազմակերպմանը: Գյուղերում ընտրվում են 3–7 հոգուց բաղկացած ինքնավարության մարմիններ, որոնք վարում էին տեղական գործերը, իսկ առավել լուրջ խնդիրներ առաջանալու դեպքում դիմում են Բասենի ազգային մարմնին[2]:

Բացի Հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեից՝ Ալաշկերտ–Ղարաքիլիսայի շրջանում գործում էին ԿՀԲԸ–ն, Հայկական կենտրոնական կոմիտեն, Էջմիածնի եղբայրական օգնության հանձնաժողովը: Նրանք բավական աշխատանքներ են կատարում փախստականների վերաբնակեցումը կազմակերպելու համար:

Բնակեցվում է 25 գյուղ, որոնց մեծ մասը գտնվում է ավերակ վիճակում: Այնուամենայնիվ, գյուղացիները ձեռնամուխ են եղել երկրագործական աշխատանքներին: Նրանք ցանել են մոտ 400 հազար փութ հացահատիկ: Հնարավոր էր ավելի շատ ցանել, եթե լիներ ավելի շատ սերմացու և գյուղատնտեսական գործիքներ: Դա թույլ կտար միայն 1916 թ. ամռանը հավաքել մի քանի միլիոն փութ հացահատիկ:

Գյուղացիները հնարավորություն են ունեցել վերադարձնելու քրդերի կողմից հափշտակված երկրագործական գործիքների, տնային իրերի մի մասը և նույնիսկ տներից մեկի տանիքը[3]:

Վան

Մայիսի 7–ին ռուսական հրամանատարությունը Վանի և ազատագրված շրջանների ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ) է նշանակում հայ ազգային – ազատագրական շարժման ականավոր գործիչ, Վանի ինքնապաշտպանության ղեկավար Արամ Մանուկյանին, որին Վ. Տերոյանը տվել է «Վանի հասարակական հսկան»[4] բնորոշումը: Արամի նշանակումը հաստատվում է IV բանակային կորպուսի, իսկ մայիսի 18–ին՝ Կովկասյան բանակի հրամանատարության կողմից[5]: Այս մասին Ա–Դոն գրում է. «Ռուս բանակի հրամանատարը գնահատեց հայ ժողովրդի մղած պայքարն ու տարած հաղթանակը և հրավիրեց Վասպուրականը կառավարելու համար

1 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 534, թ. 70:
2 **Սասունի Կ.,** Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 63:
3 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 25, 26:
4 ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 77:
5 Տերոյան Վարազդատ, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ (առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ռ. Օ. Սահակյան): Հրատարակության պատրաստեց Ն. Վ. Դերոյան, Ե., 2006, էջ 93:

Վանի կռիվները ղեկավարող Արամին՝ լիազորելով նրան կազմել հայկական ժամանակավոր կառավարություն»[1]:

Վասպուրականում հայկական իշխանության հիմնումը պատահական չէր: Դա արդյունք էր մի քանի սերունդների հետևողական գործունեության: Նրանք մի քանի դար շարունակ բնակչության մեջ կաթիլ–կաթիլ սերմանել են պետականության գաղափարը:

Արամի՝ նահանգապետի կամ ժամանակավոր կառավարչի պաշտոնում հաջող գործունեության հիմնական գրավականներից մեկը կրթված ներուժի առկայությունն էր, որի վրա հիմնվելով՝ նա հաջողությամբ կարողացավ կառավարել Վան քաղաքը և ազատագրված գավառներն ու գավառակները:

Մայիսի 8–ին կազմակերպվում են ազատագրված գավառների և Վան քաղաքի կառավարման մարմինները՝ նահանգային խորհուրդը և վարչությունը, կրթական և ոստիկանական տեսչությունները, քաղաքապետարանը, գավառային վարչությունը, դատարանը և այլն:

Իշխանության մարմիններում ընդգրկվում են բացառապես հայեր, Վանի մտավորականության լավագույն ներկայացուցիչները՝ անկախ կուսակցական պատկանելությունից և սոցիալական ծագումից: Նշված մարմիններում պաշտոնավարելու համար հրավիրվում են վարչական աշխատանքի փորձ և հմտություն ունեցող ռուսահպատակ հայեր:

Կ. Սասունու բնորոշմամբ՝ «Վանը լռելեայն բոլորի մտքի մէջ կը դառնայ հայոց առաջին մայրաքաղաքը, ուր կայ հայ իշխանութիւն, հայ բանակ, հայ վարչական կազմ: Յենարան անոր՝ յաղթական ժողովուրդ մը: ***Հայոց անկախութեան առաջին ճառագայթն է այս*** (ընդգծումը հեղինակինն է – Ռ. Ս.)[2]:

Վանում երկար տարիներ աշխատած ամերիկացի միսիոներ Ք. Աշըրը նշում է, որ օսմանյան տիրապետության 700 տարիների ընթացքում հայերն առաջին անգամ ինքնուրույն կառավարելու հնարավորություն են ստանում[3]:

1914 թ. աշնանը և 1915 թ. գարնանը թուրք և քուրդ հրոսակների կողմից ավերված, թալանված Վանը և ազատագրված գավառներն աստիճանաբար բնականոն հունի մեջ են մտնում: Արևելահայ զանազան հասարակական–բարեգործական կազմակերպություններ և Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ն սկսում են կազմակերպել անհրաժեշտ օգնության առաքումը Վան: Նահանգային խորհուրդը մշակում է զանազան ծրագրեր ոչ միայն նահանգի տնտեսությունը վերականգնելու, այլև զարգացնելու ուղղությամբ: Վանի նահանգը բաժանվում է 4 գավառների և 12 գավառակների[4]: Նշանակվում են գավառապետեր, սահմանվում է պաշտոնյաների թվաքանակը:

---

1 ՀԱԱ, ֆ. 242, g. 1, գ. 19, թ. 44:

2 Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն բաժնի պատմության ֆոնդ, Ա–Դոյի ֆոնդ, գ. 839/195 (դ), թ. 30:

3 **Սասունի Կ.,** Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914–1918). Թրքահայոց գաղթաշարժերը եւ անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Sevan printing house, Պէյրութ, 1966, էջ 77:

4 **Ussher C. D., Knapp G. H.,** An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War, New York, Boston, 1917, p. 288.

Ներքին կարգ ու կանոնը պահպանելու և գավառներ վերադարձող հայ և ասորի բնակչությանը քրդերից պաշտպանելու նպատակով կազմակերպվում է ոստիկանություն: Բնակչությանը տրվում են զենք կրելու արտոնագրեր՝ հայերեն և ռուսերեն լեզուներով[1]:

Իշխանության ղեկավար մարմիններում պակասում էին վարչական աշխատանքի փորձ և հմտություն ունեցող պաշտոնյաները: Այս հարցում աջակցելու նպատակով Վանի վարչակազմին օգնության են հասնում արևելահայերը: Նրանցից ոմանք ոչ միայն վարչական, այլև քաղաքական ու պետական աշխատանքի զգալի փորձ ունեին: Այսպես՝ Սիրական Տիգրանյանը (ՀՅԴ անդամ)՝ ռուսական Պետական դումայի նախկին անդամ, դեռևս 1915 թ. եղել է Կովկասյան 4–րդ բանակային կորպուսի կողմից գրավված տարածքներում հրամանատարի քաղաքացիական մասի լիազոր: Նա ստանձնում է փոխնահանգապետի պաշտոնը: Պարույր Լևոնյանը (ՀՅԴ անդամ), որը որպես իրավաբան աշխատել է Պետրոգրադի քաղաքապետարանում, նշանակվում է նահանգապետի օգնական:

Արարատյան գնդի կամավորներից նշանակվում են գավառների և գավառակների պետերի օգնականներ (տեղակալներ) և թարգմանիչներ: Նահանգապետարանի աշխատակիցների համար կազմակերպվում են ռուսաց լեզվի դասընթացներ:

ԿՀԲԸ–ն Վան է գործուղում լիազոր Աբովյանին, բժիշկներ Հ. Օհանջանյանին ու Քոչարյանին, նրանց հետ՝ երեք բուժակ և մեկ սանիտար[2]:

Նահանգապետության մարմիններում ընդգրկվում են հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչներ՝ անկախ սոցիալական ծագումից և կուսակցական պատկանելությունից: Ա. Մանուկյանի ապակուսակցական կադրային քաղաքականության մասին վկայում են հետևյալ փաստերը. այսպես՝ նահանգապետարանի դիվանապետ է նշանակվում Արտակ Դարբինյանը (նախկին արմենական)՝ սահմանադիր–ռամկավար կուսակցության անդամ: ՍԴՀԿ անդամ Հրանտ Գալիկյանին վստահվեց դատախազի պաշտոնը: Վանի ոստիկանապետ է նշանակվում ՀՅԴ անդամ Վահան Փափազյանը, իսկ նրա օգնականն (տեղակալ) էր սահմանադիր–ռամկավար (նախկին արմենական) Ղևոնդ Խանջյանը: Այգեստանի զինվորական մարմնի ղեկավար, իր քաջությամբ հայտնի սահմանադիր–ռամկավար Արմենակ Եկարյանին վստահվում է գավառային ոստիկանության «ղեկավար կազմակերպիչ–քննիչի» պաշտոնը[3]. սա նշանակում էր, որ նահանգային ոստիկանությունն անցնում էր Ա. Եկարյանի ենթակայության ներքո:

---

1 **Ա–Դո,** Մեծ դէպքերը Վասպուրականում, Ե., 1917, էջ 444–450: Տե՛ս նաև **Ասրյան Ա,** Արամ Մանուկյանի կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Ե., 2005, էջ 123, 124: Նույնի՝ Արամ Մանուկյանի տեղեկագիրը Վանի նահանգապետության կառավարության գործունեության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետ՝ ԲՀԱ), 2006, No 2, էջ 11–13: **Տերոյան Վ.,** Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյան, Ե., 2006, էջ 326–328:

2 **Սահակյան Ռ.,** Ոստիկանական ծառայության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում, «ԲՀԱ», 2003, No 2, էջ 158:

3 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 47:

Փաստորեն՝ Արամը կարողանում է կազմել ազգային համաձայնության իշխանություն՝ կառավարություն, որտեղ ընդգրկված էին գործող երեք կուսակցությունների՝ ՀՅԴ–ի, ՍԴՀԿ–ի և Սահմանադիր–ռամկավարների առավել աչքի ընկնող և հասարակության մեջ հեղինակություն վայելող անդամները:

Այգեստանի և Քաղաքամեջի պաշտոնյաների և ոստիկանների ընդհանուր թիվը կազմել է 152, իսկ գավառներինը (ոստիկանության հետ միասին)՝ 850 հոգի[1]:

Վարդանի գնահատմամբ՝ Արամը «Մեծ համակրանք էր վայելում ժողովրդյան կողմից և որպես հարգանքի նշան՝ նրան փաշա կոչումն էին տվել: Արամը մաքուր, գործունյա, դրական, կտրուկ մարդ էր»[2]: Ինչպես նշում է պատմաբան Ա. Ասրյանը, «Արամին բնորոշող, նրա մեծությունն ընդգծող և պայմանավորող գծերից էր նաև նրա համեստությունը, ազնվությունն ու անշահախնդրությունը»[3]:

Քայլ առ քայլ հայությունը աշխատում էր իրականացնել նահանգի վերաշինությունը, սակայն 1915 թ. հուլիսյան անսպասելի նահանջը հարկադրում է գաղթել:

Վանը վերագրավելուց հետո ռուսական իշխանություններն այլևս չեն թույլատրում այնտեղ հայերից կազմել իշխանության մարմիններ: Կովկասյան բանակի հրամանատարությունը Վանի նահանգապետ էր նշանակել գեներալ Վորոնովին, իսկ Վան քաղաքի օկրուգի պետ՝ փոխգնդապետ Ալֆրեդ Տերմենին: Ինչպես նշում է Վանում և Պարսկաստանում ԿՀԲ ընկերությանը կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գրիգոր Օհանջանյանը. «Հայը Վօրօնօվի[4] և Տէրմէնի օրով ամենասարսափելի տարրն էր: Տէրմէնի անզոր համակրանքը դեպի հայերը՝ աւելի բորբոքում էր Վօրօնօվի ատելութիւնը դեպի վասպուրականցին»[5]:

Այնուամենայնիվ, հայությունը շարունակում է վերականգնողական աշխատանքները՝ ուշադրություն չդարձնելով իշխանությունների, գլխավորապես նահանգապետ գեներալ Վորոնովի և քրդերի հետ բանակցություններ վարող Բորիս Շախովսկու արգելքներին և նույնիսկ բացահայտ թշնամա-

---

1 Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թվականի մայիսի 8–հուլիսի 17). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ռ. Օ. Սահակյանի), Ե., 2008, էջ 44:

2 Տերոյան Վարազդատ, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, Եր., Պատմության ինստիտուտ (առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյան). Հրատարակության պատրաստեց Ն. Վ. Դերոյան, 2006, էջ 326–328:

3 ՀԱԱ, ֆ. 402, g. 2, գ. 11, թ. 2 շրջ. 3:

4 Ասրյան Ա., Արամ Մանուկյանը Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր, էջ 73, տե՛ս Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչ (հոդվածների ժողովածու), Ե., 2010:

5 Գեներալ Իվան Հախվերդովը (Հախվերդյան) Վորոնովի մասին հետևյալն է հաղորդում. «Նրա անունը համարժեք էր վախկոտությանը: Վորոնովն իրեն խայտառակել էր 1904–1905 թթ. ռուս–ճապոնական պատերազմի ժամանակ: Պատերազմի մասնակիցների համոզմամբ՝ Պրիմորսկյան դրագունյան գունդը պետք է ղեկավարեր ոչ թե Վորոնովը, այլ նրա կինը: Վերջինս սանիտարական թռուցիկ ջոկատի պետ էր և իր ենթակաների հետ հաճախ գտնվում էր առաջավոր դիրքերում»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, g. 1, գ. 28, թ. 51 շրջ.:

կան վերաբերմունքին: Իր բարյացակամ վերաբերմունքով առանձնանում է Վանի օկրուգի պետ փոխգնդապետ Ա. Ի. Տերմենը: Նա աշխատում է իր հնարավորության սահմաններում բոլոր բարենպաստ պայմանները ստեղծել բնակչության համար:

1915 թ. աշնանը Ա. Ի. Տերմենի հրամանով Վանում կազմակերպվում են քաղաքապետարան, դատարան, ոստիկանություն և երկրապահ գունդ (միլիցիա), որը նախ գլխավորում է Ա. Եկարյանը, ապա՝ Ջիմ Չանկալյանը (վերակազմյալ հնչակյան): Գունդը բաղկացած էր 120 հոգուց, որոնցից 35–40 հոգին ամերիկահայեր էին[1]: Պողոս Նուբար փաշան միլիցիայի գործունեության համար տրամադրում է չորս հազար ռուբլի[2]:

Միլիցիային իրենց աջակցությունն են ցույց տալիս Գրիգոր Բուլղարացին և Լևոն Շաղոյանը: Նրանք տրամադրում են անհրաժեշտ թվով մարդկանց, որը հնարավորություն է տալիս կատարելու հետախուզություն Բիթլիսի ուղղությամբ[3]:

Ա. Ի. Տերմենին զայրացնում է Ա. Եկարյանի՝ առանց թույլտվության 1916 թ. մարտին Վանից հեռանալը և Վերաշինության հանձնաժողովում ծառայության անցնելը: Այդ դեպքից հետո Ա. Ի. Տերմենը միլիցիայի պետ է նշանակում Ջ. Չանկալյանին:

Անկախ ամեն պարագայից՝ Գրիգոր Բուլղարացին շարունակում է օժանդակություն ցույց տալ Ջ. Չանկալյանին: Միլիցիան զինվում է 200 բերդան և 123 քյուչուկ տեսակի հրացաններով: Վերջին զենքը տրվում է ռուսների կողմից:

1916 թ. հունվարին Ազգային բյուրոն Բուլղարացի Գրիգորի ղեկավարությամբ և Լևոն ու Տիգրան Բաղդասարյանների մասնակցությամբ 12 հոգուց բաղկացած հեծյալ խումբ է ուղարկում Վան: Նրանք հիմնականում մասնակցում են ռուսական զորքերի հետախուզական գործողություններին[4]:

Վան է ժամանում Գյուղատնտեսական ընկերության նախագահ Ավ. Սահակյանը՝ տեղում իրավիճակին ծանոթանալու և գյուղատնտեսական աշխատանքները կարգավորելու համար[5]:

1916 թ. մայիսի 31–ին ԿՀԲԸ–ի նախագահ Սամսոն Հարությունյանը Վահան Փափազյանին (Կոմս) նշանակում է ընկերության լիազոր՝ ղեկավարելու Վանում և Պարսկաստանում գտնվող փախստականներին օգնություն տրամադրելու գործը[6]:

---

1 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 3:

2 «Հորիզոն», Թիֆլիս, N 200, 7 սեպտեմբերի 1915: Բաղդասարեան Տ., Վանի երկրորդ կռիւները եւ վերջին իշխանութիւն, «Վէմ», 1938, թիւ 3, էջ 22:

3 ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 610, թ. 95, 107 շրջ.: Ինչպես նշում է Հ. Առաքելյանը կաթողիկոսին ուղղված 1915 թ. նոյեմբերի 8–ի նամակում, որ ընդհանուր առմամբ, միլիցիայի կարիքների համար ծախսվել է 16 հազար ռուբլի: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 610, թ. 95 շրջ.:

4 «Աշխատանք», N 44, Երևան, 1 հոկտեմբերի 1916:

5 Դէպքերը Վասպուրականում (Հմ. Մանուկեանի յիշատակարանը), «Վէմ», Փարիզ, թիւ 1, 1937, էջ 59: Տ. Բաղդասարյանը և ընկերները Վան էին եկել 1916 թ. փետրվարի 17–ին: Տե՛ս Բաղդասարեան Տ., Վանի երկրորդ կռիւները եւ վերջին իշխանութիւն, «Վէմ», 1938, թիւ 3, էջ 15:

6 «Համբաւաբեր», Թիֆլիս, N 24, 12 յունիսի 1916, էջ 751, 752:

Ինչպես իր հուշերում նշում է Վ. Փափազյանը. «Ամենեն սիրուած ժողովրդական դեմքը Կոստին (Կոնստանտին Համբարձումյանը – Ռ. Ս.) էր:

Կազմակերպչական տաղանդով օժտուած, խիստ մատչելի և մանավանդ հոգածու և պատրաստակամ այդ ընկերը իրավամբ զգայուն հայր մը դարձած էր ժողովուրդին: Նույնպիսի նախախնամական դեր կը կատարեր Գյուղատնտեսական ընկերության ներկայացուցիչ Ավետիս (Ավետիք – Ռ. Ս.) Սահակյանը»[1]:

Աստիճանաբար կյանքը Վանում և նահանգում մտնում էր խաղաղ հունի մեջ: Սակայն հուլիսի 25–ից սկսած անպաշտոն տարածվող լուրերը հնարավոր նահանջի մասին ապակողմնորոշում էին բնակչությանը: Հրամանատարության կարգադրությամբ Գավաշի և Կարճկանի գավառների բնակչությունը սկսում է լքել բնակավայրերը: Վանեցիների մի մասը ենթադրում էր, որ «սա բացահայտ խաղ մ՚ էր, և թշնամին շատ հեռու էր Վանեն»: Նախորդ նահանջների դառը փորձը հուշում էր, որ հակառակորդը բաղկացած էր լինելու 300–400 քրդերից, որոնց կարելի էր հեշտությամբ ետ մղել: Միաժամանակ՝ վանեցիներն այն հաստատ համոզմունքն ունեին, որ կռվելով ավելի քիչ կորուստ կունենային, քան փախչելով: Այդ նպատակով դիմում են գեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովին՝ խնդրելով հատկացնել զենք ու զինամթերք, սակայն մերժում են ստանում[2]:

Ցավոք, Վանում տեղակայված հայկական հասարակական և բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը միասնական կարծիքի չի հանգում: Առաջին խումբն առաջարկում է անվտանգ վայրեր տարհանել միայն կանանց ու երեխաներին, իսկ տղամարդիկ կկազմակերպեն դիմադրություն:

Շտապ կարգով մի խումբ երիտասարդներ գնում են Հայոց ձոր՝ բնակչության նահանջը կասեցնելու և դիմադրությունը կազմակերպելու համար: Տեղի բնակչությունը, սակայն, ռուսական հրամանատարության կարգադրությամբ արդեն սկսել էր հեռանալ: Խուճապն ուժեղացավ այն բանից հետո, երբ ռուսական ստորաբաժանումները սկսեցին լքել Նորտուզի, Շատախի և Գավաշի դիրքերը[3]: Նահանջի հետևանքով հիսուն հազար հոգի լքում են Մուշի, Բիթլիսի և Վասպուրականների շրջանները[4]:

Վ. Փափազյանը կազմակերպում է զինված երիտասարդների երկու խումբ: Առաջին խումբը լինելու էր նահանջող բնակչության առաջապահը, իսկ երկրորդը՝ վերջապահը: Վ. Փափազյանի հրամանով Թիմարում հավաքվում են փոխադրական միջոցներ և ինքնապաշտպանական ուժեր: Նա «մնաց դատարկւած Վանում՝ ենթարկւելով վտանգի, միայն թէ մինչև վեր-

1 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 154, թ. 4:

2 Փափազեան Վահան, Իմ Յուշերը, հատոր երկրորդ, Պէյրութ, 1952, էջ 427: Կ. Համբարձումյանն իր ազատագրական գործունեությամբ աչքի է ընկել դեռևս 1905–1906 թթ. հայ–թաթարական (ադրբեջանական) կռիվների ժամանակ Գորիսում: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 7:

3 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 2:

4 Նույն տեղում:

ջին որպէն կարողանայ ազատել պահեստները (նկատի ունի ԿՀԲԸ–ի պարենի պահեստները – Ռ. Ս.)»[1]:

Հուլիսի 28–ին սկսվում է Վանի բնակչության նահանջը: Միայն հաջորդ օրը, հավանաբար գեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովի հրամանով, փոխգնդապետ Ա. Ի. Տերմենին տրվեց 126 միավոր հրազեն: Զենքը Ա. Ի. Տերմենը հանձնեց Զ. Չանկալյանի գլխավորած միլիցիային: Ինչպես նշում են վանեցիները, Ա. Ի. Տերմենը «հատկապես համոզված էր, որ ժողովուրդը վերադառնա, որովհետև համոզված էր, որ վտանգ չկա»[2]:

Փաստորեն՝ հայկական ուժերի և քաղաքում առկա ռուսական ուժերի հետ հնարավոր էր կազմակերպել Վանի պաշտպանությունը, եթե թշնամին փորձեր գրոհել: Սակայն գեներալ Վորոնովի հրամանին ենթարկվելով՝ հայկական միլիցիան հարկադրված էր հուլիսի 29–ի գիշերը հեռանալ քաղաքից[3]: Ի վերջո Ա. Տերմենին հաջողվում է հրամանատարությունից թույլտվություն ստանալ և միլիցիան վերադարձնել քաղաք:

Օգտվելով հարմար իրադրությունից՝ Վանում մնացած ռուս զինվորները հրամանատարության թողտվությամբ սկսում են հայերի և զանազան ընկերությունների գույքի և ունեցվածքի կողոպուտը: Թալանվեցին Քաղաքների միության պահեստը, ամերիկյան միսիոներների բերած և 100 հազար ռուբլի արժեցող հագուստը: Նրանց պատկանող երկու շինությունները հրդեհվում են: Կողոպտվում են քաղաքի տները, իսկ այնտեղ մնացած ծերունիները և հիվանդները սպանվում են[4]:

Հայկական կողմն առաջարկում Ա. Ի. Տերմենին միլիցիային հանձնել քաղաքի հասարակական կարգի պահպանումը, սակայն Ա. Ի. Տերմենը, ունենալով գեներալ Վորոնովի հրահանգը, չի համաձայնում: Միայն հինգ օր անց միլիցիային թույլ տրվեց մտնել Վան: Միաժամանակ Ա. Ի. Տերմենի թույլտվությամբ քաղաք են սկսում վերադառնալ այգետերերը[5]:

1916 թ. հուլիսյան նահանջից հետո՝ սեպտեմբերին, Վասպուրականում բնակվում էր 15 հազար հայ[6]: Սեպտեմբերի 14–ին Վան է մեկնում Ավ. Սահակյանը՝ աշնանացանի հետ կապված աշխատանքները կազմակերպելու համար[7]:

Վանում բնակվող ասորիները կազմել էին մարտական խումբ՝ 60–70 հոգի, որոնք իշխանությունների կողմից ժամանակ առ ժամանակ ուղարկվում էին հետախուզության[8]: Հաղորդելով այս մասին՝ Իրազեկը (Հ. Տեր–Հակոբյան) մաղթում էր հաջողություն բախտակից ասորիներին «և միևնոյն

1 «Համբաւաբեր», N 33, 14 օգոստոսի 1916, էջ 1032:
2 ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 171, թ. 11:
3 Նույն տեղում, ֆ. 57, g. 5, գ. 122, թ. 2 շրջ.:
4 Վանում Վ. Փափազյանին փոխարինած Գր. Օհանջանյանի կարծիքով՝ նախորդ նահանջների ժամանակ առաջին հերթին փախան գործող կազմակերպությունների ներկայացուցիչները: Նրանց հետևեց բնակչության մի մասը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 171, թ. 12:
5 ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 122, թ. 2 շրջ.:
6 «Համբաւաբեր», N 33, 14 օգոստոսի 1916, էջ 1032:
7 «Հորիզոն», N 204, 14 սեպտեմբերի 1916:
8 «Հորիզոն», N 206, 16 սեպտեմբերի 1916:

ժամանակ մեծ զգուշութիւն և հեռատեսութիւն»[1]: Նա դրանով հիշեցնում էր հայ կամավորական խմբերի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Ցավոք, ասորական դրուժինաները կարճ ժամանակ անց զինաթափ են արվում ռուսական իշխանությունների կողմից: Բնակչությունը զրկվում է իր անձը պաշտպանելու իրական հնարավորությունից:

1917 թ. մարտի զեկուցագրում ԿՀԲԸ–ին կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի Վանի լիազոր Գր. Օհանջանյանը հայտնում է, որ Վանի շրջանում գաղթականական խնդիրների լուծման համար անհրաժեշտ է հրատապ և արտակարգ օգնություն: Ռուսական զորքերի առաջացման հետևանքով հակառակորդի գերությունից ազատվում են զգալի թվով հայեր: Նրանք Վան են հասնում՝ զրկված գոյության ամենատարրական միջոցներից: Գ. Օհանջանյանը խնդրում է հատուկ գումար հատկացնել՝ նշված անձանց գոյությունն ապահովելու համար: Նա համոզված էր, որ անհրաժեշտ է կազմել հատուկ ֆոնդ և տրամադրել հինգ հազար ռուբլի՝ վերադարձողներին օգնելու համար: Սկզբնական գործունեության համար նա բավարար է համարում հազար ռուբլին[2]:

1917 թ. հուլիսի 21–ի դրությամբ ռուսական կառավարությունը Արևմտյան Հայաստանը բաժանում է 19 օկրուգի: Վանի օկրուգը, որի մեջ են մտնում նաև Սարայի, Բաշկալեի և Դիադինի օկրուգները, ենթարկվում են կոմիսար Կ. Համբարձումյանին[3]:

Հոկտեմբերին Կովկասյան բանակի հրամանատարության հրամանով թույլ է տրվում ձևավորել Հայկական 5–րդ հրաձգային գնդի երրորդ գումարտակը: Այն պետք է կազմավորվեր տեղի բնակիչներից: Սակայն շուտով հրամայվեց կազմավորել առանձին՝ Վանի 4–րդ գունդը: Հայտարարվում է 18–40 տարեկան տղամարդկանց զորահավաք: Զորահավաքն ընթանում էր բավականին հաջող: Միաժամանակ կազմավորվում է ենթասպաների ուսուցման ուսումնական ջոկատ[4]: Սակայն թուրքական հարձակումը հարկադրում է վանեցիներին 1918 թ. մարտին նահանջել Պարսկաստան:

Էրզրում

1916 թ. փետրվարի 3–ին ռուսական Կովկասյան բանակի զորամասերը դժվարին մարտերից հետո գրավում են Էրզրում (Կարին) ամրոցը և քաղաքը: Հակառակորդը ծանր պարտություն է կրում:

Պատերազմի նախօրյակին Էրզրումի 18 հազար հայերից, իսկ ըստ այլ տվյալի՝ 25 հազարից[5] մնացել էր 59 հոգի[6]: Նրանց թաքցրել էին մի քանի թուրք ընտանիքներ: 18 աղջիկ էլ ապաստան էին գտել տեղի ամերիկյան մի-

1 «Աշխատանք», N 83, 25 փետրուար 1917:
2 «Արեւ», Բաքու, N4, 6 յունուարի 1917:
3 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 2:
4 ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 16, թ. 47, 48:
5 Նույն տեղում, ց. 2, գ. 96, թ. 1:
6 «Վան–Տոսպ», Թիֆլիս, 28 փետրուարի 1916, N 14, էջ 14: Տե՛ս նաև «Գաղափար», Թիֆլիս, N 14, 18 մարտի 1916:

սիոներական առաքելությունում[1]: Իսկ էրզրումում շարունակում էին բնակվել 28131 թուրք, որոնցից 13291–ը՝ տղամարդ[2]:

Քաղաքը գրավելուց հետո կարճ ժամանակով քաղաքի պարետ է նշանակվում գնդապետ Մ. Բ. Սիլիկովը: Նրա հաղորդման համաձայն՝ Կովկասյան 1–ին բանակային կորպուսի հրամանատար գեներալ Պ. Պ. Կալիտինն արգելում է հայերի մուտքը էրզրում[3]:

1916 թ. փետրվարի 23–ին Ս. Հարությունյանը դիմում է Կովկասի փոխարքայի զինվորական օգնականին՝ հայտնելով, որ էրզրումի նահանգից, Սպերից, Խնուսից, Բիթլիսից, Մուշից և այլ վայրերից տեղեկություններ են ստացվում ողջ մնացած հայ կանանց ու երեխաների մասին: Զորամասերը, զբաղված լինելով մարտական գործողությունների թատերաբեմում, չեն կարող հոգալ նրանց կարիքները: Նշված անձինք կարիք են զգում անհապաղ օգնության: Օգնությունը պետք է՝ նրանց սովից և ցրտից փրկելու համար: Ս. Հարությունյանը խնդրում է պաշտոնապես թույլատրել ԿՀԲԸ–ի լիազորներին ուղարկել նշված վայրերը՝ կանանց և երեխաներին օգնելու և տարհանելու ավելի անվտանգ վայրեր: Նա ներկայացնում է լիազորների ցուցակը և խնդրում նրանց անունով տալ համապատասխան փաստաթղթեր: Այդ լիազորները թվով 21–ն էին: Նրանց թվում էին Արշակ Սաֆրաստյանը, Հրաչյա Զաքարյանը, Առաքել Սիմաղլյանցը, Կարո և Արմեն Սասունիները և այլք[4]:

Դեռևս 1916 թ. գարնանը էրզրումում գործունեություն են ծավալում Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասի բաժանմունքը, ԿՀԲԸ հայկական կենտրոնական կոմիտեն, Կարինի հայ փախստականների կոմիտեն և Մոսկվայի հայկական կոմիտեն[5]:

Քաղաք են գալիս ԿՀԲԸ հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գրիգոր Զամոևը (Զամոյան, Զամոև) և Բաքվի մահմեդական բարեգործական ընկերության ներկայացուցիչ Ալի խան Կանդեմիրովը: Նրանք պետք է ուսումնասիրեին հայ և մահմեդական բնակչության դրությունը և կազմակերպեին անհրաժեշտ օգնությունը[6]:

---

1 Ըստ Հ. Խունունցի ունեցած տեղեկության՝ ողջ մնացածների թիվը մոտ 80 է, սակայն «Ուրիշները այս թիվը հասցնում են 130–150–ի, գրեթե բացառապես կանայք և երեխաներ են, մեջները հազիվ 5–6 տղամարդ լինի»: Նրանց մեծ մասի կարիքները հոգացել է ամերիկացի միսիոներ Սթեփլտոնը: Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ.՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան, պատ. խմբ. Ա. Վիրաբյան, Ե., 2004, էջ 89:

2 «Մշակ», Թիֆլիս, 4 մարտի 1916, N 49: “Армянский вестник”, Москва, 22 января 1917 г., N 4, с. 16.

3 «Համբաւաբեր», N 21, 22 մայիսի 1916, էջ 655: VI դրուժինայի մարտիկները լինում են Զանձաղ հայկական գյուղում: Վերջինիս 70 տներն ամբողջությամբ ավերվել էին: Հ. Բժշկյանը (հետագայում խորհրդային նշանավոր զորավար՝ Գայ) հետևյալն է գրում. «Շրջակայ խորին լռութեան մէջ լսւում էր միայն որբացած գետակի լալահառաչ հոսանքը, որը, կարծես ականատես այս վայրերի սարսափներին, աշխատում էր փախչել հեռո՜ւ–հեռո՜ւ զուլումի շրջանից՝ թաղելով իր ալիքների մէջ սոսկալի դէպքերի պատմութիւնը...»: Տե՛ս «Գաղափար», N 12, 13 մարտի 1916:

4 ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 12: Տե՛ս նաև «Գաղափար», N 9, 6 մարտի 1916:

5 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 126, թ. 26 և շրջ.:

6 “Армянский вестник”, Москва, 22 января 1917 г., N 4, с. 17.

Առաջիններից մեկը քաղաք է գալիս Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասի բաժանմունքի լիազոր Ստեփան Զորյանը (Ռոստոմ): 1916 թ. մարտին Ռոստոմը Մեսրոպ եպիսկոպոս Տեր–Մովսիսյանին հայտնում է, որ Մամախաթունից ուղարկել են 59 հոգու: Սպասվում է ևս 300 հոգի: Խնդրում է, որպեսզի շտապ հասցվի սնունդ և դրամ՝ գաղթականների համար սննդակայան բացելու համար: Ռոստոմը տեղեկացնում է, որ էրզրում են եկել Քաղաքների միության Մուշի և Խնուսի լիազորներ Ռ. Տեր–Մինասյանը և Գրիգորյանը, իսկ բժիշկ Տեր–Թովմասյանը մեկնել է իր պաշտոնատեղին[1]:

1916 թ. օգոստոսի 17–ին ԿՀԲԸ–ի հայկական կենտրոնական կոմիտեն պաշտոնապես դիմում է Ռոստոմին՝ առաջարկելով նրան գլխավորել էրզրումում և շրջանում, ինչպես նաև նոր նվաճված վայրերում հայ բնակչության ցույց տրվող օգնության գործը: Նա միաժամանակ լիազորվում է իր գրասենյակով կոմիտե հիմնել էրզրումում, իր հայեցողությամբ ընդունել աշխատանքի և հաշվետու լինել միայն Կենտրոնական կոմիտեին: Ռոստոմին թույլատրվում է հիմնել որբանոցներ և պարենային պահեստներ[2]: Հիրավի, նշանավոր գործչի ներկայությունը լրացուցիչ ազդակ է հաղորդում՝ էրզրումում և շրջակայքում ակտիվ գործունեություն ծավալելու համար:

Սեպտեմբերի 24–ին գեներալ Վ. Մ. Թամամշևին ուղղված դիմումով ԿՀԲԸ–ի նախագահ Ս. Հարությունյանը խնդրում է օժանդակել էրզրումում բրդի մշակման արհեստանոց հիմնելու համար: Նրա տեղեկացմամբ՝ Ռոստոմը հայտնել է, որ հնարավորություն ունի էժան գնով գնելու 400 փութ բուրդ: Դա թույլ կտա անգործ կանանց աշխատանքով ապահովել այդ արհեստանոցում[3]:

1916 թ. օգոստոսի 30–ին Երզնկայից[4] Ս. Հարությունյանին գրած նամակում Ռոստոմը դժգոհում է, որ իրեն տրվել է ընդամենը հազար ռուբլի: Գումարն անբավարար է, քանի որ ծախսերն օրեցօր ավելանում են: Ռոստոմի կարծիքով՝ «Պէտք է առնուազը այստեղ պատրաստ ունենալ 10000 ր(ուբլի): Անհրաժեշտ եմ համարում նոյն իսկ մի քիչ աւելի ծախսել, միայն թէ շատ մարդ ազատուի, եթէ ոչ՝ ճանապարհները շուտով կը փակւին»[5]: Սեպտեմբերի 2–ին Մ. եպիսկոպոս Տեր–Մովսիսյանը Ռոստոմի անունով փոխանցում է պահանջված 10 հազար ռուբլին[6]:

Հայ կամավորներին և փախստականներին օժանդակող Սուխումի հայկական կոմիտեն, «Հորիզոն» թերթում ընթերցելով Սեպուհի և Մուրադի հե-

1 «Համբաւաբեր», N 21, 22 մայիսի 1916, էջ 654:
2 «Հորիզոն», 20 մարտի 1916, N 64:
3 ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 149, թ. 12:
4 Նույն տեղում, ֆ. 1168, g. 1, գ. 324, թ. 54:
5 Պատերազմից առաջ քաղաքի և շրջակայքի 31 հայկական գյուղերում բնակվում էր մոտ 15 հազար հայ: Երզնկայի գրավումից հետո վերադառնում է 600–ից 750 հոգի: «Գլխաւորապէս ազատուած են Ագրակ և Կեզլիճիէ անուն գիւղերու բնակիչներ, թերեւս այն միակ պատճառով, որ յիշեալ գիւղերը աւելի մօտիկ են վերոյիշեալ (Տավրոսի – Ռ. Ս.) լեռնաշղթայեն, իսկ մնացեալ 29 գիւղի բնակիչներէն կարծես նմուշի համար ազատուած են մէկ մէկ հոգի»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 654, g. 4, գ. 14, թ. 18:
6 ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 536, թ. 22:

ռագիրը, ուր խնդրվում էր դրամական միջոցներ հանգանակել քրդերի մոտ գերության մեջ գտնվող հայերին ազատելու համար, ցանկություն է հայտնում մասնակցելու 100 հայերի ազատմանը և ուղարկելու 1800 ռուբլի[1] (քրդերը մեկ հային ազատում էին մեկ օսմանյան ոսկով, որը համարժեք էր ռուսական 18 ռուբլու):

Բաբերդի և Երզնկայի գրավումից հետո Սեբաստացի Մուրադը, Կայծակ Առաքելը և Մոսկվայի հայկական կոմիտեի լիազոր Ա. Պողոսյանը ակտիվ որոնողական աշխատանքներ են կատարում թուրքերի մոտ բռնությամբ պահվող հայ երեխաներին գտնելու համար: Նրանց հաջողվում է որոշ թվով երեխաների գտնել, սակայն «շատերի տեղերը իմանում ենք, բայց շնորհիվ տիրող կառաւարութեան անբարեհաճ ընթացքին՝ հնարաւոր չի լինում զանոնք ազատել: Դէպքեր կան, որոնց առթիւ կառավարութեան բռնած ընթացքը բոլորովին յուսահատեցուցիչ է»: Պարզվում է, որ տեղական ռուսական իշխանությունները պահանջում են վկաներ, որոնք կհաստատեն այս կամ այն երեխայի հայ լինելու փաստը: Լինում են դեպքեր, երբ երեխան թաքցնում է, որ ինքը հայ է, սակայն մի քանի օր մնալով հայկական միջավայրում՝ «յայտնում է իր հայ լինելը»: Միայն դրանից հետո է, որ իշխանությունները թույլատրում են երեխային մնալ Երզնկայի հայկական կոմիտեի տրամադրության ներքո[2]:

Էրզրումում էր գտնվում Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ Զավեն վարդապետը: Նա էրզրում էր ժամանել 1916 թ. նոյեմբերին[3]: Կարևոր էր Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ի կողմից էրզրումում Զավեն վարդապետին ներկայացուցիչ նշանակելը[4]: Կարելի է ենթադրել, որ նա հանդիսանալու էր գործող կազմակերպությունների միջև համակարգող և կազմակերպող օղակ: Նրա միջոցով էրզրումում և շրջանում գործող տարբեր բարեգործական ընկերությունները փորձում էին լուծել իրենց դեմ ծառացած տարբեր խնդիրները[5], ինչպես, օրինակ՝ Երզնկայում և Բաբերդում գործող հայկական կազմակերպությունների կանոնավոր գործունեության հետ կապված խնդիրները:

Այս նշանակումն անհրաժեշտ էր նաև, որպեսզի նա օգներ բռնի մահմեդականացված հայերին՝ վերադառնալու Հայ առաքելական եկեղեցու գիրկը[6]: Սա խիստ դժվարին ու բարդ հարց էր, քանի որ փոքրահասակ երեխաների

1 Նույն տեղում, ֆ. 239, g. 1, գ. 8, թ. 41:

2 ՀԱԱ, ֆ. 239, g. 1, գ. 8, թ. 6:

3 Նույն տեղում, ֆ. 654, g. 4, գ. 14, թ. 15:

4 «Վան–Տոսպ», Թիֆլիս, 6 նոյեմբերի 1916, N 50, էջ 15:

5 ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 536, թ. 31: Դեռևս 1916 թ. հունիսին կաթողիկոս Գևորգ Ե–ն դիմել էր փոխարքա Ն. Ն. Ռոմանովին՝ խնդրելով թույլատրել էրզրումում նշանակել հոգևոր ներկայացուցիչ: Փոխարքան հրաժարվել է տալ նման թույլտվություն՝ այն հիմնավորելով նրանով, որ «տեղական զինուորական ու վարչական մարմինները հոգածու են ազատագրուած քրիստոնէութեան կարիքների, առ այժմ պէտք կը լինի յետաձգել հոգևոր ներկայացուցչի առաքումը, իսկ բարեպատեհ րոպէին ինքը կը յայտնէ այդ մասին»: Տե՛ս «Վան–Տոսպ», N 30, 19 յունիս 1916, էջ 16: ՀԱԱ, ֆ. 503, g. 1, գ. 71, թ. 52 շրջ.: Միայն այս հանգամանքով կարելի է բացատրել, թե ինչու կաթողիկոսը բավական ժամանակ անց էրզրումում նշանակեց իր ներկայացուցչին:

6 ՀԱԱ, ֆ. 57, g. 1, գ. 421, թ. 18:

մեծ մասը մոռացել էր մայրենի լեզուն, և Տիգրաններն ու Լևոնները դարձել էին Օսմաններ և Մահմեդներ: Մոսկվայի հայկական կոմիտեի անդամները իրականացնում են որոնողական աշխատանքներ՝ քրդերի և թուրքերի մոտ պահվող հայ մանուկներին հայտնաբերելու համար[1]:

Թուրքական իշխանությունները չէին վնասել Էրզրումի Մայր եկեղեցին, քանի որ այնտեղ էին կենտրոնացրել քաղաքի հայերից բռնագրաված գույքը: Չէին վնասվել նաև նշանավոր Սանասարյան վարժարանը և նրա գույքը: Ռոստոմը քայլեր է ձեռնարկում, որպեսզի իրեն վստահվի վարժարանի տնօրինությունը[2]: Նա Ս. Հարությունյանի ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ կարինցիների թվում կան այնպիսիները, որոնք ազգականներ ունեն ԱՄՆ–ում: Ռոստոմը կարծում է, որ նրանց դիմելու դեպքում հնարավոր է ստանալ որոշ գումար. կազմում են ԱՄՆ–ում ազգականներ ունեցողների ցուցակը[3]:

1916 թ. նոյեմբերի 18–ի նամակում Սեբաստացի Մուրադը և Կայծակ Առաքելը Գյուղատնտեսականի նախագահ Ա. Սահակյանին խնդրում են անհապաղ օգնություն ցույց տալ Բաբերդի և Երզնկայի փախստականներին և փրկվածներին: Նրանք նշում են, որ վերջին անգամ են դիմում օգնության խնդրանքով, քանի որ իրենց բոլոր դիմումները մնացել են անպատասխան: Նրանք հետևյալն են գրում. «Եւ եթէ այս անգամ էլ մնանք յուսախաբ, չի հասնի հարկ եղած օգնութիւնը, թուրքի սրից ու եաթաղանից ազատուածները ձմեռուան ցուրտին ու բուքին զոհ պիտի գնան: Խնդրում ենք փութացնել ինչ որ կարող էք անել մեր հայութեան մնացած բեկորներին»[4]:

Երզնկայում գտնված ժամանակ Ռոստոմը հեռագրում է Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասի մասնաճյուղի գլխավոր լիազոր, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանին՝ շտապ դեղորայք ու պարեն ուղարկելու համար: Փրկվածների թիվը հասնում է չորս հազարի[5]: Ողջ մնացածներին գլխավորապես ապաստան էին տվել Դերսիմի քրդերը (կամ էլ ղզլբաշները)[6], որոնք իրենց վերաբերմունքով արմատապես տարբերվում էին քրդական մյուս ցեղախմբերից: Ենթադրվում է, որ նրանք ունեն հայկական ծագում: Ըստ որոշ տվյալների՝ Երզնկայում և Դերսիմում գտնվող հայերի թիվը հասնում է մոտ չորս, իսկ այլ տվյալի՝ մոտ վեց հազարի[7]:

Գերված հայերի որոնման համար կազմակերպվում է հատուկ ջոկատ, որը ազդեցիկ քուրդ բեկերի միջնորդությամբ սկսում է որոնողական աշխատանքները: Քրդերը համապատասխան գումարի դիմաց լեռներից տեղա-

1 Նույն տեղում, գ. 123, թ. 34: Զավեն վարդապետը ուշ է ժամանում Էրզրում, քանի որ իշխանությունները մերժել էին հայերի խնդրանքը հոգևորական ուղարկելու մասին: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 71, թ. 52 շրջ.:

2 Армянский вестник", Москва, N 4, 22 января 1917 г., с. 17.

3 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 40 շրջ.:

4 Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 23:

5 Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 14, թ. 13:

6 «Հորիզոն», 8 սեպտեմբերի 1916, N 201: Երզնկայում պատերազմի նախօրյակին բնակվում էր 20 հազարից ավելի հայ: Տե՛ս "Армянский вестник", N 32, 1916, с. 19.

7 Այդ մասին առաջին հայտնողներից են Էրզրումի գրավմանը մասնակցած VI խմբի մարտիկները: Տե՛ս «Գաղափար», N 8, 4 մարտի 1916:

փոխում էին հայերին և հանձնում կոմիտեի անդամներին: Առավել դժվար էր թուրքերի մոտ բռնի պահվող հայերի որոնումը: 1916 թ. հունիսի 24–ից մինչև հոկտեմբերի 1–ը հաջողվում է հայտնաբերել և ազատել 4671 հոգու: Նրանցից մոտ 450–ը 4–12 տարեկան որբեր էին[1]:

Ինչպես հայտնում է Ռոստոմը, ամեն օր դերսիմցի քրդերի պաշտպանության ներքո Երզնկա են գալիս բռնագաղթվածների նորանոր խմբեր: Դերսիմցի քրդերը զգալի օգնություն են ցույց տալիս հայերին: Ըստ որոշ տվյալների՝ դերսիմցի քրդերի թվաքանակը հասնում էր 60 հազարի[2]: Զգալի թվով հայեր շարունակում են մնալ Դերսիմում: Նրանց ճնշող մեծամասնությունը կիսամերկ վիճակում էր:

1916 թ. սեպտեմբերի դրությամբ Էրզրումում բնակվում էր 1304 հոգի: Նրանցից 573–ը՝ տղամարդ էր, 503–ը՝ կին, 5–16 տարեկան 192 և 1–5 տարեկան 36 երեխաներ: Շրջակա գյուղերում տեղավորված էր 1522 հոգի: Նրանցից 1002–ը տղամարդ էր, 446–ը՝ կին, իսկ 74–ը՝ երեխա[3]:

Խարբերդից ստացված տեղեկությունների համաձայն՝ այնտեղ գտնվում էր մոտ երեք հազար հայ: Յ. Զավրիևի կարծիքով՝ պետք էր փորձել նրանց այդտեղից դուրս բերել: Դա կարելի էր անել քրդերի օգնությամբ՝ համապատասխան գումարի դիմաց: Այդ նպատակի համար պետք էր հինգ հազար ռուբլի, որը հնարավորություն կտար փրկելու մինչև հազար մարդու[4]:

Էրզրում և շրջակա հայկական գյուղեր այցելած զինվորական քահանա Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցը Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ին ուղղված 1916 թ. նոյեմբերի 1–ի զեկուցագրում ցավով է նկարագրում թուրքերի կողմից ավերված հայկական եկեղեցիները: Նա հետևյալն է գրում. «Բախտավոր բացառություն է կազմում Կարինի մայր եկեղեցին (Ս. Աստվածածին – Ռ. Ս.) և նրան կից Տաճար անվանված դարավոր մատուռը»[5]:

Որբերի հայտնաբերման աշխատանքները խիստ անհրաժեշտ էին, քանի որ տեղեկություններ էին ստացվել, թե ծնողազուրկ հայ երեխաներից ոմանց տանում են Ռուսաստան: Ախալքալաքի գավառի Սուլդա գյուղի բնակիչ Զարմայր Եղոյանը վկայում է. «Սարիղամիշի երկաթուղու կայարանում տեսայ երկու զինուոր, որոնց մոտ գտնուում էին 18 հոգի հայ որբեր 6–10 տարեկան: Որբերը բերուած էին Էրզրումի նահանգի թիւրք բնակիչների մոտից և ռուս սպաների յանձնարարութեամբ յիշեալ երկու զինուորները պիտի տանէին Ռուսաստան սպաների տնեցոց մոտ ապրելու իբրև հոգեզաւակ»[6]:

Ստեղծված լարված վիճակը, հատկապես վարակիչ հիվանդությունների տարածումը, հարկադրում է Էրզրումի ռուսական իշխանություններին 1917 թ. հունվարի 19–ին հիմնել Էրզրումի շրջանի փախստականական կոմիտե:

---

1 ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 69, թ. 25:
2 “Армянский вестник”, N 4, 22 января 1917 г., с. 16.
3 “Армянский вестник”, 22 января 1917 г., N 4, с. 17.
4 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 32 շրջ.:
5 ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 35 շրջ.:
6 **Սահակյան Ռ. Օ.,** Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցի նամակները Արևմտյան Հայաստանում ռուսական իշխանությունների քաղաքականության մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, 2009, էջ 300:

Նրանում ընդգրկվում են ինչպես հայ, թուրք, այնպես էլ ռուսական զինվորական իշխանության ներկայացուցիչներ, որպեսզի համատեղ միջոցառումներով փորձեն կանխել վարակիչ հիվանդությունների տարածումը ոչ միայն բնակչության, այլև զորքի մեջ[1]:

1917 թ. փետրվարի 6–ին Զավեն վարդապետին տեղեկացվում է, որ «Մշակ» թերթի խմբագրություն ստացվել են նվերներ՝ Էրզրումի հայ բնակչության համար: Տեր հորը փոխանցվելու է 1600 ռուբլի: Մեկ վագոն օգնությունը Թիֆլիսից ուղարկվելու է Սարիղամիշի կայարան: Այստեղից սայլերով բեռը պետք է հասցվի Էրզրում[2]:

Փետրվարի 28–ին Զավեն վարդապետին ուղղված նամակում Սեպուհը ուրախությամբ հայտնում է, որ Քաղաքների միության կողմից ուղարկված ալյուրը «փրկեց տառապանքի ենթակայ եղող դժբախտ գաղթականութեանը»[3]:

Մարտի 10–ին Սեբաստացի Մուրադը տեղեկացնում է Զավեն վարդապետին, որ շարունակում են Խարբերդից Երզնկա գալ նորանոր փախստականներ: Նա ցավով նշում է, որ ի զորու չէ նկարագրել այդ թշվառների վիճակը: Սեբաստացի Մուրադը տագնապով հայտնում է, որ «կը մնան մօտաւորապէս 4–500 հոգի որոնց կեանքը դամոկլեան սուրի տակ կը մնա»[4]:

Երզնկացիների միությունը, հունվարի 13–ին դիմելով ԿՀԲԸ–ին, հայտնում է մանրամասներ հայ բնակչության հետ տեղի ունեցած ողբերգության մասին: Միաժամանակ խնդրվում է օգնություն հասցնել նրանց: Նամակում նշվում է. «Եւ այսօր այդ կենսունակ ժողովրդի կիսակենդան մնացորդները, զուրկ օգնութիւնից, տարագրուած իրենց աւեր վաթանից դէպի սառն, անհամբոյր և իրենց համար աննպաստ Կարին քաղաքը, հեծեծում են կեանքի ու մահուան ճիրաններում»[5]:

Փետրվարի 10–ին Երզնկա է գործուղվում Կովկասյան 1–ին բանակային կորպուսի զինվորական քննիչի օգնական պորուչիկ Վոսկրեսենսկին՝ թուրքական իշխանությունների կողմից կատարված անօրինականությունների՝ հայերի զանգվածային կոտորածների վերաբերյալ փաստեր հավաքելու համար[6]:

1917 թ. մարտի 17–ին ԿՀԲԸ գաղթականական դպրոցական հանձնաժողովին ուղղված զեկուցագրում Մկրտիչ Լոռեցյանը հայտնում է, որ 10–15 օր է ինչ սկսել են դասերը Էրզրումի նորաբաց դպրոցում: Աշակերտների թիվը 120–150 է: Նրանց թվաքանակը վերջնական չէ, քանի որ աշակերտների մի մասն անկանոն է հաճախում: Դպրոցն իրենից ներկայացնում է մի շինություն, որը բաղկացած է չորս սենյակից: Ունի հինգ բաժանմունք (դասարան): Ուսուցիչները թվով հինգն են: Նրանց համար սահմանված է ամսեկան 65–

1 «Համբաւաբեր», N 44, 30 հոկտեմբերի 1916, էջ 1391:
2 ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 423, թ. 48: ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 423, թ. 48:
3 Մատենադարան, Գյուտ եպիսկոպոս Տեր–Ղազարյանի արխիվ, թղթ. 2, վավ. 143, թ. 413:
4 Նույն տեղում, թղթ. 2, վավ. 158, թ. 437:
5 Նույն տեղում, թղթ. 2, վավ. 157, թ. 435, 436:
6 Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 166, թ. 21:

85 ռուբլի աշխատավարձ[1]: Մ. Լոռեցյանը հաղորդում է. «Պարապմունքներն առ այժմ գնում են անկանոն, դասագրքեր և այլ պիտոյքներ չունենալու պատճառով: Չունինք նաև ռուս(աց – Ռ. Ս.) լեզվի դասատու»[2]:

Հունիսի դրությամբ Էրզրումի օկրուգում բնակվում էր 10500 մարդ, որոնցից 6250–ը՝ կանայք և երեխաներ, իսկ 3800–ը՝ աշխատունակ տղամարդիկ[3]:

Օգոստոսի 12–ին Էրզրում է վերադառնում Թիֆլիսի Հայկական գյուղատնտեսական և տնայնագործական ընկերության ներկայացուցիչ Աշոտ Աթանասյանը: Նրա կատարած հաշվարկների համաձայն՝ տեղի բնակչությունը եռապատկվել է: Փախստականները գտնվում են ծանր վիճակում, քանի որ երաշտը ոչնչացրել է ողջ բերքը: Ա. Աթանասյանն առաջնահերթ է համարում 80 զույգ լծկաններ ձեռք բերելը, որը հնարավորություն կտա տեղափոխելու դաշտում «հնձված բերքը, որ ուտացնում և ոտնատակ է արվում զինվորական մասերի դաշտումս վխտող հազարավոր ձիերի կողմից»[4]:

Աստիճանաբար սկսում է կանոնավորվել նաև հոգևոր կյանքը: Նախատեսվում է Մամախաթունի և Դերջանի շրջաններ ուղարկել Սահակ և Ղազարոս Չոբանյան քահանաներին: Նրանք միաժամանակ դասավանդելու էին տեղի դպրոցներում[5]:

Երզնկայի և Բաբերդի գրավումից հետո նշված բնակավայրերը դառնում են ռուսական բանակային հետախուզության կենտրոններ: Ռուսական հետախուզությանը հատկապես հետաքրքրում էին Դերսիմի քրդերը, նրանց տրամադրությունները: Այդ նպատակով նրանց մոտ և ավելի հեռու վայրեր են ուղարկվում գործակալներ[6]:

1916–1917 թթ. հետախուզական գործունեություն է ծավալում Սեբաստացի Մուրադը: Նրա գործակալները, որոնք թուրքերենին կամ քրդերենին ազատ տիրապետող հայեր և հույներ էին, ուղարկվում էին քրդական շրջաններ: Մուրադը գործակալներ էր հավաքագրում նաև այն քրդերից, որոնք մշտապես բնակվում էին տվյալ շրջանում և բարեկամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ[7]:

Գեներալ Ն. Մ. Մորելի բնութագրմամբ՝ «Շնորհիվ Մուրադի եռանդին, երկրամասի և տեղի բնակչության բնավորության հիմնավոր իմանալուն և գործակալների հաջող ընտրությանը՝ Երզնկայից հետախուզությունը կատարվում էր բավականին հաջող: Զոկատի շտաբը ժամանակին տեղեկացված էր թուրքերի և քրդերի կողմից նախապատրաստվող հարձակումների, նրանց ուժերի կենտրոնացման, տեղաշարժման և ուժերի մասին»[8]:

---

1 Տե՛ս “Армянский вестник”, М., N 41, 2 октября 1917, с. 12.
2 ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 328, թ. 40:
3 Նույն տեղում, թ. 40 շրջ.:
4 Նույն տեղում, ֆ. 654, g. 1, գ. 17, թ. 54:
5 **Սահակյան Ռ.,** Աշոտ Աթանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում, «ԲՀԱ», N 1–2, 2007, էջ 50, 51:
6 ՀԱԱ, ֆ. 57, g. 2, գ. 489, թ. 6:
7 Նույն տեղում, թ. 17:
8 Նույն տեղում:

Մուշ

1916 թ. փետրվարի 3–ին գեներալ Ֆ. Ի. Նազարբեկովի (Թովմաս Նազարբեկյան) Կովկասյան 2–րդ հրաձգային դիվիզիան և նրա կազմում գործող Հայկական 2–րդ կամավորական խումբը ազատագրեցին Մուշ քաղաքը: Տեղեկանալով այդ մասին՝ Մուշ էին գալիս հրաշքով փրկված և լեռներում թաքնված հայերի փոքրաթիվ խմբեր, հիմնականում՝ կանայք ու երեխաներ:

Մուշ են մեկնում նաև Կովկասում գործող հայկական զանազան հասարակական ու բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Գեներալ Ֆ. Ի. Նազարբեկովի վկայությամբ՝ Մուշում մնացել էր մոտ հիսուն հայ ընտանիք, հիմնականում՝ արհեստավորներ: Մնացած հայ բնակչությունը սրի էր քաշվել[1]: Հաջողվում է Մուշի շրջակա գյուղերում գտնել ողջ մնացած 70 կին և երեխա ու նրանց ուղարկել Խնուս[2]: Քաղաքի թուրք բնակչության մի մասը մնացել էր իր տներում:

Մուշ են գալիս ԿՀԲԸ հայկական կենտրոնական կոմիտեի, եղբայրական օգնության լիազորներն ու խմբերը: Քաղաքների միության լիազոր Ռ. Տեր–Մինասյանի և ԿՀԲԸ հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գր. Ղամարյանի համատեղ ջանքերով Խնուսի մոտ հիմնվում է նոր որբանոց: Դա հնարավորություն է տալիս տեղավորելու անապաստան ու թափառաշրջիկ երեխաներին[3]: Միաժամանակ Խնուսում և նրա մոտ գտնվող Արոս գյուղում հիմնվում են սննդակայաններ: Մուշից եկողները նշված հաստատություններում հնարավորություն են ստանում երկու–երեք օր հանգստանալու, սնվելու, ապա ուտելիքի պաշար վերցնելով՝ շարունակելու իրենց գաղթը:

ԿՀԲԸ–ին կից գործող Կենտրոնական կոմիտեն Մուշ է ուղարկում Կարո Սասունուն: 1916 թ. մարտի սկզբին նրա գլխավորած խումբը, որը բաղկացած էր Արմենակ Սասունուց և Հմայակ Մանուկյանից[4], Իգդիրից ժամանում է Մուշ:

Խնուս և Մուշ են գործուղվում Գյուղատնտեսական ընկերության Ալաշկերտի խմբի երկու ներկայացուցիչներ, որոնք այնտեղ աշխատանքներ են իրականացնում երեք ամիս[5]:

Ինչպես նշում է Կ. Սասունին, «Ռուսական տիրապետութիւնը իր ցարական կնիքը կը դնէր ամէնուրեք: Ու մենք ստիպուած էինք գերազանցապէս ծածկուիլ գաղթականական դիմակի տակ ու օգնութեան հետ զուգընթաց՝ մեծ մասամբ գաղտնի տանիլ վարչական, քաղաքական եւ ինքնապաշտպանական աշխատանքները»[6]:

Գեներալ Ֆ. Ի. Նազարբեկովի վկայությամբ՝ Մուշում ամենածանր խնդիրը պարենի հայթայթումն էր: Բանակային համբարակային ծառայությունը

1 Նույն տեղում, թ. 17 շրջ.:
2 ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 13 շրջ.:
3 «Վան–Տոսպ», N 12, 14 փետրուարի 1916, էջ 16:
4 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 48:
5 «Աշխատանք», Երևան, 28 սեպտեմբերի 1916, N 43:
6 ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 44 շրջ.:

գրեթե ոչինչ չէր ուղարկում: Հատկապես ծանր վիճակում էին հայ գաղթականները: Գեներալը ցավով նշում է, որ իր ունեցած սուղ միջոցները հնարավորություն չեն տալիս թեկուզ ամենաչնչին օժանդակություն ցույց տալու: Այդ դժվարին պահին նրա մոտ է գալիս Քաղաքների միության լիազոր Ռոստոմը: Նա խնդրում է իրեն տալ զինվորներ՝ պաշտպանության համար, որպեսզի խուզարկեն և գտնեն գյուղերում հորած ցորենի պաշարները: Գեներալը համաձայնում է պայմանով, որ գտնվածի կեսը տրվի բանակին: Նման համագործակցությունը հնարավորություն է տալիս և՛ զորքին, և՛ հայերին ապահովելու հացով[1]:

Խնուսում Կ. Սասունին առաջարկում է ռուսական հրամանատարությանը՝ գեներալ Զ. Ա. Մդիվանիին թույլատրել հայերից կազմակերպել աշխարհազորային–ինքնապաշտպանական խմբեր՝ միլիցիա: Նրանք ոչ միայն կպաշտպանեին բնակչությանը քրդական հարձակումներից, այլև կիրականացնեին ռուսական բանակի հաղորդակցության ուղիների հսկումը և կհետախուզեին հակառակորդի դիրքերը: Սակայն գեներալ Զ. Ա. Մդիվանին թույլատրում է զբաղվել զուտ գաղթականական գործերով:

Այլ էր պատկերը Մուշում, որի կայազորի պետը գնդապետ Մ. Բ. Սիլիկովն էր: Կ. Սասունին գնդապետ Մ. Բ. Սիլիկովի խորհրդով դիմում է 16–րդ հրածգային դիվիզիայի հրամանատար գեներալ Ի. Վ. Սավիցկուն[2]: Նրա անմիջական օգնությամբ Կ. Սասունին ստանում է բավարար քանակությամբ զենք, զինամթերք, հագուստ և պարեն[3]:

Մուշ վերադառնալու ցանկություն են հայտնում 130 մշեցիներ[4]: ԿՀԲԸ–ին կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն նրանց տրամադրում է հինգ հազար ռուբլի: Հիմնավորվելով Մուշում՝ նրանք մեծ օժանդակություն են ցույց տալիս գործող գաղթականական մարմիններին: Մշեցիները կազմակերպում են խուզարկու խմբեր, որոնք քրդական շրջաններից հավաքում են հայերին: Խմբերի ներկայությունը շատ դեպքերում զսպում է քրդերին՝ դիմելու հարձակողական գործողությունների: Բացի այդ՝ նրանք իրականացնում էին հետախուզություն՝ ռուսական հրամանատարությանը հաղորդելով արժեքավոր տեղեկություններ: Կ. Սասունին ԿՀԲԸ հայկական կենտրոնական կոմիտեին ուղղված զեկուցագրում նշում է. «...խմբերը ամբողջ ժամանակաշրջանում ոևէ նիւթական օգնութիւն մարմիններից ստացած չեն, բացի բարոյական աջակցութիւնից, այն է՝ յարաբերութեան մէջ մտնել զինուորական իշխանութեան հետ, փաստաթղթեր ստանալ և զանազան դիւրութիւններ ունենալ երթևեկութեան և տեղափոխութիւնների համար»[5]:

Ինքնին հասկանալի է, որ վերադասին ուղղված նամակում Կ. Սասունին պետք է թաքցներ այն հանգամանքը, որ խմբերը գործում են իրենց անմիջական ենթակայության ներքո: Կարելի է ենթադրել, որ դա արվում էր, որպես-

1 Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 116:
2 ՀԱԱ, ֆ. 45, g. 1, գ. 10, թ. 19 և շրջ.:
3 Ի. Վ. Սավիցկին 66–րդ հետևակային դիվիզիայի պետն էր: Տե՛ս Масловский Е. В., указ. соч., с. 11.
4 **Սասունի Կ.,** Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 120, 121:
5 ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 453, թ. 65:

զի ռուսական իշխանությունները չկարողանային տեղեկանալ հայկական խմբերի իրական նպատակների մասին: Այդ էր պատճառը, որ Կ. Սասունին ընդգծում էր այն փաստը, որ իրենք որևէ կապ չունեն մշեցիներից և սասունցիներից կազմված մարտական խմբերի հետ:

Սասունցի Մանուկի ղեկավարությամբ կազմված 100– հոգանոց ջոկատը, բազմաթիվ կռիվներ մղելով, ազատում է մեծ թվով հայերի: 1916 թ. ապրիլի սկզբներից մինչև ապրիլի 15–ը Սասունցի Մանուկն իր ջոկատի հետ կատարել է երկու արշավանք և գերությունից ազատել 2500, իսկ հաջորդ երեքի ընթացքում՝ 770 հոգու: Ընդհանուր առմամբ՝ նրանք կարողացել են Մուշ բերել 3270 հոգու[1]:

Մուշում և շրջանում գործում էր նաև Արշակ Բոլեյանի մարտական խումբը: Կրկին նշվում է, որ երկու խմբերը ոչ մի օգնություն չեն ստանում որևէ կազմակերպությունից և ապրում են քրդերից խլված ավարով, որը բավական է նրանց գոյությունը պահպանելու համար: Բացի այդ՝ Սասունցի Մանուկի խումբը իր ռազմավարի կեսը հանձնել է Կովկասյան 6–րդ հրաձգային գնդի համբարակային ծառայությանը[2]:

1916 թ. մարտի 29–ին Համառուսաստանյան Քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի գլխավոր կոմիտեում լսվում է Քաղաքների միության Խնուսի գործակալ Ռոստոմի զեկուցումը: Նա հայտնում է, որ Խնուսում և Մուշում օրեցօր ավելանում է քրդական գերությունից փախած և ողջ մնացած հայերի թիվը: Զգալի թվով հայեր դեռևս պահվում են քրդերի մոտ: Բացվել են որբանոցներ: 15 օրվա ընթացքում եկածների թիվը հասնում է 1500 հոգու: Ինչպես հաղորդում է Ռոստոմը, «ոչխար, եզներ, սերմացու շատ էժան են, հագուստ կայ, պակասում է թէյ և սպիտակեղէն»[3]:

Ապրիլի սկզբին Կարո Սասունին Կենտրոնական կոմիտեին հաղորդում է, որ երկու հազար փախստական է գտնվում Խնուսում: Միաժամանակ շարունակվում է ողջ մնացած հայերի հոսքը Մուշի և Խնուսի շրջաններից[4]:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ի հրամանով Կ. Սասունուն է տրվում երկու հազար ռուբլի, որպեսզի գաղթականների համար ցորեն գնվի[5]: 1916

1 «Համբաւաբեր», N 40, 2 հոկտեմբերի 1916, էջ 1257, 1258: Իր հուշերում Կ. Սասունին վկայում է, որ գեներալ Ի. Վ. Սավիցկուց ստացած զենքը տրվել է այդ խմբերին: Դա հնարավորություն է տալիս Սասունցի Մանուկի և այլոց խմբերն ուղղորդել քրդերի մոտ գտնվող հայերին ազատելուն: Իսկ մեկ այլ՝ հետախուզական խումբ, բարձրանում է Սասուն, որտեղից կապ է պահպանում գնդապետ Մ. Բ. Սիլիկովի հետ: Տե՛ս Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 121:

2 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 65:

3 Նույն տեղում, թ. 66:

4 «Արեւ»,N 74, 4 ապրիլի 1916:

5 «Հորիզոն», 3 ապրիլի 1916, N 75: Գումարը տրվել է Մուշ ժամանած հատուկ հանձնաժողովի կողմից, որի անդամներն էին Իսահակ սարկավագ Տեր–Ղազարյանը, Գևորգյան ճեմարանի տեսչի օգնական Ա. Տեր Պողոսյանը, նույն ճեմարանի ուսուցիչ Բ. Բահադրյանը և էջմիածնի եղբայրական օգնության կոմիտեի բժիշկ Խ. Փանոսյանը (Սանֆանի): Այն կազմակերպվել էր կաթողիկոսի հրամանով և պետք է ոչ միայն նվերներ բաժաներ ռուս զինվորներին և հայ կամավորներին, բժշկական հետազոտություն կատարեր, այլև այցելեր վանքերն ու եկեղեցիները և 2 գաղտնարաններից հաներ ու էջմիածին տեղափոխեր եկեղեցական զանազան իրերը և ձեռագրերը: Հանձնաժողովի ուսումնասիրությունները բացահայտեցին

թ. ապրիլից մինչև հուլիս Կ. Սասունին բնակչության համար գնել է երեք հազար ռուբլու ցորեն և գըլգըլ: Դրա մեծ մասը Համո Մակարյանի, Սասունցի Մանուկի և Արմեն Սասունիի միջոցով բաժանվել է կարիքավոր բնակչությանը[1]: Սակայն պարենը խիստ անբավարար էր, և Կ. Սասունին հեռագրում է Հայկական կենտրոնական կոմիտեին՝ արագացնել օգնությունը, քանի որ «Փախստականների մեծ մասը ներկայումս ենթակայ է սովի»[2]: Նրա գնահատմամբ՝ առկա ցորենը կբավարարեր միայն երկու ամիս: Կ. Սասունին հույս ուներ, որ մինչ այդ հացահատիկը կհասնի, և հնարավորություն կլինի բնակչությանը որոշ չափով ապահովելու հացահատիկով[3]:

Կ. Սասունին վերհիշում է. «Տարօնի բոլոր գաւառներու մէջ ծուարած հայութիւնը թուրքերու և քիւրդերու դէմ կեանքի ու մահուան պայքարի մը բռնուած էր: Թիկունքային պատերազմ մըն էր այդ, որ տեղի կ՚ունենար երկու նպատակով. առաջին՝ ***հայացնել*** (ընդգծումը հեղինակինն է – Ռ. Ս.) Տարօնը, եւ երկրորդ՝ ջլատելով թշնամիի տարրերը՝ ապահովել հայութեան թիկունքը: Ապահովութեան այս աշխատանքը ռուսական բանակի գործին ալ կուգար: Սակայն ռուսական զինուորական իշխանութիւնը շատ յաճախ արգելքներ կը յարուցանէր ու կը խափանէր կենսունակ ուժերու գործունէութիւնը: Ժողովուրդը ընտելացեր էր ընել այնքան, որքան կարելի էր, եւ շահել այնքան, որքան կարելի էր անմիջապէս շահիլ»[4]:

Մուշ և շրջան բերվող պարենն անբավարար էր բնակչության կարիքը բավարարելու համար: Այդ պատճառով կազմակերպվում են խմբեր, որոնք հեռավոր գյուղերում փնտրում էին թաքցրած ցորենի պաշարները և բերում Մուշ: Սասունցի Մանուկի և Արշակ Բոլեյանի խմբերը հաճախ ուղեկցում են բնակիչներին, քանի որ մի շարք շրջաններ վտանգավոր էին: Երբեմն գործողությանը մասնակցում են զինվորականներ, որոնք տրամադրում են զինվորներ՝ բնակիչներին պաշտպանելու համար: Այդ օգնության դիմաց զինվորականները ստանում են գտնված ցորենի կեսը:

թուրքական իշխանությունների կողմից Հայ առաքելական եկեղեցուն պատկանող գույքի գրեթե համատարած թալանը և ավերումը: Գաղտնարաններից շատ քիչ իրեր է հաջողվում գտնել: Դրանց թվում էին ինը մագաղաթե ձեռագրեր, որոնց թվում՝ Հեթում թագավորի ավետարանը: Դրոյի մարտիկները հանձնաժողովին են հանձնում պատահաբար գտնված 30 ձեռագրեր: Տե՛ս «Վան–Տոսպ», N 29, 12 յունիս 1916, էջ 7, 8: **Սասունի Կ.,** Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914–1918). Թրքահայոց գաղթաշարժերը եւ անոնց դերը՝ Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Պէյրութ, 1966, էջ 121, 122: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 56, գ. 369, թ. 1: Մշո Ս. Կարապետ վանքում բացի ձեռագրերից և դասագրքերից կային 1400 կտոր գրքեր: Դեռևս 1911 թ. էջմիածնի միաբան Սահակ ծայրագույն վարդապետ Աստվածատրյանը սկսում է կարգավորել մատենադարանը: Նրա մեկնելուց հետո այդ աշխատանքը շարունակում ուսուցիչ Մակար Խարախանյանը: Մատենադարանին գրքեր նվիրել է կաթողիկոսը՝ 60 կտոր, Ս. Կանայանցը, Ս. ծայրագույն վարդապետ Աստվածատրյանը՝ 315, և «Կարնոյ Ազգ. վարժարանոցի վերատեսուչ պ. Ռոստոմ Զօրեանը՝ 44 կտոր գիրք»: Տե՛ս «Դայլայլիկ», Կ. Պոլիս, 12/25 մարտի 1914, թիւ 27:

1 «Հորիզոն», N 127, 9 յունիսի 1916:

2 ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 153, թ. 6 շրջ.:

3 «Համբաւաբեր», N 30, 24 յուլիսի 1916, էջ 941:

4 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 62:

Խմբապետ Մարտիրոսի, Սասունցի Մանուկի հրամանատարության ներքո գործող խմբերը կարողանում են բերել 7200 փութ հացահատիկ[1]: Իրենց հերթին քրդերն են վերսկսում հարձակումները՝ աշխատելով թույլ չտալ հայերին հիմնավորվել հայրենի օջախներում: Նման հարձակումները նպատակ ունեին նաև խուճապ սերմանելու հայ բնակչության շրջանում: Այսպես՝ մայիսի 29–ի գիշերը քրդերը հարձակվում Մանազկերտից եկող հայերի վրա, որոնք պատրաստվում էին ճանապարհին հիմնել սննդատու կայաններ: Հայերից մեկ հոգի սպանվում է[2]: Բացի այդ՝ քրդերը հարձակվում են Խնուս գնացող 13 հայերի վրա և խլում բոլոր բեռնակիր կենդանիներին:

Հակառակորդի դեմ ուղղված ոչ բոլոր արշավանքներն էին հաջողությամբ ավարտվում: Դրանցից մեկի ժամանակ հայկական ստվար մի խումբ, որ կազմված էր սասունցիներից և Մշո դաշտի չխուրցիներից, շրջապատվում է հակառակորդի կողմից: Անհավասար մարտում զոհվում է 40 հոգի[3]: Յ. Զավրիևին ուղղված նամակից տեղեկանում ենք, որ հարձակումն իրականացրել է Մուսա բեկն իր 500 ձիավորներով[4]:

1916 թ. մայիսի 20–ին կազմած զեկուցագրում ԿՀԲԸ–ին կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի Մուշի լիազոր Կ. Սասունին ներկայացնում է բնակչության մոտավոր վիճակագրությունը.

1. Խութ, Բռնաշեն և Մոտկան	3071 հոգի
2. Սասուն	1596 հոգի
4. Մուշ	4506 հոգի
5. Մշո դաշտ	4205 հոգի
Ընդամենը	8711 հոգի[1]

Զեկուցագրում Կ. Սասունին հետևյալ մանրամասնություններն է հաղորդում. «Սասունի բնակչութեան 80 տոկոսը երիտասարդ տղամարդիկ են, իսկ դաշտը՝ 50 տոկոս: Խութի և Բռնաշէնի գաղթականութիւնը եկել է ամբողջ ընտանիքով, որոնց մեծամասնութիւնը՝ 70 տոկոսը, կին և երեխայ են»[5]: Ռ. Տեր–Մինասյանի հեռագրի համաձայն՝ Խնուսում կա 120, Գյումգյումում՝ 60, իսկ Մուշում՝ 150 որբ[6]:

Շարունակվում են աշխատանքները քրդերի մոտ գերության մեջ գտնվող հայերին ազատելու համար: Թիֆլիս Անդրանիկի անունով հեռագիր է ստացվում: Հեռագիրն ուղարկել էին Մուրադը, Սեպուհը և Սմբատը: Նրանք հայտնում են, որ քրդերի մոտ պատանդ պահվող չորս հազար սասունցիներին ազատելու համար հարկավոր է տասը հազար ռուբլի:

---

1 **Սասունի Կ.,** Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 124:
2 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 67:
3 «Համբաւաբեր», N 23, 5 յունիսի 1916, էջ:
4 Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 128:
5 Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 60: «Համբաւաբեր», N 30, 24 յուլիսի 1916, էջ 953:
6 «Համբաւաբեր», N 30, 24 յուլիսի 1916, էջ 953:

1916 թ. հունիսին Մուշ է գալիս Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան բաժանմունքի ներկայացուցիչ, մասնագիտությամբ գյուղատնտես Աշոտ Աթանասյանը: Նա ուսումնասիրություններ է կատարում և իր եզրակացությունները ներկայացնում վերադասին: Նրա հաշվարկների համաձայն՝ Մշո դաշտի 93 հայկական գյուղերից կանգուն էր մնացել միայն 17–ը: Մնացածները կամ հրդեհվել, կամ քարուքանդ էին արվել քրդերի ու թուրքերի կողմից: Բոլոր բնակավայրերը ենթարկվել էին թալանի: Ա. Աթանասյանը կատարում է հասցված վնասի մոտավոր հաշվարկը, որը նրա կարծիքով կազմում է մոտ 300 միլիոն ռուբլի[1]:

Գյուղերում կազմակերպվում են կառավարման տեղական մարմիններ: Նրանց հետ աշխատելով՝ Կ. Սասունին և գործընկերները փորձում են կազմակերպել երկրագործական աշխատանքները: Նրանք գյուղացիներին տալիս են 24 եզ, «որպէսզի կարողանան կամել իրենց կալերը»[2]:

Օրական Մուշ են գալիս ջարդերից փրկված կամ քրդերի գերությունից փախած տասից քսան հոգի: Սակայն վերադարձողների թիվն ավելի շատ է: Նրանց մի մասը չի արձանագրվում: Կ. Սասունու գնահատմամբ՝ շրջանի բնակչության թվաքանակը հասնում է 9500–ի: Նոր ժամանողներին արձանագրում են հատուկ տետրում և ուղարկում Մուշի պարետին: Նորեկները ստանում են հագուստ և տասն օրվա պարեն[3]:

Ինչպես նշում է Կ. Սասունին, «Սասունի բնակչութեան 80 տոկոսը երիտասարդ տղամարդիկ են, իսկ Դաշտինը՝ 50 տոկոսը տղամարդ: Խութի և Բռնաշէնի գաղթականութիւնը եկել է ամբողջ ընտանիքով, որոնց մեծամասնութիւնը՝ 70 տոկոսը, կանայք ու երեխաներ են»[4]:

Բավականին լավ հարաբերություններ են հաստատվում հայերի և տեղի ռուսական հրամանատարության միջև: Հայերը ոչ միայն պարենով էին օժանդակում ռուսներին, այլև հետախուզում էին հակառակորդի դիրքերը: Լինելով տեղացիներ՝ հայերը կարողանում էին ամենայն մանրամասնությամբ հետախուզել տեղանքը և արժեքավոր տեղեկություններ հայթայթել ռուսների համար: Կազմվել էր մարտական հատուկ խումբ, որի մեծամասնությունը սասունցիներ էին:

Հավանաբար հայերից կազմված մարտական խմբերի ակտիվ գործողությունները և ռուսների առաջացումը հարկադրում են քրդերին «կամավոր» հրաժարվել հայ գերիներից: Նրանց հոսքը գնալով ավելանում է: Սասունից և այլ վայրերից արդեն սկսում են Մուշ գալ օրական 30–60 հոգի[5]:

Իր գործողություններում ռուսական հրամանատարությունը լայնորեն օգտագործում էր սասունցիներից կազմված խուզարկու խմբերը: Նրանցում ընդգրկված էին երեք հարյուր հոգի: Նրանք Սասունի լեռնաշղթայի վրա

1 «Համբաւաբեր», N19, 8 մայիսի 1916, էջ 590:
2 Սահակյան Ռ., Աշոտ Աթանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում, «ԲՀԱ», N 1–2, 2007, էջ 47:
3 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 69:
4 Նույն տեղում, թ. 60:
5 Նույն տեղում:

դիրքեր էին գրավել և միաժամանակ հետախուզում էին հակառակորդի տեղաշարժը և դիրքերը:

Սասունցիների մարտական խմբերը, սկսած հուլիսից, կռիվներ են մղում հակառակորդի դեմ, որի թվաքանակը օրեցօր աճում է: Ռուսական հրամանատարությունը շտապում է նրանց օգնություն հասցնել: Երկու օր անընդհատ ընթանում են կատաղի կռիվներ: Հուլիսի 22–ին թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումները գրավում են Մշո դաշտի Ղըզըլաղաճ գյուղը՝ անցնելով ռուսական բանակի թիկունքը: Դա վտանգում է Մուշում և դաշտում գտնվողներին[1]:

Հուլիսի 23–ին Կ. Սասունին և ընկերները շտապում են համապատասխան հրահանգներ տալ բնակչությանը՝ անհրաժեշտ իրերով նահանջի պատրաստվելու համար: Քաղաքի բնակչության նահանջն սկսում է հուլիսի 23–ի գիշերը, իսկ դաշտի բնակչությանը՝ վաղ առավոտյան[2]:

Լեռներից մարտիկների իջնելուց հետո հնարավոր է լինում մարտական խմբերը օգտագործել նահանջի ճանապարհը պաշտպանելու համար: Մուշից գաղթի ճանապարհը բռնում է հինգ հազար հոգի[3]:

Վտանգը վերանալուց հետո՝ սեպտեմբերի 23–ին, Կ. Սասունին կրկին վերադառնում է Մուշ[4]: Նրա հետ միասին գործում են Համո Մակարյանը և Արմեն Սասունին: Նրանք Մուշում և Խնուսում հիմնելու էին մթերքի պահեստներ[5]:

Այդ օրերի մասին Կ. Սասունին գրում է. «Այս նահանջէն յետոյ, գրաւուած Հայաստանը այլևս մասնակի նահանջներու ենթակայ չեղաւ: Ժողովուրդը կամաց կամաց տեղաւորուեցաւ, մնայուն բնակիչի հանգամանք ստացաւ, իր սեփական աշխատանքով եւ վարուցանքով ապրելու կեանքի մէջ մտաւ»[6]:

Գեներալ Ֆ. Ի. Նազարբեկովի վկայությամբ՝ ռուսական զորքերը մի քանի անգամ պատժիչ արշավախմբեր են կազմակերպում քրդական անկանոն ջոկատների դեմ: Քրդական գյուղերում նրանք հիմնականում գտնում էին միայն ծերունիների, հիվանդների, հայ կանանց ու երեխաների[7]: Որոշ օգնություն են ցույց տալիս նաև բալակցի, մոտկանցի և հատկապես Շեկոյի տան քրդերը, որոնց միջոցով հաջողվում է փրկել զգալի թվով հայերի: Սակայն նման դեպքերը քիչ էին, քանզի քրդերի ճնշող մեծամասնությունը մասնակցել էր հայերի զանգվածային կոտորածներին:

1916 թ. դեկտեմբերի 1–ին Հայկական կենտրոնական կոմիտեին ներկայացրած զեկուցագիր–հաշվետվության մեջ Կ. Սասունին հայտնում է, որ հուլիսի 23–ի նահանջից հետո վերադառնալով Խնուս և Մուշ՝ բնակչությանը հացով ապահովելու համար ձեռնարկում են մի շարք անհրաժեշտ մի-

1 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 74:
2 Նույն տեղում, թ. 69:
3 Նույն տեղում:
4 Նույն տեղում, թ. 70:
5 Նույն տեղում, թ. 37:
6 «Աշխատանք», N 43, 28 սեպտեմբերի 1916:
7 **Սասունի Կ.,** Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 134:

ջոցառումներ: Առաջին հերթին կատարվել է բնակչության հաշվառում, որի արդյունքը հետևյալն էր.

«ա) Խնուսի շրջանում 3343 [հոգի],
բ) Կումկումի շրջանում 600 [հոգի],
գ) Մուշի շրջանից և նոր ազատուողներ 1000 [հոգի]:

[Ընդամենը] 4943 [հոգի]»[1]:

Այսպիսով՝ ռուսական զորքերի՝ հուլիսի 23–ի հերթական նահանջից հետո Կարո Սասունու իրականացրած նոր հաշվառումը ցույց է տալիս, որ 1916 թ. մայիսի 20–ին իր արձանագրած փրկվածների մոտ կեսը այլևս հայրենի բնակավայրեր չի վերադարձել:

Նշված ժամանակահատվածում Մուշում գործում էր միայն ԿՀԲԸ հայկական կենտրոնական կոմիտեն. այլ կազմակերպություններ և ընկերություններ այնտեղ չկային:

Կ. Սասունին նոյեմբերին Խնուսում հիմնում է որբանոց: Վերջինիս նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների և կահավորման համար հատկացվում է համապատասխանաբար 2100 և 1800 ռուբլի: Սկզբնական շրջանում որբերի սննդի խնդիրը հոգացել են ԿՀԲԸ–ի Մուշի և Խնուսի ու Քաղաքների միության սննդակայաններից[2]:

Իր հաշվետվության մեջ Կ. Սասունին հպարտությամբ գրում է. «(Որբերը – Ռ. Ս.) կանոնաւոր հագնւած են, ունեն իրենց առանձին մահճակալները (որ տեղում շինել տւինք 4–րդ կօրպուսի շինարարական ճիւղին) և զատ զատ բոլոր իրերը: Շէնքը վերանորոգել ենք, և ներկայացնում է շատ մեծ յարմարութիւններ, մաքրութեան և կանոնաւորութեան տեսակէտից, եթէ ոչ գերազանցել՝ գոնէ կը մրցի Կովկասի բոլոր որբանոցների հետ»[3]:

Թիֆլիսում ապաստանած 60 սասունցիներ և մշեցիներ ցանկություն են հայտնում գալ Մուշ և զբաղվել պատանդների ազատման խնդրով: Նրանք, լինելով տեղացիներ, գերազանց գիտեին տեղանքը և կարող էին լուրջ օգնություն ցույց տալ: Չնայած անհրաժեշտ դրամը չի տրամադրվում (հնարավորություն կար միայն երկու հոգու ֆինանսավորելու, այն էլ՝ երկու ամսով), Մուշում գործում են մոտ հարյուր հոգի: Նրանցից 25–ը ծիավոր են: Իսկ Սիլվանի շրջանում գործում է զինված երիտասարդների 150–հոգանոց ջոկատը:

Վերը նշված խումբը, բացի լեռներում հայերին հայտնաբերելուց, կատարում է նաև հետախուզություն: Նրանց հայթայթած տեղեկությունների համաձայն՝ Մոտկանի և Խիզանի շրջանում կան մոտ հինգ հազար հայեր: Իսկ Խուլփի, Ֆարղինի, Հազրոյի և Սիլվանի դաշտում՝ մոտ ութ հազար, որոնք բացառապես երիտասարդներ են[4]:

1 ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 11, թ. 17 շրջ.:
2 «Համբաւաբեր», N 50, 11 հոկտեմբերի 1916, էջ 1577:
3 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 14:
4 Նույն տեղում, թ. 14 շրջ.:

Բաղեշից Սեպուհը հայտնում է. «Քիւրդերը մրցումի ելած են հայերին ազատելու գործում. ամեն օր տասնեակ հայեր են գալիս: Այս երեք օրուայ ընթացքում 250 հայ է ազատ արձակուած: Իւրաքանչիւրի համար տալիս ենք մէկ օսմանեան ոսկի. ում սրտին մօտ է հայի կեանքը, թող աճապարէ փրկելու հայութեան մնացած բեկորները»[1]: Ինչպես նշում է Կ. Սասունին, «1916–ի աշունը դարձավ մեզի համար տեղաւորման եւ ցանքի շրջան մը, որ 1917–ի տարեշրջանին աւելի բարգաւաճ վիճակի մը հասաւ: Երկրի ամբողջ հայութիւնը հետզհետէ ինքնաբաւ կը դառնար»[2]:

Խնուս–Մուշի շրջանը բժշկական օգնությամբ ապահովելու նպատակով Քաղաքների միությունը կազմակերպում է հիվանդանոց: Վերջինիս տնօրենն էր բժիշկ Գարեգին Շահնազարյանը: Նա իր ենթակայության տակ ուներ երկու բուժակ, գթության քույր, երկու սանիտար, երկու հիվանդապահուհիներ և այլ աշխատողներ[3]: Խնուսում, Սարիղամիշում, Մանազկերտում և այլ վայրերում տեղակայված էին Քաղաքների միության այլ բաժանմունքները, ինչպես, օրինակ՝ պարենի պահեստը, սննդակայանները, թռուցիկ ջոկատները, գումակը և այլն[4]:

Ռուսական իշխանությունների կողմից թույլատրվում է Բուլանըխ գավառի մոտ 400 ընտանիքների տեղափոխվել Ալաշկերտ՝ իրենց տնային կենդանիներով: Հայտնելով այդ մասին՝ Յ. Զավրիևը միաժամանակ նշում է, որ նրանք տեղում ապահովվելու են սերմացուով: Տեղափոխվողների սննդի խնդիրները հոգալու էր Քաղաքների միությունը՝ ընդհուպ մինչև 1917 թ. հուլիսը[5]:

Ամփոփենք: 1914–1916 թթ. ընթացքում ՀՅԴ–ի կողմից կատարվում է զգալի աշխատանք: Կուսակցությունը պատերազմի սկզբնական շրջանում իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է կամավորական շարժման վրա՝ կատարելով մարտիկների զինվորագրումը և ապահովելով նրանց համապատասխան հանդերձանքով:

Ռուսական զորքերի առաջխաղացումը կուսակցության ուշադրությունը բևեռում է մեկ այլ կարևոր հիմնահարցի՝ ազատագրված տարածքների բնակավայրերի հայ բնակչության օգնության և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման վրա: ՀՅԴ–ն այս ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ է կատարում հատկապես Ալաշկերտի հովտում: Սակայն 1914 թ. ռուսական զորքերի դեկտեմբերյան նահանջը հարկադրում է հայկական կազմակերպություններին ժամանակավորապես դադարեցնել գործունեությունը Ալաշկերտի հովտում: Նրանք վերսկսում են վերականգնողական աշխատանքները 1915 թ. գարնանը:

Կուսակցության գործունեության հաջորդ կարևոր վայրը Վասպուրականն էր: ՀՅԴ–ն և հայկական բարեգործական կազմակերպությունները լայնածավալ վերականգնողական և կազմակերպչական աշխատանքներ

1 «Համբաւաբեր», N 50, 11 դեկտեմբերի 1916, էջ 1577:
2 «Համբաւաբեր», N 30, 24 յուլիսի 1916, էջ 955:
3 Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 137:
4 ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 69, թ. 23:
5 Նույն տեղում, թ. 23, 24:

են ծավալում Վան քաղաքում և գավառներում: Ցավոք, 1915 թ. հուլիսյան նահանջը հնարավորություն չի տալիս իրականացնելու նախատեսվող ծրագրերը:

1916–1917 թթ. ՀՅԴ–ի անդամները գործում էին զանազան հասարակական և բարեգործական կազմակերպություններում: Նրանց աշխատանքների բնույթը պայմանավորված էր այն հանգամանքով, թե որ վայրում էին գտնվում: Մուշում, բացի գաղթականությանը ցույց տրվող օգնությունից, հիվանդանոցների և որբանոցների հիմնումից, կուսակցությունն իր ներկայացուցիչների միջոցով կազմակերպում էր մարտական խմբեր, որոնք ոչ միայն մղում էին զուտ պաշտպանական, այլև հարձակողական մարտեր: Նրանք գործում էին ինչպես քրդական, այնպես էլ թուրքական ստորաբաժանումների դեմ: Հայերը կատարում էին հետախուզական ծառայություն՝ ռուսական հրամանատարությանը հաղորդելով արժեքավոր տեղեկություններ հակառակորդի զինուժի և տեղաշարժի մասին:

Իրադրությունն այլ էր Էրզրումում, Երզնկայում, Բաբերդում և սրանց շրջակա բնակավայրերում: Այստեղ հայկական կազմակերպությունները հարկադրված էին հաղթահարել ռուսական որոշ զորավարների կողմից հարուցվող արհեստական արգելքները: Այդ էր պատճառը, որ կուսակցությունը նշված վայրեր է գործուղում իր նշանավոր անդամներին՝ Ռոստոմին, Յ. Զավրիևին, Սեպուհին, Բուլղարացի Գրիգորին, Սեբաստացի Մուրադին, Մկրտիչ Լորեցյանին և այլոց: Այս շրջանները համարվում էին առավել վտանգավոր վայրեր, ուստի այդ հանգամանքով էլ էր պայմանավորված նշված անձանց ներկայությունը այդ տեղերում:

Ինչպես վկայում են արխիվային վավերագրերը, ՀՅԴ–ի անդամներից ոմանք, բացի գաղթականությանը ցույց տրվող օգնությունից, նաև իրականացրել են հետախուզական գործունեություն:

Ինքնին հասկանալի է, որ 1914–1916, ինչպես նաև 1917 թվականներին ՀՅԴ կուսակցության գործունեությունը ներկայացված է համառոտակի. հետագա գիտական պրպտումներում կաշխատենք լրացնել բացը: Հարկ ենք համարում ընդգծելու, որ կուսակցության գործունեությունն առավել մանրամասն ուսումնասիրելու համար գիտական հասարակայնությունը Բոստոնում պահվող ՀՅԴ արխիվի վավերագրերի մեծ կարիքն ունի. որոնք լրացուցիչ լույս կսփռեն 1915–1917 թթ. ՀՅԴ–ի կողմից կատարած լայնածավալ գործունեության վրա:

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Բաբկեն Հարությունյան
Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի
Հայոց պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը 120–ամյա ճանապարհին երբեմն ունեցել է վայրէջքներ, բայց մի բան հստակ է. նա եղել է հայ ժողովրդի շահերի արտահայտիչը բոլոր տեսակետներից: Կուզենայի ընդգծել, որ մենք ինչ–որ տեղ պարտական են մեր ազգային կուսակցություններին. զուտ պատմագիտական իմաստով՝ կուսակցությունների պատմությունը՝ որպես հայոց պատմության անքակտելի մաս, մեր գիտնականների ուշադրության կենտրոնում պետք է լինի: Կուզենայի այստեղ շեշտել պ. Գ. Խուդինյանի զեկուցումը, որը լավ էր կառուցված և նյութերով խիստ հարուստ էր: Պետք է ասել, որ նա վաղուց արդեն մեր պատմագիտության մեջ իր որոշակի տեղն ունի՝ որպես մի տեսակ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության և՛ պատմության, և՛ գաղափարախոսության մասնագետ. ես այսօր հաճույք ստացա նրա զեկուցումից:

Հարցադրումները շատ հետաքրքիր էին՝ կապված հայ–ռուսական հարաբերությունների, Արևմտյան Հայաստանի տարածքների յուրացման հետ: Կցանկանայի՝ շեշտվեր այն հանգամանքը, որ Արևմտյան Հայաստանն արդեն հայացված էր. մահմեդական բնակչության թիվը շուրջ 90 հազար էր: Եվ եթե այդ քաղաքականությունն իրագործվեր, մենք այսօր կունենայինք բավական ընդարձակ Հայաստանի Հանրապետություն:

Եվ, վերջապես, գաղութացման ռուսական ծրագրերի մասին: Երբ 1828 թ. կնքվեց Թուրքմենչայի պայմանագիրը, կարող էր խաչ քաշվել հայ ժողովրդի վրա, որովհետև ռուսական ծրագիրը նախատեսում էր 20 հազար մալոռուս, այսինքն՝ ուկրաինական կոզակական ընտանիքներ բնակեցնել Արևելյան Հայաստանում: Այդ ծրագրի իրագործումը մեզ համար կլիներ մահացու հարված: Բայց Ռուսական կայսրությունը միջոցներ չուներ և ստիպված համակերպվեց հայերի վերաբնակեցմանը, ինչի հետևանքով մենք ունեցանք այն միջուկը, որի շուրջ, փաստորեն, ստեղծվել է այսօրվա մեր անկախ հանրապետությունը:

Ես հաջողություն եմ մաղթում մեր գիտաժողովին և ցանկանում գիտաժողովի նյութերը տեսնել հրատարակված. դա կլինի որոշակի ներդրում հայ պատմագրության մեջ:

Շնորհակալություն:

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

Յուրա Հովսեփյան
Երևանի պետական համալսարանի դասախոս,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ

Ուսումնասիրության ժամանակահատվածի վերաբերյալ մենք ունենք սկզբնաղբյուրների մեծ պակաս, իսկ հիմնահարցի լուսաբանման համար դրանք խիստ անհրաժեշտ են: Երևի թե այսօրվա գիտաժողովը մեզ հնարավորություն է տալիս, որպեսզի խոսենք նաև աղբյուրների մասին», և առաջին հերթին պետք է դիմեմ սիրելի կուսակցությանը, որպեսզի նրա ղեկավարությունը կազմակերպի ԱՄՆ–ից ՀՅԴ արխիվում պահվող փաստաթղթերի տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն կամ պատճենահանումը, որը հնարավորություն կտա մեր ուսումնասիրողներին ունենալու ամբողջական պատկեր տվյալ ժամանակաշրջանի մասին:

Երկրորդ կարևորագույն հարցն այն է, որ ժամանակին Ռուսաստանի Դաշնության արխիվները բացվեցին, սակայն արդեն այսօր այդ արխիվների զգալի մասը կրկին փակվել է: Կազմակերպվել է առանձին մի արխիվ, որը կոչվում է “Архив президента Российской Федерации” («Ռուսաստանի Դաշնության նախագահի արխիվ»): 1919–1920 թթ. իրադարձությունները լուսաբանելու համար մեզ անհրաժեշտ են ռուսաստանյան արխիվների նյութերը, առանց որոնց մենք չենք կարող ճիշտ շարադրել և ճիշտ եզրահանգումներ կատարել մեր պատմության այդ ժամանակաշրջանի վերաբերյալ:

Տարբեր ճանապարհներով ինձ հաջողվել է Մոսկվայից ստանալ Աֆղանստանի և Հնդկաստանի վերաբերյալ նյութեր, որոնք ներկայացնում են այդ ժամանակաշրջանում խորհրդային հետախուզության գործունեությունը: Նրանցում կան շատ հետաքրքիր տեղեկություններ, որոնք առաջին հայացքից թվում է, թե չեն վերաբերում մեր կողմից ուսումնասիրվող հիմնախնդիրներին, սակայն դրանց քննությունը ցույց է տալիս, թե տվյալ ժամանակահատվածում Խորհրդային Ռուսաստանն ինչպիսի քաղաքականություն էր վարում նաև Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում:

Կարծում եմ, որ խիստ անհրաժեշտ է նման նյութերի հայթայթումը, քանի որ Ռուսաստանում ուսումնասիրողներին թույլ է տրվում ծանոթանալ դրանց մի մասին՝ գաղտնիության ժամկետը լրանալուց հետո: Իմ մտահոգությունն այն է, որ նշված վավերագրերը գաղտնազերծվելուց հետո չմնան տարբեր ֆոնդերում, այլ հնարավորություն լինի դրանք դնելու գիտական շրջանառության մեջ:

Մինչև 1917 թ. Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունն ընթացել է բարդ քաղաքական մթնոլորտում: Որքան էլ մենք փորձենք գնա-

հատել 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունն իր դրական կողմերով, այսօր ես այն տեսակետին եմ, որ այդ հեղափոխությունը որոշակի դժվարություններ և բարդություններ ստեղծեց մեզ համար: Կարծում եմ՝ նաև այդ հեղափոխությունն էր պատճառներից մեկը, որ մեր տարածքների հետ կապված մի շարք խնդիրներ իրենց լուծումը չեն ստանում:

Այնպես որ մենք միանշանակ չպետք է գովաբանենք այն երևույթները, որոնք տեղի են ունեցել նշված ժամանակաշրջանում:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Հայ Յեղափոխական Դաշնակցությունը կանգնեց մի շարք կարևորագույն խնդիրներ լուծելու առջև:

Դրանք հետևյալն էին.

1. ՀՅԴ–ն այն քաղաքական ուժն էր, որն իր վրա վերցրեց ժողովրդի ճակատագրի պատասխանատվությունը: Այդ շրջանում հայ իրականության մեջ չկար քիչ թե շատ հեղինակավոր ուժ, որը կկարողանար դա անել:

2. Առաջնահերթ և կարևոր խնդիրներ, որոնք պետք է լուծեր Հայ Յեղափոխական Դաշնակցությունը:

Երկրորդ հիմնախնդիրը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Կազմակերպել բնակչության պաշտպանությունը, քանի որ շարունակում էր ընթանալ Առաջին համաշխարհային պատերազմը:

2. Իրականացնել գաղթականության տարրական կենսապահովումը:

Խնդիրների մյուս շարքը վերաբերում է ՀՅԴ–ի հարաբերություններին ժամանակավոր կառավարության և Անդրկովկասում ստեղծված իշխանության տեղական մարմինների հետ:

Հայության համար արհավիրք դարձավ այն ժամանակահատվածը, երբ քաղաքական ասպարեզում հաստատվում է Փետրվարյան հեղափոխության ընթացքում ձևավորված և ավելի մեծ կազմակերպական աշխատանք կատարած բոլշևիկյան կուսակցությունը: Նրանք կատարում են հեղաշրջում, որի հետևանքով հայ ժողովրդի գլխին կրկին կախվում է ցեղասպանության վտանգը:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, լինելով սոցիալիստական կուսակցություն, ճիշտ է, իր վրա վերցնելով իշխանության մարմինների կազմակերպումը, պատրաստ էր պետական կառավարման համակարգում ընդգրկելու այն բոլոր ուժերը, որոնք գործում էին հայ քաղաքական դաշտում: Ուստի պատահական չէ, որ կարևորագույն խնդիրների մի մասը լուծվել է միջկուսակցական բանակցությունների ընթացքում:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, ի թիվս Անդրկովկասի մյուս քաղաքական ուժերի և կազմակերպությունների մեծ մասի, չընդունեց Վ. Ի. Լենինի կողմից կազմակերպած խորհրդային իշխանությունը: Սակայն, այնուհանդերձ, կարծում էր, որ պետք է որոշ հարաբերություններ ստեղծել բոլշևիկների հետ: Դաշնակցության ներկայացուցիչները փորձեցին որոշ համաձայնության եզրեր գտնել բոլշևիկների հետ, և, ինչպես հայտնի է,

Ռոստոմը նույնիսկ մասնակցում է «Թուրքահայաստանի մասին» դեկրետի (հրովարտակի) մշակմանը:

Մյուս կարևոր հիմնախնդիրը, որը դրված էր Դաշնակցության առջև, Անդրկովկասում ստեղծված իշխանական մարմիններին նրա մասնակցությունն էր: ՀՅԴ–ն իր ներկայացուցիչներն ունեցավ ինչպես Անդրկովկասի կոմիսարիատում, այնպես էլ՝ Սեյմում:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը միաժամանակ հարաբերություններ էր պահպանում Ժամանակավոր կառավարության, ինչպես նաև միջազգային սոցիալիստական ուժերի հետ: 1917 թ. ապրիլի 26–ին ՀՅԴ–ն հրավեր է ստանում մասնակցելու Սթոքհոլմում կազմակերպվող Սոցիներնի կոնֆերանսին: Դաշնակցության կողմից լիազորվում է Ռոստոմը: Նա ժամանում է Ռուսաստանի մայրաքաղաք, ուր հանդիպում է Պետրոգրադի զինվորների և բանվորների պատգամավորների խորհրդի ղեկավարության հետ: Բանակցությունների արդյունքում խորհուրդը հայկական պահանջների մի մասն ընդգրկում է կոնֆերանսին ներկայացվող իրենց ծրագրում:

Ռոստոմի՝ Պետրոգրադում գտնվելը իր արդյունքն է ունենում մեկ այլ խնդրում ևս: 1917 թ. ապրիլի 27–ին Ժամանակավոր կառավարությունը որոշում է ընդունում ռուսական զորքերի կողմից գրաված Արևմտյան Հայաստանի տարածքները դուրս բերելու բանակային հրամանատարության ենթակայությունից և անմիջականորեն ենթարկելու Ժամանակավոր կառավարությանը: Գրավված տարածքների ղեկավարությունը հանձնվում է գլխավոր կոմիսարի պաշտոնում նշանակված գեներալ Պ. Ի. Ավերյանովին: Նրա՝ քաղաքացիական հարցերի գծով տեղակալի պաշտոնը ստանձնում է ՀՅԴ անդամ և հասարակական նշանավոր գործիչ Յակով Զավրիևը (Հակոբ Զավրիյան):

Հայ Յեղափոխական Դաշնակցությունն այն կուսակցությունն է, որ ունեցել է իր վառ անհատ գործիչները, որոնք ճակատագրական պահերին վճռական որոշումներ են ընդունել և կարողացել են դրանք կյանքի կոչել: Այս առումով Դաշնակցությունն իր անհատներով հայոց պատմության մեջ առաջնակարգ տեղ է զբաղեցրել:

Մյուս կարևոր խնդիրը, որը ես կցանկանայի առանձնացնել, այն է, որ ՀՅԴ–ն, որպես հայության ներկայացուցիչ, մասնակցեց Համառուսաստանյան սահմանադիր ժողովի պատգամավորների ընտրություններին, և Անդրկովկասում բնակվող հայերի շուրջ 95%–ը՝ 558400 մարդ, իր քվեն տվեց կուսակցության թեկնածուներին: Դրա շնորհիվ Սահմանադիր ժողովում կուսակցությունը պետք է ունենար ինը պատգամավոր: Այս հանգամանքը վկայում է կուսակցության հեղինակության մասին, որը ՀՅԴ–ն վայելում էր Անդրկովկասի հայ բնակչության գրեթե բոլոր խավերի շրջանում:

Այդ տարիներին Հայ Յեղափոխական Դաշնակցությունը մտահոգված էր ոչ միայն Արևելյան Հայաստանի, այլև՝ Անդրկովկասում գտնվող հայության ճակատագրով: Ուստի պատահական չէ, որ ՀՅԴ–ն գործուն մասնակցություն ունեցավ Բաքվի 1918 թ. իրադարձություններին: Բաքվի կոմունան կարողացավ գոյատևել շնորհիվ Բաքվի Հայոց ազգային խորհրդի, քաղաքի

Դաշնակցության կառույցների և հատկապես Ռոստոմի գործուն մասնակցության: Այն բանից հետո, երբ Ստ. Շահումյանի գլխավորած կառավարությունը հրաժարական տվեց, ՀՅԴ–ն, մտահոգված Բաքվի հայության ճակատագրով, մասնակցում է Կենտրոնական Կասպիի կառավարության աշխատանքներին և մինչև վերջ՝ 1918 թ. սեպտեմբերի 15–ը, մնում է Բաքվում՝ կռվելով թուրքական զորքերի դեմ:

Հայ ժողովրդի պատմության մեջ կարևոր նշանակություն ունեն 1918 թ. մայիսյան հերոսամարտերը: Ճիշտ է՝ Մայիսյան հերոսամարտերի ժամանակ հիմնական կռվող ուժը հայոց բանակն էր, սակայն վիճահարույց խնդիր չէ այն հարցը, թե ով է եղել հայոց առաջին հանրապետության կերտող Արամ Մանուկյանը, ով և կարողացավ օգտագործել իր կազմակերպական ջիղը, իր բոլոր ունակությունները՝ համախմբելով հայության ուժերն ընդդեմ թուրքական կանոնավոր զորամասերի:

1918 թ. իրադարձություններն այնքան արագ էին փոխվում, որ դժվար էր կողմնորոշվել այդ բարդ պայմաններում: Այսօր, նույնիսկ երբ մարդիկ ունեն անհամեմատ մեծ տեղեկատվական հնարավորություններ, կրկին դժվարանում են հստակ վերլուծություններ կատարել: Այնուամենայնիվ, Հայ Յեղափոխական Դաշնակցությունը կարողանում է հիմնականում կատարել այն գործողությունները, որոնք կապված էին վերը նշված փոփոխությունների հետ: Եվ եթե նույնիսկ եղել են սխալներ, իսկ սխալներից ոչ ոք չի կարող խուսափել, ապա դրանք պայմանավորված էին այն հանգամանքով, որ ժամանակ չի եղել դեպքերն ու իրադարձություններն արագ վերլուծելու համար: Չի եղել, այսպես կոչված, «ժամանակի շռայլություն»:

Մյուս կարևոր խնդիրը, որի վրա ես ցանկանում եմ հրավիրել գիտաժողովի մասնակիցների ուշադրությունը, ևս կարիք ունի ճշտումների և խորը ուսումնասիրությունների: Դա Անդրկովկասյան Դեմոկրատական Հանրապետության փլուզումը և անկախ պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի առաջացումն է:

Ընդհանրապես շատ մեղադրանքներ կան, որ ՀՅԴ–ն ոչ մի քայլ չի արել անկախ պետականության հռչակման ժամանակաշրջանում: Սակայն երբ անդրադառնում ենք այդ ժամանակաշրջանի իրադարձություններին, ապա կրկին տեսնում ենք, որ դրանք չափազանց արագ են զարգացել: Ճիշտ է՝ երևում էր, որ Անդրկովկասյան Հանրապետությունը երկար կյանք չունի, սակայն Դաշնակցությունն աշխատում էր ձգձգել այդ կազմավորման փլուզումը, մինչև կավարտվեր Առաջին համաշխարհային պատերազմը, և կվերանար թուրքական ներխուժման վտանգը:

ՀՀ–ն կերտեց մեր կուսակցությունը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեության, մեր բանակի և ժողովրդի միասնականության և հայոց պետականության նկատմամբ ունեցած հավատի շնորհիվ:

Ցանկանում եմ ընդգծել, որ զեկուցման թեման բավականին ծավալուն է, և չեմ կարող ժամանակի առումով ներկայացնել հիմնախնդրի բոլոր մանրամասները:

Այսօր, սակայն, այլևս ապացուցման կարիք չունի այն, թե ինչու Հայաստանի Հանրապետությունը վերացավ: Դա սուբյեկտիվ գործոնի հետ կապված խնդիր է: Այսինքն՝ նորանկախ պետականությունը դադարեց գոյություն ունենալ թուրք–բոլշևիկյան դավադրության և ագրեսիայի հետևանքով: Այսօր հրապարակում եղած փաստաթղթերը թույլ են տալիս մեզ հստակորեն խոսել այդ մասին:

Շնորհակալություն:

Էդիկ Մինասյան
Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի դեկան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ «ԴԵՊԻ ԵՐԿԻՐ» ԿԱՐԳԱԽՈՍԸ

Մեր նորագույն պատմության մեջ իր ուրույն տեղն ունի արցախահայության ազատագրական շարժումը: Այն ավելի քան յոթ տասնամյակի վերք ու տառապանք ունի: 1921 թ. հուլիսի 5–ին Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին ապօրինի բռնակցվելուց ի վեր արցախահայությունը շուրջ 70 տարի անընդմեջ բողոքել էր դրա դեմ և պահանջել միավորվել մայր հայրենիքի հետ: Սակայն Մոսկվայի և Բաքվի իշխանությունները մերժել էին այդ արդարացի պահանջը: Ավելին՝ Ադրբեջանը կանխամտածված խոչընդոտել էր Լեռնային Ղարաբաղի տնտեսական և գիտամշակութային զարգացմանը, արգելակել կապը մայր հայրենիքի հետ և աստիճանաբար արտամղելով տեղի հայ բնակչությանը՝ արհեստականորեն ավելացրել էր ադրբեջանցիների քանակը:

1980–ական թվականներին ստեղծվել էր այնպիսի վիճակ, որ արցախահայությունը կամ պետք է զանգվածաբար լքեր իր հայրենիքը և արժանանար Նախիջևանի հայության ճակատագրին, կամ պետք է պայքարի ելներ՝ իր բնօրրանը, իր մարդկային ու ազգային արժանապատվությունը պաշտպանելու համար:

Գորբաչովյան «վերակառուցումը» նպաստեց արցախահայության բացահայտ պայքարի ծավալմանը, և ադրբեջանական բռնատիրությունից նրա ազատագրումը դարձավ օրակարգի հարց: «Վերակառուցումից դեպի անկախություն» տանող ծանր ու դժվարին ճանապարհ անցավ հայ ժողովուրդը, որը համազգային միավորմամբ և Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմում տարած փայլուն հաղթանակների շնորհիվ կարողացավ հասնել իր գլխավոր նպատակների իրականացմանը՝ Արցախի մեծ մասի ազատագրմանն ու ՀՀ և ԼՂՀ հայկական երկու անկախ պետականությունների ստեղծմանը: Փաստորեն 1987 թ. վերջերից սկիզբ առավ արցախահայության ազգային ազատագրական պայքարի արդի փուլը[1]:

1988 թ. փետրվարի 20–ին ԼՂԻՄ–ի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց ԼՂԻՄ–ը Ադրբեջանի կազմից հանելու և ՀԽՍՀ կազմի մեջ մտցնելու հարցով Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջև միջնորդելու մասին[2]: Ղարաբաղյան շարժումը ՀԽՍՀ–ում և ԼՂԻՄ–ում կազմա-

1 Տե՛ս **Արշակյան Ա.,** Արցախյան գոյապայքար (1985–1992), Երևան, 2004, էջ 14:
2 «Խորհրդային Ղարաբաղ», 20 փետրվարի 1988, Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1985–2000, Երևան, 2007, էջ 38, 39:

կերպելու նպատակով 1988 թ. մարտի 2–ին Ստեփանակերտում ստեղծվեց «Կռունկ», իսկ մարտի սկզբին Երևանում՝ «Ղարաբաղ» կոմիտեն: ԼՂԻՄ–ը ՀԽՍՀ–ին վերամիավորելու արդար պահանջին Ադրբեջանի ղեկավարությունը ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունների հովանավորությամբ պատասխանեց լռությամբ: Արցախահայությանը ահաբեկելու նպատակով ադրբեջանցի հրոսակները հարձակումներ էին գործում մարզի հայկական բնակավայրերի վրա, իսկ 1988 թ. փետրվարի 27–29–ը Սումգայիթում հայերի նկատմամբ ցեղասպանություն իրականացվեց:

1988 թ. նոյեմբերի վերջին Կիրովաբադից (Գանձակ, Գյանջա), Բաքվից, Շամխորից, Խանլարից, Դաշքիսանից և Ադրբեջանի հայաշատ այլ վայրերից հայ բնակչությունը զանգվածաբար արտաքսվեց: Հայերի բռնագաղթը հաճախ ուղեկցվում էր ջարդերով ու սպանություններով:

Հաշվի առնելով ստեղծված բարդ իրադրությունը՝ 1989 թ. հունվարի 20–ին ԼՂԻՄ–ում ստեղծվեց անմիջականորեն Մոսկվային ենթակա Հատուկ կառավարման կոմիտեն՝ Ա. Վոլսկու ղեկավարությամբ, սակայն Ադրբեջանի սադրանքների հետևանքով այն չկարողացավ կատարել իր առաքելությունը: Արցախահայությունն իր ճակատագիրը տնօրինելու նպատակով 1989 թ. օգոստոսի 16–ին ստեղծեց բարձրագույն կառավարման մարմին՝ Ազգային խորհուրդ: Մինչ այդ Շահումյանի շրջանի հայ բնակչության ֆիզիկական գոյությունն ապահովելու համար 1989 թ. հուլիսի 26–ին շրջխորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց շրջանը ԼՂԻՄ–ին վերամիավորելու մասին:

Այս ամենին հակառակ՝ 1989 թ. նոյեմբերի 28–ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշեց Լեռնային Ղարաբաղը նորից բռնակցել Ադրբեջանին: Սույն որոշումը մարզում իրականացնելու էր Հանրապետական կազմկոմիտեն՝ Վ. Պ. Պոլյանիչկոյի գլխավորությամբ: Նա վարում էր ընդգծված ադրբեջանամետ քաղաքականություն: Սակայն վերջինիս իշխանությունը տարածվում էր միայն ԼՂԻՄ մարզկոմի շենքի շրջանակներում:

Ելնելով դեպքերի զարգացման ընթացքից՝ ՀԽՍՀ Գերագույն և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդները 1989 թ. դեկտեմբերի 1–ին համատեղ որոշում ընդունեցին Լեռնային Ղարաբաղը ՀԽՍՀ–ին վերամիավորելու մասին:

1990 թ. հունվարի 13–ին Ադրբեջանի իշխանությունները Բաքվում հրահրեցին հայ բնակչության նոր ջարդեր և եռանդուն կերպով սկսեցին ադրբեջանցիների նորանոր խմբեր վերաբնակեցնել ԼՂԻՄ–ի տարածքում: Այս գործընթացը ուղեկցվում էր հայ բնակչության նոր կոտորածներով և բռնագաղթով: Ինքնապաշտպանության մղումով ստեղծվեցին հայ աշխարհազորայինների (երկրապահների) առաջին մարտական խմբերն ու ջոկատները, որոնք Շահումյանում, Գետաշենում և Լեռնային Ղարաբաղի այլ շրջաններում արժանի հակահարված տվեցին թշնամուն:

1991 թ. ապրիլի վերջից մինչև օգոստոսի 20–ը ադրբեջանական հատուկ նշանակության ջոկատները (ՕՄՕՆ), խորհրդային զորքերի հետ համատեղ, իրականացրին «Օղակ» ռազմական գործողությունը: Թեժ մարտեր բորբոք-

վեցին Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի տարածքներում, արդյունքում նշված գյուղերն ամբողջությամբ հայաթափվեցին՝ վերաբնակեցվելով ադրբեջանցիներով: Իսկ հունիսին հիմնահատակ կործանվեցին Մարտակերտի և Հադրութի շրջանի 20–ից ավելի հայկական գյուղեր, սպանվեցին ու վիրավորվեցին հարյուրավոր կանայք, երեխաներ, ծերունիներ: Պատանդ վերցվեց ավելի քան 700 մարդ, որոնցից շատերի ճակատագիրն առ այսօր անհայտ է: Նման պայմաններում հաշվի առնելով ինչպես ԽՍՀՄ ղեկավարության կոշտ դիրքորոշումը, այնպես էլ այն փաստը, որ Արցախի միացումը Հայաստանի Հանրապետությանը միջազգային որոշ կազմակերպությունների կողմից դիտվում է իբրև Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնությունների հնարավորություն՝ ԼՂԻՄ–ի իշխանություններն ընտրեցին այլընտրանքային տարբերակ:

1991 թ. սեպտեմբերի 2–ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների մարզային ու Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը, որտեղ ընդունվեց հռչակագիր՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»[1]:

Այս իրողությունը սրերով ընդունեց Ադրբեջանի ղեկավարությունը: 1991 թ. նոյեմբերից Ադրբեջանը զինված հարձակում սկսեց ԼՂՀ–ի դեմ:

Արցախահայության պետականության վերականգնման ճանապարհին կարևոր քայլ էր 1991 թ. դեկտեմբերի 10–ին կազմակերպված հանրաքվեն, որի մասնակիցների 99,89%–ը արտահայտվեց ԼՂՀ հռչակման օգտին[2]: ՀՅԴ–ն ակտիվորեն մասնակցեց Հայաստանի և Արցախի քաղաքական, հասարակական կյանքին: ՀՅԴ անդամները մասնակցեցին ՀՀ և ԼՂՀ խորհուրդներին և կառավարություններին: Նշենք, որ ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ եւ նախագահի երկրորդ տեղակալ են ընտրվել ՀՅԴ անդամներ Արթուր Մկրտչյանը և Գեորգի Պետրոսյանը:

ԼՂՀ կազմավորումից հետո հանրապետությունում գործող քաղաքական ուժերը ձեռնամուխ եղան պետականության կայացման գործընթացին: 1991 թ. դեկտեմբերի 28–ին անցկացվեցին ԼՂՀ օրենսդիր բարձրագույն մարմնի՝ Գերագույն խորհրդի առաջին ընտրությունները:

1992 թ. հունվարի 8–ին պատմական գիտությունների թեկնածու Արթուր Մկրտչյանն ընտրվեց Գերագույն խորհրդի առաջին նախագահ: Այնուհետև կազմավորվեցին գործադիր ու դատահրավական մարմինները: Վարչապետ նշանակվեց Օլեգ Եսայանը:

Այդ օրերին զինված ընդհարումներն առավել հաճախակի էին դառնում: Գործողությունների արագ զարգացումը հուշեց, որ նորընծա հանրապետությանը մոտալուտ արհավիրքներին դիմակայելու համար անհրաժեշտ է, առանձին–առանձին գործող ֆիդայական ջոկատները միավորելով, ստեղծել մարտունակ բանակ: 1991 թ. սեպտեմբերին դրվեց ազգային բա-

1 **Մինասյան է.,** Սոցիալ–տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990–2003 թթ.), Երևան 2003, էջ 249, Հայաստանի Հանրապետություն, 3 սեպտեմբերի 1991 թ.:

2 Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի որոշ իրավաքաղաքական հարցեր, Երևան, 1994 թ., էջ 17:

նակի ստեղծման հիմնաքարը: Ու սկսվեց գրվել մարտական փայլուն կենսագրություն, որի առաջին էջը դարձավ Ստեփանակերտը շրջապատող կրակակետերի վերացման ռազմական գործողությունների հաջող իրականացումը:

1992 թ. մայիսի 9–ին ազատագրվեց անառիկ բերդաքաղաք Շուշին: Զարգացնելով ռազմական հաջողությունները՝ մայիսի 1–ից 18–ը ԼՂՀ ինքնապաշտպանական զորամասերը ազատագրեցին Լիսագորն ու Բերդաձորը, Լաչինն ու նրա շրջակա գյուղերը: Ավարտվեց Արցախյան պատերազմի առաջին փուլը: Նախկին ԼՂԻՄ–ի տարածքը մաքրվեց թշնամուց: Կյանքի կոչվեց երկու հայկական հանրապետությունները իրար կապող ճանապարհը, որն ընդունված է կոչել նաև «մարդասիրական միջանցք»:

Օգտագործելով Կիրովաբադ քաղաքում տեղակայված նախկին խորհրդային 4–րդ բանակի ուժերը՝ հունիսի 12–ին ադրբեջանական զորամիավորումները լայնածավալ հարձակման անցան ԼՂՀ հյուսիսարևելյան, արևելյան և հարավարևելյան սահմանների ամբողջ երկարությամբ՝ Հադրութից մինչև Շահումյան: Թշնամուն հաջողվեց զավթել ամբողջ Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանի մեծ մասը, Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր: Տեղի հայ բնակչությունը հարկադրված էր լքել հարազատ վայրերը:

1992 թ. օգոստոսի 13–ին հանրապետությունում հայտարարվեց ռազմական դրություն և մասնակի զորահավաք: Օգոստոսի 15–ին ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեն, որի ձեռքում կենտրոնացվեց ոչ միայն ռազմաքաղաքական, այլ նաև՝ տնտեսական իշխանությունը: Հաջող ռազմական գործողությունները ծնկի բերեցին թշնամուն: Պաշտպանվեց ոչ միայն ԼՂԻՄ տարածքը, այլ նաև ազատագրվեց պատմական Արցախի և Ուտիքի մի մասը: 1994 թ. մայիսի 14–ին ստորագրվեց զինադադարի համաձայնագիրը:

Սկսվեց արցախահայության զարգացման խաղաղ ժամանակաշրջանը:

Արցախի ազգային–ազատագրական պայքարն իր մեջ ընդգրկել էր նաև հայ հասարակական ու քաղաքական բոլոր ուժերը Արցախում, Հայաստանում և Սփյուռքում: Չկար որևէ հասարակական–քաղաքական ուժ, որը չաջակցեր Արցախյան պայքարին՝ սկսած նյութական օգնությունից մինչև մարտադաշտում հերոսաբար կռվելը: Շարժումը միաձույլ դարձրեց տարբեր հայացքների ու համոզմունքների պատկանող հազարավոր մարդկանց, որոնց համար Արցախը Հայաստանի հետ վերամիավորման հիմնախնդիրը դարձել էր ժամանակի հրամայականը: Արցախի հերոսական պայքարի պատմությունը ցույց տվեց, որ ճակատագրական պահերին հիրավի կարևոր նշանակություն ունի ժողովրդի միասնությունը: Առանց դրա, թերևս, հնարավոր չէր հաղթանակ տանել թուրք ազերիների դեմ և ազատություն բերել Արցախին: Ակնհայտ է, որ Արցախյան շարժումն ուղղված չէր Խորհրդային Միության դեմ: Այն նպատակ ուներ Արցախ–Ղարաբաղը դուրս բերելու Ադրբեջանի կազմից: Ահա թե ինչու հայ հասարակական և քաղաքական ուժերը պաշտպանում էին արցախահայությանը ու նպաստում նրա հաղթանակին:

Արցախյան շարժմանը սատար կանգնել՝ նշանակում է ամուր կապվել ազգային խոր արմատների ու մեր ժամանակների աշխարհաքաղաքական իրադարձությունների հետ: Հենց դրա համար էլ 20–րդ դարի 80–ական թվականների վերջին և 90–ական թվականների սկզբին հայ հասարակական ու քաղաքական ուժերը թեքվեցին դեպի Ղարաբաղյան շարժումը: Թե այդ ուժերն ինչ քաղաքական շահեր ու նպատակներ էին հետապնդում, դա կարևոր չէ: Պարզապես մեզ հետաքրքրում է շարժմանը նրանց անմիջական մասնակցության և հաղթանակին նպաստելու իրողության համազգային ըմբռնումը: Եվ քանի որ Ղարաբաղը միայն հիմնահարց չէ, այլ նաև ճակատագիր ու գոյության խնդիր, ուստի անհրաժեշտ էր հաղթական ավարտին հասցնել հայության գոյապայքարը:

Արցախյան պայքարում կարևոր դեր է ունեցել Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որը հանդիսացել է պայքարում առանձնացվող ուժերից մեկը: Արցախյան պայքարի հենց սկզբից Դաշնակցությունը մեծ աշխատանք է կատարել Սփյուռքում՝ համագործակցելով այնտեղ գործող մյուս քաղաքական և հասարակական ուժերի հետ:

1988 թ. սեպտեմբերին ՀՅԴ–ն, հայ ավանդական մյուս կուսակցությունների հետ հանդես գալով համատեղ հայտարարությամբ, Երևանի ցուցարարներից պահանջում էր վերջ տալ գործադուլներին և հանրահավաքներին՝ համոզված լինելով, որ Արցախի հարցը պետք է լուծվի Կրեմլում: Անկասկած, այդ հայտարարությունը դժգոհություն առաջ բերեց Երևանում, որովհետև սկսեցին սփյուռքահայ քաղաքական ուժերին մեղադրել «դավաճանության» մեջ: Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ Հայաստանի խորհրդային և կուսակցական ղեկավարությունը հեղինակազրկվել էր բնակչության շրջանում: Մինչդեռ Դաշնակցությունն ուներ «ազգային–ազատագրական պայքարի հարուստ կենսափորձ, որ զինք կհատկանշեր հայ իրականութեան մեջ գործող բոլոր մյուս քաղաքական ուժերէն»[1]:

ՀՅԴ–ն ստանձնեց ծանր, միաժամանակ սուրբ պատասխանատվություն մյուս հասարակական ուժերի և քաղաքական կուսակցությունների համեմատությամբ: Արցախցիներին օդ ու ջրի պես հարկավոր էր զենք և զինամթերք: ՀՅԴ–ն կարողանում էր այդ դժվարին խնդիրը լուծել և պայքարի միջոցներ հասցնել Արցախ:

1988 թ. օգոստոսին Աթենքում տեղի ունեցած ՀՅԴ 24–րդ ընդհանուր ժողովը որոշում էր ընդունել վերադառնալ «Դէպի Երկիր» և ներդնել իր բոլոր ուժերն ու միջոցներն Արցախյան պայքարում:

Համառ պայքարից հետո ՀՅԴ–ն հայրենիքում հանգրվանեց միայն 1990 թ. օգոստոսից: Մինչ այդ ստեղծվել էին բաժանմունքներ, որոնք կատարում էին կուսակցության գլխավոր մարմնի հրահանգները, որոնցից ամենակարևորը Արցախի ինքնապաշտպանությանն աջակցելն էր[2]:

1 «Ազդակ», Բեյրութ, 20 փետրվարի 1998, Բացառիկ, էջ 10:
2 «Ազդակ», 20 փետրվարի 1998, Բացառիկ, էջ 8:

1988 թ. ՀՅԴ–ն, ՌԱԿ–ը և ՍԴՀԿ–ն համատեղ հեռագիր հղեցին Մ. Գորբաչովին, հանդես եկան հայտարարությամբ և կոչով՝ ԼՂԻՄ–ը ՀԽՍՀ–ին վերամիավորվելու, Սումգայիթի ջարդարարներին դատապարտելու պահանջով:

Կատարելով 1988 թ. օգոստոսի 24–ի Ընդհանուր ժողովի որոշումը՝ Դաշնակցության գործիչները արդեն 1990 թ. Արցախում ստեղծել էին ֆիդայական ջոկատների ցանց: Դա կատարվում էր անաղմուկ և արցախցիների ջերմ աջակցությամբ ու մասնակցությամբ: Արցախյան ազատագրական պայքարի ոգևորության հիմքում ընկած էր 19–րդ դարի վերջին Արևմտյան Հայաստանում ծայր առած ֆիդայական շարժումը: Այն ժամանակ ՀՅԴ ղեկավարությամբ ազգային զարթոնքը իր գագաթնակետին էր հասել, և արևմտահայերի դատին իր մասնակցությունը բերելու համար իր պատրաստակամությունն էր հայտնել ամբողջ կովկասահայությունը: Մարտնչող Սասունին օգնության հասնելու համար կազմվում էին մարտական խմբեր, որոնք այնքան հարազատ կերպով արտահայտում էին այս համազգային պայքարի պատկերը: Նման խմբերի մեջ գտնվում էին Ղարաբաղից, Ալեքսանդրապոլից, Կարսից, Պարսկաստանի կամ մինչև իսկ Ռուսաստանի ու Ամերիկայի հեռավոր անկյուններից եկած նվիրյալ հայորդիներ, որոնք նվիրումով ու անհողդողդ կամքով գնում էին դեպի Երկիր՝ իրենց հայրենակիցներին օգնության: Հետագայում, երբ այս անգամ սպառնալիքը ուղղված էր կովկասահայության դեմ, և ծայր էին առել հայ–թաթարական կռիվները, արևմտահայությունը սատար կանգնեց կովկասահայության պայքարին:

Ահա 20–րդ դարավերջին Արցախյան ազատագրական պայքարին նորից իր ակտիվ մասնակցությունը բերեց ՀՅԴ–ն՝ օրակարգի հարց դարձնելով «Դեպի Երկիր» կարգախոսը, նոր կամավորական խմբեր ստեղծելով 19–րդ դարավերջին և 20–րդ դարասկզբի օրինակով կրկնելով պատմությունը՝ այս անգամ Արցախի տառապող ու իրավազուրկ հողի համար[1]:

Պայքարի խաղաղ շրջանին փոխարինած ռազմական բախման փուլում ՀՅԴ–ն առաջինների թվում նախաձեռնել է մարտական ջոկատների ձևավորման, նրանց մարզումների և զինելու գործը: Այդ աշխատանքներն առաջին փուլում իրականացվել են Արցախի սահմանային գոտում և ռազմավարական նշանակության շրջաններում (Գետաշենի ենթաշրջան, Շահումյան, Մարտակերտ, Բերդաձոր, Հադրութ): Այդ փուլի աշխատանքներից էր նաև ինքնապաշտպանական շրջանների ձևավորումը:

Զինված պայքարի առաջին փուլում ծրագրվել ու իրականացվել են պարտիզանական բնույթի գործողություններ, որոնց մասնակցելու համար Հայաստանից պարբերաբար կամավորական ջոկատներ են գործուղվել Արցախ: Ակնհայտ էր դառնում նաև, որ անհրաժեշտ է ինքնաբուխ գործող կամավորական խմբերը համախմբել ընդհանուր ղեկավարության ներքո: ՀՅԴ–ն զգալի դեր ունեցավ նաև հաջորդ փուլում, երբ իրականացվեց կամավորական ջոկատներից բանակի կազմավորման և Արցախի քաղաքական կառույցների ձևավորման գործընթացը: Արցախի ՀՅԴ անդամները,

1 Նահատակութիւն Շուշիի ժայռերուն, Լիբանան, 2007, էջ 29:

բացարձակ մեծամասնությամբ լինելով զինվորական կադրեր, առաջիններ-ի թվում են ներգրավվել բանակային կառույցներում:

1992 թ. մարտական փորձառություն ունեցող ՀՅԴ հայաստանյան կամավորական ջոկատների հիմքի վրա ձևավորվել է Շուշիի առանձնակի գումարտակը, որը մինչև պատերազմական գործողությունների ավարտը մասնակցել է բազմաթիվ ծանր ու վճռորոշ մարտերի: Գումարտակի կողքին շարունակել են Հայաստանից Արցախ գործուղվել ՀՅԴ առանձին ջոկատներ: Հայաստանի դաշնակցական ջոկատներն ի սկզբանե ձևավորվել են կուսակցության տեղի մասնաճյուղերի հիմքի վրա և գործել են ՀՅԴ ընդհանուր հրամանատարության ներքո: Այդ ջոկատներից աչքի են ընկել մասնավորապես Երևանի, Աշտարակի, Թալինի, Նաիրիի, Արթիկի, Հրազդանի, Վարդենիսի, Սիսիանի, Կապանի, Ալավերդու, Պռոշյանի, Գառնի գյուղի, Հայաստանի սահմանային գոտիներում գործողներից՝ Արարատի, Եղեգնաձորի, Վայքի, Գորիսի, Շամշադինի, Իջևանի, Նոյեմբերյանի ջոկատները: Արցախում մարտնչել են նաև Ջավախքի դաշնակցականներից կազմված ջոկատները:

Նախապատրաստական փուլից մինչ պատերազմի ավարտը Արցախում գործել են նաև սփյուռքահայ դաշնակցականներ: Վերջիններս ոչ միայն մասնակցել են ռազմական գործողություններին, այլև ծանրակշիռ ներդրում են ունեցել զինվորական կադրերի պատրաստման, մարտական ջոկատների և պաշտպանական շրջանների ձևավորման գործում:

Միայն հետո՝ 1997 թ., ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանը հայտարարեց, թե ՀՅ Դաշնակցությունը Արցախ եկած առաջին կուսակցությունն է: Նա ասաց. «Մենք զէնքի պէտք ունէինք, անոնք մեզի զենք բերին»[1]:

1989 թ. հուլիսին ՀՅԴ բյուրոն հայտարարեց, որ Դաշնակցությունը Արցախում է, և «հայ ժողովրդի հեղափոխական կամքը և ոգորումները մարմնացնելու պատմական իր պատասխանատվութեան վրայ է»: Ապա՝ «Հնչում է ժամը արցախեան շարժման հասունացման… Հնչում է ժամը համազգային միակամ պահանջատիրութեան, ոչ մէկ խուսափում արտօնեալի է պատմական այդ պատասխանատուութենէն»[2]:

ՀՅԴ–ն հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանում էր Արցախի ազգային–ազատագրական պայքարը և արցախցիների իրավունքները: 1992 թ. ամռանը, երբ ՀՀ ԳԽ նստաշրջանում քննարկվում էր Արցախի ազգային–ազատագրական պայքարի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դիրքորոշման հարցը, ՀՅԴ պատգամավորական խմբակցությունը, հանդես գալով հայտարարությամբ, բոլոր պատգամավորներին կոչ արեց անշեղորեն քննարկել ԼՂՀ ճանաչման հարցը և չդադարեցնել խորհրդարանի աշխատանքը՝ մինչև որոշակի արդյունքի հասնելը:

Երբ Արցախում վիճակն ավելի ծանրացավ, 1992 թ. ամռանը հրավիրված Դաշնակցության 25–րդ ընդհանուր ժողովը հանձնարարեց Հայաստանում

1 «Ազդակ», 20 փետրվարի, 1998, Բացառիկ, էջ 11:
2 Նույն տեղում:

գործող իր ուժերին՝ այնտեղ հզորացնել ինքնապաշտպանության ջոկատները: Մինչ այդ՝ 1990 թ. սեպտեմբերի 2–ին, դիմելով հայ ժողովրդին՝ ՀՅԴ–ն ընդգծել էր, որ Արցախին սպառնում է մահացու վտանգ: Նա համոզված էր, որ հնարավոր է բոլոր միջոցներով նպաստել Արցախի ինքնապաշտպանության գործին, բարձրացնել արցախահայության դիմադրական կորովը, ինչպես նաև՝ նպաստել մարզի տնտեսական հզորացման ծրագրին: 1990 թ. դեկտեմբերին ՀՅԴ–ն, հանդես գալով «Խոսք հայ ժողովրդին» հայտարարությամբ, հավաստեց, որ Դաշնակցությունը «ավելի քան պատրաստ է մինչև վերջին շունչ քայլելու նուիրման իր ճանապարհին»[1]: 1990–ական թվականների սկզբին ՀՀ իշխանությունների ներքին և արտաքին քաղաքականության, Ղարաբաղյան հիմնախնդրի նկատմամբ ունեցած դիրքորոշման պատճառով ՀՅԴ–ն որդեգրել էր ընդդիմադիր կոշտ կեցվածք[2]:

1990 թվականից ավելի էր ծանրացել արցախահայության վիճակը: Խորհրդային ուժերի աջակցությամբ ադրբեջանական կազմավորումները օղակել էին Ստեփանակերտը, Հադրութը, Մարտունին, Ասկերանը և այլ բնակավայրեր: Քաղաքական և ռազմական ճնշումը Արցախին կանգնեցրել էր Ադրբեջանին վերաենթարկվելու վտանգի առաջ: Սակայն արցախցիները մերժեցին այդ բոլոր սպառնալիքներն ու սադրանքները: Որոշվեց ամեն գնով ադրբեջանական զինված ստորաբաժանումներից ազատագրել երկրամասը: Այս կենաց–մահու պայքարում իր գործուն մասնակցությունն է ունեցել ՀՅԴ–ն:

1991 թ. մայիսի 1–ին ՀՅԴ Բյուրոն և ՀՅԴ Հայաստանի ԿԿ–ն հանդես եկան հայտարարությամբ, ըստ որի՝ կուսակցությունը կազմակերպչական իր բոլոր կարողություններն ու հնարավորությունները դնում էր Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի ենթակայության տակ՝ Արցախ–Շահումյանի հայության պաշտպանությունը պետականորեն ապահովելու պահանջով:

Դաշնակցությունը կարևոր դեր խաղաց նաև Ղարաբաղի պաշտպանական բանակի ստեղծման գործում: Եվ երբ Օմարից մինչև Արաքս ընկած տարածքը վերածվել էր ռազմաճակատի, Արցախի և Հայաստանի ՀՅԴ կոմիտեները զորակոչ հայտարարեցին իրենց շարքերում:

Հասարակական և քաղաքական մյուս ուժերը ևս քիչ ջանքեր չէին գործադրում Արցախի հիմնահարցը դրականորեն լուծելու համար: Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր խնդրին մոտենալու ավելի հստակ և գործնական: Պայքարի հենց սկզբից առաջ էր եկել կուսակցությունների և հասարակական ուժերի մի նոր հարթություն՝ պահանջատիրություն, ինքնորոշում կամ էլ միացում: Առաջադրված նոր խնդիրներից էր համայն հայության՝ մեկ ամբողջություն լինելու գիտակցությունը, որի մի բաղկացուցիչ մասը հանդիսանում է Արցախը: Դրանով, փաստորեն, Արցախի բարդույթը դիտվում էր

1 «Ազդակ», 20 փետրվարի, 1998, Բացառիկ, էջ 12:

2 ՀՀ նախագահի 1994 թ. դեկտեմբերի 28–ի հրամանագրով, ապա՝ 1995 թ. հունվարի 13–ի ՀՀ Գերագույն դատարանի որոշմամբ Հայաստանում ՀՅԴ գործունեությունը կասեցվել էր: Միայն 1998 թ. փետրվարի 9–ի ՀՀ նախագահի որոշմամբ պաշտոնապես վերականգնվեց ՀՅԴ գործունեությունը:

որպես համայն հայության գոյատևման խնդիր և ապագայի բանալի: Սփյուռքը լիովին ընդունում էր, որ Արցախի խնդիրը համայն հայության խնդիրն է: Արցախի անկախության հարցը քննարկվում էր տարբեր ելակետերից: Օրինակ՝ ՀՅԴ–ն, ինչպես միշտ, առաջ էր մղում պահանջատիրությունը և Հայ դատը, պաշտպանում էր արցախցիների ինքնորոշման իրավունքը, ազգային և համազգային արժեքների վրա հիմնված ժամանակակից պետության ստեղծումը: Պարզապես եթե ՀՅԴ–ն հենվում էր հայրենասիրական զգացումների վրա, ապա Ռուբեն Հովսեփյանի կարծիքով քանի դեռ Գետաշենի, Մարտունաշենի, Բերդաձորի և Հադրութի շրջաններից բռնագաղթվածները չեն վերադարձել իրենց բնակավայրերը, և նրանց տարածքներում գործում են ադրբեջանական զինված կազմավորումներ, ՀՅԴ–ն չի կարող ընդունել հայ–ադրբեջանական հարաբերությունների հաստատում՝ ինչ մակարդակով էլ դա լինի: Ակնհայտ է, որ հայերի բռնի տեղահանությունը իրենց պատմական բնօրրանից մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում է և տեղահանության թուրքական եղանակի նորօրյա դրսևորում, որը պիտի դատապարտվի և պատժվի միջազգային օրենքներով[1]:

Սփյուռքահայության մասնակցությունը արցախյան ազատագրական պատերազմին ընթացավ յուրահատուկ ոգևորության պայմաններում:

Նախապատրաստական փուլից մինչև պատերազմի ավարտը Արցախ են գործուղվել նաև սփյուռքահայ դաշնակցականներ: Սփյուռքահայերի օգնությունը դրսևորվեց ռազմական, տնտեսական ու բարոյական ուղղություններով: Մեր հայրենակիցների մատուցած ավանդը մեծ էր ազատամարտիկների մարտավարական և բարոյահոգեբանական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Արցախում մարտնչող երկրապահներին իրենց մարտական փորձն են հաղորդում սփյուռքահայ այն երիտասարդները, որոնք տարբեր հանգամանքների բերումով մասնակցել էին այս կամ այն երկրում պատերազմական գործողությունների: Մարտական փորձ ունեին հիմնականում ՀՅԴ անդամ սփյուռքահայերը: Նրանք ոչ միայն մասնակցում են Արցախում ընթացող կռիվներին, այլև իրենց ներդրումն են ունենում զինվորական կադրերի, մարտախմբերի և պաշտպանական շրջանների պատրաստման ու ձևավորման գործում:

1991–1992 թթ. ՀՅԴ–ի ղեկավարությամբ և օժանդակությամբ ձևավորվեցին մարտական ջոկատներ և անմիջապես ուղարկվեցին Արցախ: Հայաստանում այս աշխատանքները վստահված էին ՀՅԴ մարտական պատասխանատու Հրանտ Մարգարյանին և նրա օգնականներին: Անհրաժեշտ է նշել Վահե Հարությունյանի և Վարանդ Փափազյանի անունները: Հայաստան տեղափոխված սփյուռքահայ նվիրյալները տվեցին նաև զոհեր՝ Վիգեն Զաքարյան, Միհեր Զուլիաճյան, Մոնթե Մելքոնյան, Կարո Քահքեճյան և այլք: Շատերն իրենց փառապանծ մասնակցությամբ մեր ազատամարտիկներին հաղորդեցին հայոց ռազմասիրական ոգին և ռազմագիտական իմացությունը: Նրանցից կարելի է առանձնացնել Վիգեն Զաքարյանին (ծնված

1 «Ազդակ», 20 փետրվարի, 1998, Բացառիկ, էջ 12:

15.3. 1969 թ. Բեյրութում, զոհվել է 8.5.1992 թ.): Զոհվել է Շուշիի շրջանի Զառսլուում: Նա մասնակցել էր Լիբանանի քաղաքացիական պատերազմին, կուտակել էր որոշակի մարտական փորձ: 1992 թ. ապրիլին կամավոր մեկնել էր Արցախ, մասնակցել Շուշիի ազատագրմանը[1]:

Ազատագրական պայքարի նվիրյալներից էր Մեր Զուլհաճյանը: Նա ծնվել է 1967 թ. նոյեմբերի 28–ին Բեյրութում և զոհվել 1993 թ. օգոստոսի 23–ին: Մասնագիտությամբ բնագիտության ուսուցիչ էր: ՀՀ–ում և ԼՂՀ–ում մասնակցել է կամավորական ջոկատների ստեղծմանը, իսկ 1992 թ. մասնակցել է ԼՂՀ Մարտունու շրջանի ինքնապաշտպանական մարտերին[2]:

Հայ ազատամարտի նվիրյալ զավակ, ՀՀ Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանը (Ավո) ծնվել է 1957 թ. նոյեմբերի 25–ին ԱՄՆում և զոհվել 1993 թ. հունիսի 12–ին Աղդամի Մարզիլու գյուղի մոտ:

Մոնթեն ավարտել է Բերկլիի (Կալիֆոռնիա) համալսարանի հին ասիական ժողովուրդների պատմության և հնագիտության բաժինը (1978 թ): Նույն թվականին ընդունվել է Օքսֆորդի համալսարան, սակայն չի ավարտել, մեկնել է Լիբանան, 3 տարի մասնակցել է քաղաքացիական պատերազմին (Բեյրութի հայկական թաղամասի պաշտպանությանը): Եղել է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) անդամ:

1990 թ. հոկտեմբերից Մոնթեն զինվորագրվել է Արցախի պաշտպանությանը: 1991 թ. սկզբին հիմնել է Հայրենասիրական ջոկատը: 1992 թ. Մարտունու պաշտպանական շրջանի հիմնադիրն էր: Մոնթեն մասնակցել է ՀՀ Իջևանի, Ճամբարակի, ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու շրջանների ինքնապաշտպանությանը և ազատագրական մարտերին: 1992 թ. սեպտեմբերին, 1993 թ. մարտին, մայիսին և հունիսին ղեկավարել է Մարտունու և Աղդամի ազատագրական ռազմական գործողությունները[3]:

1991 թ.՝ կամավորական ջոկատի, 1992 թ.՝ Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատարն էր Ժիրայր Սեֆիլյանը (Բեյրութից)՝ ԼՂՀ պաշտպանության բանակի փոխգնդապետ: Նա մասնակցել է ՀՀ սահմանների պաշտպանությանը, Շահումյանի, Ստեփանակերտի, Շուշիի, Մարտակերտի, Հադրութի, Զանգելանի, Ֆիզուլիի շրջանների ինքնապաշտպանության և ազատագրական մարտերին[4]:

ԼՂՀ Առաջին աստիճանի մարտական խաչի ասպետ, կապիտան Հարմիկ Հովսեփյանը (Թեհրանից) 1990 թվականից մասնակցում էր դաշնակցական ջոկատների կազմավորման և ուսուցման աշխատանքներին, այնուհետև նույն ջոկատների և ապա՝ Շուշիի առանձնակի գումարտակի կազմում մինչև Արցախյան ազատամարտի ավարտը կամ 1994 թ. զինադադարը մասնակցել է բազմաթիվ ազատագրական մարտերի (Մարտակերտ, Կիչան,

1 Նահատակութիին՝ Շուշիի ժայռերուն…, էջ 3, 5, 29, 30, 38,42:

2 «Դեպի երկիր» ի գաղափարապաշտը ՀՅԴ ԶԱՒԱՐԵԱՆ ուսանողական միութեան մատենաշար Բ շրջան, թիւ 7, մարտ 2001, էջ 8, 9, 11:

3 Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988–1994 թթ., հանրագիտարան, Ե., 2004, էջ 481:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 591:

Սրխավենդ, Լիսագոր, Հասանղայա,Պուշկինյալ, Կուբաթլու, Ֆիզուլի, Զանգելան, Քարվաճառ և այլն):

ԼՂՀ Երկրորդ աստիճանի մարտական խաչի ասպետ կապիտան Բորիս Ղուկասյանը (Թեհրանից) 1992–94 թթ. Շուշիի առանձնակի գումարտակի կազմում մասնակցել է Մարտակերտի, Աղդամի, Դրմբոնի, Ֆիզուլիի, Զանգելանի և այլ շրջանների ազատագրական մարտերին:

1992 թ. Կիչանի և Սրխավենդի մարտերում աչքի ընկավ Արիության մեդալի ասպետ Բագրատ Սահակյանը՝ դարձյալ Թեհրանից:

Պատերազմին մասնակցող սփյուռքահայ նվիրյալների ներկայությունն անգամ հուսադրող ու ոգևորիչ էր և ժողովրդի վրա ունեցավ բարոյական ազդեցություն. նրան դրական հսկայական լիցքեր հաղորդեց: Սփյուռքահայերի օգնությունը մեծ էր ոչ միայն նյութական, այլև բարոյական ու ռազմական տեսակետից, որը զգալի էր հատկապես սկզբնական՝ ջոկատների ձևավորման շրջանում: Այդ ծանր օրերին, երբ անչափ մեծ էր հայկական անկախ պետականություն ստեղծելու ձգտումը, զգացվում էր հայության միասնության անհրաժեշտությունը: Այն ավելի ակնառու արտահայտվեց Շուշիի առանձնակի գումարտակի գործունեության մեջ:

Գումարտակն իր մեջ միավորում էր Արցախից ու սփյուռքահայ տարբեր օջախներից, աշխարհի տարբեր մասերից եկած հայության փառապանծ զավակներին: Գումարտակը, ըստ ականատեսների վկայության, հոգեբաղափարական շփումների միասնական ասպարեզ էր հայ երիտասարդության համար:

Գումարտակն արցախյան պատերազմի առաջին իսկ օրից ամենաակտիվ մասնակցությունն է ցուցաբերել: Այն այսօր էլ կանգնած ԼՂԻՄ–ի պաշտպանության դիրքերում և համարվում է Պաշտպանական բանակի լավագույն զորամասերից մեկը: Գումարտակի քաջարի մարտիկներից են եղել Վարդան Բախշյանը, Վաչե Ռոստոմյանը, Արթուր Ղարիբյանը, Վարդան Ստեփանյանը, Վիգեն Զաքարյանը, Հրաչ Ստեփանյանը, Ալբերտ Ալավերդյանը, Պետրոս Ղևոնդյանը, Մուրադ Զաքարյանը, Սասուն Ղազարյանը (Սիմոն) և շատ ուրիշներ[1]:

Ողջ մնացածներից շատերն էլ լեգենդար անուններ են, որոնցով զարդարվել է Հայոց ազատամարտը:

Միայն մեկ գումարտակի մեջ չի ամփոփված սփյուռքահայերի գործուն մասնակցությունը. նրանք մասնակցություն են ունեցել տարբեր ռազմաքաղաքական ոլորտներում ու տարբեր զորամասերում: Սփյուռքահայ Եղիշե Տարաքչյանը իր հուշերում գրում է. «1994 թ. փետրվարի վերջին ազատամարտիկների և Ռաֆֆիի հետ մեկնեցինք Հադրութ: Այնտեղ նրանց միացան Երվանդը՝ Կանադայից, Արան, Շահիկը, Վաչիկը, Սագօն՝ Ամերիկայից, Ադիսը և Էմիլը՝ Պարսկաստանից»[2]:

1 Պետրոսյան Ա., Սփյուռքահայերը մարտադաշտի վրա, Խաչակիրներ ջոկատը, Երևան 2000, էջ 9:

2 Տե՛ս նույն տեղում:

Ջոկատներում ընդգրկված սփյուռքահայերից ոմանք կարճ ժամանակամիջոցում դարձան քաջամարտիկներ: Նրանցից էր Մուսալեռցի Լևոն Թաշճյանը, որը 1993 թ. սեպտեմբերից մինչև 1994 թ. հունվար մասնակցել է Ֆիզուլիի, Զանգելանի, Ջեբրայիլի, Մարտակերտի, Կուբաթլի շրջանների ազատագրական մարտերին[1]:

Արցախյան ազատագրական պատերազմի օրերին՝ 1992 թ. մայիսին, ծնվեց խաչակիրների ջոկատը: Նրա հրամանատարն էր Կարո Քահքեջյանը: Նա ավարտել էր Ֆրանկֆուրտի ճարտարագիտական համալսարանը, մասնակցել էր Բեյրութի հայկական թաղամասի ինքնապաշտպանությանը:

1992 թ. օգոստոսի 21–ին խաչակիրների ջոկատը ստանում է իր առաջին մարտական մկրտությունը: Չնայած ազատամարտիկների անփորձությանը՝ թշնամու հարձակումը կասեցվեց, ապա մարտիկներն անցան հակահարձակման և հասան հաջողության: Նրանք հաջող մարտեր մղեցին Դրմբոնում, Քելբաջարում (Քարավաճառում), Ասկերանի և Մարտակերտի շրջաններում: Ջոկատի քաջարի հրամանատար Կարապետ Քահքեջյանը ծնվել է 1962 թ. մարտի 24–ին Հալեպում և զոհվել 1993 թ. հունիսի 26–ին Մարտակերտի շրջանի Պուշկենյալ բարձունքի վրա[2]:

Կարևորելով Արցախի պետականության ստեղծումն ու կայացումը՝ ՀՅԴ–ն ակտիվորեն մասնակցել է ԼՂՀ թե՛ առաջին և թե՛ երկրորդ խորհրդարանների գործունեությանը, ՀՅԴ անդամները ներգրավվել են գործադիր իշխանության մեջ, Դաշնակցությունն Արցախում իր ուղեկից կառույցներով իրականացնում էր հասարակական գործունեություն, զբաղվում բարեգործությամբ, երիտասարդ սերնդի դաստիարակությամբ:

ՀՅԴ–ն Ղարաբաղյան պայքարին մասնակցել է թե՛ Արցախում, թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում իր ունեցած ամբողջական հնարավորություններով, մասնավորապես՝ մարտական ջոկատներին զուգընթաց՝ նաև ամենատարբեր տեսակի օգնություն է հասցրել Արցախ: ՀՅԴ կառույցների ուշադրությունը մշտապես ուղղված է եղել Արցախին, ի նպաստ Ղարաբաղի հարցի արդարացի լուծման՝ իրականացվել է մեծածավալ քաղաքական լոբբինգային և քարոզչական աշխատանք: Արցախի համար ՀՅԴ–ն կազմակերպել է դրամահավաքներ, մասնակցել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի օգտին իրականացվող հանգանակություններին: Կուսակցությունը ներգրավել է բազմաթիվ բարերարների՝ Արցախում շինարարական, վերականգնողական և տնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:

Դեռևս ՀՅԴ Բյուրոյի, ՍԴՀԿ Կենտրոնական վարչության և ՌԱԿ Կենտրոնական վարչության՝ 1990 թ. հունվարի 25–ին Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված համատեղ հեռագրում նշված է, որ երկու տարի է, ինչ արցախահայությունը ծանր օրեր է ապրում: Արցախը, որ մնում է Ադրբեջանի կազմում, Ստալինի մեղքով է: Սումգայիթից

1 Տե՛ս նույն տեղում, էջ 15, 16:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 62, 63 և Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, հանրագիտարան, էջ 659:

մինչև Կիրովաբադ հայերի սպանդ է կազմակերպված: Խորհրդային Միության անտարբերությունը զարմանք և վրդովմունք է առաջ բերում: Հայ ժողովուրդը ոչ մի ատելություն չունի Ադրբեջանի ժողովրդի նկատմամբ: Հայ ազգային երեք կուսակցությունները մտահոգված են Լեռնային Ղարաբաղի և այն Հայաստանին միացնելու հարցով[1]:

1 «Դրօշակ», 1990, N121, էջ 2–3:

Նորա Արիսեան
Պատմական գիտությունների թեկնածու

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ

Ի հարկէ, մեր զեկոյցը հաւակնութիւնը չունի ամբողջական քննութիւն կատարելու Սփիւռքի մէջ Դաշնակցութեան հսկայական գործունէութեան մասին, մանաւանդ որ պատմագիտականօրէն քիչ ուսումնասիրուած նիւթ է: Սակայն կը փորձեմ ընդհանուր ակնարկ նետել հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ առանցքային դերակատարութիւն ունեցող կուսակցութեան 120–ամեայ գործունէութեան՝ Սփիւռքի մէջ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որպէս քաղաքական կազմակերպութիւն, կը համարուի հայկական դասական կուսակցութիւններէն մէկը: Իսկ եթէ փորձենք Սփիւռքը սահմանել, ապա հարկ է գիտակցիլ, թէ գոյութիւն ունի դասական Սփիւռք մը, որ կազմուած է Հայոց ցեղասպանութենէն վերապրողներէ եւ անոնց շառաւիղներէ, ապա Սովետական ժամանակաշրջանէն գաղթողներէ եւ, վերջապէս՝ Հայաստանի Հանրապետութեան վերանկախութենէն ետք գաղթողներէ:

Այս երեք ժամանակահատուածներուն ՀՅԴ իր գործունէութեան թիրախ դարձուցած է Սփիւռքի վերակազմաւորումը եւ վերաշխուժացումը, նոյնիսկ նոր գաղութներու կամ նոր Սփիւռքի հիմնումը, ինչպէս Արեւելեան Եւրոպայի երկիրներուն մէջ:

Հայաստանի անկախացումէն ետք ոմանք Սփիւռք բառը փոխարինեցին Արտերկիր բառով, որ զայն համարած են Հայաստանի շարունակութիւնը:

Խօսքը կը վերաբերի քաղաքական ամէնէն ազդեցիկ այն ուժերէն մէկուն, որ տարածուած է ամբողջ Սփիւռքի մէջ, ուր վերջինս ինքզինք կը նկատէ հայկական արդար Դատին իրաւատէրը ու պահանջատէրը: Իսկ անցնող 120 տարիներու ընթացքին պարզ դարձած է, թէ Դաշնակցութիւնը Սփիւռքի մէջ ներկայ է իբրեւ ազգային կեանքի ղեկավար կազմակերպութիւն:

Սփիւռքի կազմաւորման շրջան

Եթէ Դաշնակցութիւնը իր գործունէութեան ընթացքին ժամանակագրական առումով կատարած է խումբեր հաւաքելու դերը, ապա ան ներկայացած է իբրեւ յեղափոխական կազմակերպութիւն:

Սակայն իր իւրայատկութիւններէն նկատի կ՚առնուի, որ ան նախ՝ աշխատած է միշտ ապակեդրոնացման սկզբունքով, իսկ երկրորդ իւրայատկութիւնը՝ որ ան ստանձնած է Սփիւռքի մէջ գաղութներու կազմաւորման խնդիրը՝ նպատակ ունենալով պահպանել ազգային դիմագիծը հայեցի դաստիարակութեան միջոցով՝ «ժողովուրդի հետ, ժողովուրդի համար» կարգախօսի ընդմէջէն:

Այնքան ատեն, որ սփիւռքահայերը կը ներկայացուին որպէս փոքրամասնութիւն իրենց հիւրընկալուած երկիրներուն մէջ, անոնք դատապարտուած են փոքրամասնութիւններու տարբեր կարգավիճակը կրելու: Անոնք սկիզբէն ի վեր կը դիմագրաւեն տարբեր տեսակի ծուլման վտանգը, եւ հոս է, որ իր դերակատարութիւնը ունեցած է Դաշնակցութիւնը՝ լուսարձակի տակ առնելով հայապահպանման հանգամանքը՝ հայ ինքնութիւնը պահելու միջավայր տրամադրելով:

Սփիւռքի մէջ ՀՅԴ–ի կոմիտէութիւններու կազմաւորումը սկսած է Ցեղասպանութենէն առաջ՝ 1900ականներու սկիզբի ժամանակահատուածին մէջ: Դաշնակցութեան գործունէութիւնը կիրարկելու առումով իւրաքանչիւր շրջան ունէր իր անպատեհութիւնը կամ առաւելութիւնը: Ինչպէս, օրինակ, Միջին Արեւելքի մէջ Եգիպտոսը համեմատաբար աւելի պարարտ հող հանդիսացած էր յեղափոխական գործունէութեան, որ դարձաւ կապի գլխաւոր օղակը ամբողջ շրջանին համար:

Սփիւռքի կազմաւորման գործունէութեան սկզբնական շրջանին ցայտուն օրինակ կարելի է յիշել Հայ Օգնութեան Միութիւնը:

ՀՅԴ հիմնադիրներէն Ռոստոմը, կուսակցութեան ժողովներուն մէջ բազմիցս օրակարգի վրայ կէտ դնելէ ետք, կոչ կ՝ուղղէ հայ ժողովուրդին եւ կը սահմանէ Հայկական կարմիր խաչի լայն ասպարէզը: Եւ այսպէս՝ 1910–ին ՀՅԴ Բիւրոն Ամերիկա կը ղրկէ էտկար Ակնունին (Խաչատուր Մալումեան), որպէսզի կազմակերպէ եւ զօրացնէ ՀՅԴ կոմիտէները եւ հիմնէ Հայ Կարմիր Խաչը:

1920–ի դեկտեմբերին՝ Հայաստանի անկախութեան կորուստէն եւ Հանրապետութեան խորհրդայնացումէն ետք, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը դարձած է տարագիր կուսակցութիւն՝ մինչեւ 1932 թ. ընդհատակեայ իր գործունէութիւնը շարունակելով հանդերձ Հայաստանի մէջ:

Այսպէս՝ 1921–էն կը սկսի Դաշնակցութեան սփիւռքահայ գործունէութեան շրջանը՝ հիմնական նպատակ ունենալով սփիւռքահայ գաղութներու հայապահպանումը եւ հասնող սերունդներու հայեցի դաստիարակութիւնը:

Առանցքային տեղ կը գրաւէ քառասունականներուն ԱՄՆ–ի մէջ Հայ Դատի Յանձնախումբի (Armenian National Committee) գործունէութիւնը, որ ձեւաւորուած էր Ամերիկայի մէջ Հայ Դատի պաշտպանութեան գործը կազմակերպելու եւ վարելու համար:

Աւելի ուշ մեծ անկիւնադարձ եղաւ Եղեռնի 50–ամեակը, ուր հայ Սփիւռքը Դաշնակցութեան առաջնորդութեամբ թեւակոխեց նոր հանգրուան մը՝ ինքնակազմակերպման քաղաքական նոր միջավայր:

Դաշնակցութիւնը Հայ Դատի յանձնախումբերու ցանցը կազմեց՝ անոնց գործի լծելով հայ ժողովուրդի իրաւունքներու ճանաչման եւ Հայաստանի անկախութեան ի խնդիր: Անոնք սկսան գործունէութիւն ծաւալել Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցով, տուեալ երկիրներուն մէջ հայութեան ազգային–քաղաքական շահերը հետապնդելու հարցով, միեւնոյն ժամանակ Հայաստանին նիւթական օժանդակութիւն տրամադրելով:

Տարիներու ընթացքին Դաշնակցութիւնը քաղաքական, քարոզչական եւ յարաբերական աշխատանքներ կատարած է միջազգային մակարդակի վրայ՝ Հայ Դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու կառոյցի միջոցով:

Դաշնակցութեան սահմանումով Հայ Դատի առաջնահերթ մարտահրաւէրները եղած են.

ա. ազգային դաստիարակութիւնը,

բ. Հայաստանի պետականութեան ամրապնդումն ու զարգացումը,

գ. ազգային նպատակներու հետապնդումը,

դ. համայն հայ ժողովուրդի անվտանգութեան երաշխաւորումը,

ե. սփիւռքահայութեան գոյատեւումը եւ անոր կառոյցներու պահպանումն ու գործունէութիւնը,

զ. Հայոց ցեղասպանութեան ճանաչումը, հատուցումն ու հողերու վերադարձը,

է. ընդգծուած շեշտադրութիւն ունեցած են Արեւմտեան Հայաստանի հետ կապուած հարցերը,

ը. համշէնահայութեան եւ իսլամացած հայերու խնդիրներու արծարծումը եւ հանրութեան ուշադրութեան առարկայ դարձնելը:

Քաղաքական հիմնական առաջադրանքն ու մտահոգութիւնը կը մնայ, սակայն, Հայ Դատի հետապնդումը՝ իր քարոզչական, դիւանագիտական եւ այլ բազմատեսակ երեսներով:

Պատմական զարգացումներ ապրելով՝ Դաշնակցութեան համար նախորդ դարու 60–70–ականներու միջեւ ինկած ժամանակահատուածը շրջադարձային եղած է, ուր տեղի կ՚ունենան սերնդափոխութիւն եւ մտայնութեան փոփոխութիւն:

Այնուհետեւ՝ մինչեւ 1988–ի Արցախեան շարժման պոռթկումը, ՀՅԴ գործունէութիւնը կեդրոնացուցած էր մէկ կողմէ՝ Հայկական Սփիւռքի ազգապահպանման ու կազմակերպման, իսկ միւս կողմէ՝ Հայ Դատի հետապնդման վրայ՝ իր երկու մակարդակներով.

Առաջին՝ Հայոց ցեղասպանութեան արդար հատուցման պահանջով պայքար Թուրքիոյ դէմ:

Երկրորդ՝ Խորհրդային Հայաստանի հայութեան ազգային եւ մարդկային իրաւունքներուն պաշտպանութիւնը ընդդէմ խորհրդային ամբողջատիրութեան:

Մինչեւ 1988, ՀՅ Դաշնակցութեան գործունէութիւնը սահմանափակուած էր միայն Սփիւռքի մէջ, ուր կը կատարուէին նաեւ Հայ Դատի ծաւալուն աշխատանքները, ինչպէս նաեւ՝ գաղութներու կազմակերպչական աշխատանքները ազգային, քաղաքական, կրթական, ընկերային, մարզամշակութային եւ այլ բնագաւառներու մէջ:

Հայաստանի Անկախութենէն ետք ՀՅԴ–ի քաղաքականութեան առանցքը հանդիսացաւ Սփիւռքի հզօրացման անհրաժեշտութիւնը՝ անկախ Հայաստանի պետականութեան ապահովման կողքին: Արդարեւ՝ 1998–էն սկսեալ՝

Հայկական Սփիւռքը հայոց պետականութեան ու հայկականութեան ուժի մաս կը կազմէր:

Դաշնակցութիւնը շեշտը դրաւ Սփիւռքի կարեւորութեան եւ Սփիւռքի ներուժի օգտագործումի անհրաժեշտութիւնը ապահովելու համար Հայաստանի գոյատեւման վրա՝ յառաջ տանելով «Մէկ ազգ, մէկ հայրենիք, մէկ պայքար» կարգախօսը:

Ուրեմն՝ այդ ժամանակաշրջանէն ետք, ՀՅԴ–ի համար հիմնական էր Սփիւռքի կազմակերպման գործը, հայապահպանութիւնը եւ անպայման Սփիւռքի քաղաքականացման անհրաժեշտութիւնը, որուն արդիւնքը մինչեւ օրս կարելի է շօշափել քաղաքականացած երիտասարդներու ներկայութեամբ, որոնց հետաքրքրութեան տակ կ՚իյնան համազգային նպատակներ:

Վերջին տասնամեակներու ժամանակահատուածին Սփիւռքի մէջ Դաշնակցութեան մարմինները հետամուտ եղան ազգային–հասարակական կառոյցներու աւելի արդիւնաւէտ աշխատանքին: Հայութեան իրաւունքներու ճանաչման ու հետապնդումի առումով առնուեցան նոր նախաձեռնութիւններ:

Կարգ մը երկիրներու մէջ Դաշնակցութեան գործունէութեան կը պատկանի տուեալ երկրի պետական–վարչական շրջածիրէն ներս հայ քաղաքական ներկայացուցիչներու մասնակցութիւնը ապահովելու հանգամանքը:

Յիշատակման արժանի է, թէ ընդհանուր առմամբ, Սփիւռքի տարածքին՝ գաղութներէն ներս, հայկական իրաւունքներու եւ պահանջներու ծանօթացման եւ իրագործման համար կ՚իրականացուէին միջազգային խորհրդաժողովներ, երբեմն՝ ցոյցեր, կարեւոր ամեակներու եւ թուականներու ոգեկոչման հանդէսներ եւ քաղաքական հնարաւոր բոլոր յարաբերութիւնները:

Աշխատանք կատարուած է հայութեան ընդհանրական իրաւունքներուն տէր կանգնելու անհրաժեշտութիւնը վառ պահելու, ժողովուրդին մօտ քաղաքական շահերու գիտակցութիւն ստեղծելու եւ զարգացնելու ուղղութեամբ:

Իրականութեան մէջ Դաշնակցութեան սփիւռքեան քաղաքականութիւնը եղած է Սփիւռքը պահել. այսինքն՝ հայութեան ինքնութեան պահպանումը, ազգային–կազմակերպական կառոյցներու ստեղծումն ու անոնց հզօրացումը:

Եւ այսպէս՝ հաւատալով, որ կազմակերպութեան սիւնը պէտք է դառնայ դպրոց–եկեղեցի–ակումբ եռեակը՝ Դաշնակցութեան մարմինները զարկ տուին մշակութային եւ մարզական միութիւններու, այսինքն՝ Համազգայինին ու ՀՄԸՄ–ին (Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն), դպրոցներու, երիտասարդական, պատանեկան, ուսանողական շարժումներու եւ ազգային մարմիններու ստեղծման, որոնք դրական կերպով սատարեցին գաղութներու ներքին կազմակերպման:

Ուշադրութեան արժանի է մանաւանդ Միջին Արեւելքի մէջ գոյութիւն ունեցող գաղութներուն մօտ Դաշնակցութեան հովանիին տակ գործող ընկե-

ռային հաստատութիւնները եւ գաղութային մասշտապով ցուցաբերած ծառայութիւնները:

Սակայն քանի որ աշխարհաքաղաքական փոփոխութիւները մեզի կը պարտադրեն համահայկական արդիականացում, ապա այս գործին մէջ մեծ դեր ունէր կուսակցութեան կապուած երիտասարդական թեւը: Հետեւաբար Դաշնակցութեան արդի ժամանակաշրջանին մէջ Սփիւռքի ՀՅԴ երիտասարդական միութիւններու գործունէութեան դաշտը եղած է ներքին համայնքային, համահայկական եւ արտաքին–միջազգային: Միւս կողմէ՝ նպատակ դրուած էր հայ երիտասարդին, ինչպէս նաեւ ուսանողութեան քաղաքականացման խնդիրը:

Եկեղեցի

Ինչ կը վերաբերի Հայոց եկեղեցւոյ առնչութեան՝ պատմութիւնը ցոյց տուած է, որ հայ եկեղեցին կը հանդիսանար իբրեւ ազդակ հայ հաւաքականութեան պահպանման եւ գոյատեւման:

Սփիւռքի մէջ եկեղեցին դիմագրաւած է զանազան մարտահրաւէրներ, եւ Դաշնակցութիւնը եղած է մշտական կերպով անոր կողքին:

Պէտք է ըսել որ, որպէսզի Սփիւռքը չշեղի իր ազգային սկզբունքներէն, Սփիւռքի մէջ Դաշնակցութիւնը պայքարած է որոշ քաղաքականութեան դէմ, որու թիրախը եղած էր եկեղեցին: Այսպէս՝ Դաշնակցութեան պատմութեան ընթացքին լայն տեղ տրուած է հայոց եկեղեցւոյ, ուր ազգային իշխանութիւնները կը շարունակեն իրենց առաքելութիւնը՝ հայապահպանման եւ քրիստոնէութեան ի խնդիր:

Դաշնակցութիւնը, Հայոց եկեղեցւոյ հետ համախորհրդակցաբար, կը փորձէ սատար կանգնիլ Սփիւռքի մէջ ժողովուրդին գոյատեւման:

Մամուլ եւ լրատուամիջոցները

Գիտակցելով մամուլի ազդու ուժին՝ Սփիւռքի մէջ Դաշնակցութիւնը իր գործունէութեան առիւծի բաժին մը ալ տրամադրած է մամուլին՝ կազմելով աշխարհի բոլոր ցամաքամասերու մէջ գործող լրատուական–մամուլի ցանց մը: Սակայն քաղաքական հոլովոյթի բերումով ան եղած է ընդդիմադիր մամուլ:

Դաշնակցութեան մամուլը եւ լրատուամիջոցները միշտ դրուած են Հայաստանի, Սփիւռքի եւ, ընդհանրապէս, հայութեան հիմնական խնդիրները աւելի ամբողջական պարունակի մէջ ներկայացնելու հրամայականին դիմաց:

Դաշնակցական մամուլը ստանձնած է համակիր զանգուածներուն համար ուղեցոյցի պարտականութիւնը:

Ունեցած է դերակատարութիւն՝ Դաշնակցութեան տեսակէտներուն շուրջ հանրային կարծիք ձեւաւորելու եւ ամրապնդելու հայութեան ազգային հաւաքական կամքը:

Սփիւռքի մէջ դաշնակցական տեղեկատուական համակարգը, լայն դաշտ կազմելով, առաջատար դեր ստանձնած է Սփիւռքի կազմակերպչական մակարդակի բարձրացման մէջ, ազգային դիմագիծ պահպանելու, հայերէն լեզուի ու մշակոյթի պաշտպանութեան, ինչպէս նաեւ՝ առհասարակ ժողովուրդի քաղաքական գիտակցութեան մակարդակի բարձրացման մէջ: Իսկ վերջին տասնամեակին ձեւաւորած է Հայաստան–Արցախ–Սփիւռք տեղեկատուական եռամիասնական դաշտը:

Յարաբերական

ՀՅԴ–ն, ի շահ գաղութներուն համախմբման, Սփիւռքի մէջ մշտական կապի մէջ է սփիւռքեան համահայկական կառոյց ունեցող դասական այլ կուսակցութիւններու հետ:

Տարբեր երկիրներու մէջ հայ քաղաքական կուսակցութիւններու կեդրոնական մարմիններու կոչերով համագործակցութեան ուղղութեամբ ստեղծուած են համախմբումներ, որոնք զարկ տուած են համագաղութային միասնական գործունէութեան:

Կարեւոր աշխատանք տարուած է միջազգային բեմերու վրայ. այդ ծիրէն ներս կը մտնեն Ընկերվար միջազգայնականի եւ անոր կանանց կազմակերպութենէն ներս ՀՅԴ–ի ներկայութիւնը, ինչպէս նաեւ՝ Երիտասարդական գրասենեակի եւ միութիւններու գործունէութիւնը յատկապէս միջազգային երիտասարդական կառոյցներու մէջ:

Օտար շրջանակներու հետ գործակցելու ծիրէն ներս գործունէութիւն տարուած է երկու ուղղութեամբ.

ա. այլ երկիրներու մէջ դաշնակցականներու կողմէ ինքնապաշտպանական շարժումներ ստանձնելու հանգամանքը, որ կը միտէր ուղղակի ժողովուրդի Ֆիզիքական ապահովութեան,

բ. միւս կողմէ, նպատակ ունենալով ՀՅԴ շահերը, կարելի չէ անտեսել տարբեր երկիրներու մէջ այլ փոքրամասնութիւններու հետ գործակցութիւնը:

Եթէ կանգ առնենք Դաշնակցութեան վերջին տասնամեակներու գործունէութեան վրայ, ապա կարելի չէ չյիշել Արցախի վերաբնակեցման ծրագիրներու աշխատանքները, ինչպէս նաեւ՝ Դաշնակցութեան նախաձեռնած երկքաղաքացիութեան լիարժէք կիրառման խնդիրը, որ կատարուեցաւ՝ սփիւռքահայուն մօտ ամրապնդելու համար ազգային ինքնութիւնը եւ ի խնդիր ներդրումին, որ պիտի ապահովէ հայրենիքի զարգացման:

Նոյնպէս կարելի չէ զանց առնել հայ–թրքական յարաբերութիւններու բնագաւառէն ներս Դաշնակցութեան գործունէութիւնը:

Դաշնակցութիւնը իր դերակատարութիւնը ունեցաւ արձանագրութիւններու ստորագրման շրջանին՝ վանելու համար կատարուած փորձերը, որոնք կը միտէին, Հայաստանն ու Սփիւռքը իրարմէ տարանջատելով, Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու պահանջատիրութեան հարցը միայն Սփիւռքի վրայ բառնալ:

Հարկ է նշել, որ Սփիւռքը իր ազգային դրուածքով ապրեցաւ որոշակի փոփոխութիւն, որուն մէջ դրական ազդեցութիւններէն կարելի է թուել.

• Հայաստանի անկախացումը,

• եւ Արցախի ազատագրական պայքարի յաղթանակը:

Իսկ բացասական ազդեցութիւն ունեցան, օրինակ՝ Հայաստանի իշխանութիւններու որոշումը Դաշնակցութեան կասեցման վերաբերեալ եւ Հայաստանէն դուրս վանելը, ջաւախահայութեան սպառնացող վտանգները, իսկ վերջինը՝ հայ թրքական արձանագրութիւններու ստորագրումը:

Նման գործօններ սփիւռքահայութեան մօտ կը յառաջացնեն մտաւախութիւն, տաղտուկ եւ անհասկացողութեան վիճակ, որ կրնայ ազգային դիմագիծը վտանգել:

Որոշակի փոփոխութիւններէն է նաեւ ՀՅԴ–ի օրակարգի վրայ դրուած Սփիւռքի նախարարութեան ստեղծումը, որմէ տակաւին սփիւռքահայութիւնը ակնկալիքներ ունի:

Մեզի հարկաւոր է թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ Հայաստանի մէջ «Ամբողջական հայութիւն» բանաձեւումը:

Երեք դարերու վրայ երկարող 120 տարիներու ընթացքին Դաշնակցութեան նպատակը կը մնար հասարակութիւնը համախմբել պետական եւ համազգային խնդիրներու իրականացման գաղափարներու եւ ծրագիրներու շուրջ:

Իսկ նորագոյն ժամանակահատուածին ՀՅԴ քաղաքական օրակարգի գլխաւոր ուղենիշերը կեդրոնացան հետեւեալ կէտերու վրայ.

ա. ազգային հիմնախնդիրներ,

բ. ընկերային–տնտեսական հիմնախնդիրներ,

գ. հասարակական–քաղաքական հիմնախնդիրներ, որոնք ունին համահայկական տարողութիւն:

Եթէ լուսարձակի տակ առնենք Սփիւռք–ՀՅԴ կուսակցութիւն փոխյարաբերութիւնները, յստակ կարելի է նշել, թէ Դաշնակցութիւնը դարձած է համահայկական կազմակերպութիւն, որ մեծ կշիռ եւ ազդեցութիւն ունի սփիւռքի գաղթօճախներուն մէջ եւ յաջողած է սփիւռքահայութեան հնարաւորութիւնները ուղղել դէպի Հայաստան:

Դաշնակցութիւնը՝ որպէս միակ հայկական կազմակերպութիւն, որ ներկայ է թէ՛ Հայաստանի, թէ՛ Լեռնային Ղարաբաղի եւ թէ՛ Սփիւռքի մէջ, հաւատարիմ մնալով իր գաղափարաքաղաքական ուղենիշերուն, մշտապէս ձգտած է հանդէս գալ որպէս սկզբունքային քաղաքական ուժ:

Կուսակցութիւնը փորձած է Սփիւռքի համապատասխան հնարաւորութիւնները ուղղորդել դէպի ՀՀ տնտեսական զարգացում եւ ներդրման աշխատանք:

Ի վերջոյ՝ ՀՅ Դաշնակցութեան գործունէութեան եւ պայքարին շնորհիւ էր, որ միջազգային դիւանագիտութեան մէջ Հայկական հարցը դարձաւ ազգային իրական դատ, հայ ժողովուրդին իսկ կողմէ հետապնդուող այժմէական, ամէնօրեայ խնդիր:

Դաշնակցութիւնը հաստատած է, որ Սփիւռքը ռազմավարական կարեւորութիւն է Հայաստանի Հանրապետութեան, հայութեան անվտանգութեան եւ զարգացման համար:

Վերջաբան

Դաշնակցութիւնը այն քաղաքական ուժն է, որ կարողութիւնը ունի իր գործունէութիւնը յարմարեցնելու, պատշաճեցնելու իւրաքանչիւր ժամանակահատուածի աշխարհաքաղաքական փոփոխութիւններու հետ: Դաշնակցութիւնը վերջին տարիներուն որդեգրած է պետութեան ամրապնդումի, ժողովուրդի հաւատքի վերականգնումի եւ ազգային շահերէն ոչինչ զիչելու հասկացողութիւնը:

Վերջապէս կարելի է եզրակացնել, թէ այս կուսակցութեան դերակատարութեան կարեւորութիւնը կը կայանայ այս պարագային Սփիւռքի հատուածի ուժերու հաւաքագրման աշխատանքին մէջ, այնքան ատեն, որ ան կը փորձէ ժողովուրդը ներառել ազգային մեր օրակարգին մասնակից դառնալու, այն դիտարկումով, որ Սփիւռքը ռազմավարական դեր կրնայ ձեւաւորել հայկական ազգային կեանքին մէջ:

Իսկ տարիներու երկարութեան վրայ անոր գոյատեւման գործօնները հանդիսացած են ազգային գաղափարախօսութիւնն ու ազգային մտածողութիւնը, որոնց մէջ կը համապարփակուին Հայ Դատը, Ցեղասպանութեան ճանաչման խնդիրը, հողային պահանջատիրութիւնը եւ Սփիւռքի ներուժը դէպի Հայաստան ուղղորդելու հանգամանքը:

Անկախութեան վերականգնումէն ետք Դաշնակցութիւնը կառչած մնաց իր սկզբունքներուն, եւ հայ ժողովուրդի անկախութեան համար մղուող պայքարի մէջ իր ծաւալած գործունէութեան առանցքը կազմեց Սփիւռքի կազմակերպման պայքարը:

Այս առումով Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայաստանի Գերագոյն մարմինը 2009–ին յստակեցուց իր գործունէութեան ուղենիշերը հետեւեալ կերպ. «Հայաստանը, Արցախը եւ Սփիւռքը կազմում են բովանդակ հայութեան մէկ միասնական օրկանիզմը: Այդ օրկանիզմի ներքին կարողականութիւնը բացայայտելու եւ դէպի համազգային նպատակներն ու իղձերը ուղղորդելու համար անհրաժեշտ է ինքնակազմակերպման եւ համակարգման նոր մակարդակ ապահովել եւ ունենալ ընդհանրական կամքի արտահայտման յստակ ձեւաչափ: Հայութեան կազմակերպուած միասնականութիւնն է այն ուժը, որով ընդունակ ենք դիմագրաւել աշխարհի ուժային կենտրոններու եւ հարեւաններու ճնշումները, պահպանել ազգային դիմագիծը եւ վերականգնել ոտնահարուած մեր իրաւունքները»:

Սփիւռքը, ուղղակիօրէն ազդուելով Հայաստանի կարգավիճակէն, կ'ենթարկուի տարբեր զարգացումներու, հետեւաբար՝ Հայաստանի անկախացումէն ետք Սփիւռքը տարբեր է, քան անկախացումէն առաջ՝ իր հոգեվիճակով եւ պատասխանատուութեամբ:

Այնուհետեւ՝ Սփիւռքի մէջ Դաշնակցութեան գործունէութեան ծեւաչափը նոյնպէս կը փոխուի՝ նկատի առնելով կուսակցութեան ընդդիմադիր դիրքը Հայաստանի մէջ:

Այսօր Սփիւռքը կը դիմագրաւէ նոր մարտահրաւէրներ, այնուհետեւ նկատի պէտք է առնուի, թէ Սփիւռքը փոփոխական դարձած է՝ նկատի առած ժողովուրդի տեղաշարժի հանգամանքը, տնտեսական խնդիրները եւ այլն:

Այսօրուան սփիւռքահայն ու անոր պահանջները եւ երազները նոյնը չեն, ինչ որ էին ութսունական կամ իննիսունականներուն:

Սփիւռքահայը կ՚ապրի երկուութիւն մը, որ հարկաւոր է բոլորիս ջանքերով զայն վերածել դրական երկուութեան:

Ակնյայտ է, որ ՀՅԴ ամէն ջանք կը գործադրէ, որպէսզի Սփիւռք–Հայաստան կապերը հաստատուն մնան, եւ ոչ մէկ քաղաքական շեղուածութիւն տեղի ունենայ:

Միեւնոյն ժամանակ, Սփիւռքի տեսանկիւնէն դիտուած, Սփիւռքի մէջ այսօր Դաշնակցութեան նկարագիրը աւելի ճիշդ կերպով ներկայացնելու հրամայականը կայ:

Վերջին տասնամեակին Դաշնակցութեան գործունէութեան օրակարգ դարձած է հակազդելը թրքական եւ ազրպէյճանական սփիւռքի կազմակերպման եւ անոնց հակահայ քարոզչական եւ լոպիիստական գործունէութեան զարգացումներուն դէմ:

Միւս կողմէ՝ Թուրքիոյ լայնատարած քաղաքականութեան հետեւանքով Եւրամիութեան իր մուտքի խնդիրը, Միջին Արեւելքի մէջ իր գերակայութեան խնդիրը ստիպեցին, որ Սփիւռքը, մանաւանդ Միջին Արեւելքի մէջ մեր գաղութները, դիմագրաւեն նոր մարտահրաւէրներ՝ որդեգրելով նոր ռազմավարութիւն: Եւ այսօր մեզ կը մնայ խորհիլ արժէքներով յագեցած Սփիւռքի նոր որակ ձեւաւորելու խնդիրը:

Այսպէս՝ աշխարհաքաղաքականութեան տուեալները կը փոխուին, սակայն Դաշնակցութեան առաջնահերթութիւնները կը մնան անփոփոխ: Սփիւռքը հաւատացած է, որ կենսական հարցը ազգային միասնականութեան անհրաժեշտութիւնն է: Իսկ Հայ Դատի հետապնդման ճամբուն վրայ ՀՅԴ նպատակակէտը միշտ կը մնայ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի ստեղծումը:

Լ. Մկրտչյան
ՀՅԴ Բյուրոյի անդամ,
պատմական գիտությունների թեկնածու

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Գիտաժողովի երկրորդ մասն ամբողջությամբ նվիրված էր Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությանը՝ Հայաստանի նորանկախ պետականության, Արցախյան ազատամարտի և Սփյուռքի կառույցների ձևավորման ոլորտներում:

Այդ շրջանում մեր կուսակցությունը անկյունաքարային դեր է կատարել: Այն սերունդը, որ ձևավորեց Հայաստանի անկախ հանրապետությունը, գործում էր անպատմելի դժվար պայմաններում: Պատկերացրեք՝ թուրքական բանակը կանգնած էր Երևանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, և այդ պայմաններում ձևավորում ես անկախ պետություն և ընդամենը մեկ տարի հետո՝ 1919 թ., մեր պետության սահմանները հասնում են գրեթե մեր պատմական հայրենիքի սահմաններին:

Նման պայմաններում 700 տարի պետականություն չունեցող ժողովրդի կողմից պետական կառույցների ձևավորումը, ներքին լայն ժողովրդավարությունը, մեր կառավարության, առաջին պաշտոնեության անբասիր վարքագիծը լուրջ ներդրումներ են հայոց պետական մշակույթի մեջ:

Այդ նույն սերունդն էր, որ ձևավորեց Հայաստանի անկախ հանրապետությունը, այդ նույն սերունդը կատարեց համաշխարհային պատմության մեջ իր նախադեպը չունեցող մեծագործություն՝ սահմանների մի ամբողջություն ձևավորեց, որն այժմ կոչվում է Սփյուռք:

Արտասահմանում հայտնված հայությունն իրենից հիմնականում ներկայացնում էր ցեղասպանությունից հրաշքով փրկված, գոյատևման տարրական միջոցներից գրեթե զուրկ, աղքատության մեջ ընկղմված հուսահատ մի ժողովուրդ, որը, սակայն, իր մեջ ուժ գտավ տառապալից աշխատանքի շնորհիվ ձևավորելու Սփյուռքը: Դա արեց հուսահատության մեջ գտնվող մի ժողովուրդ, որն այսօր ունի իր հայկական–մշակութային կենտրոնները, որտեղ տասնամյակներ շարունակ վառ է պահել հայրենիքի գաղափարը: Սա իսկապես այդ սերնդի երկրորդ մեծ ներդրումն էր հայ ժողովրդի պատմության մեջ:

Սփյուռքի կառույցների կազմակերպման գործում ամենևին չնսեմացնելով հայկական մյուս հասարակական և քաղաքական կազմակերպությունների (ՀԲԸՄ և ազգային մյուս կուսակցությունները) դերը, որոնք ստանձնեցին պատասխանատվության իրենց բաժինը, պետք է նշել, որ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը կատարեց շատ և շատ կարևոր քայլ:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունն իր պայքարով նաև հայ ժողովրդին վերադարձրեց հայրենիքին վերատիրանալու գաղափարը, ինչը մենք անվանում ենք Հայ դատ: Հայ դատի խնդիրը, որը ձևավորվեց և իր բարձրակետին

հասավ 1960–ական թվականներից հետո՝ 1970–1980–ական թվականներին, մեր երկրորդ մեծ խնդիրն էր:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունն իր պատմական առաքելությունը կատարեց նաև ներկա Հայաստանի անկախ հանրապետության ձևավորման փուլում: Արցախում Հայ Յեղափոխական Դաշնակցությունը կուսակցություններից առաջիններից մեկն էր, որ մտավ կազմակերպելու հայ ժողովրդի զինված ազատագրական պայքարը, և մեծ էր նրա դերակատարությունը Հայաստանի անկախության կերտման գործում:

Ի վերջո, նաև այս ամբողջ պատասխանատվության բեռը վերցնելով մեզ վրա, մենք սովորեցինք մեկ այլ ճշմարտություն՝ մեր նոր ձևավորված պետության մեջ մենք այն կուսակցություններից մեկն ենք, որը պետության շինարարության գործին մասնակցում է պատասխանատվությամբ՝ ներկայացնելով ազգային ուղեգիծ: Ի վերջո՝ փասնամյակները շատ փոքր շրջան են պետության համար. նոր ենք ձևավորվում, և գաղափարական պայքար է գնում երկրի ապագայի համար: Հայ Յեղափոխական Դաշնակցությունը այն քաղաքական ուժն է, որը պայքարում է, որպեսզի Հայաստանը զարգանա ազգային ուղեգծով: Մենք հայկական փաթեթ ունեցող ժողովուրդ ենք: Հայկական փաթեթն այսօր ցեղասպանության ու պահանջատիրության հիմնախնդիրն է, Արցախի հիմնախնդիրն է, Զավախքի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրն է, մեր պետականության անվտանգության հարցն է: Մեր կարծիքով՝ այս փաթեթի ճանապարհով պիտի զարգանա հայկական պետականությունը:

Շնորհակալություն:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 115 ԵՎ 120-ԱՄՅԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Արա Բաղդասարյան
Վերստուգող սրբագրիչ՝ Արևիկ Արաբյան
Համակարգչային ձևավորումը՝ Գրիգոր Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 150x220 մմ: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 11 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500 օրինակ:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28
Հեռապատճեն՝ (+37410) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am
էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am

www.armeniancause.am

ԵՐԵՎԱՆ • 2011